



«ԳԱՆՁԱՍՍՈՐ»
ՄԱՏԵՆԱՇԱՐ

ՀՆՈՒՔԻ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
ԳԱՆՈՒՍԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱՆՆՉԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ

ԵՐԲՈՂ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ



ԳԱՆՁԱՍԱՐ
ԱՄՈՒԱԾԱՐԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԵՐԵՎԱՆ 1997

ԴՏՀ 23/28
ԳՄԴ 86-37
Օ 757

Նուիրում է Հայաստանում
քրիստոնեությունը պետական կրօն
հռչակելու 1700-ամեակին

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ Ա

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեան

Օ 757 Աստուածաշնչական Սուրբեր. - Եր. - : Գանձասար, 1997. -
234 էջ:

Քրիստոնէական եկեղեցու եւ մասնաւորապէս Հայ եկեղեցու
պատմութեան մէջ ուրոյն տեղ ունեն սուրբերի կեանքն ու գործու-
նէութիւնը, եւ վարքագրական գրականութիւնը եկեղեցու հոգեւոր
ժառանգութեան կարեւորագոյն մասերից մէկն է:

Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեանի «Աստուածաշնչական
սուրբեր» ուսումնասիրութիւնը ներկայացնում է աստուածաշնչա-
կան սուրբերի վարքերի ու վկայաբանութիւնների այն պատկերը, որն
ընդհանրացած է Հայ եկեղեցու աւանդութեան մէջ:

ՀՐԱՄԱՆԱԲ

Տ. ՊԱՐԳԵԻԻ

ՍՐԲԱԶՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՅ

Օ $\frac{0403000000}{846(01) - 97}$ 97

ԳՄԴ 86-37

ՄՈՒՏՔ

Եկեղեցական տեսակէտէ դիտուած՝ տարուան օրերը կը բաժնուին երեք խումբերու՝ ՏէրՈՒՆԻ ՕՐԵՐ, ՊԱՀՈՑ ՕՐԵՐ եւ ՍՐՔՈՑ ՕՐԵՐ: Մենք առաջին երկու խումբերու մասին գրած եղանք ուղղակի կամ անուղղակի կերպով, մեր ցարդ հրատարակած չորս գրքոյկներով այսինքն՝

ՄԵԾ ՊԱՀՔԻ ԿԻՐԱԿԻՆԵՐՈՒ ՈՍԿԻ ՇՂԹԱՆ, 1971:

ԳՈՒՆԱԳԵՂ ԿԻՐԱԿԻՆԵՐ ԵՒ ՀՈԳԵԳԱԼՈՒՍ, 1972:

ԱԻԱԳ ՇԱԲԱԹ, 1974:

ՏԱՂԱԻԱՐ ՏՕՆԵՐ ԸՆդ մամլով:

Այս հատորով կը ձեռնարկենք ներկայացնելու երրորդ եւ վերջին խումբը, որ պիտի բաղկանայ երեք անջատ գիրքերէ:

Ա. ԱՍՏՈՒԱԾԱՇՆՁԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ

Բ. ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ

Գ. ՀԱՅԱԶԳԻ ՍՈՒՐԲԵՐ

Առաջին այս հատորով մենք կ'անդրադառնանք Աստուածաշնչական այն սուրբերուն, որոնք անցած են մեր տօնացոյցին, եւ որոնք բնականօրէն կը բաժնուին երկու խումբերու՝ Հիմ Կտակարանի Սուրբեր եւ Նոր Կտակարանի Սուրբեր: Առաջին խումբը կը կազմեն ճշմարիտ միաստուածութեան կրօնքի եթէ ոչ հնարիչները եւ հիմնադիրները, գէթ հետեւողները եւ յայտնագործիչները. եթէ ոչ տարածիչները՝ գէթ նախանձայոյզ պահպանողները եւ ջերմեռանդ պաշտպանները: Մենք ասոնք կոչած ենք հաւատքի հերոսներ: Իսկ երկրորդ խումբը կը ներկայացնեն Քրիստոնէական կրօնքի առաջին հետեւողները եւ եկեղեցիի հիմքերը եւ անոր անձնդիր տարածիչները եւ վկաները՝ իրենց խօսքով, գործքով եւ արիւնով:

*
*

Մակերեսային մտածումով մը կրնայ խորհուիլ, որ ժամանակավրէպ է սուրբերու մասին գրելը, սակայն իրականութեան մէջ ոչ մէկ

ատեն այնքան շատ պէտք ունեցած ենք սրբութեան գաղափարին անդրադարձումին եւ այդ գաղափարականը իրագործողներուն, որքան մեր ժամանակներու մէջ, որովհետեւ քրիստոնէական կրօնքի ծագումէն ասդին գրեթէ ոչ մէկ ատեն այնքան անտեսուած է սրբութեան գաղափարը եւ անոր դրօշակիրները, որքան մեր ժամանակներուն մէջ: Կ'ապրինք աշխարհիկ՝ «բրօֆան» դարաշրջանի մը մէջ, ուր մարդիկ ոչ միայն կ'անգիտանան, այլ նաեւ երբեմն կ'արհամարհեն Քրիստոնէական այս իտէալը, եւ ասիկա կը պատահի ոչ միայն եկեղեցիի շրջանակէն դուրս, այլ մինչեւ իսկ երբեմն անոր շրջանակէն ներս: Այս մտայնութեան եւ սանձարձակ երեւոյթին հակազդելու յաւակնութեամբ չէ, որ կը ձեռնարկենք այս, ըստ բաւականի, ծանր եւ երկար աշխատանքին, այլ պարզապէս յուշարարի եւ մունետիկի դեր կատարելու համար գէթ բոլոր անոնց, որոնք դեռ լրջութեամբ կ'առնեն Հայց. ՍՈՒՐԸ եկեղեցւոյ իրենց անդամակցութիւնը: Արդարեւ մենք այսօր մոռցած ենք ՍՈՒՐԸԵՐԸ, եւ դադրած ենք անոնց հետ հաղորդուելէ. այդ է պատճառը, որ մենք դադրած ենք այլեւս սուրբերու հանդիպելէ կեանքի մէջ:

Նման գործի մը ձեռնարկելով՝ մեր նպատակը «Յայսմաւուրք» գրել չէ, ոչ ալ հանգամանօրէն անդրադառնալ անոնցմէ իւրաքանչիւրին կեանքին եւ գործին: Մեր յառաջադրութիւնն է յիշատակել զանոնք իրենց մարդկային գիծերուն մէջ եւ մատնանշել աստուածային յատուկ միջամտութիւնը իրենց կեանքէն ներս, վասն զի առանց աստուածային յատուկ միջամտութեան ոչ ոք կրնայ սուրբ ըլլալ:

* *

Աւելորդ է թերեւս յիշելն անգամ, թէ Աստուածաշնչական Սուրբերու կեանքին եւ գործունէութեան միակ աղբիւրը նոյն ինքն Ս. Գիրքն է, որմէ համառօտելով միայն ներկայացուցած ենք զանոնք: Մեր պատկերացման ընթացքին փորձած ենք երբեմն աւելի լոյս եւ ստուեր ձգել անոնց վրայ, աւելի ակնբախ ընծայելու համար անոնց դէմքերը եւ կերպարը:

17. 10. 1975

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Երբ կը փորձենք գրել սուրբերու մասին, բնականաբար առաջին հարցումը, որ կը ծագի, միտքերու մէջ պիտի ըլլայ. ի՞նչ ըսել է ՍՈՒՐԸ. ինչո՞ւ կարգ մը մարդեր «Սուրբեր» նկատուած են եւ տարեկան յիշատակութեան արժանացած են: Այնպէս կ'ենթադրենք, որ շատերու մտքին մէջ կազմուած է արդէն իսկ սուրբի գաղափար մը առաւել կամ նուազ միգամածային կերպով, եւ ինչ ալ ըսուի այդ մասին, դիւրին պիտի չըլլայ փոխել այդ պատկերը, ինչպէս մենք չենք կրնար փոխել անունը եւ պատկերը երկինքի երեսին փակած Միր Կաթին կամ Յարդգողի ճանապարհին, մինչեւ որ չանցնինք աստղադիտարանի մը հսկայ խոշորացոյցին առջեւ, որուն մէջէն յանկարծ միգամածային այդ երեւոյթը կը վերածուի բիւրաւոր աստղերու համախմբութեան մը, որուն մաս կը կազմէ կ'ըսեն գիտնականները, նաեւ մեր արեգակնային դրութիւնը:

Շատերու մտքին մէջ կազմուած է այն գաղափարը, թէ սուրբ ըսուածը տարաշխարհիկ էակ մըն է. շատ-շատ՝ պատմութեան կամ լոկ երկինքի հետ կապ ունեցող անուններ են անոնք: Ոմանց համար սուրբերը իրենց սրբանկարներէն տարբեր չեն. այսինքն՝ մնայուն բնակիչները մեր եկեղեցիներուն, ուրկէ դուրս չեն կրնար գալ, ոչ ալ մենք կը ձգենք, որ դուրս գան, որ մի գուցէ չխանգարեն աշխարհի վրայ տիրող գէշ-աղէկ կարգը կամ չվարակուին անոր մէջ վխտացող մեղքի եւ բարոյական ապականութեան միջբրոպներէն: Այս ենթադրական տեսութիւնները բնականօրէն կ'առաջնորդեն զմեզ հետեւցնելու, թէ ոմանց մտքերուն մէջ ձեւ առած սուրբերը կէս դիցավիպային էակներ են, որոնք կրնան յիշուիլ եւ յարգուիլ, առանց անպատճառ մեզի յարացոյց կամ օրինակ ծառայելու...: Նման գաղափարները սակայն ոչ մէկ կապ ունին իրական սուրբերուն հետ, որոնք մեզի պէս միսէ եւ ոսկորէ կազմուած մարդեր եղած են, նոյն տկարութիւններով եւ նոյն առաւելութիւններով օժտուած են, ապրած են մեր այս անկատար ու

չարիքներով լեցուն աշխարհի վրայ, ըմպելով անոր մատուցած անուշ եւ դառն բաժակները: Հիմնական տարբերութիւնը ասոնց եւ Հասարակ մահկանացուներուն միջեւ այն է, որ ասոնք յաղթական բաժնուած են կեանքէն: Ուրեմն սուրբերը ՅԱՂԹԱԿԱՆ դէմքերն են եկեղեցիին:

Ի՞նչ է ՍՐԲՈՒԹԻՒՆԸ

Նախ քան սուրբերու մասին խօսիլը, ընդհանուր ակնարկ մը նետենք ՍՐԲՈՒԹԵԱՆ գաղափարին վրայ, զոր իրականացուցեր են անոնք իրենց կեանքին մէջ:

Սրբութեան գաղափարը մեծագոյն տեղը գրաւած է քրիստոնէական կրօնքին մէջ՝ կազմելու աստիճան անոր գերագոյն նպատակը: Քրիստոնէութիւնը գոյութիւն առած է եւ այսօր կայ սուրբեր պատրաստելու համար, սուրբեր արտադրելու համար, մեղաւոր մարդերը սուրբերու վերածելու համար: Սակայն պէտք է ընդունինք որ սրբութեան գաղափարին ստեղծիչը Քրիստոնէութիւնը չէ եղած: Այդ գաղափարականը գոյութիւն ունեցած է իր ծնունդէն դարեր առաջ Հին Ուխտի կամ Հին Կտակարանի մէջ, որուն եւս հիմնական նպատակներէն մէկն է բացատրել սրբութեան ինչ ըլլալը եւ մատնանշել սրբութեան ճանապարհը «բազում մասամբք եւ բազում օրինակօք»:

Այնտեղ, արդարեւ, կան սուրբ եւ անսուրբ բազմաթիւ դէմքեր, պատմուած են սուրբ եւ անսուրբ բազմաթիւ պատմուածքներ, մարդոց մտքին մէջ դրոշմելու համար այս հիմնական ըմբռնումը իր դրական ու ժխտական գիծերուն մէջ: Աստուծոյ ներշնչեալ մարդերու կողմէ տրուած են անթիւ պատգամներ մարդիկը անսրբութեան ճանապարհէն դուրս կանչելու եւ սրբութեան ճանապարհին հրաւիրելու համար: Այնպէս որ, այս գաղափարը ոսկեղէն եւ ամուր թելի մը նման կ'երկարի Հին Կտակարանի մէկ ծայրէն միւսը, եւ առանց ընդհատուելու կ'անցնի Նոր Կտակարանին, ուր անիկա աւելի շեշտ, փայլ եւ մարմին կը ստանայ, վերածուելու համար՝ Քրիստոնէական կեանքի նպատակին:

Ամբողջ Աստուածաշունչին մէջ «Սուրբ, Սրբութիւն եւ Սրբել» բառերը գործածուած են աւելի քան 1200 անգամ. այսինքն՝ միջին հաշուով գրեթէ մէկ անգամ Ս. Գրքի ամէն մէկ էջին վրայ: Հին

Կտակարանի մէջ մասնաւոր գիրք մը կայ անծանօթ՝ շատերուն, սրբութեան գաղափարին պէս, որ գրեթէ ամբողջութեամբ սրբութեան յատկացուած է: Այս գիրքը կը կոչուի ՂԵԻՏԱԿԱՆ, զոր սակայն աւելի յարմարապէս կրնայինք կոչել «Գիրք Սրբութեան»: Այս փոքր մատենիկին մէջ միայն՝ վերոյիշեալ երեք բառերը գործածուած են 135 անգամ, այսինքն՝ այդ բառերուն ընդհանուր գումարին շուրջ 9 էն մէկը, երբ ինքը՝ գիրքը, կը կազմէ ամբողջ Աստուածաշունչի 40 մասէն մէկը: «Սրբեսլիք եւ սուրբ լինիլիք» պատուէրը կը յեղյեղուի շարունակաբար անոր մէջ: «Եղիլիք սուրբք, զի ես սուրբ եմ», - կը պատգամէ շարունակ Աստուած այդ գրքին մէջ:

ՍՈՒՐԲ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ ՄԱՔՈՒՐ

Իր հնագոյն եւ տառական առումով «սուրբ» անկանը պարզապէս կը նշանակէ «մաքուր»: Ու այդ իմաստը պահած է մինչեւ այսօր, իր բայական ձեւին մէջ: «Սրբել» այսօր ալ կը նշանակէ «մաքրել». աչքը սրբել, դասարանի գրատախտակը սրբել, գետինը սրբել են.: Հետեւաբար զարմանալի չէ, որ «սուրբ» բառը նախ քան բարոյական եւ կրօնական պատմուածան հազնիլը, գործածուած է նիւթական իրերու համար՝ նիւթապէս «մաքուր» ի մաստով: Օրինակ՝ այն ոսկին, որով Աստուած հրամայած էր պատել Իսրայէլի ժողովուրդին ամէնէն նուիրական առարկան հանդիսացող Ուխտի Տապանակը, պէտք էր ըլլար «սուրբ ոսկի», ոչ թէ կրօնական իմաստով, այլ՝ մետաղային գտութեան իմաստով, այսինքն՝ պիտի գործածուէր անխառն, զուտ, մաքուր ոսկի, այսօրուան բացատրութեամբ՝ 24 քարաթ ոսկի: Նոյնպէս Յայտնութեան գրքին մէջ երբ. «երկինքէն իջած սուրբ Երուսաղէմը» կը նկարագրուի, կ'ըսուի, որ քաղաքը կը պսպղար «սուրբ ապակիի նման» (Յայտ. ԻԱ 18): Այստեղ ապակին «սուրբ» կը կոչուի պարզապէս բացատրելու համար անոր բիւրեղային մաքրութիւնը, գտութիւնը:

Նոյնն է պարագան «սրբել կամ սրբիլ» բայերուն համար, որոնք նախ քան բարոյական եւ Հոգեւոր մաքրագործումի իմաստ ստանալը՝ կը գործածուին Ֆիզիքապէս մաքրուելու առումով: Օրինակ՝ Յակոբ Նահապետ, երբ կը պատրաստուի զոհի սեղան մը կառուցանել Բեթելի մէջ, կ'ըսէ իր ընտանիքի բոլոր անդամներուն. «Վերցուցէք ձեր մէ-

լէն օտար աստուածները եւ ՄԱՔՐՈՒԵՑԷՔ (գրաբար «սրբեցարուք») ու փոխեցէք ձեր լաթերը»։ (Ծն. ԼԵ 2)։ Երբ Աստուած «անձամբ» պիտի խօսի Իսրայէլի ժողովուրդին, կը պատուիրէ Մովսէսին. «Գնա ժողովուրդին եւ ՄՐԲԷ զանոնք, եւ թող լուան իրենց լաթերը» (Ել. ԺԹ 10)։

ՍՈՒՐԲ ԿԸ ԵՇԱՆԱԿԷ ՆԱԵԻ ԶԱՏՈՒԱԾ

Մաքրութեան սկզբնական այս հասկացողութեան կը զուգորդուի իմաստի ուրիշ եւ կարեւոր երանգ մը, որ աւելի հիմնական եւ տիրական կը դառնայ տակաւ առ տակաւ սրբութեան գաղափարին մէջ։ «Սուրբ» կը կոչուի նաեւ ոեւէ իր, առարկայ եւ անձ, որ կը ԶԱՏՈՒԻ իր տեսակին մէջէն եւ կը յատկացուի նուիրական նպատակի մը, եւ իբրեւ այդ՝ կը ստանայ յատուկ օրհնութիւն։ Ըստ այսմ՝ Արարիչն Աստուած իր ստեղծագործութեան աւարտումէն յետոյ՝ եօթներորդ օրը «կը Հանգստանայ» իր գործերէն, ուստի՝ «Օրհնեց Աստուած եօթներորդ օրը եւ ՄՐԲԵ զայն» (Ծն. Բ 3)։

Այս պարագային Շաբաթ օրը «սուրբ յայտարարուեցաւ, որովհետեւ զատուեցաւ եօթնեակի միւս օրերէն ու նուիրուեցաւ Հանգստեան ու յատուկ պաշտամունքի սրբազան նպատակին՝ ստանալով իր օրհնութիւնը ուղղակի Աստուծոմէ»։

ՍՈՒՐԲ Է ԱՍՏՈՒԾՈՅ ՆԵՐԿԱՅՈՒԹԻԻՆԸ ԶԳԱՅՆՈՂ ԱՄԷՆ Ի ՆԶ

Սրբութեան գաղափարին մէջ մտաւ երրորդ երանգ մը եւս, երբ «սուրբ» կոչուեցան յատկապէս այն վայրերը, որոնց մէջ Աստուծոյ ՆԵՐԿԱՅՈՒԹԻԻՆԸ զգալի կամ իմանալի կերպով յայտնուած է։ Օրինակ՝ երբ Մովսէս կը մօտենայ Անկէզ Մորենիին, ձայն մը կուգայ Մորենիին մէջէն. «Մովսէ՛ս, Հանէ՛ կօշիկներդ, որովհետեւ այն Հողը, որուն վրայ կեցեր ես, «ԵՐԿԻՐ ՍՈՒՐԲ Է» (Ել. Գ 5)։ Այս իսկ պատճառով «սուրբ» կոչուեցաւ Սինա լեռը, որուն վրայ Աստուծոյ զգալի ներկայութիւնը տեսնուած էր, եւ որմէ Աստուծոյ խօսքը լսուած էր։ Ինչպէս նաեւ «սուրբ» կոչուեցաւ Իսրայէլի ժողովուրդի ամէնէն նուիրական կրօնական առարկան՝ Ուխտի Տապանակը, ուրկէ Ա-

ստուած իր պատգամները կուտար Մովսէսին, եւ որուն մէջ գրուած էին Տասնաբանեայ պատուիրաններու քարեղէն տախտակները եւ ուրիշ նուիրականութիւններ։ «Սուրբ» կոչուեցան նաեւ Վկայութեան Խորանը եւ Սողոմոնի Տաճարը, որոնց վրայ տեսնուած էր Աստուծոյ ներկայութիւնը ամպի ձեւին տակ եւ լսուած՝ Անոր Զայնը։ Ապա «սուրբ» կոչուեցաւ նաեւ Երուսաղէմը՝ Աստուծոյ գերազանց բնակարանը իր մէջ պարունակած ըլլալուն համար։ Ու վերջապէս ամբողջ Աւետեաց Երկիրը՝ Հրէաստանը, ուր Աստուած բազմիցս երեւցած ու խօսած էր, եւ ուր ի վերջոյ մարմնաւոր կերպով երեւցած էր Աստուծոյ Որդին եւ գործած ու քարոզած էր անոր մէջ։

Տակաւ առ տակաւ, սրբութեան այս ըմբռնումը անշունչ իրերէն անցաւ ու առաւելաբար սկսաւ գործածուիլ շնչաւոր եւ բանաւոր էակներուն համար։ Ըստ այսմ՝ ժողովուրդ մը սկսաւ «սուրբ» կոչուիլ, որովհետեւ ճշմարիտ Աստուծոյ ճանաչումին գաղափարակիրը դարձաւ։

Օրհնուեցան յատկապէս անոր երեք նախահայրերը՝ Աբրահամ, Իսահակ ու Յակոբ, որոնցմէ փոքր ազգ մը կազմաւորուեցաւ եւ ջոկուեցաւ բոլոր միւս ազգերէն՝ Աստուծոյ պատգամներուն ընդունարանը դառնալու, ՓՐԿՈՒԹԵԱՆ եւ ՄԵՍԻԱՅԻ գաղափարին տալանակիրը Հանդիսանալու համար։ Աստուած ըսաւ, խօսքը այս ժողովուրդին ուղղելով Սինա լեռան ստորոտը, ասոնց եւ Աստուծոյ միջեւ Ուխտ մը կնքուելու ատեն.

«Եւ արդ, եթէ իրաւամբ ձայնիս հնազանդիք եւ իմ ուխտս պահէք,

Դուք ինծի սեպհական ժողովուրդ մը պիտի ըլլաք՝ բոլոր միւս ազգերէն ԶԱՏՈՒԵԼ ՈՎ,

Դուք պիտի ըլլաք իմ թագաւորութիւնս, սուրբ ազգ մը»։ (Ել. ԺԹ 5, 6)։

Այլուր ըսած է Աստուած՝ դարձեալ իր խօսքը այս ժողովուրդին ուղղելով. «Սուրբ մարդեր պիտի ըլլաք ինծի համար» (Ել. ԻԲ 31)։ Այս ժողովուրդին տրուեցաւ բազմաթիւ առողջապահական, ծիսական, բարոյական ու ընկերային օրէնքներ, որոնց նպատակն էր վերածել զանոնք ֆիզիքապէս ու բարոյապէս մաքուր, այսինքն՝ «սուրբ» ժողովուրդի մը։

Ուրեմն, Համադրելով մինչև հիմա ըստածները այս մասին. սուրբ է՝ ինչ որ ՄԱՔՈՒՐ է, այսինքն՝ որուն մէջ իր բնութեան հակառակ կամ օտար տարր չկայ: Սուրբ է այն, ինչ որ ԶԱՏՈՒԱԾ է իր տեսակներուն մէջէն եւ ԸՆԾԱՅՈՒԱԾ՝ աստուածային նպատակի մը, որուն Համար ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՍՏԱՅԱԾ է ուղղակի Աստուծոյ կամ իր պաշտօնաներէն՝ յանուն Աստուծոյ: Ու վերջապէս սուրբ է ամէն ինչ, որ ԱՍՏՈՒԾՈՅ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ զգալի նշաններն ունի իր մէջ:

Սուրբին հակառակն է բնականաբար՝ «անսուրբ»: Սակայն Աստուածաշունչի մէջ աւելի յաճախ գործածուած եզրն է «Պիղծ», որ եւրոպական լեզուներու մէջ ծանօթ է «բրօֆան» բառով: Օրինակ՝ ուտելի կամ Աստուծոյ ընծայելի կենդանիները կը կոչուին «սուրբ անասուններ», իսկ անուտելի եւ Աստուծոյ անզոհելի կենդանիները՝ «անսուրբ անասուններ»: Եթէ Իսրայէլը «սուրբ» կը կոչուի, անոր դիմաց հեթանոսները՝ «պիղծ» կ'անուանուին: Մինչև իսկ այն Հացը որ Աստուծոյ չէ նուիրուած եւ սովորական ուտելի Հաց է, կը կոչուի «պիղծ», յարաբերաբար Աստուծոյ ընծայուած Հացին: Օրինակ՝ Դաւիթ իր փախստական շրջանին կը Հանդիպի Աքիմելէք քահանայապետին եւ անկէ Հաց կ'ուզէ. քահանայապետը կը պատասխանէ՝ «Զեռքիս տակ «պիղծ» Հաց չունիմ, այլ՝ սուրբ Հաց». այսինքն՝ «առաջաւորութեան Հաց» կոչուածը, որ Աստուծոյ ընծայուած Հացն էր (Ա Թագ. ԻԱ 4): Աստուծոյ հրեշտակները առ Հասարակ «սուրբ» կը կոչուին, իսկ դեւերը՝ «պիղծ»: Քահանաները կարգ մը բացառիկ օրէնքներ պիտի գործադրէին, որպէսզի «սուրբ»ին եւ «պիղծ»ին միջեւ տարբերութիւն դնել սորվէին (Ղեւ Ժ 10):

ՍՐԲՈՒԹԵԱՆ ԻՄԱՍՏԻ Ն ԿԻՐԱՐԿՈՒՄԸ ՍՈՒՐԲ ՄԱԿԴԻՐԸ ԿՐՈՂ ՆԵՐՈՒ Ն ՎՐԱՅ

Ուրեմն «սուրբ» բառին վերեւ տրուած իմաստը եթէ փնտռենք այն բոլոր էակներուն, անձերուն, իրերուն եւ առարկաներուն վրայ, որոնք սովորաբար եւ յաճախ մեքենաբար «սուրբ» կը կոչուին, պիտի տեսնենք, որ վերոյիշեալ երեք երանգներն ալ ներկայ են անոնց մէջ ուղղակի կամ անուղղակի կերպով: Օրինակներ.

Ամէն բանէ առաջ եւ ամէն բանէ վեր ՍՈՒՐԲ է Աստուած, ինչպէս այնքան յաճախ կ'երգենք պաշտամունքի ընթացքին. «Սուրբ Աստուած, սուրբ եւ Հզօր, սուրբ եւ անմահ...», կամ «Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր Զօրութեանց»: Արդարեւ Սուրբ է Աստուած նախ՝ որովհետեւ զուտ եւ անխառն էութիւն է. «Աստուած լոյս է, եւ Անոր մէջ խաւարի Հետք չկայ» (Ա Յովհ. Ա 5): Աստուած Հոգի է, եւ նիւթական ոչ մէկ տարր գոյութիւն ունի իր մէջ: Երկրորդ՝ Աստուած սուրբ է՝ որովհետեւ անջատ է իր արարչութենէն: Աստուած Տիեզերքի մաս չի կազմեր, Արարիչն է եւ Տէրը՝ Համագոյքին: Բաց աստի՛ մեր պաշտած ճշմարիտ Աստուածը՝ Ամենակալ եւ Յաւատնական Աստուածը, տարբեր է, այսինքն զաստուած է այն բոլորէն, որոնք ի բնէ աստուածներ չեն, բայց սովորաբար այդ անունով կը ճանչցուին. օրինակ՝ կուռքերը, բնութեան ոյժերը եւ անոր զանազան երեւոյթները, որոնք «աստուած» անուան տակ պաշտուած են: Առաջին եւ գերագոյն պատուիրանով Աստուած կը պատգամէ. «Ես եմ քու Տէր Աստուածդ, ինձմէ ԶԱՏ ուրիշ աստուածներ չունենաս»: Վերջապէս Սուրբ է Աստուած, պարզապէս որովհետեւ «Աստուած» է, այսինքն մեր պաշտամունքին միակ ու գերագոյն առարկան է. «Քու Տէր Աստուածդ ՄԻԱՅՆ պիտի պաշտես»:

Սուրբ է եկեղեցին, թէ իր քարեղէն ու անշունչ իմաստով եւ թէ մարդկեղէն ու շնչաւոր նշանակութեամբ: Սուրբ են մեր նիւթական տաճարները, որովհետեւ իբրեւ շէնք զատուած են միւս բոլոր շէնքերէն եւ յատուկ օրհնութեամբ ընծայուած են Աստուծոյ պաշտամունքին: Սուրբ են մեր եկեղեցիները, որովհետեւ կը Հաւատանք, թէ Աստուած «կը բնակի» անոնց մէջ մասնաւոր եւ բարոյական առումով, ինչպէս նաեւ անոր Համար, որ անոր Ս. Սեղաններուն վրայ, տապանակներու մէջ դրուած է Քրիստոսի Մարմինը եւ Արիւնը նիւթապէս ներկայացնող Ս. Հաղորդութիւնը: Սուրբ է Քրիստոնէական եկեղեցին, այսինքն՝ եղբայրութիւնը, որովհետեւ զատուած է մարդկային բոլոր միւս ընկերութիւններէն եւ սահմանուած է լինելու Աստուծոյ ժողովուրդը: Պետրոս Առաքեալ կը Հաստատէ այս ճշմարտութիւնը, երբ կ'ըսէ՝ խօսքը ուղղելով քրիստոնեայ Հաւաքականութեան.

«Սակայն դուք ընտրեալ ցեղ մըն էք.

Արքայական քահանայապետութիւն,

ՍՈՒՐԲ ազգ մը,

Աստուծոյ սեպհական ժողովուրդը-

Որպէսզի հռչակէք յաղթանակներն Անոր,

Որ զձեզ դուրս կանչեց խաւարէն իր սքանչելի լոյսին:

Դուք, որ երբեմն իր ժողովուրդը չէիք,

Բայց այժմ Աստուծոյ ժողովուրդը եղաք.

Դուք, որ երբեմն դուրս էիք Անոր ողորմութեան սահմաններէն,

Այժմ արժանի եղաք Անոր ողորմութեան (Ա Պետ. Բ 9-10):

Քրիստոնէական հարազատ եկեղեցին սուրբ է նաեւ անոր համար, որ Աստուծոյ Սուրբ Հոգին կը բնակի անոր մէջ: Վերջապէս, թէ՛ քարեղէն տաճարը եւ թէ՛ քրիստոնեայ հաւաքականութիւնը սուրբ են, որովհետեւ իբրեւ բնակարանները Աստուծոյ, մաքրուած ու յարդարուած են եւ սահմանուած են մշտապէս մաքուր պահուելու թէ՛ նիւթապէս եւ թէ՛ բարոյապէս:

«Սուրբ» են բոլոր «հայր սուրբ»երը, որովհետեւ զատուած են միւս մարդերէն եւ ամբողջութեամբ Աստուծոյ ընծայուած են: Անոնք այլեւս ընտանիքի հայր չեն, այլ՝ հասարակաց հայր՝ բոլոր հաւատացեալներու, որոնք իրենց ամբողջ կեանքը, ժամանակը եւ կարողութիւնները ընծայած են Աստուծոյ եւ իր եկեղեցիի ծառայութեան, սահմանուած են ապրելու աստուածամերձ կեանք՝ առանց խառնակ ու աշխարհիկ «անսուրբ» կենցաղին:

«Սուրբ» են, արդարեւ, Սկիհը, Խաչը, Աւետարանը, Ս. Գիրքը - բառը վրան փակած է այլեւս- եկեղեցական զգեստները, Սեղանը, Աւագանը, Խորհուրդները, Պատարագը եւ այն բոլորը, որոնք «սուրբ» մակդիրով կ'որակուին գործածութեան ընթացքին, որովհետեւ զատուած են իրենց տեսակներու մէջէն ու յատկացուած՝ սրբազան նպատակի մը. եւ իբրեւ այդ սրբագործուած են յատուկ օրհնութեամբ եւ սահմանուած են միշտ մաքուր պահուելու, «սուրբ» մնալու:

Ու վերջապէս «սուրբ» են բոլոր Սուրբերը, որովհետեւ նախ մաքրուած են այն բոլոր ապականութիւններէն, որոնք մարդերը անսուրբ կ'ընեն կամ կը պղծեն: ՄԵՂԻ ԸՍՏԱԾԸ այն աղտն է, որ նստած է մարդկային բոլոր հոգիներուն մէջ անխտիր: Մեղքը մաս չի կազմեր

Աստուծոյ ձեռքէն ելած մեր մարդկային բնութեան, ինչպէս փոշին մաս չի կազմեր մեր սեղաններուն եւ դարակներուն, որոնց վրայ մշտապէս նստած կը մնայ, եթէ պարբերաբար չմաքրուի: Դժբախտաբար ներկայիս ամէն մարդ մեղքով կը ծնի. «Որովհետեւ մարդուն միտքը դէպի չարը խոտորած է իր մանկութենէն սկսեալ» (Մն. Ը. 21): «Անօրէնութեամբ յղացաւ եւ մեղքի մէջ ծնաւ զիս մայր իմ» (Սաղմ. Ծ 5, աշխարհաբար ԾԱ 5):

Մարդուն այս կերպ ծնունդը նման է այն հանքերուն, ուրկէ ելած ոսկին զուտ չէ, խառնուրդ է: Այս տեսակ ոսկին պէտք է անցնի կարգ մը «բրոցէս»ներէ՝ վերածուելու համար զուտ ոսկիի, «սուրբ ոսկիի»: Արդ, սուրբերը նման «բրոցէս»է անցած մարդիկ են, որոնք այլեւս մաքրուած են մեղքի խառնուրդէն եւ վերածուած են զուտ մարդու, սուրբ մարդու, իրական մարդու այնպէս, ինչպէս ան ելած է իր Արարչին ձեռքէն, «Անոր պատկերով»:

Ի՞նչ ԵՆ ԱՅՌ «ԲՐՈՑԷՍ»ՆԵՐԸ, ՈՐՈՆՑՄԷ ԱՆՑՆԵԼՈՎ ՄԱՐԴ ԿԸ ՎԵՐԱԾՈՒԻ ՍՈՒՐԲԻ

Ընդարձակ նիւթ է հարցումին պատասխանը. ինքնին երկար յօդուածաշարքի մը նիւթ կրնայ հայթայթել: Մենք այս առթիւ չենք կրնար այս հարցի մանրամասնութեան մէջ մտնել, սակայն այդ մասին գաղափար մը տալու համար յառաջ պիտի բերենք Եզեկիէլ մարգարէի այնքան պատկերալից, խորհրդանշական եւ բանաստեղծական նկարագրութիւնը այս հոգեկան շրջափոխութեան մասին: Նախ մեղքին պատիժը կը նկարագրէ մարգարէն՝ ըստ հետեւեալի.

«Ասոնք Տիրոջ խօսքերն են.

Մարդու որդի, երբ իսրայէլացիները իրենց երկրի մէջ կը բնակէին, անոնք պղծեցին զայն իրենց կեանքով ու գործով, իրենց ընթացքը դաշտանաւոր կնոջ պղծութեան պէս զգուելի եղաւ իմ առջեւ: Թափեցի անոնց վրայ իմ բարկութիւնս, որովհետեւ անոնք արիւն հոսեցուցին այդ երկրի վրայ, իրենց կուռքերով, պղծեցին զայն: Յրուեցի զանոնք ազգերու մէջ եւ սփռեցի զանազան երկիրներու մէջ: Դատապարտեցի զանոնք՝ ըստ իրենց գործերուն եւ ընթացքին: Երբ անոնք մտան այս (Հեթանոս) ժողովուրդներու մէջ, ուր որ գացին՝ իմ

սուրբ անուանս պղծուելուն պատճառ եղան, երբ մարդիկ ըսին. «Ասոնք Տիրոջ ժողովուրդն են, եւ Անոր երկիրէն կուգան»: Սակայն ես խնայեցի ասոնց իմ սուրբ անունիս համար, զոր Իսրայէլացիք պղծեցին այն ազգերու մէջ, ուր ցրուեցան անոնք» (Եզեկ. ԼԶ 16-21):

Ապա մարգարէն կը նկարագրէ այս ժողովուրդին Փրկութիւնը կամ վերստին սրբացումը: «Ուստի՝ Իսրայէլի տան այսպէս կ'ըսէ Տէրը. Ոչ թէ ձեզի համար կ'ընեմ ընելիքս, ով տունդ Իսրայէլի, այլ՝ իմ սուրբ անունիս համար, զոր պղծեցիք այն ազգերու մէջ, ուր ցրուեցաք: Պիտի սրբեմ իմ մեծ անունիս վրայէն այն պղծութիւնը, զոր դուք բերիք այն ազգերուն մէջ, ուր որ գացիք: Ու ազգերը պիտի ճանչնան, թէ Ես եմ Տէրը, կ'ըսէ Տէր Աստուած, երբ վերստին սրբանամ ձեր մէջ, անոնց աչքերուն դիմաց: Պիտի վերցնեմ ձեզ Հեթանոսներու մէջէն եւ պիտի ժողովեմ ձեզ բոլոր երկիրներէն, եւ պիտի տանիմ ձեզ՝ ձեր երկիրը: Ու ձեր վրայ «սուրբ» ջուր պիտի սրսկեմ եւ դուք պիտի «սրբուիք» ձեր բոլոր պղծութիւններէն, պիտի մաքրեմ կուռքերէն ձեր վրայ մնացած աղտերէն: Պիտի տամ ձեզի նոր սիրտ եւ պիտի օժտեմ ձեզ նոր ոգիով: Պիտի Հանեմ ձեր մէջէն քարեղէն սիրտը եւ մսեղէն սիրտ պիտի տամ ձեզի: Իմ Հոգիս պիտի դնեմ ձեր մէջ ու այնպէս մը պիտի ընեմ, որ դուք այլեւս արդար կեանք մը ապրիք, իմ օրէնքներս պահէք եւ գործադրէք զանոնք: Այն ատեն պիտի բնակիք այն երկրի մէջ, զոր ձեր Հայրերուն տուի: Ու դուք Ինծի ժողովուրդ պիտի ըլլաք եւ ես ձեզի՝ Աստուած: Պիտի ազատեմ ձեզ այն բոլորէն, որ կը պղծեն ձեզ: Զայն պիտի տամ ցորենին եւ պիտի առատանայ (այսինքն՝ ձեզի նոր սնունդ եւ նոր կեանք պիտի տամ), ու այլեւս սով պիտի չգայ ձեր վրայ: Պիտի բազմացնեմ ծառերուն պտուղները եւ արտերուն արդիւնքները (այսինքն՝ Հոգեւոր շնորհներով պիտի առատացնեմ ձեզ), որպէսզի այլեւս չզգաք սովի տանջանքը այդ ազգերուն մէջ: Ու պիտի յիշէք ձեր չար ճամբաները եւ ամբարիշտ գործերը եւ պիտի զգուհիք ձեր անօրէնութիւններէն եւ ձեր գարշելի գործերէն: Ու այս բոլորը ձեզի համար չէ, որ կ'ընեմ, կ'ըսէ Տէրը. այս իրողութիւնը թող բացայայտ ըլլայ ձեզի: Ուրեմն ամչցէք ձեր յոռի ընթացքէն եւ լրջացէք, ով Իսրայէլի տունդ» (Եզեկ. ԼԶ 22-23):

Ինչպէս ակնարկեցինք, մեղք ըսուածը, որ Հոգեպէս կ'ապականէ եւ կը պղծէ մարդը, մաս չի կազմեր մարդկային իստալական բնութեան, այնպէս ինչպէս ան ելած է Աստուծոյ ձեռքէն: Ինչ որ է աղտը կամ վէրքը մարդկային մարմնի վրայ, նոյն է մեղքը մարդուն զգացումներուն եւ մտածումներուն վրայ: Ստեղծագործութեան ընթացքին Աստուած տիեզերքը եւ կենդանական աշխարհը կը գոյացնէ իր խօսքով. «Աստուած ըսաւ» եւ մէջտեղ եկան անոնք: Իսկ մարդու պարագային իրմէ բան մը տուաւ անոր. «Ու Աստուած մարդը ստեղծեց երկրի Հողէն եւ անոր երեսին վրայ փչեց կեանքի շունչը եւ ՄԱՐԴԸ ԵՂԱԻ ՈԳԻ ԿԵՆԴԱՆԻ» (Ծն. Բ 7):

Եթէ սկզբնական այդ վիճակին մէջ մնացած ըլլար մարդը, միշտ «սուրբ» պիտի ըլլար. դժբախտաբար սակայն, ինչպէս ծանօթ է, մարդ չմնաց իր այդ անմեղութեան բարձրութեան վրայ, այլ ինչպէս այնքան իրապաշտ պատկերացումով կը Հաստատէ Սաղմոսաց գիրքը՝

«Մարդ ի պատուի էր եւ ոչ իմացաւ.

Հաւասրեցաւ անբան անասուններու եւ նմանեցաւ անոնց»:

Մարդ ֆիզիքական ու կազմական սերտ նմանութիւններ ունի անասուններու Հետ սակայն ըստ ձեւի եւ ըստ մտաց՝ անբաղդատելիօրէն տարբեր է անոնցմէ: Մարդ ուղղաբերձ է եւ օժտուած բանակաւորութեամբ: Նշանակալից է Աստուածաշունչի այն ակնարկութիւնը, թէ Ադամ «իրեն նման» ընկեր մը չգտաւ անասուններու մէջ: Սակայն մեղքի Հետեւանքով տակաւ առ տակաւ այլասերեցաւ եւ «Հաւասարեցաւ անբան անասուններու եւ անոնց նմանեցաւ»: Արդ, սուրբերը անոնք են, որ ելած են այդ անասնական վիճակէն եւ Աստուծոյ շնորհիւ վերակերտած են «ըստ Աստուծոյ պատկերը», որով ստեղծուած էր մարդը: Ասիկա ոչ միայն վերականգնում մը, վերանորոգութիւն մըն է, այլ մինչեւ իսկ վերաստեղծում մըն է, այսինքն՝ «նոր արարած» ըլլալ, ինչպէս կը Հաստատէ Պողոս Առաքեալ.

«Ով որ Բրիստոսի Հետ միացած է, նոր արարած մը եղած է.

Իր Հին կեանքը վերջ գտած է եւ նոր կեանք մը սկսած է»:

(Բ Կոր. Ե 17):

Ըստ այսմ՝ սուրբերը ջոկուած են միւս մարդերէն՝ ըլլալու համար նոր մարդ. զատուած են «մեռեալ» մարդերէն՝ ըլլալու համար «ապ-

րող» մարդ, ինչպէս կը Հաստատէ Յովհաննէս Առաքեալ. «Աստուած իր Որդին դրկեց, որպէսզի Անով (նոր) կեանք ունենանք» (Ա Յովհ. Դ 9):

Ասոյգ է, սուրբեր պարած են եւ կը շարունակեն անընդմեջ աշխարհի մէջ ու մարդոց հետ, սակայն իրականութեան մէջ «աշխարհէ» չեն, ինչպէս Քրիստոս ինք «աշխարհէ չէր», ըստ իր Հաւատարմին (Յովհ. Ժէ 14): Աւետարանի բացայայտ վարդապետութեան Համաձայն «աշխարհ» ըսուածը, որով կը Հասկցուի չար, անաստուած եւ պիղծ ընկերութիւնը, ունի իրեն յատուկ սկզբունքներ եւ օրէնքներ, որոնք խոտոր կը Համեմատին Աւետարանի օրէնքներուն եւ սկզբունքներուն հետ: Ըստ այսմ՝ ըսուած է նոր Կտակարանի մէջ.

«Մի սիրէք աշխարհը եւ անոր մէջ եղածները: Ով որ աշխարհը կը սիրէ, անծանօթ է Աստուծոյ սիրոյն: Աշխարհի մէջ եղածը ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ մարմնի ցանկութիւն, աչքի ցանկութիւն եւ երկրաւոր կեանքի ամբարտաւանութիւն, որոնք չեն բխիր Հօրմէ, այլ՝ աշխարհէն: Պիտի անցնին թէ՛ աշխարհը եւ թէ՛ իր ցանկութիւնները: Բայց ով որ Աստուծոյ կամքը կը կատարէ, յաւիտեանս պիտի մնայ» (Ա Յովհ. Բ 15-17):

«Գիտենք, որ մենք մաս կը կազմենք Աստուծոյ ընտանիքին, իսկ ամբողջ աշխարհը չարի տիրակալութեան ներքեւ է» (Ա Յովհ. Ե 19):

«Աստուծոյ Համար սուրբ կրօնաւորութիւնը այս է. ինք զինքը անարատ պահել աշխարհէն» (Յակ. Ա 27):

«Շնացողներ, չէ՞ք գիտեր, որ այս աշխարհիս սէրը թշնամութիւն է Աստուծոյ Հանդէպ, ուստի ով որ աշխարհի բարեկամ կ'ըլլայ, թշնամի կը դառնայ Աստուծոյ» (Յակ. Դ 4):

Մեր տուած սահմանումով «Սուրբ» կոչուածները լոկ տօնացոյցի անցածները չեն, այլ ԲՈՂՈՐ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԱՅԱՄ ՄԱՐԴԵՐԸ ԵՒ ՀՈԳԻՆԵՐԸ ՍՈՒՐԲ ԵՆ. այսինքն՝ այն մարդիկ, որոնք Հաւատացած են Աստուծոյ եւ Անոր Որդիին, ընդունած են Քրիստոսը իբրեւ իրենց Տէրը եւ Փրկիչը, զերծ պահած են իրենք զիրենք աշխարհի ապականութիւններէ եւ պղծութիւններէն. եւ որոնց վրայ վերանորոգուած է աստուածային «պատկերը», որ եղծուած էր մեղքով եւ այլասերումով: Օրհնուած են անոնք Աստուծմէ, ինչպէս կը Հաստատ-

ուուի վերջին դատաստանի առակին մէջ, երբ Քրիստոս դատաւորը իր աջ կողմը կեցող արդարացած Հոգիներուն կ'ըսէ. «Եկէք, Հօրս օրհնածները, եւ ժառանգեցէք աշխարհի սկիզբէն ի վեր ձեզի Համար պատրաստուած արքայութիւնը» (Մատթ. ԻԵ 34):

Սուրբ բառին այս իմաստով բոլոր քրիստոնեաները առաջին օրէն կոչուեցան «Սուրբեր»: Պօղոս Առաքեալ իր նամակները կ'ուղղէ «Սուրբ կոչուածներուն», որոնք կը բնակին Հռոմի կամ Կորնթոսի մէջ: Կամ պարզապէս «Սուրբերու», որոնք Եփեսոսի կամ Կողոսիայի մէջ կը գտնուին:

Այս ըլլալով Հանդերձ իրականութիւնը, թէ բոլոր արդարացած եւ փրկուած Հոգիները «սուրբ» են, այս բառին ընդհանուր եւ լայնաբոյն իմաստով, սակայն ինչպէս երկինքի երեսը «Աստղ քան զաստղ առաւել է փառօք», այնպէս է իրականութիւնը նաեւ սուրբերու պարագային: Սուրբ կայ, սուրբ ալ կայ: Մեր երկնակամարին վրայ միլիոնաւոր, թերեւ միլիոնաւոր աստղեր կան: Բայց անոնցմէ քանի՞ Հատին անունը գիտենք: Յետոյ, ամէնէն փայլուն երեւցած աստղերն ալ անպատճառ մեծագոյնները չեն. առհասարակ փայլուն են մեզի մօտ եղած աստղերը, Հեռուն, եւ աղօտ երեւցածներուն մէջ յաճախ անհունօրէն աւելի մեծ աստղեր կան: Նոյնն է պարագան սուրբերուն: Քիչերուն անունները գիտենք, եւ մեր գիտցածները անպատճառ մեծագոյնները չեն. «Կանանցածիներուն մէջ Յովհաննէսէն (Մկրտիչ) աւելի մեծ մարգարէ չէ ծնած. բայց Աստուծոյ արքայութեան մէջ եղած փոքրիկը անկէ մեծ է» (Ղուկ. է 28):

Որքան ալ շատ սուրբեր աւելցնենք մեր տօնացոյցին մէջ, դարձեալ անթիւ անհամար սուրբեր տօնացոյցէն դուրս պիտի մնան, որոնց անունները Աստուծոյ միայն գիտելի են: Մեզի ծանօթները եւ տօնացոյցի անցածները լոկ ներկայացուցչական բնոյթ ունին եւ դրուած են այնտեղ որպէս ուղեցոյցներ մեզի. իբրեւ այդ՝ աւելի քան բաւարար է անոնց այսօրուան թիւը: Տօնացոյցի անցնելով՝ Սուրբերը բարոյապէս ոչ կ'աւելնան եւ ոչ ալ կը պակսին իրենց եղածէն. մեր ճանաչումը, յարգանքը եւ յայտարարութիւնը, թէ այսինչ Հաւատացեալը սուրբերու կարգ անցած է, այդ սուրբի Հոգեվիճակի վրայ նշանախեց մը տարբերութիւն չընեն:

Տարբերութիւնը մեզի համար է, ապրողներու համար է, որպէսզի յիշենք եւ տոգորուինք տուեալ սուրբի հերոսութեամբ եւ նկարագրի գեղեցիկ գիծերով, կամ յիշենք ու պահենք անոր գրաւոր կամ անգիր գործերը՝ իբրեւ հոգեւոր ժառանգութիւն ու հարստութիւն: Սուրբին համար էականը եւ ցանկալին Աստուծոյ վերաբերմունքն է իրեն հանդէպ. իրենց գերագոյն ցանկութիւնն է սուրբ ըլլալ Աստուծոյ առջեւ, վասնզի իրենց վարձքը, իրենց փառքը Անկէ միայն կրնան ստանալ: Մարդոց յարգանքը իրենց համար այնքան արժէք ունի, որքան՝ իրենց նկարին գլխուն շուրջ լուսապսակ դնելը:

Պիտի գայ ժամանակ, երբ ի սպառ պիտի խափանուի սուրբերու յիշատակութիւնը մեր երկրաւոր եկեղեցիներու մէջ, բայց երբեք պիտի չզաղրին անոնք Աստուծոյ ներկայութեան եւ շնորհաց մէջ ապրելէ:

ՍՈՒՐԱԵՐՈՒ ՅԱՐԳՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐՈՒ ՄԷՋ

Պատմական իրողութիւն է, որ կարգ մը սուրբեր առաւել եռանդ եւ արդիւնաւորութիւն ցոյց տուած են եկեղեցիի ծառայութեան մէջ, գերագոյն նուիրումը եւ զոհողութիւնը յանձն առած են անոնք Աստուծոյ սիրոյն եւ իրենց կրօնքի ճշմարտութեան ի վկայութիւն: Ուստի եկեղեցին ալ ի նշան երախտագիտութեան, ու մանաւանդ իր զաւակները անոնց օրինակով խրախուսելու եւ վարակելու համար, զանոնք արժանացուցած է տարեկան յիշատակութեան: Ոչինչ այնքան վարակիչ է, որքան՝ օրինակը: Հետեւաբար սուրբերը տօնացոյցին անցած են աւելի երախտագիտական եւ դաստիարակչական նպատակով, քան ուրիշ նկատումներով: Այժմ կարելոր հարց է, թէ այդ նպատակը ի զօրո՞ւ է նաեւ մեր ժամանակներու մէջ: Տօնացուցական սուրբերը կը ծառայե՞ն այն նպատակին, որուն համար տօնացոյցի անցած են:

Պարտինք խոստովանիլ, որ այսօր մեր եկեղեցիին մէջ սուրբերու յիշատակութիւնը հասած է այնպիսի վիճակի մը, որ ոչ անոնց պատիւ կը բերէ եւ ոչ ալ մեզի: Բացի մեր նուիրապետական չորս կեդրոններէն եւ անոնց անմիջական շրջանակէն, գործնականապէս գրեթէ

դադրած է սուրբերու յիշատակութիւնը մեր եկեղեցիներու մէջ, քանի որ դադրած են շաբթուան սովորական օրերու ժամասացութիւնները, որոնց ընթացքին առ հասարակ կը յիշատակուին անոնք: Անոնց անունները մնացած են լոկ մեր տարեկան օրացոյցներուն մէջ: Իսկ ուր որ կը յիշատակուին անոնք ամենօրեայ ժամերգութեանց ընթացքին, այդ յիշատակութիւնը երբեմն կը կատարուի այնքան մեքենական, այնքան անոգի եւ յաճախ անպատկառ կերպով, որ ոչ մէկ սուրբ ինքզինքը պատուուած պիտի զգար այդ կերպ յիշատակութեամբ... Ուրիշ խօսքով շինիչ է, վարակիչ է, թելադրական է:

Միւս կողմէն, անոնք գրեթէ դադրած են մեզի ներշնչումի աղբիւր դառնալէ: Ստոյգ է, երբեմն կը խրախուսուինք Վարդանանց կամ Ղեւոնդեանց յիշատակով. բայց այդ խրախոյսը անուանական ու մակերեսային ըսուելու աստիճան աննշան ու ժամանակաւոր է. որովհետեւ կեանքի այլասերիչ ազդակներու դէմ պայքարելու եւ քրիստոնէական իտէալներու տէր մնալու անոնց վճռականութենէն քիչ բան կամ գրեթէ ոչինչ կը փոխանցուի ու կը մնայ մեզի հետ: Տարուան մէջ քանի՞ տեղեր մեր ժողովուրդի զաւակները լուր կ'ունենան որ, Համբարձման Հինգշաբթիին յաջորդող վեցերորդ Հինգշաբթին ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊԻ օրն է, որուն ներքեւ Ս. Փրկիչ Հիւանդանոցի օրացոյցին մէջ ծանօթագրուած է. «ՏՕՆ ՄԵԾ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ, կատարի հանդէս յամենայն եկեղեցիս», իսկ միւս նուիրապետական Աթոռներու օրացոյցները ունին «ՏՕՆ ԱԶ ԳԱՅԻՆ»: Իսթանպուլի մեր եկեղեցիներու մէջ ոչ միայն «Հանդէս» չի կատարուիր, այլ երբեմն Ս. Պատարագ անգամ չմատուցուիր: Իսկ մեր վարժարաններէն ոչ մէկը բնականաբար կը յանդգնի յիշեցնել իր աշակերտներու, զէթ անցողակի կերպով, թէ այդ օր մեր գիրբրու հնարիչ, մեր Ս. Գրքի թարգմանիչ եւ մեր դպրութեան հիմնադիր երկու սուրբերու յիշատակն է: Խօսք անգամ չենք կրնար ընել դպրոցական կամ այլ կարգի հանդէսներու մասին: Իսկ արտասահմանի մէջ քանի՞ տեղեր արդեօք կը նշուի այդ օրը իբրեւ «Տօն Ազգային»: Պէյրութի պէս հոծ համայնքի մը մէջ ու անոր այնքան ազատ պայմաններու մէջ գործող «ազգային» վարժարաններէն քանի՞ հատը արդեօք «տօն» կամ «Հանդէս» կը սարքէ այն օր...

ՀԵՏԵՒՈՒԹԻՒՆ ՆԵՐ ՍՐԲՈՑ ՏՕՆԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵՆԷՆ

Այս բոլորով Հանդերձ, այսինքն՝ սուրբերու տարեկան յիշատակութիւնը, կարեւոր չափով կորսնցուցած ըլլալով Հանդերձ իր գործնական նշանակութիւնը մեր առօրեայ Համայնքային կեանքին մէջ, կը պահէ սակայն իր կարեւորութիւնը սկզբունքային եւ վարդապետական գետնի վրայ: Նախ ՀՈԳԻՆԵՐՈՒ ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ Քրիստոնէական վարդապետութեան գործնական փաստը եւ արտայայտութիւնն է սրբոց տարեկան յիշատակութիւնը: Անոնք աշխարհիկ Հերոսներու կամ ազգերու մեծ վարիչներու նման չէ որ կ'ոգեկոչուին: Այս վերջիններու պարագային՝ ազգեր եւ ժողովուրդներ յարգանքով կը կենան անոնց «բարոյական ներկայութեան» եւ կը պանծացնեն, կը ծանօթացնեն եւ կ'աշխատին վառ պահել անոնց ոգին եւ ստեղծած դրութիւնները: Իսկ եկեղեցիի Համար Սուրբերը կենդանի Հոգիներ են, որոնք իրենց գոյութիւնը կը շարունակեն Հոգեղէն ոլորտի մէջ մշտապէս եւ կ'ընեն մեզի գործնականապէս օգտակար Հանդիսանալ: Անոնց գոյութիւնը, թէեւ անտեսանելի, բայց այնքան իրական է, որքան էր երկրի վրայ իրենց ապրած միջոցին: Անոնց գոյութիւնը տարբեր չէ բնաւ երկնային Հրեղէն եւ Հոգեղէն էակներու՝ Հրեշտակներու գոյութենէն: Կ'երգենք Մարտիրոսաց շարականներէն մէկին մէջ սուրբերու մասին.

«Ընդ վերին զօրսն դասակցեալ եւ զգեցեալ գլոյս.

Եւ զանմահութեան լուսալ զճայն կենարարին՝ ասելով.

Եկայք վեր օրհնեալք, ի Հօրէ, ժառանգեցէք զանպատում զկեանսն»:

Երկրորդ՝ եւ իբրեւ շարունակութիւնը վերեւի գաղափարին, սրբոց յիշատակութիւնը կը Հաստատէ գոյութիւնը «ԵՐԿՆԱԻՈՐ ԵԿԵՂԵՑԻՒ»: Քանի որ եկեղեցին կը Հաւատայ Հոգիներու անմահութեան, անկէ ինքնին կը Հետեւի, որ եկեղեցին իր գոյութիւնը կը շարունակէ նաեւ Հոգեղէն աշխարհի մէջ: Ինչպէս այս երկրի վրայ, այնպէս ալ այնտեղ եկեղեցին Հաստատուելու խումբերէ կը բաղկանայ: Կայ նախ վարդապետացած Հոգիներու խումբը, զոր սովոր ենք կոչել «Յաղթական եկեղեցի»:

Կայ նաեւ, այսպէս ըսենք, ապաշխարողներու խումբը, որ կը բաղկանայ այն Հաւատացեալ Հոգիներէ, որոնք թէեւ Հաւատաւոր, բայց դժբախտաբար մեղաւոր մտած են անդենական: Ասոնք ալ կը կոչուին «Տառապող եկեղեցի» աստուածաբաններու կողմէ: Այս վերջին խումբին Համար Կաթոլիկ եկեղեցին ունի «Քաւարանի» վարդապետութիւնը: Իսկ մենք եւ արեւելեան միւս եկեղեցիները՝ Հոգեհանգստեան սովորութիւնը: Եթէ ՀՀաւատանք, այսպէս ըսենք «ապաշխարող» Հոգիներու գոյութեան, այն ատեն անիմաստ կը դառնայ Հոգեհանգստը, որովհետեւ կրօնական այս սովորութեան նպատակը երբեք ննջեցեալը յիշել չէ, բառին սովորական եւ աշխարհիկ իմաստով, այլ՝ աղօթել անոր Համար, ինչպէս կը Հաստատեն մեր Հոգեհանգստեան շարականները:

«Որ յանէից ստեղծող գոյից, Արարչակից Հօր, Բանդ Աստուած, Թողութիւն շնորհեա՛ննջեցիւրց քոց ծառայից»:

Այս իրողութենէն կը Հետեւի ուրիշ վարդապետական կարեւոր տեսութիւն մը, զոր կը կոչենք «ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ»: Ըստ այս վարդապետական տեսութեան՝ Հոգեւոր Հաղորդակցութիւն գոյութիւն ունի երկրաւոր եկեղեցիի եւ երկնաւոր եկեղեցիի միջեւ: Անոնք, որ դուրս են այս Հաղորդութենէն, արդէն իսկ դատապարտեալ են: Ըստ այս տեսութեան, Հոգեւոր շնորհները, արեան պէս, շրջան կ'ընեն եկեղեցիի Հաւաքական եւ ընդհանուր մարմինին մէջ, սնունդ Հայթայթելով այն անդամներուն, որոնք պէտք ունին եւ կրնան ստանալ զայն:

Ըստ այս տեսութեան, եկեղեցին ոչ միայն երկրի վրայ ապրող, շնչող եւ պայքարող քրիստոնեաներու Հաւաքականութիւնն է, այլ նաեւ ամբողջութիւնը անոնց, որոնք յաղթական կեանք մը վարելէ յետոյ արդարացած Հոգեւոր անցած են անդենական, եւ կամ թէեւ Հաւատացեալ, բայց անկատար Հեռացած են այս աշխարհէն: Ասոնք բոլորը յաջս Աստուծոյ եւ իրականութեան մէջ, կը կազմեն մէկ ամբողջութիւն, սա տարբերութեամբ միայն, որ մէկ մասը մարմնաւոր են եւ կ'ապրին երկրի վրայ, իսկ միւս մասը Հոգեւոր են եւ կ'ապրին Հոգիներու աշխարհին մէջ: Ինչպէս որ մարմնաւոր եկեղեցիի Հարազատ եւ անկեղծ անդամները իրարմով կը Հետաքրքրուին, իրարու կ'օգնեն, իրարու Համար կ'աղօթեն ու կը բարեխօսեն Աստուծոյ առ-

ջեւ, նոյնն է պարագան երկնային եկեղեցիի համար: Անոնք ալ մեզմով կը հետաքրքրուին, եւ իրենց կարողութեան ու կարելիութեան սահմաններուն մէջ կ'օժանդակեն երկրաւոր եկեղեցիին, կամ անդենականի անկատար հաւատացեալներուն: Այս է, որ կը կոչենք «Հաղորդութիւն Սրբոց», որ ինքնին ընդարձակ նիւթ մըն է, որուն աւելի մանրամասնութեան չենք կրնար մտնել այս առիթով:

Վերի գաղափարին անմիջական շարունակութիւնը եւ արդիւնքն է «ՍՐՐՈՑ ԲԱՐԵՆՕՍՈՒԹԻՒՆԸ»: Եթէ կը հաւատանք երկնաւոր Յաղթական եկեղեցիի գոյութեան, պէտք է հաւատանք նաեւ «ՍՈՒՐԲԵՐՈՒ ԲԱՐԵՆՕՍՈՒԹԵԱՆ» վասն երկրաւոր եկեղեցիին, որ կը մարտնչի չարին զօրութեան եւ սադրանքներուն դէմ: Ու այս փոխադարձ աղօթքը, փոխադարձ բարեխօսութիւնը միմեանց համար, յատկապէս կը կազմէ ամբողջ Քրիստոնէական պաշտամունքին, յատկապէս հին պատմական եկեղեցիներուն մէջ: Մեր Մարտիրոսաց շարականներու մէջ ամէնէն աւելի շեշտուած կէտը այս է. նախ միասնաբար՝ այսինքն՝ երկնային եկեղեցին ու երկրաւոր եկեղեցին միացած՝ Աստուծոյ կ'աղօթեն, Աստուած կը փառաբանեն ու միասնաբար Աստուած կը պաշտեն, եւ ապա՝ կը հայցենք սուրբերուն աղօթքը մեզի համար, ու մենք կ'աղօթենք բոլոր ննջեցեալներու համար: Այսպէս կը ստեղծուի օրինական եւ ընտանեկան միասնականութիւն մը, համերաշխութիւն մը, որ էութիւնը եւ նպատակը կը կազմէ Աւետարանի մէջ այնքան յեղեղուած «երկինքի» կամ «Աստուծոյ թագաւորութիւն» գաղափարականին:

Թէ արդարեւ մեր պաշտամունքները Սուրբերուն հետ միասին կը կատարուին, կը հաստատեն Մարտիրոսաց շարականներէ յառաջ բերուած հետեւեալ կտորները.

«Զքեզ, ահաւոր թագաւոր յաւիտենից՝

Այսօր ընդ դասս վկայից քոց բարեբանեմք»:

.....

«Ուստի եւ մեք հաւատացեալքս Քրիստոսի Աստուծոյ,

Ընդ նոսին (Սրբոց) խնդրեմք զթողութիւն մեզաց մերոց»:

.....

«Ժողովեալքս ի յիշատակ սրբոց մարտիրոսաց,
Միաբանութեամբ (այսինքն՝ սրբոց հետ միանալով)

Երգեսցուք օրհնութիւն ի բարձունս երկնաւոր թագաւորին»:

Սուրբերուն տարած յաղթանակներով եկեղեցին ալ կը պարծենայ, եւ երգով ու օրհնութեամբ Աստուծոյ փառք կուտայ:

«Քանզի հեղմամբ արեան սոցա (սրբոց) պարտեցաւ թշնամին,
Եւ մեծարեալ պարծի Սիօն (այսինքն՝ եկեղեցին),

Երգելով օրհնութիւն ի բարձունս, երկնաւոր թագաւորին»:

Ստորեւ յիշուելիք համարին մէջ սուրբերը «դասակցեալ» են «երկնաւոր զուարթուններուն»՝ հրեշտակներուն հետ, եւ եկեղեցին անոնց «սրբութեան» վրայ «բերկրելով» օրհնութեան երգ կ'երգէ Աստուծոյ:

«Դասակցելոցն ընդ զորոս վերին զուարթոցն,

Յիշատակաւ բերկրելով ի սրբութիւն սոցա,

Երգեսցուք օրհնութիւն ի բարձունս երկնաւոր թագաւորին»:

ՍՈՒՐԲԵՐՈՒ ՅԱՐԳԱՆՔԻ Ն ՈՒՂԻՂ ԸՄԲՈՒՆՈՒՄԸ

Բողոքական եկեղեցիներ պաշտօնականացած կամ գործածելով թէքնիք բառը, «կանոնականացած» սուրբերու տարեդարձներ չունին: Այս է կարեւոր տարբերութիւններէն մէկը Բողոքական եկեղեցիներու եւ պատմական Առաքելական եկեղեցիներու միջեւ: Ստոյգ է, թէ Քրիստոնէական եկեղեցիի այս շատ իմաստալից գրութիւնը, սուրբերու յարգանքը, երբեմն չափազանցութիւններու տարուած է, որոնց յարգանքին մէջէն եթէ պարպուի սրբոց հաղորդութեան ազնիւ գաղափարը, կրնայ վերածուիլ սրբապաշտութեան կամ կուսապաշտութեան: Սուրբերէն շատերուն շուրջ հիւսուած են հեթափայտի պատմութիւններ եւ մեծագործութիւններ, որոնք սակայն սովորական են բոլոր հերոսներուն եւ ժողովրդային դէմքերուն համար: Անոնց մասունքները, արժանի ըլլալով հանդերձ լուրջ եւ անկեղծ յարգանքի, եւ մինչեւ իսկ անոնք իրենց մէջ հրաշագործ զօրութիւն մը պարունակելով հանդերձ, ինչպէս կը պատմուի մինչեւ իսկ Աստուածաշունչին

մէջ Եղիսէ մարգարէի սակորներու մասին (Դ Թագ. ԺԳ 21), երբեմն չափազանցութեանց տարուած եւ պատճառ եղած են զեղծումներու:

Սակայն ընդունուած ճշմարտութիւն է, թէ ոեւէ դրութեան մը մէջ կամ բարոյական օրէնքի մը շուրջ պատահած չարաշահութիւնները եւ զեղծումները պատճառ մը չեն, որ դրութիւնը մերժուի եւ նետուի, կամ այդ բարոյական օրէնքը մէջտեղէն վերնայ, ինչպէս օրինակ, եղաւ վերջերս Անգլիոյ խորհրդարանին մէջ: Անգլիական օրէնքի մէջ պատիժ սահմանուած էր միասեռականութեան դէմ, սակայն նախ գրեթէ չէր գործադրուեր օրէնքը, եւ ապա մեր օրերու տիրող ապաբարոյ մտայնութեամբ անհասական ազատութեան կաշկանդում նկատուեցաւ այս օրէնքը եւ մէջտեղէն վերցուեցաւ խորհրդարանական որոշումով, ի գայթակղութիւն գրեթէ ամբողջ աշխարհի: Մեր Տէրն ալ երբ այնքան խիստ բառերով կը ձաղկէ փարիսեցւոց յանուն օրէնքի կատարած շեղումները եւ աննշան օրէնքներուն տրուած չափազանցեալ բծախնդրութիւնը, անտեսելով աւելի կարեւորները, երբէք օրէնքը մէկզի չնետեց, այլ ըսաւ. «Ձեկայ օրէնքը լուծարքի ենթարկելու, այլ՝ իր կատարումին եւ կատարելութեան բարձրացնելու»: Պօղոս Առաքեալ երբ կը շեշտէր հաւատքով արդարանալու վարդապետութիւնը, չէր ուրանար գործերով կատարելութեան հասնելու կարեւորութիւնը, ուստի կը բացագանչէ. «Արդ, մենք հաւատք քարոզելով օրէնքը կը խափանենք, քաւ լիցի» (Հռովմ. Գ 31): Այլապէս պիտի չտար այն բազմաթիւ բարոյական խրատները, աստուածսիրութեան, եղբայրսիրութեան եւ օրինապահութեան, որոնցմով լեցուն են իր թուղթերը:

Այնպէս ալ՝ Սրբոց յարգութեան մէջ եթէ սպրդած էին ինչ-ինչ չափազանցութիւններ, պայքարելով հանդերձ այս շեղումներուն դէմ, շիտակ չէր եւ լուրջ պատճառ մը չկար Քրիստոնէական այս հնադարեան օրէնքը եւ ուսուցումը դուրս նետելու անոր գանձարանէն եւ գինարանէն: Որովհետեւ Սրբոց Հաղորդութեան սկզբունքը եկեղեցիի մեծ հարստութիւններէն մէկն է, որմէ եթէ զրկուի, կ'աղքատանայ: Սրբոց բարեխօսութիւնը եկեղեցիի ամէնէն ազդու գէնքերէն մէկն է, որ եթէ իր ձեռքէն առնուի, կը տկարանայ եկեղեցին: Մեր սրբոց շարականները այնքան զեղեցկօրէն կը բացայայտեն այս ճշմարտութիւնը.

«Ճգնաւորք Քրիստոսի, Հեղմամբ արեան ձերոյ
Զկուապաշտութիւն բարձիք յաշխարհէ»:
Ճշմարտութեան քարոզք եւ լուսաւորիչք տիեզերաց,
էք պարծանք եկեղեցւոյ եւ յոյս հաւատացելոց»:
«Յաղթողք նահատակքն Քրիստոսի,
Որք քաջութեամբ մարտեան ընդ թշնամւոյն»:
«Ճգնաւորք Քրիստոսի, մոլորելոց առաջնորդք
Աղբիւր կենաց էք յաշխարհի Հեղմամբ սուրբ արեան ձերոյ»:

Բողոքականութիւնը, Սրբոց յարգանքը մէկզի նետելով, ոչ միայն իր կապը խզած եղաւ պատմական ու առաքելական եկեղեցիէն, այլ՝ մինչեւ իսկ Սրբոց Հաղորդութենէն (Բղղ. Ա Յովհ. Ա 7): Առ հասարակ երբ կը խզուի Հաղորդութիւնը երկինքի Սրբոց Հետ, կը կտրուի նաեւ երկրաւոր սուրբերու, այսինքն՝ հաւատակից քրիստոնեաներու Հետ, եւ եկեղեցին կը վերածուի բեկորներու, ինչպէս արդարեւ եղած է բողոքականութեան մէջ. հաւանաբար իրենք ալ չեն գիտեր թիւր, թէ քանի տեսակ խումբերու բաժնուած են անոնք ներկայիս:

Ստոյգ է. «Մի է միջնորդ Աստուծոյ եւ մարդկան, մարդն Յիսուս Քրիստոս» (Ա Տիմ. Բ 5): Այս հաւաստումը ինքնին կը հաստատէ Աւետարանական այն խորունկ ճշմարտութիւնը, թէ մարդկութեան փրկութիւնը Քրիստոսով եղաւ, ինչպէս կը լուսաբանէ վերոյիշեալ մէջբերումին յաջորդող տողերը. «Քրիստոս իր անձը փրկանք տուաւ ամէնքի փոխարէն»: Այս երբեք չի նշանակեր, որ մենք կամ սուրբեր չենք կրնար միջնորդել կամ բարեխօսել այլոց համար: Ընդդ այս մեջբերումին նախընթաց խօսքերը կը հաստատեն, որ կրնանք: Կ'ըսէ Առաքեալը. «Արդ, կ'աղաչեմ ամէն բանէ առաջ աղօթք, խնդրուածք, պաղատանք, գոհութիւն մատուցանել բոլոր մարդերուն համար» (Ա Տիմ. Բ 1, 2): Ասիկա «բարեխօսութիւն» ըսուածին էութիւնն է: Արդարեւ, Աստուածաշունչին մէջ Աստուած միշտ Հաշուի առած է իր ծառաներուն բարեխօսութիւնը կամ միջնորդութիւնը այլոց համար: Ըստ այնմ Աստուած պատրաստակամութիւն յայտնեց խնայելու ամբողջ Սողոմ Գոմորին, ընդառաջելով Աբրահամի միջնորդութեան, եթէ այնտեղ մինչեւ իսկ 5 արդար գտնուէր: (Ծն. ԺԸ, 16-31): Աւելի յստակ յիշատակութիւն կայ այս մասին Մակաբայեցւոց Բ. Գիրքի ԺԵ 12-ի

մէջ, ուր Յուդա Մակաբէ կը պատմէ, թէ, տեսիլքի մէջ նշմարած է, որ Ռնիա նախկին քահանայապետը, «ձեռքերը բարձրացուցած թախանձանքով կ'աղաչէր Աստուծոյ երբայական ժողովուրդին համար»։ Կը տեսնէ նաեւ «փառաւոր ծերունին եւ Աստուծոյ մարգարէն՝ Երեմիան, որ կը սիրէ իր ազգակից հրեաները եւ կը մատուցանէ անպակաս աղօթքներ Աստուծոյ՝ մեր ժողովուրդին եւ սուրբ քաղաքին՝ Երուսաղէմին համար»։ Ննջեցեալներու հետաքրքրութիւնը ողջերու մասին բացայայտօրէն կը հաստատուի Աղքատ Ղազարոսի առակին մէջ (Ղուկ. ԺԶ 19-31)։ Հին Կտակարանի արդարները կը ներկայացուին նոր Կտակարանի մէջ իբրեւ «բազմութիւն վկայից» (Եբր. ԺԲ 1), զորս Քրիստոնեաներ պարտին «յիշել» եւ «անոնց հաւատքին նմանող ըլլալ» (Եբր. ԺԳ 7)։

Սակայն սրբոց յիշատակի յարգութիւնը եւ անոնց բարեխօսութեան դիմելը կը հիմնուի առաւելաբար եկեղեցիին Քրիստոսի խորհրդական մարմինն ըլլալու աւետարանական ճշմարտութեան վրայ. «Թէեւ շատուր ենք, բայց ամէնքս մէկ մարմին կը կազմենք՝ Քրիստոսի մէջ միացած. իւրաքանչիւրս իրարու անդամ ենք», ու տեսակ-տեսակ շնորհները, որոնք տրուած են մարմնի այս կամ այն անդամին, տրուած են անոնք ամբողջ մարմինին օգտին համար (Հռովմ. ԺԲ 4-8)։ Այլուր կ'աւելցնէ Առաքեալը. «Այսուհետեւ սուրբերու քաղաքացիներ էք եւ Աստուծոյ ընտանիքը»։ Եւ ընտանիքի անդամները բնականօրէն իրարու ձեռնտու կ'ըլլան ուր որ կրնան։ Սրբոց բարեխօսութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ ընտանիքի կարող ու կատարեալ անդամներու օժանդակութիւնը տկար եւ թերած անդամներուն։

ՍՐԲՈՑ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Այժմ, երբ սուրբերու հետ հեռուէն ու մօտէն առնչութիւն ունեցող ինչ-ինչ վարդապետական ու գործնական հարցերուն համառօտիւ անդրադարձանք, նախ քան անոնցմէ իւրաքանչիւրին մասին խօսիլը՝ ակնարկ մը նետենք նաեւ հետաքրքրական սա հարցին վրայ, թէ ե՞րբ եւ ի՞նչ պայմաններու տակ այս տօնելի մարդիկը տարեկան յիշատակութեան արժանացած են, ինչպէ՞ս սկսուած է սրբոց տօնակատարութիւնը։

Բացայայտ է, որ Ս. Գրոց մէջ կը թելադրուի յարգել հրեշտակները եւ մտիկ ընել անոնց պատգամներուն։ Սուրբերն ալ հրեշտակներու պէս են, Աստուծոյ ամենահաւատարիմ ծառաները։ Օրինակ՝ Աստուած կը պատուիրէ. «Հրեշտակ մը պիտի դրկեմ քու առջեւդ, պահպանելու համար քեզ ճամբորդութեանդ ընթացքին, զգոյշ եղիր եւ մտիկ ըրէ անոր, քանզի իմ անունս, հեղինակութիւնս անոր վրայ է»։ (Ել. ԻԳ 20-22, Բղդ. Յես. Ե 13: Դան. Ը 15, Ժ 10: Ղուկ. Բ 9: Գործ. ԺԲ 7: Յայտ. Ե 11, է 1)։

Քրիստոնէական եկեղեցիին մէջ շատ բնականօրէն սկսան յարգուիլ եւ յիշուիլ անոնք, որ հալածանքներու ժամանակ իբրեւ Քրիստոնեայ ձերբակալուած ու մահուան դատապարտուած էին, երբ մերժած էին իրենց եղած առաջարկը՝ ուրանալու գՔրիստոս եւ դառնալու հին աստուածներուն։ Սուրբերու տօնակատարութիւնը սկսաւ անոնց մարտիրոսական մահուան տարեդարձային յիշատակութեամբ։ Եկեղեցիին հոգածութեամբ գրի կ'առնէր առաջին մարտիրոսներու չարչարանաց պարագաները եւ շրջաբերական նամակներու ձեւին տակ կը դրկէր զանոնք մօտակայ եւ շրջակայ եկեղեցիները, որպէսզի կարդացուէին անոնց հաւաքոյթներու ընթացքին՝ այսպէս ընդարձակելով անոնց յարգանքի շրջանակը յօրինակ եւ ի քաջալերութիւն բազմաց։ Համաձայն Եւսեբիոս եկեղեցական պատմիչի (260-340)՝ Իզմիրի եկեղեցին շրջաբերական նման նամակով մը կը յանձնարարէ, որ կրօնական արարողութիւններ կատարուին այդ եկեղեցիի առաջին եպիսկոպոսներէն Պօղիկարպոսի մահուան օրը, որ պատահած էր 155 թուին Փետր. 23ին։ Ու այս հարցի վերաբերեալ հատուածի բառերը ճշգրտօրէն կ'արտայայտեն այն նպատակը, զոր եկեղեցին ի մտի ունեցած է այսպիսի տարեդարձներու տօնակատարութեանց մէջ։ Պօղիկարպոս իր մարտիրոսական կեանքը կնքած էր ողջ-ողջ եւ հրապարակային այրումով, երբ յայտարարեց, որ «86 տարիներէ ի վեր (69-155) Քրիստոսի կը ծառայեմ եւ այժմ չեմ կրնար ուրանալ զԱյն»։ Այս մարտիրոսական շրջաբերականին մէջ ըսուած է. «Ի վերջոյ հաւաքեցինք իր ոսկորները, որոնք մեզի համար աւելի թանկագին են, քան անգին գոհարները եւ աւելի մաքուր են, քան ոսկին, եւ դրինք այնպիսի տեղ մը, ուր պատշաճ էր, որ հանգչէին այդ ոսկորները։ Ու եթէ հնարաւոր ըլլայ մեզի համար նորէն հաւաքուիլ, շնորհէ մեզի

Աստուած, որ ուրախութեամբ տօնախմբենք իր մարտիրոսութեան տարեդարձը, այսպէս վերյիշելով անոնք, որ մղեցին փառապանծ պատերազմը եւ ուսուցանել ու զօրացնել անոնց օրինակովը յատկապէս անոնք, որ պիտի գան մեզմէ յետոյ»: Մարտիրոսներու յիշատակին ընծայուած այս տարեկան յարգանքը եւ տօնախմբութիւնը առ Հասարակ գոհաբանական ու յաղթական պաշտամունք մըն էր եւ ոչ երբէք սգահանդէս:

Ժամանակի ընթացքին մարտիրոսներու միացան «խոստովանողները», այսինքն՝ այն քաջարի քրիստոնեաները, որ յանուն Քրիստոսի եւ իրենց կրօնքին՝ սաստիկ չարչարանքներու եւ բանտերու դատապարտուած էին, բայց ողջ մնացած էին ի վերջոյ եւ Համակրանք կը վայելէին եկեղեցիի մէջ, այդ յարգանքը եւ Համակրանքը սովորաբար կը շարունակուէր նաեւ յետ մահու, իրենց վկայարաններուն կամ գերեզմաններուն վրայ տարեկան Հոգեւոր Հանդիսութեամբ: Ասոնց վրայ աւելցան «ԿՈՅՍՏՆՐԸ»՝ այր կամ կին, որոնք Հոգեւոր նկատումներով կամաւորաբար կը հրաժարէին ամուսնական եւ աշխարհիկ կենցաղէ եւ կուսակրօն կեանք մը կ'ապրէին սրբութեամբ: Ասոնց ժուկալութիւնը եկեղեցիի կողմէ Հաւասար նկատուեցաւ մարտիրոսութեան: Ասոնք մեռցուցած էին բարոյապէս իրենց մարմինը Քրիստոսի սիրոյն, ապրելու Համար Հոգիի կեանքով՝ միացած Քրիստոսի: Ասոնց միացան ՃԳՆԱԻՈՐՆԵՐԸ, որոնք, ձգելով աշխարհը իր բոլոր ապականութիւններով, ցանկութիւններով ու խաբկանքներով, քաշուեցան ամայի վայրեր ապրելու Համար Աստուծոյ ներկայութեան եւ շնորհաց մէջ: Մարդիկ, որոնք, «յօժարութեամբ բարձին զկարիս մարմնոյ», որոնք «վերնական յուսոյն ակն ունելով, գերկրաւորս արհամարհեցին» արժանանալու Համար երկնաւորին: Ի վերջոյ ասոնց վրայ աւելցան բոլոր անոնք, որ եկեղեցիին բացառիկ ծառայութիւն մատուցած էին զանազան կերպերով, յատկապէս բարեկարգելով եւ ճոխացնելով անոր պաշտամունքը: Արդարեւ, բոլոր անոնք, որ Հերոսական առաքինութեամբ եւ բացառիկ նւիրումով ծառայեցին եկեղեցիին, արժանացան բացառիկ յիշատակութեան թէ՛ Հասարակ ժողովուրդի փափաքով եւ թէ՛ եկեղեցական իշխանութեան Հաւանութեամբ եւ Հաստատումով: Եկեղեցին ասոնց մէջ նշմարած է Աստուծոյ աւելի Հաւատարիմ ծառաները եւ աւելի մօտիկ բարեկամներ,

որոնց սուրբ կեանքը եւ անձնուէր ծառայութիւնը արժանի է գիրենք Աստուծոյ մասնաւոր սիրոյն: Եկեղեցին յարգած է ասոնց մէջ յայտնուած աստուածային շնորհները եւ աստուածային զօրութիւնը, որով այս մարդիկ կրցած են իրական եւ բարոյական Հրաշքներ գործել իրենց երկրաւոր կեանքին մէջ յօգուտ երկրաւորներուն եւ կը շարունակեն գործել նաեւ իրենց երկնայնի կեանքին մէջ:

Ժամանակի ընթացքին եկեղեցիի Հայրերը, Հիմնուելով եկեղեցիի օրկանիկ միութեան գաղափարին եւ «Հաղորդութիւն Սրբոց» վարդապետութեան վրայ, սկսան ուսուցանել, որ սրբոց աղօթքները ի զօրուէին աստուոր Հաւատացեալներու Համար:

Առ Հասարակ եկեղեցին Հաւաքաբար եւ գրեթէ ինքնաբերաբար իր սէրը եւ յարգանքը կը յայտնէր մարտիրոսներու եւ սուրբերու Հանդէպ, եւ թեմին եպիսկոպոսը, եթէ Հակառակելու լուրջ պատճառ մը չունենար, կը Հաստատէր Հասարակաց այս վճիռը մարտիրոսացեալ կամ բացառիկ սրբութեամբ մահացեալ քրիստոնեաներու մասին: Դարեր ետքն է, որ յատկապէս աւելի կարգապահութեան տէր եկեղեցիներու մէջ Հոգեւոր իշխանութիւնը ձեռք առաւ այս գործը, եւ դարձեալ ժողովուրդային կամ տեղական ստորագաս Հոգեւոր իշխանութեանց խնդրանքը քննութեան ենթարկելով, մարտիրոս մը կամ առաքիլի անձ մը սուրբ կը Հռչակէր եւ տարեկան տօնախմբութեան արժանի կը կացուցանէր:

Մեր եւ Արեւելեան գրեթէ բոլոր եկեղեցիներու մէջ կանգ առած է սուրբեր կանոնացնելու կամ տօնացոյցի անցնելու սովորութիւնը: Մեր եկեղեցիին Համար այդ ցանկը փակուած է Հինգերորդ դարուն, երբ որդեգրեցինք մեր դրացի եկեղեցիներու մէջ արդէն իսկ ի կիրարկութեան եղող ցանկը, որ այդ իսկ պատճառով բաղկացած եղաւ գրեթէ ամբողջութեամբ ոչ Հայ սուրբերէ: Իսկ Հայ սուրբերը, որոնք կը կազմեն մեր տօնացոյցի անցած սուրբերուն ճիշդ մէկ քառորդը, ժամանակի ընթացքին տակաւ առ տակաւ անցան տօնացոյցի Հայ կաթողիկոսներու կամ օրացոյցը բարեկարգողներու կողմէ:

Մենք սա պահուա ղժբախտաբար չենք կրնար յիշել մեր պատմութեանն ունէ պարագայ, որ Հաստատէր, թէ այս կամ այն սուրբի տօնելի ըլլալը ճշդած է այս կամ այն Կաթողիկոսը, բացի Վրթանէս կաթողիկոսէն (333), որուն «Կանոնի» անցուցածները սակայն չեն

յիշուի որ այսօր: Մեր տօնացոյցի վերջին բարեկարգիչը եղած է Արմէն Կաթողիկոս (+1780), որուն նախածեռնութեամբ օրացոյցի անցան մեր վերջնագոյն սուրբերը՝ Յովհաննէս Որոտնեցի (1315-1388) եւ Մովսէս Տաթեւացի (1346-1410) Մեծ վարդապետները:

Հռովմէական եկեղեցին երբէք չէ դադրած սուրբեր կանոնացնելէ եւ կը շարունակէ զայն ցայսօր: Ատով Հռովմէական եկեղեցին ըսել կ'ուզէ, որ եկեղեցին չէ դադրած սուրբեր արտադրելէ, ինչ որ անոր կարեւոր նպատակներէն մէկն է: Արդարեւ, այն եկեղեցին, որ դադրած է սուրբեր ծնելէ՝ դադրած է կենսունակ եկեղեցի լինելէ: Սակայն կը կրկնենք՝ սուրբերը լոկ տօնացոյցի անցածները չեն, ոչ ալ լոկ հրաշագործ կամ բացառիկ շնորհներով օժտուածները. սուրբ են՝ եթէ ոչ բառին թէքնիք իմաստով, գէթ այդ բառին նախնական, հիմնական եւ աւետարանական նշանակութեամբ. բոլոր այն հաւատացեալ քրիստոնեաները, որոնք արժանացած են փրկութեան, եւ աշխարհի մէջ ապրելով հանդերձ դադրած են ըստ աշխարհի ապրելէ եւ իրենց հոգեկան կապը անխզելիօրէն կը շարունակեն պահել Աստուծոյ հետ պաշտելով զայն հոգով եւ ճշմարտութեամբ: Այն եկեղեցին, որ այսպէս հասարակ, համեստ եւ անանուն սուրբեր կը պատրաստէ իր մէջ, կենդանի մարմինն է Քրիստոսի, եւ որուն մէջ Աստուծոյ Հոգին կը բնակի: Ներկայիս, այս կարգի եկեղեցի՝ մըն է Հայաստանեայց եկեղեցին: Աստուած միայն գիտէ՝ մենք կասկածողներէն ենք. երանի անհիմն ըլլային մեր կասկածները: Սակայն հիմնուելով մեր ներկայ հոգեւորականութեան իմացական եւ հոգեւոր կազմաւորութեան վրայ՝ մենք կը կասկածինք, որ անոնց քարոզութեամբ եւ առաջնորդութեամբ սուրբեր կրնայ արտադրել մեր եկեղեցին: Սուրբեր միայն կրնան ծնիլ սուրբեր: Եթէ կան արդարեւ «սուրբեր» մեր եկեղեցիի մէջ, մենք այնպէս կը կարծենք, որ անոնք այդ վիճակին հասած են ընդհանրապէս Աւետարանի ընթերցումով, կամ արտաքոյ Հայ եկեղեցիի՝ իրենց եկած ազդումէ մը:

ՏՕՆԵԼԻ ՍՈՒՐԲԵՐ

Տօնելի սուրբերը կարելի է բաժնել զանազան խումբերու՝ դիտելով զանազան անկիւններէ:

Կրնան ներկայացուիլ, օրինակ, ժամանակագրական կարգով, եւ կոչուի Հին Կտակարանի Սուրբեր, Նոր Կտակարանի Սուրբեր, Առաքելական դարու Սուրբեր, Հալածանքի դարու, նախամիջնադարեան, միջնադարու եւ նոր ժամանակներու սուրբեր:

Կրնան անոնք ջոկուիլ ըստ տեսակի եւ կրնան կոչուիլ Նահապետներ, Մարգարէներ, Առաքելներ, Աշակերտներ, Հայրապետներ, Մարտիրոսներ, Ծգնաւորներ, Կոյսեր, Թագաւորներ, Զինուորներ եւն.:

Կրնան խմբուիլ աշխարհագրական տուեալներով՝ Արեւելեան, Արեւմտեան, Ասիական, Եւրոպական, Ափրիկեան եւն.:

Կրնան կոչուիլ ազգագրական ամուսններով՝ Հրէական, Հայկական, Յունական, Հռովմէական, Ասորական, Եգիպտական եւն.:

Եւ դեռ նման տասնեակ մը չափանիշներով կարելի է խմբաւորել զանոնք: Մենք պիտի հետեւինք առաջին երկու կարգերու: Նախ նկատի պիտի ունենանք աստուածաշնչական սուրբերը եւ պիտի ներկայացնենք զանոնք ժամանակագրական կարգով: Եւ երբ դուրս գանք Աստուածաշունչի էջերէն, պիտի ներկայացնենք մնացեալները՝ ըստ իրենց պատկանած ասպարէզին կամ ըստ այն ճիւղին, ուր տուեալ դէմքը ինքզինքը իրագործած է իրեւ սուրբ:

Ըստ մեր տօնացոյցին՝ տարուան մէջ ՍՈՒՐԲԵՐՈՒ յիշատակին յատկացուած են շուրջ 130 օրեր, որոնց մէջ կը յիշատակուին 415 անուն սուրբեր կամ սուրբերու խմբակցութիւններ: (Սակայն կանխենք ըսել, որ ՍՈՒՐԲԵՐԸ լոկ տօնացոյցի մէջ անցածները չեն. եկեղեցին ունի հազարաւոր, - թերեւ բիւրաւոր, - ուրիշ սուրբեր, որոնց անունները Աստուած միայն գիտէ):

Մասն առաջին ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍՈՒՐԲԵՐ

Գլուխ առաջին ՆԱԽԱՀԱՐՔ

Աստուածաշնչական սուրբերը բնականօրէն կը բաժնուին երկու մեծ խումբերու՝ Հին Կտակարանի եւ Նոր Կտակարանի սուրբեր։ Երկուքէն ալ գրեթէ իրարու հաւասար թիւով 40-45 անուն սուրբեր անցած են մեր Տօնացոյցին։ Կը սկսինք Հին Կտակարանի սուրբերու ներկայացումով։

Հին Կտակարանի սուրբերը մենք բաժնած ենք հետեւեալ խումբերու. 1. Նախահարք, 2. Նահապետք, 3. Անապատի Առաջնորդներ, 4. Դատաւորք, 5. Գործիչ Մարգարէներ, 6. Գիրք ունեցող Մարգարէներ, 7. Զանազան ուրիշ Հին Ուխտի սուրբեր, որոնք վերոյիշեալ ստորաբաժանումներէն ոեւէ մէկին ներքեւ չեն իյնար։

Կը սկսինք առաջին խումբով, որ ներկայացուած է Մենդոց Գրքի առաջին 10 գլուխներուն մէջ եւ կը բաղկանայ եօթ անուններէ։

1. ԱԴԱՄ

Վատահ ենք, որ շատեր պարզապէս պիտի գայթակղին՝ իմանալով, որ Ադամն ալ սուրբերու կարգ անցած է։ Երեւակայել, որ առաջին մեղաւորը, մեղքը աշխարհ մտցնողը ու զայն տարածողը ամբողջ իր սերունդին վրայ՝ ժառանգական ախտի մը նման, սուրբերու կարգ անցած է։ Հեգնական չէ՞։ Անոր գործած մեղքի հետեւանքէն զերծ չէ մնացած ոչ մէկ ադամորդի, որուն բնական ու բացայայտ հակումը դէպի չարութիւն կոչուած է քրիստոնէական աստուածաբանութեան մէջ «Ադամային մեղք»։

Ստոյգ է, որ արդարները միայն իրաւունք ունին սուրբերու կարգ անցնելու, բայց, ինչպէս կը հաստատուի մեր եկեղեցիի յատուկ «դռնբացէք»ի սրբազան տրամայի մէջ, «ոչ միայն արդարք, այլ

նաեւ մեղաւորք խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ» կը մտնեն սուրբերու կարգը։ Ադամ ապաշխարե՞ց։ Աստուածաշունչէն ոչ մէկ յատուկ պատասխան կը ստանանք այս հարցումին, ընդհակառակը, մեղանչելէն յետոյ տակաւին անգիղ է Ադամ։ Աստուծոյ յանդիմանական հարցումին իր տուած պատասխանէն յայտնի է, որ բոլոր անապաշխար մարդերուն պէս, մեղքը վրան չառնելով, ուրիշին կը վերագրէ. «Սա կինը որ ինձի տուիր», ան եղաւ պատճառը իմ մեղանչելու։ Շիտակ էր ըսածը, սակայն զղջացող մեղաւորի մը պատասխանը չէր։

Այս հարցին վրայ լոյսի նշոյլ մը կը ձգէ Աստուածաշունչի «պարականոն» կամ աւելի շիտակ՝ «երկրորդականոն» գիրքերէն մէկին մէջ եղած անցողակի ակնարկութիւն մը։ Փակագծի մէջ ըսենք, որ պատմական եկեղեցիներու, այսինքն՝ Յունաց, Հռովմայեցոց, Հայոց եւ բոլոր միւս Արեւելեան Հին եկեղեցիներու գործածած Ա. Գրքին մէջ, որ կը կոչուի «եօթանասնից» թարգմանութիւն, կան գիրքեր, որոնք չեն գտնուիր Հրէից գործածած Ա. Գրքին մէջ, զոր թարգմանաբար կը կիրարկեն բոլոր բողոքականները։ Յաւելուածական այս գիրքերը կը կոչուին «երկրորդականոն», այսինքն՝ Աստուածաշունչի գիրքերու «կանոն»ին՝ ցանկին մէջ ետքէն անցած գիրքեր։ Ասոնց մէջ կայ «Իմաստութիւն Սողոմոնի» ըսուած գիրք մը, որմէ յաճախակի ընթերցումներ կը կատարուին մեր եկեղեցիին մէջ։ Այդ գրքին մէջ կայ հետեւեալ ակնարկութիւնը Ադամի մասին։ «Իմաստութիւնը պահպանեց մարդկային ցեղի նախահայրը, ՓՐԿԵՅ զայն իր անկուսէն յետոյ, եւ տուաւ անոր զօրութիւն՝ տիրապետելու ամէն բանի վրայ»։ Թերեւս այս հաւաստումէն հետեւցուած է, որ Ադամ «Փրկուած» է եւ հետեւաբար արժանացած է սուրբերու կարգին անցնելու։

Ասկէ զատ քրիստոնէական հին շրջանակներու մէջ շատ տարածուն աւանդութիւն մը կայ, ըստ որուն՝ Ադամի գերեզմանը կը գտնուէր Գողգոթայի վրայ, եւ առաքելական բացատրութեամբ «Երկրորդ Ադամը»՝ Քրիստոս, խաչուեցաւ ճիշդ անոր գերեզմանին վրայ, եւ իր փրկարար արիւնը թափուեցաւ ու թափանցեց մինչեւ Ադամին ոսկորները եւ անոր կեանք տուաւ։ Այս աւանդութեան արձագանգն է շատ մը խաչելութեան նկարներուն ներքեւ նշմարուած գանկը եւ

2. ԱՔԷԼ

2. Աքէլ երկրորդ որդին է Ադամի եւ առաջին զոհը մարդկային չարութեան, առաջին մարտիրոսը եղբայրական նախանձի: Ինչո՞ւ կարգ մը մարդեր չար եւ ուրիշներ բարի ծնած են, անլուծանելի խորհուրդներէն մէկը մնացած է կեանքին:

Աքէլի անուան յիշատակութիւնը ինքնաբերաբար մեր միտքին կը բերէ նաեւ անունը իր երէց եղբոր եւ սպաննիչին Կայէնին: Ասոնք իրարմէ անբաժան են, ինչպէս շուքը՝ մարդէն: Կայէն եւ Աքէլ միասնաբար կը ներկայացնեն թէ՛ ամբողջ մարդկութիւնը հաւաքաբար եւ թէ՛ ամէն մէկ անհատը՝ առանձնաբար: Մարդկութեան մեծ մասը՝ երէց մասը, միշտ Կայէն եղած է, որ շարունակ կ'աշխատի սպաննել իր կրտսեր մասը՝ Աքէլը: Պատմութիւնը վկայ է այս ճշմարտութեան: Մարդկութեան ամէն մէկ անդամն ալ իր կարգին ունի իր մէջ մեծ մաս մը Կայէնէն եւ փոքր մաս մը Աքէլէն: Մեզմէ ամէն մէկին մէջ ապրող Կայէնը կ'աշխատի սպաննել իր քովն ի վեր խաղաղ ապրող Աքէլը, այսինքն՝ մեր բարի ցանկութիւնները եւ աստուածաշատութեան եւ եղբայրսիրութեան մեր ազնիւ տրամադրութիւնները...: Մեզմէ ամէն մէկին անձնական փորձառութիւնները եւ կեանքն ամբողջ կը հաստատեն այս իրողութիւնը:

Տարօրինակ է, որ՝ երկու եղբայրներու միջեւ ծնունդ առած այս թշնամութիւնը կը սկսի կրօնական արարմունքէ մը յետոյ, Աստուծոյ ընծայ մատուցանելու առթիւ: Արդարեւ, մարդուն իսկական էութիւնը, իր եղածը, մէջտեղ կուգայ պաշտամունքի կամ ընծայաբերութեան մը ընթացքին: Երկու պարագային ալ կարեւորը կամ էականը ոչ ընծան է եւ ոչ ալ՝ պաշտամունքի նիւթը: Կարեւորը այդ առթիւ ի յայտ բերուած ոգին է: Ու պաշտամունքի ատեն մարդ չի կրնար ծածկել իր ներաշխարհը Աստուծոյ թափանցող հայեացքէն: Աստուած կը տեսնէ պաշտող կամ ընծայաբեր հոգիին կեղծ կամ անկեղծ, ուղիղ կամ ծուռ, արդար կամ մեղաւոր ըլլալը, լաւ դիտաւորութեամբ օժտուած՝ կամ վատ ու թերի տրամադրութիւններով լեցուած ըլլալը: Այս իրողութիւնը արդարեւ մէջտեղ ելաւ Աւետարանի, Փարիսեցիի եւ Մաքսաւորի առակին մէջ, երբ անոնք «Տաճար գացին աղօթելու Համար»: Այս իրողութիւնը ի յայտ եկաւ Աւետարանի այլիին լուծայի պատմութեան մէջ. այդպէս եղաւ նաեւ Անանիայի եւ Սափիւրայի մի-

ջադէպին մէջ, երբ անոնք թէեւ այնպէս ձեռնարկեցին, որ իրենց ամբողջ ունեցածը Աստուծոյ կամ Առաքելական Եկեղեցիին կ'ընծայեն, սակայն երեւան եկաւ, որ մաս մը վար դրած էին իրենց համար (Գործ. Ե 1-11):

Ու վերջապէս այդպէս պատահեցաւ նաեւ Աքէլի եւ Կայէնի պատարագներու ընթացքին: Երկուքն ալ Աստուծոյ «Պատարագ»՝ ընծայ, բերին իրենց ունեցածներէն. Կայէն՝ «Երկրի պտուղներէն», իսկ Աքէլ՝ «Իր ոչխարներու անդրանիկներէն եւ անոնց պարարտներէն»: Ուրեմն բացայայտօրէն կը յիշուի, որ Աքէլ իր ունեցածին լաւագոյններէն նուէր բերած է Աստուծոյ: Իսկ Կայէնի համար չէ յիշուած այս պարագան: Ուստի «Հայեցաւ Աստուած ի Հաքէլ եւ ի պատարագս նորա եւ ի Կային եւ ի զոհս նորա ոչ նայեցաւ»: Ու պատահեցաւ անխուսափելի. «Եւ տրտմեցաւ Կային յոյժ...» եւ սպաննեց իր եղբայրը...: Պաշտամունքի եւ բարեգործութեան ընթացքին է, որ ի յայտ կուգայ մեր Աքէլ կամ Կայէն ըլլալը: Մեր աղօթելու եւ տալու ատեն մեր ունեցած հոգեկան տրամադրութիւնն է, որ կը ճշդէ մեր իսկական եղածը, ու Աստուած այդ է, որ կը տեսնէ եւ ըստ այնմ՝ կ'ընդունի կամ կը մերժէ մեր պատարագը. Աստուածաշնչական բացատրութեամբ՝ «Կը Հայի» կամ «չի նայիր» մեզի եւ մեր պատարագին: Անոր համար զղջացող Սաղմոսերգուն կ'ըսէ.

«Եթէ կամեցեալ էիր պատարագս՝ մատուցանէաք.
Բայց դու ընդ ողջակէզս իսկ Հաճեցար».

Ինչո՞ւ որովհետեւ

«Պատարագ Աստուծոյ՝ Հոգի խոնարհ.

Ձսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ»:

Աքէլ «Արդար» Հռչակուեցաւ նոյն ինքն մեր Տիրոջ կողմէ, իբրեւ առաջին օղակը Հին Կտակարանին արդար հոգիներու երկայն շարքին (Մատթ. Ի Գ 35): Աքէլ իրականին մէջ առաջին մարտիրոսն է եւ այդ իսկ պատճառով՝ առաջին սուրբը:

Ան նախատիպն է բոլոր անոնց, որոնց միակ մեղքն է «արդար» ըլլալը եւ այդ պատճառով ալ միշտ հալածանքի ենթարկուած են:

Աբէլի խորհուրդին լաւագոյն մեկնաբանութիւնը տուած է Յովհաննէս Առաքեալ իր կաթողիկէ Աթուղթին Գ 9-12 Համարներուն մէջ:

«Ով որ Աստուծմէ ծնած է՝ մեղք չի գործեր, որովհետեւ անոր սաղմը ասոր մէջ կը մնայ, չի կրնար մեղանչել, որովհետեւ Աստուծմէ ծնած է: Ասով կը զատորոշուին իրարմէ Աստուծոյ որդիները եւ սատանայի որդիները: Ով որ արդարութիւն չի գործեր եւ իր եղբայրը չի սիրեր, Աստուծմէ չէ: Այս է պատուիրանը, որ լսեցինք սկիզբէն, որ սիրենք զիրար. ոչ նման Կայէնին, որ Չարէն առաջ եկած էր, եւ սպաննեց իր եղբայրը: Եւ ինչու սպաննեց զայն, որովհետեւ իր գործերը չար էին, իսկ եղբորը՝ բարի»:

Աբէլ առաջին նախատիպն է Քրիստոսի: Նախ Հովիւ էր Աբէլ: Քրիստոս ալ ինքզինքը պիտի կոչէր «Հովիւ քաջ»: Աբէլ Աստուծոյ Հաճոյ զոհ մը մատոյց: Նոյնը աւելի անհուն մեծութեամբ ըրաւ Քրիստոս՝ իր Անձը զոհելով մարդոց փրկութեան Համար, «Եւ Թափելով իր արիւնը, որ աւելի խօսուն է, քան Աբէլի պատարագը» (Եբր. ԺԲ 24): Աբէլ իր անմեղութեամբ եւ արդարութեամբ նախանձը գրգռեց իր եղբոր՝ Կայնին: Նոյնպէս Քրիստոս իր սուրբ կեանքով իր վրայ հրաւիրեց նախանձը՝ ըստ մարմնոյ իր եղբայրներուն, այսինքն՝ Հրէից, որոնք ի վերջոյ սպաննեցին զայն: Իր եղբայրասպանութեան Համար Կայնն դատապարտուեցաւ Թափառական կեանքի, նոյնը պատահեցաւ նաեւ Յիսուսի սպաննիչներուն, ժառանգելու աստիճան «Թափառական Հրեայ» տիտղոսը:

Մենք եւ Յոյնք կը յիշատակենք Աբէլը Նախահարց Հետ, իսկ Լատինք՝ Յուլիս 30ին:

3. ՍԵԹ

Մէթ Ադամի երրորդ որդին էր, որ ծնաւ Աբէլի սպաննութենէն յետոյ, անոր ձգած պարապը լեցնելու եւ անոր սահմանուած դերը շարունակելու Համար: Մէթ նախահարցն է կրօնազգաց եւ արդար հոգիներու, որոնք կեանքի նպատակը տեսան աստուածապաշտութեան մէջ եւ Աստուծոյ իսկ ներշնչումով եւ առաջնորդութեամբ, այսպէս ըսենք՝ վերագտան կրօնքը, Աստուծոյ յաւիտեանական կեանքին հաղորդ դառնալու Համար: Իսկ Կայնն եղաւ նախահարցը աշխարհասէր

մարդկութեան, որոնք ստեղծեցին քաղաքակրթութիւնը, Երկրաւոր կեանքը աւելի լաւ վայելելու Համար: Մէթ ապրեցաւ 912 տարի:

Մենք եւ Յոյնք կը տօնենք Նախահարց Հետ: Լատինք՝ չունին:

4. ԵՆՈՎՍ

Ենովս որդին էր Մէթի, իր օրով կամ իրմով իրականանալ սկսաւ այն, ինչ որ վերեւ վերագրեցինք իր Հօրը: Իր մասին ըսուած է. «Նա յուսացաւ կոչել զանուն Տեառն Աստուծոյ»: Կամ, ըստ եբրայական բնագրին. «Այն ատեն սկսուեցաւ Տիրոջ անուն կանչելը»: Երկուքն ալ նոյն իմաստը ունին: Ադամին անկումէն եւ Աստուծոյ Հետ սիրոյ կապին խզումէն յետոյ իր այս Թոռանը մէջ յանկարծ «յոյսը ծագեցաւ», որ կրնայ «Տիրոջ անունը կանչել» եւ վերահաստատել խզուած յարաբերութիւնը, այս պատճառով արժանի եղաւ Ենովս սուրբերու կարգին անցնելու:

Ենովս ապրեցաւ 905 տարի: Յոյնք կը տօնեն: Լատինք՝ չեն տօներ:

5. ԵՆՈՎԲ

Ենովք եօթներորդ սերունդն է Ադամին: Նախահարցներուն մէջ նշանաւոր է երեք կէտերու մէջ. ա) Ամէնէն կարճ ապրողը եղաւ 365 տարի միայն բ) Ամէնէն երկարակեաց նախահօր Հայր եղաւ Մաթուսաղային, որ ապրեցաւ 969 տարի: Սակայն կարեւորագոյնը եւ զինքը բացառիկ սուրբ մը կացուցանողը երկրորդ պարագան է: Ենովքի մասին թէեւ շատ կարճ բայց շատ Հետաքրքրական ու յատկանշական ծանօթութիւն մը տրուած է Ս. Գրքին մէջ: Միւս բոլոր նախահարցերու վախճանին Համար յատուկ բանաձեւ մը կայ, որ գրեթէ նոյնութեամբ կը կրկնուի ամէնքին Համար, այսինքն՝ այս անուն նախահօր բոլոր օրերը այսչափ տարի եղաւ, որ «ՄԵՌԱԻ»: Ենովք միակն է ասոնց մէջ, որուն Համար այս վերջին բանաձեւը չէ կրկնուած, այս ըսուած է. «Եւ Հաճոյ եղաւ Ենովք Աստուծոյ, եւ ոչ մէկտեղ կը գտնուէր, որովհետեւ Աստուած ՎԵՐԱՓՈՒՅԵՑ զայն» (Ծն. Ե 24): Եօթնասնից բնագրին եւ մեր գրաբար Աստուածաշունչին «Հաճոյ եղեւ Աստուծոյ» Թարգմանութեան դիմաց եբրայական բնագիրը ունի «Եւ Ենովք Աստուծոյ Հետ քարեց» բացատրութիւնը: Երկուքն ալ նոյն

իմաստը ունին՝ Եօթնասնից, եւ Հետեւարար մեր Ա. Գրքին ասու-
թիւնը իմաստի թարգմանութիւնն է երբայական պատկերաւոր բացա-
տրութեան. որովհետեւ ով որ «Աստուծոյ Հետ կը քալէ», Անոր
«Հաճոյ կ'ըլլայ»:

Աստուածաշունչի այս յատկանշական ծանօթութեան լոյսին տակ՝
յանկարծ Ենովք կը բարձրանայ իր շուրջը տարածուող հարթութենէն՝
վերածուելու համար Աստուածաշունչի սրբազան դէմքերու լեռնա-
շղթային առաջին բարձունքին: Իր մասին ըստած այս կարճ ու
կտրուկ հաւաստումը սակայն իր ետին ունի անհուն խորութիւն մը,
զոր բացատրելու կամ ներկայացնելու ոչ մէկ ճիգ կ'ընէ Աստուա-
ծաշունչի ներշնչեալ Հեղինակը. «Ենովք Աստուծոյ Հետ քալեց»: Կը
զգա՞նք արդեօք պարզութեան Հետ գեղեցկութիւնը եւ վեհութիւնը
մարդկային սովորական կեանքէ առնուած այս բացատրութեան:
Պատկերը կ'առնուի ճամբորդական կեանքէն. երկու Հոգի միասին կը
քալեն, նոյն ճամբայէն ու կ'երթան նոյն նպատակին: Բարեկամներ են
անոնք իրարու: Ծամբան կը քակուի կծիկը բարեկամական զրոյցի, որ
քալուածքի յոգնութիւնը զգացնել չի տար: Սրտաբուխ է խօսակ-
ցութիւնը, եւ ապահով է ճամբորդութիւնը ընդդէմ գողի եւ զազանի,
որովհետեւ երկու Հոգի են: Եթէ երբեմն լուսութիւն անգամ տիրէ, իրա-
րու Հետ եղած ըլլալու ներքին գոհունակութիւնը երգի մը Հանգոյն կը
յանկերգէ իրենց մէջ: Զուրի մը եզերքին կը բանան իրենց ճամբու
պաշարին ծրարը եւ սրտովին կը վայելեն զայն բնութեան ծոցին մէջ,
ծառի մը շուքին տակ ու կ'ըմպեն մաքուր եւ պաղով ջուրը, որ դեռ
չէր ապականուած մարդկային արտադրութեանց պղծութիւններէն:
Իսկ եթէ այս ճամբորդութիւնը հօր եւ որդիի միջեւ է, այն ատեն ան
կը հազնի երանութեան իր գեղեցկազոյն պատմուճանը: Սէրն է, որ կը
սաւառնի իրենց վերեւ եւ կը պարուրէ զանոնք, երջանիկ են միասին
քալած ըլլալուն համար, տղան որքան շատ հարցումներ ունի իր հօրը
ուղղելիք, եւ հայրը որքան սրտի բաւարարութեամբ կը բացատրէ
անոր...: Այսպէս «Քալեց Ենովք Աստուծոյ Հետ»: Մենք թերեւս մեր
ժամանակներու մէջ պիտի ըսէինք. «Ենովք քայլ պահեց Աստուծոյ
Հետ». այսինքն՝ ապրեցաւ Աստուծոյ կամքին Համաձայն, հաւատարիմ
եղաւ Անոր, անխզելի հաղորդութեան մէջ պահեց ինքզինքը Աստու-

ծոյ Հետ աղօթքով եւ պարզ խոկումով: Աստուծոյ ներկայութիւնը
շարունակ զգաց իր կեանքի բոլոր օրերուն մէջ:

Կը պատմուի, որ փոքրիկ աղջիկ մը սա ձեւով ներկայացուցած է
Ենովքի վախճանը, ճամբայ ելնելով «Եւ Ենովք Աստուծոյ Հետ
քալեց» բացատրութենէն: «Ենովք եւ Աստուած իրարու բարեկամներ
էին, յաճախ երկար պտոյտներ կ'ընէին միասին: Օր մը այնքան
Հեռացան Ենովքի տունէն, որ մուկը կոխեց: Այն ատեն Աստուած
ըսաւ «Ենովք, շատ յոգնած պիտի ըլլաս, իմ տունս մօտ է, այսօր իմ
տունս մնացիր»: Ու Աստուած զայն իր տունը տարաւ: Այնքան գեղե-
ցիկ էր Աստուծոյ տունը եւ այնքան բարի եւ ընկերական էին տան
բնակիչները՝ հրեշտակները, ու մանաւանդ այնքան ցանկալի եւ
հաճելի էր Աստուծոյ ընկերակցութիւնը, որ Ենովք իր տունը մոռցաւ
եւ Աստուծոյ տունը կը մնայ մինչեւ այսօր»:

Ոչ մէկ բացատրական այնքան գեղեցկօրէն պիտի կրնար մեկնա-
բանել Ենովքի կեանքի վախճանին խորհուրդը, քան այս մանկական
նկարագրականը:

«Ոչ մէկտեղ կարելի եղաւ գտնել Ենովքը, որովհետեւ Աստուած
իւր քով առաւ զայն»: Աստուածաշնչական այս հաւաստումը կը սոր-
վեցնէ մեզի այն կրօնական հիմնական ճշմարտութիւնը, թէ ով որ
«Աստուծոյ Հետ կը քալէ», Անոր «Հաճոյ» կ'ըլլայ»: Եւ ով որ Աստու-
ծոյ «Հաճոյ կ'ըլլայ», Անոր քով «կը փոխադրուի», վասնզի երկրի
վրայ արդէն վարժուած է Աստուծոյ Հետ ըլլալու, սրտով կապուած է
Անոր, ու Աստուած ալ սիրով հակած է անոր, որով յետ «փոխման»
եւ անբաժան կը մնան իրարմէ: Անմահութեան առաջին բացայայտ
թելադրանքը եւ ուսուցումը կայ Ենովքի վախճանի մասին ըստած
այս կարճ խօսքին մէջ:

Առ հասարակ այնպէս ընդունուած է, որ Հին Կտակարանի մէջ
անմահութեան գաղափարը չկայ, կամ շատ աղօտ ու անորոշ կերպով
գոյութիւն ունի. մասամբ մը ճշմարիտ ըլլալով հանդերձ նման
տեսութիւն մը, եթէ փորձենք սակայն հաւաքել անմահութեան մասին
եղած նշումները Հին Կտակարանի մէջ, աւելի քան բաւարար պիտի
ըլլային անոնք, հասկնալ ու համոզուիլ ուզողին համար, թէ կա՛յ
արդարեւ հանդերձեալ կեանքի ըմբռնումը նաեւ Հին Կտակարանի

մէջ: Ու այս նշումներէն ամէնէն բացայայտը եւ առաջինը Ենովքի պատմութիւնն է:

Աստուածաշունչի մէջ ուրիշ մէկի մը համար եւս ըսուած է, որ Աստուած զայն «երկինք վերցուց» առանց Ֆիլիքական մահուան ԵՂԻԱՆ է անիկա, որուն պիտի անդրադառնանք իր կարգին: Ասոնց է ակնարկութիւնը մեր եկեղեցիի ծանօթ շարականին մէջ.

«Ի վերինն Երուսաղէմ, ի բնակարանս Հրեշտակաց,
Ուր ԵՆՈՎՔ ԵՒ ԵՂԻԱՍ կան ծերացեալ աղաւնակերպ.
Ի դրախտին Եղեմական՝ պայծառացեալ արժանապէս...»:

Ենովք՝ Ադամէն ու Աբէլէն յետոյ իբրեւ առաջին նշանաւոր դէմքը Ս. Գրքին, բազմիցս յիշուած է մեծ գովեստով անոր էջերուն մէջ. օրինակ՝ «ԻՄԱՍՏՈՒԹԻԻՆ ՍԻՐԱՔԱՅ» գրքին մէջ ըսուած է իր մասին.

«Ենովք հաճոյացաւ Աստուծոյ եւ վերափոխուեցաւ դրախտ, որպէսզի ապաշխարանքի օրինակ մը ըլլայ գալիք սերունդներուն» (ԽԴ 16):

«Երկրածիններէն ոչ ոք կը հաւասարի Ենովքի, որովհետեւ ան երկինք յափշտակուեցաւ» (ԽԹ 16):

Իսկ Նոր Կտակարանի ՅՈՒԴԱՅԻ կաթողիկէ թուղթին մէջ Ենովք ներկայացուած է իբրեւ մարգարէ, որ պատգամներ կուտայ ընդդէմ ամբարիշտներուն եւ կը նախատեսէ Տիրոջ երկրորդ գալուստը դատաստանի համար (14-16 համարները):

Եբրայեցոց թուղթի ներշնչեալ հեղինակը հաւատքի Հերոսներու մէջ կը դասէ զայն. «Հաւատքով Ենովք երկինք փոխադրուեցաւ առանց մահ ճաշակելու... եւ նախ քան փոխադրուելը հաստատուեցաւ, որ Աստուծոյ հաճոյ էր, բայց առանց հաւատքի անկարելի է հաճոյ ըլլալ, այլ այն, որ Աստուծոյ կը մօտենայ, պարտի հաւատալ, որ Աստուած կայ, եւ թէ խնդրողներուն պարգեւատու կ'ըլլայ» (ԺԱ 5-6):

Ուրեմն Հիմնական գաղտնիքը Ենովքի երկինք փոխադրուելուն՝ Աստուծոյ վրայ ամուր հաւատք ունենալն էր, վասնզի առանց ուժեղ ու կենդանի հաւատքի անկարելի է հաճոյ ըլլալ Աստուծոյ, որ կրօնա-

կան կեանքին գերագոյն նպատակն է, որուն հասած էր Ենովք, առաջին անգամ ըլլալով, որուն համար երկինք փոխադրուեցաւ մարմինով:

Մենք եւ Յոյներ Նախահարց Հետ կը տօնենք Ենովքը, իսկ Լատինք՝ Դեկտ. 20ին:

6. ՆՈՅ

Նոյ տասներորդ սերունդն է Ադամին եւ սկիզբը՝ Նոր մարդկութեան: Իրմով վերջ կը գտնէ նախահարցերու դարաշրջանը, եւ կը սկսի նահապետներու շարքը: Նոյ Աստուածաշունչի այն մեծ դէմքերէն է, որոնց կը տրուի Աստուծոյ կողմէ մեծ առաքելութիւն մը, զոր անոնք ի գլուխ կը հանեն, հակառակ բոլոր արգելքներուն, համբուրելի հաւատքով եւ համբերութեամբ:

Աստուածաշունչի առաջին գիրքէն Հինգ գլուխները յատկացուած են ներկայացնելու համար Նոյի եւ ջրհեղեղի պատմութիւնը (Մն. Զ-Ժ): Իր ժամանակի մարդկութիւնը բարոյապէս կը ներկայացնէր գրեթէ այն վիճակը, որուն մէջ կը գտնուի մեր ժամանակներու մարդկութիւնը: Չարիքը յորդած էր իր սովորական հունէն եւ ողորած՝ ամբողջ մարդկութիւնը:

«Երբ տեսաւ Աստուած, թէ բազմացած է մարդոց չարիքը երկրի վրայ, երբ ամէն մարդ չարիք միայն կը մտածէր իր սրտին մէջ ամէն օր, զոչաց Աստուած մարդը ստեղծած ըլլալուն համար երկրի վրայ, եւ տրտմեցաւ իր սրտին մէջ եւ ըսաւ Աստուած. «Պիտի ջնջեմ երկրի երեսէն ամբողջ կենդանական աշխարհը մարդէն մինչեւ անասուն եւ սողուններէն մինչեւ երկինքի թռչունները, որովհետեւ զոչացի զանոնք ստեղծած ըլլալուս համար»: Բայց Նոյ շնորհք գտաւ Աստուծոյ առջեւ» (Մն. Զ 5-8):

Երեւակայել պահ մը, որ Նոյ ալ «շնորհք գտած» չըլլար Աստուծոյ առջեւ... Ի՞նչ պիտի ըլլար արդեօք վիճակը մեր այս աշխարհին...: Այս հարցումին մեր միտքերուն մէջ գտած պատասխանէն կարելի է հետեւեցնել Նոյի մեծութիւնը եւ կարեւորութիւնը տիեզերքի պատմութեան մէջ:

Չարիքը, որով ողորդուած էր աշխարհ, երկու բառերով կը պարզաբանուի Ա. Գրքին մէջ. ԱՊԱԿԱՆՈՒԹԻՒՆ եւ ԱՆԻՐԱՒՈՒԹԻՒՆ:

«ԱՊԱԿԱՆՈՒԵԾԱԻ երկիր Աստուծոյ առջեւ եւ լեցուեցաւ ԱՆԻՐԱՒՈՒԹԵԱՄԲ» (Մն. 2 11):

Այս մեղքերէն առաջինը իր մէջ կը խտացնէ մարդուն անձնական մեղքերը, այսինքն՝ շնութիւն, պոռնկութիւն, միասեռականութիւն, ազահուութիւն, գինեմոլութիւն, խաղամոլութիւն, ամբարտաւանութիւն, նախանձ, ատելութիւն եւ բոլոր այն մոլութիւնները, որոնք մարդկային անձը կ'ապակաւանեն, կ'այլասերեն եւ կը նուաստացնեն: Իսկ երկրորդը կը ներկայացնէ ընկերային մեղքերը, այսինքն՝ բռնակալութիւն, գողութիւն, կոխ, պատերազմ, հալածանք, շահագործում եւ բոլոր այն չարիքները, որոնք կը վնասեն մեր նմանին: Թէեւ Աստուած խոստացաւ, որ ուրիշ անգամ նման աշխարհակործան ջրհեղեղով մը պիտի չպատժէ մարդկութիւնը հաւաքաբար, բայց իւրաքանչիւր անհատ պատասխանատու պիտի ըլլայ իր իսկ գործած մեղքին համար:

«Ով որ արիւն թափէ, փոխարէն իր արիւնը պիտի թափուի». ըսաւ Աստուած Նոյի (Մն. Թ 6):

Իսկ այլուր ըսուած է. «Ով որ Աստուծոյ տաճարը, այսինքն՝ մարդկային մարմինը ապականէ, Աստուած ալ զայն պիտի ապականէ» (Ա Կոր. Գ 17):

Իսկ Նոյին համար ըսուած է. «Նոյ արդար եւ կատարեալ մարդ մըն էր իր ժամանակի մարդոց մէջ եւ հաճոյ եղաւ Աստուծոյ» (Մն. 2 9):

Այստեղ ալ «Հաճոյ եղաւ Աստուծոյ» բացատրութեան տեղ երբայական բնագիրը ունի «Աստուծոյ հետ քալից» նոյն գնահատանքը, որ գործածուած էր Ենովքի համար եւ պիտի գործածուի Աստուածաշունչի բոլոր այն դէմքերուն համար, որոնք արդարեւ աստուածահաճոյ կեանք մը պիտի ապրէին: Նոյի համար գործածուած «ԱՐԴԱՐ ԵՒ ԿԱՏԱՐԵԱԼ» ստորագրութիւնները թեթեւ մակդիրներ չեն, այլ ամբողջ Աստուածաշունչին փնտռած ու պահանջած գերազոյն մարդկային առաքինութիւններն են: Աւետարանի լերան քարոզի բարոյական եւ ընկերային պատուէրները իրենց լրումին կը բերուին սա պատգամով.

«Ու դուք եղէք կատարեալ, ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է» (Մատթ. Ե. 481):

ԱՐԴԱՐը ուղիղ մարդն է իր մտածումներուն մէջ, իր խօսքերուն եւ գործերուն մէջ: Սուտը, կեղծիքը, նենգութիւնը եւ նախանձը տեղ չունին իր կեանքին մէջ: Կատարելութիւնը այս իսկ է՝ ըլլալ այն, ինչ որ պարտինք ըլլալ աստուածային չափանիշներով:

Նոյ ալ բազմիցս յիշուած է Աստուածաշունչի զանազան գիրքերուն մէջ: Օրինակ Եզեկիէլ մարգարէն կ'ըսէ Աստուծոյ անունով.

«Երկիր մը, եթէ յանցանք մը գործէ, ու Ես, եթէ երկնցնեմ ձեռքս զայն պատժելու համար... ՆՈՅ, Դանիէլ եւ Յոբ ալ, եթէ անոնց մէջ ըլլան, պիտի չկրնան փրկել զանոնք, այլ անոնք իրենց արդարութեամբը լոկ իրենց անձերը պիտի կրնան փրկել» (Եզեկ. ԺԴ 12-20):

Եբրայեցոց թուղթի հեղինակին յիշած հաւատքի հերոսներուն մէջ կարեւոր տեղ ունի Նոյ.

«Հաւատքով Նոյ հրաման ստացաւ անտեսանելի ապագայի մը մասին եւ զարհուրած սկսաւ շինել տապանը իր ընտանիքի փրկութեան համար, որով սուտ հանեց ամբողջ աշխարհը (որ չէր հաւատացած իր խօսքին եւ կը ծաղրէր տապանաշինութեան իր գործը) ու ժառանգեց այն արդարութիւնը, որ հաւատքով ձեռք կը ձգուի» (Եբր. ԺԱ 7):

Պետրոս Առաքեալ զայն կը կոչէ «Արդարութեան քարոզիչ» (Բ Պետր. Բ 5): Արդարութեան այդ քարոզութիւնը կրնար ըլլալ խօսքով, կրնար ըլլալ նաեւ ապրուած արդար կեանքով:

Նոյի անունը անքակտելիօէն կապուեցաւ Արարատ լերան հետ, քանի որ անոր վրայ հանգչեցաւ իր տապանը ջրհեղեղէն յետոյ: Ու Արարատը ժառանգեց անկապտելի փառք իր լանջքին կամ ստորտը ունենալու Աստուածաշունչին մէջ յիշուած առաջին զոհարանը կամ սեղանը ի պատիւ ճշմարիտ Աստուծոյ:

«Նոյն սեղան շինեց Աստուծոյ եւ ողջակէզ ըրաւ...: Եւ հոտուեցաւ Աստուած ողջակէզի անոյ Հոտը եւ ըսաւ իր սրտին մէջ. «Այլեւս պիտի չանիծեմ երկիրը մարդոց մեղքերուն համար, որովհետեւ մարդ դէպի չարը հակած է իր մանկութենէն,

ուստի այլևս պիտի չփճացնեմ կենդանական աշխարհը, ինչպէս ըրի: Որքան ատեն, որ երկիրը կը մնայ՝ սերմը եւ Հուսձքը, ցուրտը եւ տաքը, ամառը եւ ձմեռը, գիշերը եւ ցերեկը պիտի չդադրին իրարու յաջորդելէ» (Մն. Ը 20-22):

Նոյ նկատուած է նախատիպարը մեր Փրկչին, որովհետեւ իրմով փրկուեցաւ մարդկային ցեղը ահաւոր բնաջնջումէ մը, եւ Աստուած իրմով վերստին հաշտուեցաւ մարդկութեան հետ եւ Ուխտ մը կնքեց Նոյի հետ:

«Եւ խօսեցաւ Տէր Նոյի եւ անոր որդիներուն հետ եւ ըսաւ. «Ահաւասիկ ես կը հաստատեմ իմ ՈՒՆՍՍՍ ձեզի հետ եւ ձեզմէ յետոյ գալիք սերունդին հետ եւ ձեզի հետ եղած բոլոր կենդանիներուն հետ, թռչուններուն, անասուններուն եւ ձեզի հետ եղած գազաններուն հետ...», որ այլևս կենդանական աշխարհը պիտի չմեռնի ջրհեղեղէն» (Մն. Թ 8-17):

Ու իր Ուխտին ի հաստատութիւն Աստուած իբրեւ նշան դրաւ ծիածանի կամարը:

Նոյի տապանը խորհրդանշանն է Քրիստոնէական եկեղեցիին:

Ինչպէս որ տապանը եղաւ փրկութեան միջոցը մարդկութեան, եւ մահացու ջրհեղեղէն ազատուեցան միայն անոնք, որ տապանին մէջ մտած էին, այնպէս ալ, ով որ կ'ապաստանի եկեղեցիի մէջ եւ կ'ապրի ըստ անոր օրէնքներուն եւ անոր մէջ տիրող ոգիին, կը փրկուի բարոյական բնաջնջումէ:

Ջրհեղեղը խորհրդանշանն է մարդկային չարութեան, հալածանքի եւ մեղքի, որոնք որչափ ալ կոծեն եկեղեցիի Նաւին կողերը, չեն կրնար զայն ընկղմել, որքան ատեն անոնք նաւին մէջ չեն թափանցած. ընդհակառակը՝ ինչպէս որ որքան շուրեքը բարձրացան, անոնք հետ միասին բարձրացաւ նաեւ տապանը, ըստ այս օրինակին, որչափ չարութեան եւ հալածանքի ջրհեղեղը սաստկանայ, այնքան աւելի կը մաքրագործուի եւ դէպի երկինք կը բարձրանայ եկեղեցին:

Աստուած Նոյով վերահաստատեց եւ փրկեց կենդանական աշխարհը, զոր փչացուցած էր ջրհեղեղով: Այնպէս ալ Յիսուս Քրիստոսով վերահաստատեց Աստուած մարդկային ցեղը երկնային ժառանգութեան մէջ, զոր կորսնցուցած էին մարդիկ ջրհեղեղով:

Նոյ ապրեցաւ 950 տարի: Մենք եւ Յոյնք կը յիշատակենք Նոյը Նախահարց հետ Լատինք կը տօնեն զայն Նոյեմբեր 10ին:

7. ՄԵԼՔԻՍԵՂԵԿ

Մելքիսեղեկ Նախահայրերու եւ Նահապետներու միջեւ ուրոյն օղակ մըն է, որ իրարու կը կապէ այս երկու խումբերը: Ունի նախահարց բնական հաւատքը իբրեւ քահանայ Բարձրեալ Աստուծոյ: Իսկ նահապետներէն առաջինը օրհնութիւն կը ստանայ իրմէ: Հոգեւոր գիտաւոր մըն է Մելքիսեղեկ, որ երեք անգամ կ'երեւի Աստուածաշունչի երկնակամարին վրայ՝ սկիզբը, մէջտեղը եւ վերջաւորութեան:

Անոր կը հանդիպինք նախ Մենդոց Գրքի մէջ (ԺԴ 18-21), իբրեւ «Արքայ Սաղիմայ», այսինքն՝ նախահրէական Երուսաղէմի թագաւորը, որ ընդ առաջ կ'ելլէ Աբրահամին, երբ սա կը վերադառնար ազատագրական արշաւանքէ մը (Մն. ԺԴ 1-17), եւ անոր կ'ընծայէ «Հաց եւ գինի», ու կ'աւելցնէ Ս. Գիրքը. «Քանզի քահանայ էր Աստուծոյ Բարձրելոյ», այսինքն՝ պաշտօնեայ էր այն Աստուծոյ, զոր Աբրահամ եւս կը պաշտէր: Խորհրդաւոր զուգարկութիւն մը արդարեւ: Ասկէ պէտք է հետեւցնենք, թէ Մելքիսեղեկ այն հազուագիւտ մարդերէն էր Աբրահամին պէս, որոնք կը շարունակէին մեր վերել յիշած արդարներու կրօնական աւանդութիւնը՝ պաշտելով «Բարձրեալ Աստուած»ը: Իբրեւ դաւանակից՝ Մելքիսեղեկ «Օրհնեց Աբրահամը», իսկ վերջինս անոր տուաւ «Տասանորդս յամենայնէ»: Այսչափ է մեր գիտցածը «պատմական» Մելքիսեղեկի մասին: Ինչպէս յանկարծ մէջտեղ ելած էր, այնպէս ալ յանկարծ կ'աներեւութանայ:

Մելքիսեղեկ, պատմական անձ մը ըլլալով հանդերձ, խորհրդաւոր նշան մըն է յաւիտենական քահանայութեան: Իր այս հանգամանքով ան կը վերերեւի Սաղմոսաց Գրքին եւ Նոր Կտակարանի Երբայեցուց թուղթին մէջ:

Սաղմոսաց Գրքի 109րդ* գլուխը անոնցմէ է, որոնք կը կոչուին «Մեսիական Սաղմոսներ»: Արդարեւ բացայայտ ակնարկութիւն մը կայ այս փոքր Սաղմոսին մէջ Մեսիայի երկու կարեւորագոյն

* Ըստ աշխարհաբար թարգմանութեան 110րդ գլխու

Հանգամանքներուն, այսինքն՝ Անոր յաւիտենական Թագաւորութեան եւ քահանայապետութեան:

Ներշնչեալ հոգեւոր բանաստեղծը այդ Սաղմոսին մէջ, խօսքը ուղղելով իր «Տիրոջը», այսինքն՝ Մեսիային, կ'ըսէ. «Երդուս ըրաւ Տէր Աստուա եւ պիտի չի զղջայ, թէ դուն յաւիտենական քահանայ մըն ես ԸՍՏ ԿԱՐԳԻՆ ՄԵԼՔԻՍԵԴԵԿԻ»: Երբայեցեաց Թուղթի Հեղինակը, հիմնուելով այս եւ նախորդ մէջբերումներուն վրայ, Հոյակապ եւ երկայն խորհրդածութիւն մը կ'ընէ Քրիստոսի յաւիտենական քահանայապետութեան մասին (Եբր. Ե 6, Զ 20, եւ է, Ը, Թ գլուխները), եզրակացնելու համար, որ արդարեւ Քրիստոս ալ «յաւիտենական քահանայ մըն է ըստ կարգին Մելքիսեդեկի» եւ թէ այս քահանայութիւնը շատ աւելի գերազանց է քան Ղեւտական քահանայութիւնը:

Երբայեցեաց Թուղթի Հեղինակը կը հաստատէ նաեւ, որ Մելքիսեդեկ անունը կը նշանակէ «Թագաւոր Արդարութեան»: Իսկ իբրեւ «Թագաւոր Սաղիմայ»՝ նա «Թագաւոր խաղաղութեան» է, քանի որ այդպէս կը թարգմանուի «Սաղէմ»ը՝ արաբերէն «Սէլամ», երբայեցեւորէն «Շալոմ»: Ու կը շարունակէ վերոյիշեալ Թուղթի Հեղինակը Մելքիսեդեկի մասին. «Անհայր, անմայր, առանց ծննդաբանական ծանօթութեան, որուն ոչ ծագումը եւ ծնունդը յայտնի է, ոչ ալ՝ մահը կամ վախճանը՝ նմանեալ Աստուծոյ Որդիին, կայ ու կը մնայ մշտնջենաւոր քահանայ» (Եբր. է 1-3):

Որով Մելքիսեդեկն ալ նախատիպարն է Քրիստոսի յաւիտենական քահանայութեան:

Նշանակալից է անոր «Հաց եւ գինի» մատուցանելը Աբրահամին: Ըստ երեւոյթին իրարու անծանօթներ իրարու կը ծանօթանան եւ կը մտերմանան, այսինքն՝ իրարու կը հաղորդուին «Հաց ու գինիով», սրբազան տարրերը մեր Ս. Հաղորդութեան, որ Քրիստոս Քահանայապետի խօսքով եւ օրհնութեամբ կը վերածուին իր «Մարմինին եւ Արիւնին», որոնցմով Հաղորդուողը կ'արժանանայ յաւիտենական կեանքի:

Նշանակալից է մանաւանդ իմաստները Մելքիսեդեկի անունին ու Հանգամանքին. «Թագաւոր Արդարութեան եւ Թագաւոր Խաղաղութեան», որոնք երկուքն ալ միաժամանակ տիտղոսներն են Քրիստոսի,

որ կոչուած է «Իշխան խաղաղութեան», եւ մէկը, որ պիտի զօրանար «իրաւամբ եւ արդարութեամբ» (Ես. Թ 6-7): Այս երկուքը՝ արդարութիւն եւ խաղաղութիւն, միասին կ'ընթանան: Երբ չկայ արդարութիւնը, չի կրնար տիրել խաղաղութիւնը: Երբ վերջինս բացակայ է, սա ինքնին փաստ է առաջինին չգոյութեան: «Արդարութիւն եւ խաղաղութիւն պիտի Համբուրուին», կամ «Պիտի ծագի Անոր օրով արդարութիւնը եւ պիտի առատանայ խաղաղութիւնը». կ'ըսէ Սաղմոսերգուն:

Մենք եւ Յոյնք կը յիշատակենք զայն նախահարց Հետ, իսկ Լատինք չունին:

Գլուխ երկրորդ

ՆԱՀԱՊԵՏՔ

Այս գլուխին տակ մեզի պիտի ներկայանան Աստուածաշունչի ամենէն ծանօթ եւ համակրելի դէմքերը, որոնց անունները ամենէն շատ կրկնուածները եւ յիշատակուածներն են Ս. Գրքին մէջ: Ասոնք Աստուծոյ ընտրեալ ժողովուրդին անմիջական նախահայրերն են, զորս Աստուած կ'ընտրէ, կը նախախնամէ եւ կ'առաջնորդէ եւ որոնց կը յայտնէ ինքզինքը, ասոնց սերունդէն կերտելու համար ընտրեալ ժողովուրդ մը, որուն մէջ գոնէ իր անունը եւ իր ճշմարիտ պաշտամունքը վառ մնար մինչեւ Մեսիայի գալուտը:

Աստուածաշունչը լայն լուսարձակով մը սկսուած էր, այսինքն՝ Տիեզերքի, կենդանական աշխարհի եւ մարդու ստեղծումով: Այս լուսարձակը հետզհետէ կը նեղնայ զանազան ազգերու ստեղծումով, ի վերջոյ կեդրոնանալու համար նահապետներու եւ իրենց սերունդին, այսինքն՝ մէկ ժողովուրդի կրօնաբարոյական պատմութեան վրայ:

8. ԱՐԱՀԱՍ

Աբրահամ նահապետով կը սկսի իրագործուիլ Աստուծոյ ծրագիրը յատուկ ժողովուրդ մը կերտելու, որուն մէջ գէթ վառ մնար ճշմարիտ Աստուծոյ գաղափարը եւ կիրարկուէր Անոր կամքը եւ պաշտամունքը: Ինք եւ իր երեք յաջորդները կը հանդիսանան այս ժողովուրդին նահապետները: Մենդոց Գրքի մնացեալ 38 գլուխները (ԺԲ-Մ.) կը ներկայացնեն այս չորս արդարներու կեանքը եւ գործունէութիւնը, որոնք կը կարգացուին մեծագոյն հետաքրքրութեամբ, որովհետեւ լեցուն են զուտ մարդկային տարրերով եւ պարզ աստուածային յայտնութիւններով, որոնք կը խօսին ամէն մարդու սրտին, եթէ մարդ չէ կորսնցուցած բնական ու պարզ գեղեցկութիւններով տպաւորուելու կարողութիւնը եւ կրօնազգաց համամարդկային ոգին:

Աբրահամ մէկն է Աստուածաշունչի մեծագոյն դէմքերէն, որով արդարեւ օրհնուած են «երկրի բոլոր ազգերը» (Մն. ԺԸ 18):

Ազգով քաղղեացի է՝ ծնած Քրիստոսէ շուրջ 2000 տարիներ առաջ Քաղղէաստանի ՈՒՐ քաղաքը, Եփրատի գետաբերանին մօտ, որուն աւերակները մէջտեղ հանուած են այսօր: Աբրահամ եւ իր եղբայրը՝ Նաբոլը, դեռ նոր ամուսնացած էին, երբ ընտանեօք կը գաղթեն հիւսիսարեւմտեան Միջագետքի ԽԱՌԱՆ Քաղաքը, որ կը պահէ նոյն անունը մինչեւ այսօր, ոչ շատ հեռի Ուրֆայէն:

Այստեղ կը մեռնի իր հայրը՝ Թարա, եւ հոն կը հաստատուի իր եղբայրը, իսկ ինք Աստուծոյ հրամանով կը գաղթէ Քանան՝ այսօրուան Պաղեստինը կամ Իսրայէլը: Կը շրջագայի Աբրահամ Քանանու երկրի ամբողջ երկայնքին եւ ի վերջոյ կը հաստատուի երկրի հարաւային մասին մէջ, իբրեւ վրանաբնակ ցեղապետ: Աստուծոյ կողմէ կանչուած ատեն 75 տարեկան էր, եւ հարիւր տարի ալ կ'ապրէ այս երկրին մէջ, ատեն մը ջնջելով նաեւ Եգիպտոս, սովի մը պատճառով: Կը թաղուի Քեբրոն քաղաքը, ուր արդարեւ մինչեւ օրս ցոյց կը տրուի իր գերեզմանը, իր գերդաստանի միւս անդամներուն հետ, Իսլամական սրբավայրի մը մէջ, որ շինուած էր Աբրահամի գերեզմանին վրայ իբրեւ եկեղեցի խաչակիրներու շրջանին: Քեբրոն այսօր Արաբներու կողմէ կը կոչուի ԷՒ-ԽԱԼԻԼ, այսինքն՝ «ԲԱՐԵԿԱՄ» Աստուծոյ, որ Աբրահամին տրուած տիտղոսներէն մէկն է: Հայերս այդ քաղաքը կը կոչենք նաեւ «Հայր Աբրահամ»:

Միաստուածութեան երեք մեծ կրօնքներն ալ՝ Մովսիսականութիւն, Քրիստոնէութիւն եւ Մահմետականութիւն, իրենց հոգեւոր Հայրը կը ճանչնան Աբրահամը, որովհետեւ կը պաշտեն նոյն Աստուծոյ, որ յայտնուած էր Աբրահամին: Պատկանելի եւ ազնուական դէմք մըն է Աբրահամ, օտուած մարդկային լաւագոյն շնորհներով՝ զերծ չմնալով հանդերձ մարդկային մանր տկարութիւններէ: Մենդոց գիրքի 12-25րդ գլուխներուն մէջ կը ներկայացուի իր արկածալից կեանքը, իր թափառումները եւ կրօնական փորձառութիւնները:

Աբրահամի նկարագրին մէջ տիրական գիծը իր անայլայլ ՀԱԻԱՏՔՆ է Աստուծոյ վրայ: Պօղոս Առաքեալ կը կոչէ զայն «Հայր ԱՄԵՆԱՅՆ Հաւատացելոց» (Հռ. Դ 11): Աստուածաշունչի մէջ իր մասին եղած մեծագոյն հաւատարմը սա է. «Հաւատաց Աբրահամ Աստուծոյ, եւ (այս հաւատալը միայն) իրեն արդարութիւն համարուեցաւ» (Մն. ԺԵ 6): Այս խօսքին վրայ հիմնուելով՝ Պօղոս Առաքեալ

մշակեց «Հաւատքով արդարանալու» Քրիստոնէական Հիմնական տեսութիւնը, որ զսպանակը եղաւ բողոքական շարժումին: Աբրահամ արժանի եղաւ «Հաւատքով արդարացումին» իր գործերով, որոնցմէ յիշենք գլխաւորները.

ա) Հնազանդութեամբ, երբ անսալով Աստուծոյ ձայնին ձգեց իր հայրենիքը, բարեկամական ու ցեղային շրջանակը, եւ հետեւեցաւ Աստուծոյ կոչին դէպի անորոշ երկիր մը, ապագայ մը, եւ առաքելութիւն մը:

բ) Աստուածասիրութեամբ, երբ յանձն առաւ իր միամօր որդին՝ Իսահակը, զոհել Աստուծոյ:

գ) Անտասիրութեամբ, երբ արտօնեց, որ իր եղբորորդին՝ Ղովտ, իր կրտսերը եւ երախտաւորեալը, ընտրէ երկրի լաւագոյն մասը բնակութեան համար:

դ) Քաջութեամբ, երբ պատերազմելու ելաւ իրմէ աւելի զօրաւոր թագաւորներու դէմ, յանուն արգարութեան եւ յատկապէս ազատելու համար իր եղբորորդին՝ Ղովտը, որ գերի տարուածներուն մէջն էր:

ե) Մեծագնացութեամբ, երբ վերոյիշեալ պատերազմէն յաղթական վերադարձին մերժեց ստանալ աւարի իր արդար բաժինը, որպէսզի ոչ ոք կարենայ ըսել, թէ ինք «հարստացուց Աբրահամը»:

Աբրահամ օտուտած է դեռ բարութեան, առատաձեռնութեան, հիւրասիրութեան եւ ազնիւ քաղաքավարութեան, եւ այլ նման մարդկային առաքինութիւններով, որոնք զինքը կը վերածեն Հին Կտակարանի ամէնէն սիրելի եւ յարգելի դէմքերէն մէկին:

Աբրահամ 99 տարեկան էր, երբ Աստուած ԵՐԵՒՅԱԻ անոր եւ ըսաւ «Ես եմ Աստուած ԱՄԵՆԱԿԱԼ. քայէ իմ ներկայութեանս եւ եղիւր ԱՆԱՐԱՏ: Ու ես ՌԻՆՏ ՄԸ ՊԻՏԻ ԴՆԵՄ ԻՄ եւ քու միջեւ... Իմ եւ քու սերունդիդ միջեւ, իբրեւ յաւիտենական ուխտ: Աստուած պիտի ըլլամ քեզի եւ քու սերունդիդ» (Ծն. ԺԵ 1 եւ շար.): Այս Ուխտին իբրեւ նշան տուաւ Աստուած թլփատութիւնը, եւ Աբրահամ թլփատուեցաւ 99 տարեկանին:

Ուրեմն, համաձայն այս Ուխտին՝ Աստուած կը խոստանայ Աբրահամին անոր Աստուածը ըլլալ իր «Ամենակալ» հանգամանքով, ինչ որ կը նշանակէ անոր Տէրը, Պաշտպանը եւ Բարեբարը ըլլալ: Իսկ Աբրա-

համէն կը պահանջէ երկու բան. ա) Քալիլ իր ներկայութեան, այսինքն՝ ապրիլ Աստուծոյ մշտական ներկայութեանը մէջ, բ) Անարատ ըլլալ: Այս երկուքը կը կազմեն սրբութեան կորիզը եւ Հիմնական պայմանները: Աբրահամի կրօնքին էութիւնը ասոնք են, որ պիտի փոխանցուէր իր սերունդին, որ պիտի մշակուէր եւ բարգաւաճէր Մովսէսի օրէնադրութեան մէջ, իր կատարումին պիտի հասնէր Քրիստոնէութեան մէջ, վերստին իր պարզութեան պիտի բերուէր Մուհամմէտի հաստատած կրօնական գրութեան մէջ:

Նշանակալից է Աբրահամի բարեխօսութիւնը ՍՈՂՈՄ-ԳՈՄՈՐԸ փրկելու համար: «Ու Աբրահամ մօտեցաւ եւ ըսաւ (Տիրոջ Հրեշտակին). «Մի՞թէ արդարն ալ ամբարիշտներու հետ պիտի փճացնես: Եթէ յիսուն արդար գտնուի այդ քաղաքի մէջ, պիտի փճացնես՞ զանոնք, պիտի չենքն՞ բոլորին՝ յիսուն արդարի համար, քաւ լիցի քեզի, որ նման բան մը ընես, փճացնել արդարը ամբարիշտին հետ, արդարը եւ ամբարիշտը մէկ կ'ըլլան այն ատեն (տարբերութիւն չեն ունենար) քաւ լիցի, որ նման բան մը ընես, դու, որ կը դատես ամբողջ երկիրը...»: Պատասխանը ծանօթ է. «Եթէ Սողոմոն մէջ գտնեմ յիսուն արդար, կ'ըսէ Աստուած, պիտի խնայեմ ամբողջ այդ շրջանին»: Կը շարունակէ Աբրահամ իր թխսանձանքը. «Այժմ սկսայ խօսիլ Տիրոջ հետ, ես որ Հող եմ եւ մոխիր, ենթադրենք, որ յիսունէն Հինգ պակաս արդար կայ այնտեղ, պիտի փճացնես՞ ամբողջ քաղաքը այս Հինգ պակասին համար...»: Ու Աբրահամ կ'իջնէ մինչեւ տասը: Ու Աստուած յօժարութիւն կը յայտնէ ամբողջ քաղաքին խնայել տասը արդարին համար...:

Այսօր եթէ Աստուած կը խնայէ մեր ամբարշտաց աշխարհին՝ այս «տասը» արդարներուն համար է: Պիտի գայ ժամանակ, որ այդ «տասը» արդարներն ալ պիտի չգտնուին մեր այս դրախտային աշխարհին մէջ, որ պիտի արժանանայ Սողոմ-Գոմորի ճակատագրին, որովհետեւ անոնց ճանապարհէն կ'ընթանայ:

Աբրահամ նախատիպարն ու խորհրդանշանն է ԲՈԼՈՐ սուրբերուն եւ արդար Հոգիներուն, որոնք գերմարդկային ճիւղեր կ'ընեն երկրի վրայ Աստուծոյ խօսքին քարոզութեամբ եւ իրենց աղօթքներով, ու մանաւանդ իրենց արդար կեանքով, իսկ երկինքի մէջ իրենց բարեխօսութեամբ՝ ազատելու համար ամբարշտացեալ մարդկութիւնը Աս-

տուժոյ արդար բարկութենէն, առանց միշտ յաջողելու: Լատինք կը յիշատակեն Աբրահամը Հոկոտ. 9ին, իսկ մենք եւ Յոյնք՝ նախահարց Հետ:

9. ԻՍԱՀԱԿ

Աբրահամ իր օրինաւոր կենջմէն, ամուլ Սառայէն ունեցաւ միաժին որդի մը՝ Իսահակը, որ եղաւ շարունակողը իր Հօր Հաւատքին, ոգիին, գործին եւ առաքելութեան իբրեւ երկրորդ Նահապետը Աստուծոյ կերտել ծրագրած նոր ժողովուրդին: Կ'արժէ բաղդատել որդին իր Հօրը Հետ ի յայտ բերելու Հար երկուքին նմանութիւնները եւ տարբերութիւնները:

Առ Հասարակ տեսնուած իրականութիւն է, որ մեծանուն Հօր մը զաւակը նոյնքան մեծահռչակ չըլլար. թէ իսկ բացառութիւններ տեսնուած ըլլան այս կանոնին մէջ, Իսահակ այդ բացառութիւններէն չէր: Աբրահամին կեանքը լայնարձակ շրջանակի մը մէջ անցած էր, Քաղղէաստան, Միջագետք, Քանան, մինչեւ Եգիպտոս: Իսահակ ծնաւ Հարաւային Պաղեստին եւ անկէ դուրս չեկաւ: Աբրահամ բացաւ նոր ուղիներ, Իսահակ քալեց կոխուած ճամբաներէն: Աբրահամի կեանքը լեցուն եղաւ արկածներով, Իսահակինը խաղաղ անցաւ: Աբրահամ բազմակողմանի եւ տիրական նկարագիր մըն էր, Իսահակ գրեթէ միակողմանի եւ կրաւորական զէմք մըն է: Աբրահամ դժուարութիւնները դիմակալող եղաւ, Իսահակ կը խուսափէր բախումներէ:

Այս բոլորով Հանդերձ Իսահակն ալ ունի իր առանձնայատկութիւնները, որոնք նոյնքան կարեւոր տեղ կը գրաւեն մարդկային կեանքի մէջ: Եթէ Աբրահամ սկսողը եղաւ նոր տեսակ կրօնական կեանքի մը, Իսահակ զայն պահողը եւ շարունակողը եղաւ: Իսահակ կըրցաւ տեսնել սա կարեւորագոյն իրականութիւնը, թէ իր Հօրմէն ժառանգած նիւթական ու բարոյական հսկայ Հարստութեանց մէջ կարեւորագոյնը եւ ամէնէն թանկագինը իր Հօր ԿՐՕՆՔՆ էր: Ինք ոգեւին իւրացուց զայն եւ տէր կանգնեցաւ անոր: Երեք են Իսահակի նկարագրին հիմնական գիծեր՝ պառկանդակաւորութիւն լաւագոյնին, խաղաղասիրտութիւն ամէն մարդի մէջ, հաւատարմութիւն ամուսնական կեանքի մէջ:

Բազմակնութեամբ ողորդուած դարու մը մէջ միակին անձ մըն է Իսահակ: Ու ընտանեկան մարդի մէջ ամէնէն բախտաւորներէն եւ երջանիկներէն եղաւ ան: Իր կինը՝ Ռեբեկա, Աստուածաշունչի ամէնէն Համակրելի կիներէն մէկն է՝ աշխոյժ, ուշիմ, գեղեցիկ եւ բարեսիրտ, պէտք եղած տեղը՝ Համարձակ եւ խորագէտ, պէտք եղած տեղը՝ Համեստ եւ պարզասիրտ, բայց միշտ Հաւատարիմ եւ որդեսէր: Իր երկուորեակ զաւակներուն առաւելութիւնները եւ թերութիւնները իր ամուսինէն աւելի լաւ կը ճանչնար: Յառաջ քշեց կրտսերը ի Հեճուկս երէցին, որ Հմուտ որսորդ մըն էր եւ «վայրագ» ըստ Ս. Գրքին, իսկ Յակոբը՝ «այր առանց պաճուճանաց եւ ընտանեսուն», իսկ ըստ Եբրայական Ս. Գրքի՝ «Հանդարտաբարոյ եւ վրանաբնակ մարդ»: Յակոբին ապագայ մեծութեան մէջ մեծ դեր ունեցաւ իր մայրը: Իսահակին մարդկային տկարութիւնները կը չէզոքացուին Ռեբեկայի գործնամիտ խորագիտութեամբ: Մին միւսին լրացուցիչն է, ինչպէս պէտք է ըլլայ ամէն բնականոն այր եւ կին:

Մեր ժամանակներու Համար, որ լեցուն է անձկութիւններով, պայքարներով եւ ընտանեկան անհամութիւններով ու անհաւատարմութիւններով, Իսահակ կը ներկայանայ փնտռուած եւ սիրուած տիպարը ընտանեսէր մարդուն: Բախտաւոր է այն մարդը, որ երբ իր Հօրը կը նայի, անոր մէջ կը տեսնէ անկեղծ Հաւատքը եւ մաքուր կրօնքը, իսկ երբ կենջը կը նայի, անոր մէջ կը գտնէ տառապէս իր լաւագոյն կէսը: Իսահակ այդ բախտաւորներէն մէկը եղաւ եւ տէր մնաց իր բախտին մինչեւ իր կեանքին վախճանը:

Իսահակ ալ յիշուած է յաճախ Նոր Կտակարանին մէջ, ոչ միայն իբրեւ Հաւատքի Հերոսներէն, այլ նաեւ իբրեւ նախատիպարը՝ ողջակիզուող Քրիստոսի: Իսահակ կուսակը առած էր այն փայտը, որով պիտի ողջակիզուէր: Քրիստոս իր ուսին վրայ կրեց իր մահուան գործիքը: Իսահակ թէեւ զոհուեցաւ իր Հօրը կամքին ու իր անմուռնչ Հնազանդութեան մէջ, բայց ողջ ելաւ զոհի սեղանին վրայէն, ուղղակի աստուածային միջամտութեամբ: Քրիստոս թէպէտեւ մեռաւ մարմնով, բայց վերստին կեանքի եկաւ իր զոհաբերութենէն յետոյ: Իսահակ ապրեցաւ 180 տարի:

10. ՅԱԿՈՒՐ

Յակոբ որդին էր Իսահակի եւ անմիջական նախահայրը Իսրայէլի տասներկու ցեղերուն: Մենդոց Գրքի գրեթէ կէսը յատկացուած է ներկայացնելու Յակոբ Նահապետի եւ իր զաւակներուն արկածայից կեանքը եւ կրօնական փորձառութիւնները (Մն. ԻԵ 19-Մ. գլուխները): Իր կանուխ երիտասարդութեան նախ գնեց իր եղբորմէն անոր անդրանկութեան իրաւունքը աման մը թանապուրի փոխարէն եւ ապա ստացաւ անդրանիկ զաւակի վերաբերեալ Հօրենական օրհնութիւնը, այս անգամ իր մօրը խորամանկութեամբ, բայց վճարեց այս անիրաւութեանց Համար կեանքի նեղութիւններով: Նախ փախաւ եղբորը բարկութենէն Խառան՝ իր մօր ազգականներուն քով: Քսան տարի չարաչար ծառայութիւն ըրաւ այնտեղ՝ Հարստացնելով թէ՛ իր մօրեղբայրը եւ թէ՛ ինքզինքը: Ամուսնացաւ իր մօրեղբօր երկու աղջիկներուն հետ եւ անոնցմէ ու անոնց զոյգ աղախիններէն ունեցաւ 12 մանչ զաւակ, որոնք կազմեցին Իսրայէլի ժողովուրդին տասներկու ցեղերուն նահապետները: Վերադարձաւ իր երկիրը եւ երկար տարիներ ապրեցաւ այնտեղ: Մերութեան տարիքին իջաւ Եգիպտոս, ամբողջ իր ցեղով եւ այնտեղ վախճանեցաւ, բայց իր մարմինը բերուեցաւ ու թաղուեցաւ Քեբրոն՝ իր Հայրերու գերեզմանը:

Յակոբ ճարպիկ, խորագէտ, աշխատասէր եւ եսակեզրոն անձ մըն էր, որ շարունակ իր շահը կը հետապնդէր, ատոր Համար ալ յաջողութիւններու զուգահեռ ընթացան նաեւ նեղութիւնները իր կեանքին մէջ:

Յատկապէս Խառանէն իր երկիրը վերադարձի ճամբուն վրայ, երբ պէտք եղաւ իր եղբոր հետ երես երեսի գալ, զգաց, որ ներքին նեղութեան մը մատնուած էր. «Ձահի Հարաւ Յակոբ եւ տարակուսեալ էր» (Մն. ԼԲ 7): Իր եղբօր դէմ ի գործ դրած անիրաւութիւնը ուժգնօրէն խռովեց եւ խոնարհեցուց զայն ու ըսել տուաւ իրեն. «Ով իմ Հօրս՝ Աբրահամի եւ Իսահակի Աստուած, ո՛վ Տէր, դուն ըսիր ինձի, որ դառնամ իմ ծննդեան երկիրս, եւ խոստացար օգնական ըլլալ ինձի, ես արժանի չեմ փոքրագոյնին այն գթութեան եւ Հաւատարմութեան, որ ցոյց տուիր քու ծառայիդ Հանդէպ, որովհետեւ լոկ ճամբորդական գաւազանով մը անցայ այս Յորդանան գետը, եւ ահաւասիկ կը վերադառնամ երկու բանակի վերածուած: Ազատէ զիս եղբօրս ձեռքէն,

որովհետեւ կը զարհուրիմ անկէ...» (Մն. ԼԲ 9-12): «Երկու բանակով» շատ ալ վախնալու պատճառ չունէր Յակոբ, բայց իր վստահութիւնը ամուր չէր Աստուծոյ վրայ, քանի որ խիղճը արատաւոր էր: Այս կէտին խորհրդաւոր դէպք մը տեղի կ'ունենայ Յակոբի կեանքին մէջ:

Յակոբ իր ամբողջ ունեցածը եւ ընտանիքը անցուցած է գետին միւս կողմը, բայց ինքը կը մնայ դեռ գետին այս կողմը: Գիշեր է եւ միս մինակ. հաւանաբար ինքզինքը աղօթքի եւ մտածականի տուաւ Յակոբ, երբ կը գտնուէր իր կեանքի կարեւորագոյն հանգրուանին վրայ, ուր իրեն Համար լինելու չլինելու Հարց մըն ալ գոյութիւն ունէր: «Ու մարտնչեցաւ մարդ մը անոր հետ մինչեւ առաւօտ»: Յակոբին հետ մարտնչողը իրականին մէջ իր խղճմտանքն էր. Աստուծոյ արդարութիւնն է, որ մարդու կերպարանք առած իր դէմ կը մաքուէր՝ մէկ կողմէն անցեալին իր գործած անիրաւութեանց Համար, միւս կողմէն՝ ազատագրելու Համար զայն իր խորամանկութենէն եւ եսասիրութենէն: Յակոբ ծանրագոյն մեղքեր չէր գործած. ո՛չ մարդ սպաննած էր եւ ո՛չ ալ՝ շնութիւն ըրած, բայց եսասիրական նկատումներով խաբած էր իր եղբայրը, իր հայրը եւ իր աներհայրը: Այժմ Հարստացած եւ մեծատուն ցեղապետ մը եղած կը վերադառնար, սակայն Յակոբ կը զգար, որ ներքնապէս աղքատացած էր: Աստուած իր խոստումին հաւատարիմ եղած էր, օրհնած էր զինքը եւ պաշտպանած, բայց Յակոբ հաւատարիմ չէր եղած Աստուծոյ. «Իր ներկայութեան» չէր քալած, ոչ ալ «Անարատ» եղած էր: Երբ ան այլեւս իր երկիրը կը վերադառնար շարունակելու եւ իրագործելու Համար Աստուծոյ ծրագիրը՝ ընտրեալ ժողովուրդ մը կազմելու, Աստուած կ'ուզէր, որ Յակոբ ուղղէր իր սիրտը եւ իրեն հետ քալէր, արժանանալու Համար ընտրեալ ժողովուրդի մը Հայր ըլլալու առանձնաշնորհին:

Քիչ չէ թիւր մարդոց, որոնք Յակոբին պէս ոչինչով կը սկսին կեանքը եւ իրենց ուշիմութեամբ եւ աշխատասիրութեամբ մեծ Հարստութեան եւ դիրքի կը տիրանան, որուն մէջ միշտ Հաշուի պէտք է առնուի Աստուծոյ օգնութիւնը եւ օրհնութիւնը: Շատեր չեն կրնար տեսնել ասիկա, Յակոբ տեսաւ եւ ըսաւ. «Արժանի չեմ փոքրագոյնին այն գթութեան եւ Հաւատարմութեան, որ ցոյց տուիր ծառայիդ Հանդէպ»: Թէ՛ եղբօր բարկութիւնը իջեցնելու նպատակաւ եւ թէ՛ Հատուցում ընելու գիտաւորութեամբ, իր Հարստութեան կարեւոր մէկ

բաժինը իր եզրօր դրկեց առջեւէն: Սակայն Յակոբ կը զգար, որ այդ նուէրները բաւական չէին ջնջելու խարէութեան խարանը, որ իր խղճին վրայ զարնուած կը մնար: Ուստի ունեցաւ այն խորհրդաւոր մաքառումը, այս անգամ ուղղակի Աստուծոյ Հետ եւ Աստուծոյ դէմ:

Որքան խորհրդանշական է եւ իմաստալից, որ մարտնչող անծանօթը երբ տեսաւ, որ չի կրնար յաղթահարել Յակոբը, անոր «ամոյա- ջիլը ընդարձացուց»: Անծանօթը ըսած էր. «Զգէ, որ Հեռանամ այլեւս», Յակոբ տեղի չտուաւ, ընդհակառակը ակելի ուժգին կ'պաւ խորհրդաւոր մարդուն եւ ըսաւ «Պիտի չարձակեմ քեզ, մինչեւ չօրհնես զիս»:

Ու գերբնական էակը փոխան օրհնութեան նոր անուն մը տուաւ Յակոբին. «Ասկէ վերջ անունդ պիտի ըլլայ իՍՐԱԵԼ», որ կը նշա- նակէ «Աստուծոյ Հետ մարտնչող». ակելցուց անծանօթը. «Որովհետեւ մարտնչեցար Աստուծոյ եւ մարդոց Հետ, եւ զօրաւոր դուրս եկար» (ՄՆ. ԼԲ 24-30):

Այս մարտնչումը սակայն Յակոբին վրայ ձգեց իր մնայուն Հեռքը: Այո՛, Հասած էր իր նպատակին նաեւ Աստուծոյ Հետ մաքա- ակելու ընթացքին, ինչպէս եղած էր մարդոց Հետ մարտնչելու ատեն: Ազատեցած էր Աստուծոյ ներումը եւ օրհնութիւնը, սակայն կաղ մնացած էր: «Ընդարձացած», այսինքն՝ թմրած եւ անգործութեան մասնուած էր զիստը շարժման մէջ դնող «ամուլաջիլը»:

Շատ նշանակալից է պայքարին յաջորդող աստուածաշնչական Հուսաստումը. «Ու անոր վրայ արեւ ծագեցաւ», երբ անցաւ գետը, բայց «Նա կաղայր երթայր ի զըստէ անտի» (ՄՆ. ԼԲ 31): Այնու- Հանգերձ կաղացող Յակոբը ակելի լաւ մարդ մըն էր, քան նախկին չկաղացող, ակելի շիտակ բարոյապէս երկու կողմի վրայ կաղացող Յակոբը: Երբեմն փորձանքներու կը կարօտինք ակելի լաւ մարդ ըլլալու Համար: Յաճախ ծանր Հիւանդութիւն մը, լուրջ արկած մը, սրտի տաղնապ մը միայն կրնան զգաստացնել քայքայիչ խմիչքի կամ ծիւղի գիրի մարդը, որ Հրաժարի բարոյապէս եւ Ֆիզիքապէս անգունը առաջնորդող նման մոլութիւններէ: Շատեր, նման փոր- ձանքներու Հանդիպելով Հանդերձ, չեն զգաստանար եւ կը մեռնին իրենց մեղքին մէջ:

Յակոբ այս միջադէպէն առաջ գրեթէ ամէն մարդի մէջ ինքնաբաւ զգացած էր ինքզինքը: Գրեթէ ոչ ոք կրցած էր յաղթահարել իրեն կեանքի պայքարին մէջ: Յաջողակ եւ Համարձակ եղած էր իր բոլոր գործերուն մէջ, բայց երբ պէտք եղաւ դէմ յանդիման գտնուել իր եղբոր Հետ, զոր անիրաւած էր, ինքզինքը նկուն եւ անբաւական զգաց, վախցաւ իր եղբոր արդար բարկութենէն, որ խորքին մէջ Ա- ստուծոյ արդարութեան ազգարարութիւնն էր: Յակոբ, իրբեւ բարոյա- կան ժառանգորդը Աբրահամի եւ Իսահակի, կանչուած էր «Աստուծոյ Հետ քայլելու եւ անարատ ըլլալու»: Յարդ այնքան զբաւուած էր Հարստանալու տենչով, որ գրեթէ ժամանակ չէր ունեցած անգրա- դառնալու իր այս պարտաւորութեան: Իր կեանքի կարեւորագոյն այս Հանգրուանին զգաստութեան Հրաւիրուեցաւ Յակոբ եւ, Հակառակ իր մաքառումին, ի վերջոյ տեղի տուաւ: Այս դէպքէն յետոյ Յակոբ գտած էր իր լաւագոյն եսը եւ մտած էր ուղիղ դերին մէջ, թէ իսկ «զիստէն կը կաղար»: Մարդուն ինքնաբաւութիւնը, ամբարտաւանու- թիւնը եւ յաւակնտութիւնները պէտք է խորտակուին նախ քան արդարութեան եւ սրբութեան ճանապարհին մէջ մտնելը:

Յակոբի Համար նոր «արեւ մը ծագած էր», նոր Հանգրուան մը բացուած էր. ու ասկէ յետոյ ինք ակելի Հաւատարիմ եղաւ իր կոչու- մին, քան ինչ որ եղած էր մինչեւ Հիմա. իր թերացումներու ակելի խոր ճանաչումին Հասած էր, ու իր կաղութիւնը մշտական յուշարար մը մնաց նախ իր անկատարութեան, եւ ապա՝ Աստուծոյ կրթնելու, Անոր ապաւինելու անհրաժեշտութեան:

Յակոբ ապրեցաւ 147 տարի: Լատինք կը յիշատակեն Դեկ. 23ին. իսկ մենք եւ Յոյնք՝ նախահարց Հետ:

10. ՅՈՎԱԵՓ

Յովսէփ վերջինը եւ ամենէն Համակրելին է Մենդոց Գրքի Հաւատ- քի եւ սրբութեան Հերոսներու: Կարելի չէ կարգալ իր կեանքը առանց մեծագոյն Հետաքրքրութեան եւ խորագոյն յուզումի: Մարդկային պատմութեան ու ժողովուրդներու գրականութեան գեղեցկագոյն զրուագներէն է Յովսէփի պատմութիւնը, որ կը գրաւէ Ս. Գրքի առաջին մատենանի վերջին տասներկու գլուխները:

Վերջընթերն էր Յովսէփ Յակոբի տասներկու զաւակներուն, ծնած՝ անոր սիրելի կնոջ՝ Ռաբելէն, որ մեռաւ երկրորդ տղայաբերքին, երբ Յովսէփ դեռ մատաղ մանուկ էր: Հայրը իր սէրը կրկնապատկեց սրբացած այս զաւկին վրայ, ինչ որ նախանձը շարժեց միւս եղբայրներուն, որոնք իբրեւ գերի ծախեցին զայն վաճառականներուն, որոնք իրենց կարգին վաճառեցին զայն Եգիպտոսի փարաւտնին՝ բարձրաստիճան մէկ պաշտօնատարին: Յովսէփ, որ արդէն հասուն երիտասարդ մըն էր ծախուած ատեն, իր ուշիմութեամբ, հաւատարմութեամբ եւ ձեռներէցութեամբ փարաւտնի պաշտօնատարին տան եւ ինչքերուն վերակացու կարգուեցաւ: Այս տան մէջ տեղի ունեցաւ Յովսէփի կեանքին ամէնէն եղբրական ու միաժամանակ դիւցազնական տրամբ, որ երեւան հանեց Յովսէփի ոսկի նկարագիրը: Պաշտօնատարին փարթամ կիներ աչք տնկեց Յովսէփի վրայ: Անոր տեղ ունէ ուրիշ երիտասարդ պիտի չկրնար «ոչ» ըսել նման հրապուրիչ կանչի մը: Յովսէփ կրցաւ: Ոչ միայն մերժեց առաջարկը, այլեւ համարձակօրէն կրցաւ ըսել՝ կնոջ. «Այս տան մէջ ամէն ինչ ինձի յանձնուած է բացի քեզմէ, որովհետեւ տանտիրոջս կիներն են». եւ աւելցուց. «Ուստի ի՞նչպէս կրնամ այսպիսի մեծ չարիք մը գործել, եւ ՄեՂԱՆՁԵԼ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՌՁԵԻ» (Մտ. ԼԹ 9): Յովսէփ ոչ միայն կնոջ յարաճուն թախանձանքներուն չէր անսար, այլեւ կը կիրարկէր գերագոյն ռազմավարութիւնը, որ յաջողութիւն կրնայ խոստանալ նման պարագաներուն. «Ոչ հուպ լիներ նմա». չէր մօտենար կնոջ, կը խուսափէր անոր հանդիպելէ:

Յանկութիւնը կրակ մըն է, որ եթէ չմարուի իր սկզբնական շրջաններուն, աւելի կը բորբոքի օրերու հետ եւ ի վերջոյ այրելու համար ցանկութեան տէրը եւ իր զոհը, ինչպէս եղաւ Յովսէփի պարագային: Աստուածաշունչի պարգագոյն եւ անմրցելիօրէն իրապաշտ բառերով՝ «Օրին մէկը, երբ Յովսէփ տուն մտաւ իր մէկ գործը կատարելու համար, երբ ընտանիքի անդամներէն ոչ ոք կար ներսը, կիներ բռնեց անոր հագուստէն եւ ըսաւ՝ ննջէ ինձի հետ: Ու Յովսէփ, իր հագուստը անոր ձեռքը ձգելով, դուրս փախաւ»...: Դիւրին է երեւակայել հետեւանքը: Ոչ ոք պիտի հաւատար Յովսէփի անմեղութեան, երբ շօշափելի փաստը՝ իր հագուստը, կնոջ ձեռքն էր, որ զայրացած կը գոռար ամէնքին, թէ երբայեցի այս գերին յանդգնած էր իր վրայ

յարձակիլ: Աստուծոյ գերագոյն տնօրէնութեամբ տեղնուտեղը չսպաննուեցաւ Յովսէփ, այլ ցմահ բանտարկութեան դատապարտուեցաւ: Կրակի հնոցի մէջ նետուած էր Յովսէփ, ու իր նկարագրի ոսկին աւելի գտուած դուրս եկաւ թէ՛ այս բարոյական փորձութենէն եւ թէ՛ բանտի վիրապէն, դառնալու համար ի վերջոյ, աստուածային անիմանալի դարձուածքներով, Եգիպտոսի փոխարքան... եւ փրկելու իր ցեղը սովի ճիրաններէն:

Յովսէփ Աստուածաշունչի ամէնէն կատարեալ դէմքերէն է, հետեւաբար ժառանգած է իրաւամբ «Գեղեցիկ» տիտղոսը:

Յովսէփ արդարեւ գեղեցիկ էր Ֆիզիքայէս, բարոյապէս եւ իմացապէս: Իր նկարագրին հիմնական գիծերը պարկեշտութիւն եւ հաւատարմութիւն է: Վստահութիւնը գրաւեց մարդոց, ուր որ գտնուեցաւ՝ փարաւտնի պաշտօնատարի տան մէջ, բանտին մէջ եւ փարաւտնի բարձրագոյն ծառայութեան մէջ: Հաւատարիմ եղաւ մարդոց, վասնզի նախ հաւատարիմ էր իր Աստուծոյն: Աբրահամեան կրօնքին գերագոյն կատարն է Յովսէփ: Արդարեւ միշտ «քալեց Աստուծոյ ներկայութեան եւ անարատ եղաւ»: Սրտառու է արդարեւ սրտէն փրթած իր տրամաբանական աւաչը. «Ինչպէ՞ս կրնամ մեղանջել Աստուծոյ առջեւ»:

Աստուծոյ յարաբերաբար միայն մենք կրնանք տեսնել մեր ուղիղ յարաբերութիւնը մեր ընկեր արարածներուն հետ: Մինչեւ որ մեր դիմացինը չնկատենք Աստուծոյ պատկերով ստեղծուած թանկագին հոգի մը, պիտի չկրնանք անոր հանդէպ սէր եւ յարգանք տածել, եւ զգուշանալ զայն խորտակելէ եւ փճացնելէ: Առանց Աստուծոյ հաշիւ տալու գիտակցութեան, մարդկային յարաբերութիւնները ի վերջոյ պիտի այլասերին վերածուելու համար եսասիրական ու կենդանական բնազդներու:

Ի վերջոյ Յովսէփ գերագոյն իմաստութեամբ մը իր եղբայրներուն սորվեցուց, թէ ինչպէս պիտի ըլլայ իրական եղբայրութիւնը: Չարիքը բարիքով վերադարձուց: Զինքը գերիի մը պէս ծախած եղբայրներուն առջեւ երեք անգամ փղձկեցաւ ու ստիպուեցաւ առանձնանալ իր եղբայրական յուզումին ազատ ասպարէզ տալու համար: Մտողասէր եւ ազգասէր էր Յովսէփ: Իր որդիական սիրով ողողեց իր ծերունագարդ հայրը եւ մխիթարեց զայն իր վերջին տարիներուն: Իր ժողովուրդին

տէր ու պաշտպան կանգնեցաւ օտար երկրի մը ծառայութեան մէջ եղած միջոցին: Այս բոլորը եւ անելին եղաւ ան, որովհետեւ ամէնէն առաջ եւ ամէնէն անելի աստուածասէր էր Յովսէփ:

Յովսէփ նախատիպարն է Քրիստոսին ոչ միայն իր բարոյական կատարելութեամբ եւ փորձութեան մէջէն յաղթական դուրս գալով, այլ նաեւ Քրիստոսի պէս «երեսուն արծաթի» վաճառուելով եւ իր ժողովուրդի փրկութեան պատճառ դառնալով, ինչպէս եղաւ Քրիստոս՝ Աստուծոյ նոր ժողովուրդին համար: Յովսէփ մեռաւ 110 տարեկանին, իբրեւ փոխարքայ Եգիպտոսի: Թէեւ թաղուեցաւ Եգիպտոս, սակայն իր ժողովուրդը երբ ելաւ Եգիպտոսէն, անոր ոսկորներն ալ միասին հանեցին եւ ի վերջոյ թաղեցին իր հայրերու գերեզմանը Քեբրոնի մէջ: Լատինք կը յիշատակեն զայն Դեկտ. 11ին, իսկ մենք եւ Յոյնք՝ Նախահարց հետ:

Գլուխ երրորդ

ԱՆԱՊԱՏԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ

Այս գլուխին մէջ պիտի յիշուին Աստուծոյ ժողովուրդին այն գործիչները, որոնք Եգիպտոսի ելքէն յետոյ անոր անապատային 40 տարիներու թափառումներու ընթացքին կարեւոր դեր կատարեցին եւ տակաւ առ տակաւ առաջնորդեցին եւ մտցուցին զայն Աւետեաց Երկիրը:

12. ՄՈՎՍԷՍ

Անտարակոյս մեծագոյն դէմքը Հին Կտակարանին եւ կրօնական չափանիշով մեծագոյններէն մէկը աշխարհի պատմութեան մէջ: Աստուածաշունչի մէջ չորս գիրքեր՝ Ելից, Ղեւտական, Թուոց եւ Երկրորդումն Օրինաց՝ կը պարունակեն պատմութիւնը իր կեանքին, գործին եւ օրէնքներուն:

Մովսէս ծնաւ Եգիպտոսի մէջ 1570ին Ք. ա., երբ իր ժողովուրդը զգալիօրէն բազմացած, բայց միաժամանակ գերի դարձած էր Եգիպտոսի փարաւոններուն: Առաջքն առնելու համար Իսրայէլի ժողովուրդին անսովոր աճումին, փարաւոններէն մէկը, «որ չէր ճանչնար Յովսէփը», նախ աղիւսաշինութեան չարաչար աշխատանքին լծեց զանոնք, եւ ապա հրաման հանեց, որ անոնց արու զաւակները փճացուին տղայաբերքին կամ գետ նետուին, եթէ ազատած են: Մովսէս ալ սահմանուած էր այս ճակատագրին, սակայն աստուածային նախախնամութիւնը նախ փրկեց եւ ապա ղրկեց զայն՝ ազատագրելու իր ժողովուրդը Եգիպտական գերութենէ: Մանօթ եւ հրաշալի պայմաններու մէջ ջուրէն ազատուած այս «կայտառ» մանուկը եղաւ փարաւոնի դստեր որդեգիրը եւ մինչեւ քառասուն տարեկանը ապրեցաւ Եգիպտական արքունիքին մէջ «եւ սորվեցաւ Մովսէս Եգիպտոսի ամբողջ իմաստութիւնը, եւ հզօր էր խօսքով ու գործով» (Գործ. է 22):

Իր «գօրութիւնը» եւ ինքնութիւնը նախ յայտնեց, երբ արիւնը խօսեցաւ իր մէջ եւ «իւր ազգակիցները տեսնելու ելաւ» ու սպաննեց եգիպտացի վերակացուն, որ անգթաբար կը մտրակէր Եբրայեցի

աշխատաւոր մը: Նախ քան այս լուրը փարաւտնին ականջը հասնիլը՝ Մովսէս փախաւ Եգիպտոսէն եւ ապաստանեցաւ Սինայի անապատի ցեղապետներէն Մադիանացի քուրմի մը մօտ, ուր ամուսնացաւ անոր աղջիկներէն մէկին հետ եւ ունեցաւ երկու զաւակներ: Այստեղ ապրեցաւ Մովսէս՝ արքունիքին մէջ մեծցած մարդը, քառասուն տարիներ, իբր պարզ հովիւ:

Ութսուն տարեկանին, երբ դեռ կորովի անձնաւորութիւն մըն էր, Միքել Անճելոյի ծանօթ արձանին մէջ պատկերացուածին պէս, Աստուած յայտնուեցաւ իրեն Սինա լեռան վրայ Անկէզի Մորենիին մէջէն եւ ուզեց դրկել զայն իր գերի ժողովուրդը փրկելու մեծ առաքելութեան: Մովսէս նախ ընդդիմացաւ այս առաջարկին, որուն անբաւական կը նկատէր ինքզինքը, բայց երբ գրեթէ յակամայս համակերպեցաւ Աստուծոյ պնդումին, ի գլուխ հանեց զայն հրաշալի պայմաններու ներքեւ: Ազատագրեց եւ տարաւ իր ժողովուրդը ետ Սինա լեռան ստորոտը, ուր Աստուած յայտնուած էր իրեն առաջին անգամ, եւ այնտեղ ՈՒՆՏ մը կնքուեցաւ Աստուծոյ եւ Իսրայէլի ժողովուրդին միջեւ:

Այս ՈՒՆՏԸ կրօնական պատմութեան մեծագոյն «աքտ»երէն մէկն է եւ ներկայացուած է Ելից Գրքի ԺԹ գլուխին մէջ իրապաշտ եւ տրամադրիկ պատկերացումով, որուն կ'արժէ անդրադառնալ, որովհետեւ թէեւ այս ՈՒՆՏԸ ձեւապէս եւ պատմականօրէն կնքուած է Աստուծոյ եւ աննշան ցեղախումբի մը միջեւ, սակայն խորքին մէջ տեղի ունեցաւ Աստուծոյ եւ մարդկութեան միջեւ, Հրեայ ժողովուրդը ներկայացուցչական հանգամանք մը ունէր այնտեղ, քանի որ նման ուխտի մը անհրաժեշտ կարիքը ունէր նաեւ ամբողջ մարդկութիւնը:

Այս դաշինքի կնքումին մէջ նախաձեռնողը եւ պայմանները առաջարկողը բնականօրէն Աստուած էր: Մարդուն կը մնար համակերպիլ եւ ընդունիլ զայն, քանի որ այդ կ'ըլլար ի սէր եւ յօգուտ մարդկութեան: Այսուհանդերձ Աստուած չուզեց միակողմանի կերպով պարտադրել մարդուն իր առաջարկները, այլ կամեցաւ, որ մարդն ալ իր ազատ կամքովը համաձայնութիւն յայտնէ այս տնօրէնութեան:

Ուխտի այս առաջարկը նախ կը հիմնուի կատարուած իրողութեանց եւ պատմական տուեալներու վրայ, որոնց մէջէն անցած էր Իսրայէլի ժողովուրդը եւ ականատես վկան եղած էր Աստուծոյ հզօր

գործերուն եւ իրեն հանդէպ ցոյց տուած յատուկ հոգածութեան: Ուխտի ՈՒՆՏԻՆ նախաբանը կը դրուի այսպէս Աստուծոյ կողմէ. «Դուք անձամբ ՏԵՍԱՔ այն բոլորը, զոր կատարեցի Եգիպտոսի մէջ: Առի՞ ձեզ արծիւի թեւերուն վրայ եւ բերի ձեզ այստեղ իմ մօտս:

«Եթէ լսէք ինծի եւ պահէք իմ ուխտս, այն ատեն դուք բոլոր ազգերու մէջէն իմ սեպհական ժողովուրդս պիտի ըլլաք, որովհետեւ իմս է ամբողջ երկիրը. դուք պիտի ըլլաք ինծի քահանաներու թագաւորութիւն մը, ՍՈՒՐԲ ԱԶԳ մը» (Ել. ԺԹ 4-6): Ու Աստուած աւելցուց. «Ըսէ այս խօսքերը Իսրայէլի որդիներուն»:

Մովսէս այս առաջարկը ներկայացուց ժողովուրդի «ծերերուն», այսինքն՝ գլխաւորներուն, ու ասոնք «միահամուռ ըսին՝ Աստուած ինչ որ ըսէ՝ պիտի կատարենք»: Այս պատասխանը Աստուծոյ բերաւ Մովսէս: Ըսաւ Տէրը. «Ահաւասիկ ես քեզի պիտի գամ թանձր ամպի մը մէջ, որպէսզի ժողովուրդը ԼՍԷ, մինչ ես կը խօսիմ քեզի հետ, եւ հաւատայ քեզի միանգամ ընդմիշտ»: Ու կը հրահանգէ Աստուած Մովսէսին. «Սրբէ ժողովուրդը այսօր եւ վաղը, թող լուան իրենց հագուստները եւ պատրաստ ըլլան երրորդ օրը, որովհետեւ ես Սինա լեռան վրայ պիտի իջնեմ երրորդ օրը՝ ի տես ժողովուրդին»:

Ու արդարեւ «երրորդ օրը առաւօտուն որոտումներ եւ փայլատակումներ եղան. թանձր ամպ մը իջաւ Սինա լեռան վրայ ու բարձրաձայն փող մը հնչեցեց. զարհուրեցաւ ամբողջ ժողովուրդը: Ու Մովսէս Աստուծոյ առջեւ հանեց ժողովուրդը եւ կայնեցուց լեռան ստորոտը: Ու Սինա լեռը կը ծխար շարունակ, որովհետեւ Աստուած իջած էր անոր վրայ կրակով, ու ծուխը կը բարձրանար հնոցի ծուխին պէս: Կը սարսէր ամբողջ լեռը, եւ փողին ձայնը հետզհետէ կը մօտենար եւ կը սաստկանար: Մովսէս կը խօսէր ու Աստուած պատասխան կուտար անոր: Ու Տէրը Սինա լեռան գագաթը իջաւ ու կանչեց Մովսէսը լեռան գլուխը: Ու Մովսէս վեր ելաւ...»: Ու այնտեղ Աստուած Մովսէսին տուաւ այս ուխտի պայմանները սկսելով Տասնաբանեայ պատուիրաններով (Ել. Ի Գլուխ): Մովսէսի գերագոյն փառքը եւ իրագործումը եղաւ միջնորդը հանդիսանալ այս ՈՒՆՏԻՆ, որ կեդրոնական տեղը կը գրաւէ ամբողջ Հին Կտակարանի մէջ, ուր կը ներկայացուին այս ՈՒՆՏԻՆ հաւատարմութեան եւ անհաւատարմութեան վերիվայրումները:

Ասկէ յետոյ Մովսէս հովուեց ու դաստիարակեց իր ժողովուրդը քառասուն տարիներ անապատի խստութեանց մէջ, մինչև երբաւ զառնեք Աւետեաց երկրի դռները, Յորդանանի արեւելեան ափը, ուր կատարելէ յետոյ անհրաժեշտ յիշեցումները եւ տալէ յետոյ իր վերջին պատգամները, ելաւ Նարաւ լեռը եւ այնտեղ մեռաւ մենութեան մէջ 120 տարեկանին: Ոչ ոք զիտցաւ անոր գերեզմանը: Ու իր կեանքը եզրակացութեան կը բերուի Աստուածաշնչական սա հաստատումներով: Հակառակ հարիւրքսանամեայ տարիքին «իր աչքերը չվատացան, ոչ ալ իր կորովը պակսեցաւ... Իսրայէլի մէջ ոչ մէկ մարգարէ եղաւ նման Մովսէսի, զոր Աստուած ճանչցաւ դէմ յանդիման...»: Մինչև Քրիստոս ոչ ոք եղաւ այնքան մեծ եւ ընտիր անօթը, որուն մէջ լեցուց Աստուած իր կամքը եւ յայտնութիւնները եւ հրամցուց մարդկութեան, որքան Մովսէս Աստուծոյ մշտական ներկայութեան իր բնագոյր եւ այն խոր վստահութիւնը, թէ կը խօսէր եւ կը գործէր յանուն Աստուծոյ, արդարեւ բացառիկ են: Մովսէս դրաւ այն հիմունքը եւ կազմեց այն յատակագիծը, որուն վրայ գործեցին յաջորդող մարգարէները եւ գործիչները: Մովսէսով սկսուած Աստուծայայտնութիւնը իր կատարումը գտաւ Քրիստոսով, որուն հետ արդարեւ շատ սերտ նմանութիւններ ունեցաւ Մովսէս, լինելու աստիճան Անոր լիակատար նախատիպը դրեթէ ամէն մարդի մէջ:

Երկուքն ալ իրենց մանկութեան՝ մահուան դէմ յանդիման գտնուեցան. Յիսուս՝ Բեթղեհէմի մանկանց կոտորածով, Մովսէս՝ գետ նետուելով: Երկուքն ալ իրենց գործունէութեան սկիզբները չարութեան ոյժերուն հետ բախում ունեցան եւ յաղթող Հանդիսացան. Յիսուս՝ փորձութեամբ, Մովսէս՝ Եգիպտացի կախարհներուն դէմ: Երկուքն ալ քառասնորեայ պահեցողութիւն ըրին. Յիսուս՝ փորձութեան լեռան վրայ, Մովսէս՝ Մինայի վրայ: Երկուքն ալ ծովը իրենց հակադրին տակ առին. Յիսուս՝ փոթորիկը հանդարտեցնելով, Մովսէս՝ կարմիր Ծովը ճեղքելով: Երկուքն ալ բազմութիւններ կերակրեցին հրաշալի պարագաներու տակ. Յիսուս՝ հինգ հացով եւ երկու ձուկով, Մովսէս՝ երկնատեղաց լորմարգով եւ մանանայով: Երկուքն ալ երեսները փայլեցան ու պայծառացան գերբնական լոյսով. Յիսուսինը՝ Թափօր լեռան վրայ, Մովսէսինը՝ Մինայէ էջքին: Երկուքն ալ ժողովրդային տրտունջներու նշաւակ եղան ու համբերեցին. Յիսուս՝ երբ

«ես եմ հացն կենաց» ըսաւ եւ այլ առիթներով, երբ քարկոծման վտանգին ալ ենթարկուեցաւ, Մովսէս՝ բազմիցս անապատի մէջ: Երկուքն ալ իրենց տնեցիներու կողմէ քննադատուեցան. Յիսուս՝ իր «եղբայրներէն», Մովսէս՝ իր եղբորմէն եւ քրոջմէն: Երկուքն ալ ընտրեցին 70 օգնականներ. Յիսուս՝ 70 աշակերտներ, Մովսէս՝ 70 ծերեր: Երկուքն ալ աղօթեցին եւ բարեխօսեցին այլոց համար. Յիսուս՝ իր վերջին կտակի աղօթքին մէջ Մովսէս՝ իր ապերախտ ժողովուրդին համար, երբ Աստուած սպառնաց բնաջնջել զանոնք: Երկուքն ալ իրենց անջնջելի գործէն զատ յատուկ տնօրինական մնայուն յիշատակ ձգեցին. Յիսուս՝ Ս. Հաղորդութեան Խորհուրդի հաստատմամբ, Մովսէս՝ Պասեքի տոնական տնօրինութեամբ: Վերջապէս երկուքն ալ յետ մահու վերերեւեցան. Յիսուս՝ իր յարութեամբ, Մովսէս՝ Յիսուսի Պայծառակերպութեան:

Անշուշտ այս բաղդատականը եւ զուգահեռականութիւնը երբեք հաւասարութիւն չեն ենթադրեր: Յիսուս միայն կրցաւ ըսել. «Ո՞վ կրնայ զիս յադիմանել մեղքի համար»: Իսկ Աստուծոյ ծառան՝ Մովսէս, այնքան հրաշքներ տեսնելէ ու կատարելէ յետոյ, պահ մը եկաւ իր կեանքին մէջ, որ երկմտեցաւ, թէ Աստուած կրնա՞ր ժայռէն ջուր բխեցնել (Թիւ Ի 7-13): Երկմտանքի այս մեղքին համար արժանի չդատուեցաւ Աւետեաց երկիրը մտնել, թէեւ զայն տեսաւ իր լայնքին ու երկայնքին այն լեռնէն, ուր մեռաւ: Բաց աստի, ինչպէս Աւետարանը կը հաստատէ, «Օրէնքը Մովսէսի ձեռքով տրուեցաւ, բայց շնորհքը եւ ճշմարտութիւնը Յիսուս Քրիստոսի ձեռքով իրագործուեցաւ» (Յովհ. Ա 17): Մովսէս իր կեանքի վերջաւորութեան մարգարէացաւ ու ըսաւ. «Աստուած ձեր մէջէն ինծի նման մարգարէ մը պիտի յարուցանէ. անոր լսեցէք» (Բ Օր. ԺԸ 15): Ակնարկութիւնը Մեսիային է՝ Քրիստոսին (Գործ. Գ 22):

Մովսէսի մեծութեան, զօրութեան, ինչպէս նաեւ սրբութեան գաղտնիքը իր ՀեՅՈՒԹԵԱՆ մէջ էր. ըսուած է իր մասին. «Մովսէս շատ հեզ մարդ էր՝ աշխարհի բոլոր մարդերուն ամէնէն հեզը» (Թիւ ԺԲ 3): Յաճախ հեզութիւնը եւ տկարութիւնը կը շփոթուին իրարու հետ: Բայց ասոնք խորքին մէջ իրարու հակադիր եզրեր են թէ արդարեւ Մովսէս ոչ միայն ֆիզիքապէս, այլ նաեւ կամքով եւ հոգիով հզոր մարդ էր, այդ բացայայտ է իր գործերէն:

Հեզուսթիւնը խորքին մէջ այն հոգեվիճակն է, ուր մարդ այլեւս չի դառնանար, ոչ ալ ինքզինքը պաշտպանելու փորձեր կ'ընէ, երբ անիրաւ կերպով կը դատապարտուի, որովհետեւ գիտէ, թէ մարդ տկար եւ անկատար է, ըլլայ ինք, ըլլայ զինք դատապարտողը: Ոչ ալ կը մեծամտի կամ արտոժ կը զգայ, երբ կը գովաբանուի, որովհետեւ վստահ կերպով գիտէ, թէ իր առաւելութիւնները կը պարտի Աստուծոյ: Այս կէտին մէջ ալ Մովսէս կը մտնենայ Քրիստոսին, որ ըսաւ ինքն իրեն համար. «Արդեացէք ինձմէ, որ հեզ եմ եւ սրտով խոնարհ, եւ ձեր հոգիներուն խաղաղութիւնը պիտի գտնէք» այս Հեզուսթեան ու խոնարհութեան մէջ (Մատթ. ԺԱ 29): Ու երանի տուաւ Յիսուս «Հեզերուն, որոնք ի վերջոյ պիտի ժառանգեն երկիրը» (Մատթ. Ե 5):

Յոյնք եւ Լատինք կը յիշատակեն Մովսէսը Սեպտ. 4 ին, իսկ մենք՝ նախահարց հետ:

13. ԱՀԱՐՈՆ

Երէց եղբայրը Մովսէսի եւ առաջին քահանայպետը Հին Կտակարանի: Աջակիցը եւ խօսնակը եղաւ Մովսէսին մինչեւ իր մահը: Այս աջակցութիւնը խորհրդանշական ձեւի տակ ի յայտ կուգայ, երբ Մովսէս լերան վրայ կ'աղօթէ բազկատարած վարը պատերազմող բանակի յաղողութեան համար: Ահարոն անոր յոգնող ձեռքերը վեր բռնողներէն մէկն է (Ել. Ժ 10-12): Ինք եւ իր զաւակները ժառանգականորէն ստացան քահանայութիւնը Աստուծմէ, Մովսէսի կողմէ յատուկ օրհնութեամբ, օծումով եւ քահանայական զգեստաւորմամբ:

Կրաւորական է Ահարոնի նկարագիրը: Որքան գործակից է լաւ եւ վեհ նպատակներու, նոյնքան հակամէտ է գործիք դառնալու չար ոյժերու ձեռքը, գրեթէ բոլոր քահանաներու պէս: Իր մասին չորս գլխաւոր միջադէպներ պատմուած են Ս. Գրքի մէջ երկուքը՝ դրական եւ երկուքը՝ ժխտական, որոնք զիրար կը հերքեն եւ մէջտեղ կը մնայ չէզոք Ահարոնը, որ կը սրբանայ ոչ այնքան իր անձնական գործերով, որքան ծիսական սրբագործութեամբ:

Դրական դրուագներէն առաջինը այն է, որ վէճ եղաւ, թէ ինչ ո՞ւր Ահարոն պէտք է լինի քահանայպետ եւ ոչ ուրիշ մը: Աստուծոյ հրամանով Իսրայէլի տասներկու ցեղերէն իւրաքանչիւրին անունով գաւազան մը դրուեցաւ անապատի մէջ կառուցուած վրանէ սրբարանին

մէջ, որ կը կոչուէր «վկայութեան խորան»։ ասոնց մէջ է նաեւ Ահարոնի գաւազանը: Որուն գաւազանը որ ծաղկէր, ան պիտի ըլլար քահանայպետ: Յաջորդ օրը, երբ խորան մտան, տեսան, որ «Ահարոնի գաւազանը դալարած էր, շառաւիղ արձակած, ծաղկած եւ պտուղ տուած էր» (Թիւ. Ժէ 1-8): Երկրորդ՝ ժողովուրդը ապստամբեցաւ Մովսէսի եւ Ահարոնի դէմ: Աստուած զայրացաւ եւ սատակիչ ժանտախտ զրկեց ժողովուրդին մէջ: Մովսէս անմիջապէս հրամայեց Ահարոնին. «Առ բուրվառդ, մէջը կրակ դիր սեղանէն, վրան խուկ լեցուր եւ շուտով մտիւր ժողովուրդին մէջ, քաւելու համար անոնց մեղքը»: Եւ արդարեւ, Ահարոն «եկաւ ու կեցաւ ողջերուն եւ մեռելներուն միջեւ եւ կանգ առաւ սատակումը» (Թիւ. ԺԶ 43-48):

Իսկ ժխտականներէն՝ Հանրածանօթ է իր տկարութիւնը, որ չդիմանալով ժողովուրդի ճնշումին՝ տեղի տուաւ եւ անոնց համար Ոսկէ Հորթը շինեց եւ երկրպագութիւն ըրին անոր, այսպէս կամակատար գործիք դառնալով Աստուածաշունչի մէջ ներկայացուած մեծագոյն մեղքերէն մէկին: Երկրորդ՝ միացաւ իր քրոջ՝ Մարիամին, որ կը նախանձէր Մովսէսի, անոր ժողովրդականութեանը եւ բարձր դիրքին համար, ու բամբասեցին Մովսէսը եւ ուզեցին կոտորել անոր վարկը ժողովուրդի աչքին: Երկու պարագային ալ թիթեւ պատիժներով ազատեցաւ Ահարոն, պարզապէս չարութեանց նախաձեռնողը ինք եղած չըլլալուն, եւ գրեթէ յակամայս համակերպած լինելուն համար: Արժանի չեղաւ Աւետեաց երկիր մտնելու: Մեռաւ 130 տարեկանին: Լատինք Յուլիս 1ին կը յիշատակեն զայն:

14. ԵՂԻԱՉԱՐ

Որդի եւ յաջորդը Ահարոնին իբրեւ երկրորդ քահանայպետը: Իր մասին ակնբախ դրուագներ չկան Ս. Գրքին մէջ հասարակ քահանայպետն է ան՝ իր ընթացիկ գործերով զբաղուած: Սովորական պարտաճանաչ քահանան է, որ կը քալէ իրեն համար սահմանուած ճամբայէն առանց աջ կամ ձախ շեղելու: Գործակցեցաւ Յեսուին, որուն հետ միասին մտաւ Աւետեաց Երկիրը, զոր բաժնեցին Իսրայէլի տասներկու ցեղերուն մէջ: Յոյներ կը յիշատակեն զայն իր որդիին եւ յաջորդին՝ Փենէէս քահանայպետին հետ Սեպտ. 2ին: Լատինք՝ չունին: Մենք՝ նախահարց հետ:

Գործակիցը եւ յաջորդը Մովսէսին, իբրեւ առաջնորդը Իսրայէլի: Իր մասին ըստած է. «Մարդ մը՝ որուն մէջ (Աստուծոյ) Հոգին կայ»: Մովսէս «իր ձեռքը անոր վրայ դրաւ» ու իր յաջորդը կարգեց զայն՝ տալով «իր փառքէն» մաս մը անոր: Յետու Մովսէսի զօրապետն էր անապատներու պատերազմներու ընթացքին: Ինքն է, որ առաջնորդեց Իսրայէլը խոստացեալ երկիրը, գրաւեց զայն, բաժնեց երկիրը Իսրայէլի տասներկու ցեղերու մէջ եւ տեղաւորեց զանոնք իրենց հողերուն վրայ:

Յիսուսին նմանակն էր թէ՛ անունով եւ թէ՛ գործով: Յիսուս անունը յունական ձեւն է եբրայական ՅԵՍՈՒ կամ ԵՇՈՒ անունին: Ամբողջ գիրք մը յատկացուած է Յեսուի գործունէութեան եւ յաղթանակներուն Աստուածաշունչին մէջ, եւ կը կրէ իր անունը:

Աստուածաշունչի ամէնէն առաքինի եւ կորովի դէմքերէն մէկն է Յեսու: Նման Յովսէփին իր կատարելութեամբ եւ Աստուծոյ հանդէպ ցոյց տուած անայլայլ հաւատարմութեամբ: Երբ վերջին պատուէրները կուտայ իր ժողովուրդին եւ կը յորդորէ զանոնք մշտապէս հաւատարիմ մնալ Աստուծոյ, կ'եզրակացնէ. «Ես եւ իմ տունս Տէրը պիտի պաշտենք», դուք ինչ ալ ընէք:

Ապրեցաւ 110 տարի: Յոյնք եւ Լատինք կը յիշատակեն զայն Սեպտ. 1ին: Մենք՝ նախահարց հետ:

ԴԱՏԱԻՈՐՆԵՐ

Յեսուի յաջորդները, որոնք կանչուեցան կառավարելու Իսրայէլի ժողովուրդը, կոչուեցան ԴԱՏԱԻՈՐՆԵՐ, որովհետեւ իրենց գլխաւոր պաշտօնը այդ իսկ էր՝ լսել եւ կարգադրել իրենց ժողովուրդի դատերը եւ ամէն տեսակ խնդիրները: Ասոնց պատմութեան եւ գործունէութեան յատկացուած է Աստուածաշունչի եօթներորդ գիրքը, որ կը կրէ անոնց անունը՝ ԳԻՐՔ ԴԱՏԱԻՈՐԱՅ: Ասոնցմէ յիշուած են 15 անուններ, որոնք դատեցին եւ կառավարեցին Իսրայէլը 1400-1100 թուականներուն, նախ քան Քրիստոս:

Երբ Իսրայէլացիք տեղաւորուեցան Քանանու երկրին մէջ, բնականորէն սկսան յարաբերութիւններ մշակել բնիկներու հետ: «Անոնց աղջիկները իրենց կնութեան առին, եւ իրենց աղջիկները անոնց տղաքներուն տուին. եւ գործեցին Ա. Գրական չափանիշներով ծանրագոյն մեղքը. «Պաշտեցին անոնց աստուածները» (Դատ. Գ 6): Այս յիմարութիւնը ըրին Իսրայէլացիներ. որովհետեւ Հեթանոսական կրօնքները աւելի դիւրին կիրարկելի էին, բարոյական բարձր պահանջներ չունէին, ընդհակառակը, իրենց անբարոյ սովորութիւններով աւելի կը խօսէին մարդկային մարմնական բնազդներուն եւ կենդանական բնութեան:

Այս շեղումներով Իսրայէլացիք բնականաբար բեկանած կ'ըլլային պայմանները այն ՈՒՆԻՏԻՆ, զոր կնքած էին իրենց Աստուծոյն հետ: Ու այս իսկ պատճառով Աստուծոյ բարկութիւնը կը բորբոքէր անոնց այս անհաւատարմութեան վրայ եւ կը դադրէր անոնց «Տէր» ըլլալէ: Ու առանց Աստուծոյ Տիրութեան այս ժողովուրդը դիւրին որս կ'ըլլար դրացի վայրագ ցեղերուն, որոնք համեմատաբար աւելի զօրաւոր էին իրենցմէ, եւ որոնցմէ ոմանք ունէին մինչեւ իսկ «երկաթէ կառքեր», որոնք կը համապատասխանէին այսօրուան «թանք»երուն:

Աստուծմէ Հեռանալէ յետոյ, երբ թշնամիին ձեռքը կ'իյնային եւ կը կեղեքուէին, այն ատեն իրենց միտքը կուգար իրենց հօր Աստուծօր. «կ'աղաղակէին» Անոր, ու Աստուած «փրկիչ» մը կը

Հանէր իրենց մէջէն, որուն վրայ «Աստուծոյ Հոգին կը խաղար», գլուխը կ'անցնէր իր ժողովուրդին, եւ պատերազմով կ'ազատագրէր իր երկիրը օտար ոտնձգութիւններէն, երկիրը որոշ ատեն մը խաղաղութիւն կը վայէր, ու այս ազատարարը «Կը դատէր Իսրայէլը» մինչեւ իր մահը: Այս ազատարարներն են «դատաւոր» կոչուածները: Ու ԴԱՏԱԻՈՐԱՅ ԳԻՐՔը իր մէջ կը բովանդակէ այս բարոյական մակընթացութիւններու եւ տեղատուութիւններու պատմութիւնը:

Դատաւորներէն չորսը միայն անցած են տօնացոյցի, որոնք արդարեւ կը կազմեն նշանաւորագոյնները գրքին մէջ յիշուած 15 անուններուն: Այդ չորսը յիշուած են նաեւ Եբրայեցոց Թուրթի ԺԱ գլուխին մէջ թուուած հաւատքի նշանաւոր հերոսներուն մէջ: Մենք առաջ պիտի բերենք զանոնք ոչ թէ տօնացոյցի, այլ Դատաւորաց Գրքի մէջ յիշուած կարգով:

16. ԲԱՐԱԿ

Իրականին մէջ դատաւոր մը չէ Բարակ, այլ՝ զօրավարը օրուան դատաւորին, որ ԿԻՆ մըն է ԴԵԲՈՎՐԱ անունով: «Նա կը դատէր Իսրայէլը այն ժամանակ... եւ Իսրայէլի որդիները անոր կ'երթային դատաստանի համար» (Դատ. Դ 4-5): Այս կինը, իբրեւ «մարգարէտ» եւ իբրեւ խորապէս հայրենասէր ու կրօնասէր անձնաւորութիւն մը, ամէն իրաւունք ունէր տօնացոյցի անցնելու, բայց չէ անցած, հաւանաբար այն պարզ պատճառով, որ ցարդ յիշուածները եւ ասկէ յետոյ յիշուելիքները համախմբուած են «ՆԱԽԱՀԱՅՐԵՐ» մակդիրին տակ, որոնց մաս չէր կրնար կազմել ինք բնականաբար, ու եկեղեցին մեզի անծանօթ պատճառներով մոռցած է «ՆԱԽԱՄԱՅՐԵՐ» անուան ներքեւ յիշատակութիւն մըն ալ տնօրինել իր տօնացոյցին մէջ:

Բարակը գործի գլուխ կանչողը, ներշնչողը եւ առաջնորդողը Դեբովրան է, ու Բարակի պատասխանին մէջ է իր տկարութիւնը եւ կախումը այս կնոջմէ. «Եթէ ինձի հետ պատերազմի գաս, կուգամ, այլապէս՝ չեմ գար»: Դեբովրա համաձայնեցաւ ընկերանալ Բարակին: «Բայց գիտցած եղիր, որ կնոջ ձեռքով» պիտի կնքուի պատերազմի ճակատագիրը, ըսաւ անոր: Արդարեւ այդպէս ալ եղաւ: Երբ Բարակ Թափօր լեռնէն յանկարծ ինկաւ իր տասը հազար զօրքով Թշնամիին վրայ, որ ունէր «ի՞նչ հարիւր երկաթեղէն կառքեր», Աստուած «զար-

հուրեցուց» Թշնամին, որուն զօրավարը՝ Սիսարա, կառքէն իջաւ եւ սկսաւ փախչիլ հետիոտն եւ ապաստանեցաւ վրանին ներքեւ Յայէլ անուն կնոջ մը, որ զինք սպաննեց վրանի ցիցով...: Դեբովրա, որ զուրկ չէր նաեւ բանաստեղծական շնորհէ, յօրինեց Հոյակապ երգ մը, ուր պատկերալից կերպով կը ներկայացուի ազատագրական այս պայքարը (Դատ. Ե գլուխ):

Բարակին գլխաւոր առաքինութիւնը կը կայանայ ընդառաջելուն մէջ Տիրոջ Հոգիով լեցուած կնոջ մը ձայնին, որուն մէջ կրցաւ լսել Աստուծոյ եւ իր ժողովուրդին ձայնը, եւ ի սպաս դնել յետոյ իր մարտական կարողութիւնը իր ժողովուրդի ազատագրման եւ Աստուծոյ փառքին, անշուք քաշուեցաւ հրապարակէն իր անհատական կեանքը շարունակելու համար իբրեւ սովորական մահկանացու:

17. ԳԵԴԵՈՆ

Տիրական դէմքն է Դատաւորաց շրջանին: Իրեն ընծայուած են երեք գլուխներ՝ Զ, Է, Ը, Դատաւորաց Գրքին:

Այս անգամ Իսրայէլ ինկած է տիրակալութեան ներքեւ Մադիամացի կոչուած վաչկատուն ժողովուրդի մը, որ մարտի պէս կ'ուռէ ու կ'աւերէ երկիրը: Աստուծոյ հրեշտակը, երբ կ'երեւի Գեդէոնին, անոր յանձնելու համար ազատագրական սուրբ գործը, ան զբաղած է իր արտին մէջ ցորեն ձեծելով, որպէսզի նախ քան Մադիամացոց գալը, գոնէ քչիկ մը ուտելիք ապահոված ըլլայ իր ընտանիքին: Հրեշտակը կ'ողջունէ զայն. «Տէր ընդ քեզ, հզօր զօրութեամբ» բանաձեւով: Գեդէոնին պատասխանը դառն է եւ իրապաշտ.

— Եթէ Տէրը մեզի հետ եղած ըլլար, ուրկէ՞ պիտի գային այս չարիքները մեր գլխուն:

— Գնա քու այդ զօրութեամբը եւ փրկէ Իսրայէլացիները Մադիամացիներէն. ես եմ, որ կը ղրկեմ քեզ, կը հաստատէ հրեշտակը:

— Խնդրեմ, Տէ՛ր, ես ինչպէ՞ս կրնամ փրկել Իսրայէլը, երբ իմ գերդաստանս տկարագոյնն է Մանասէի ցեղին մէջ, ու ես՝ կրտսերագոյնը ընտանիքիս:

- Ես քեզի Հետ պիտի ըլլամ, եւ դուն Մաղիամացիները պիտի գարնես մէկ մարդու պէս, պատասխանեց խօսակիցը:

- Եթէ իրապէս շնորհ գտայ քու առջեւդ, պիտի խնդրեմ, որ նշան մը տաս ինձի, թէ արդարեւ Տիրոջ կողմէ ղրկուած ես: Խնդրեմ սպասէ այստեղ, մինչեւ երթամ եւ իմ ընծաս բերեմ քեզի, ըսաւ Գեղէնը:

- Կը սպասեմ քեզի,- ըսաւ Հրեշտակը:

Երբ Գեղէնը վերադարձաւ միսի եւ բազարը Հացի իր նուէրներով, Հրեշտակը ըսաւ:

Դիր այդ բերածդ սա քարին վրայ. - ու ձեռքի գաւազանով դպաւ ընծային, որ կրակ առաւ ու այրեցաւ: Այդ կը նշանակէր, որ Աստուած ընդունած էր Գեղէնի նուէրը, ու Հրեշտակը աներեւութացաւ:

Գեղէն տեղւոյն վրայ Աստուծոյ սեղան շինեց ու զայն կոչեց «Տիրոջ խաղաղութիւնը», որովհետեւ իր ժամանակին այն գաղափարը կը տիրէր, որ եթէ մէկը գերբնական էակ մը տեսած ըլլար, անպատճառ պիտի մեռնէր. ինք տեսած էր ու չէր մեռած:

Իր փրկարար գործունէութիւնը սկսաւ Գեղէնն նոյն գիշերն իսկ: Բանդեց իր քաղաքի Բահաղի սեղանը: Յաջորդ օրը, երբ Հակըցուեցաւ, որ Գեղէնն էր այդ գործին հեղինակը, քաղաքի բնակիչները Հորմէն պահանջեցին Գեղէնը՝ մեռցնելու համար: Հայրը խորագէտ դարձուածքով մը պաշտպանեց իր տղան.

- Ձեզի՞ մնացած է Բահաղին պաշտպանութիւնը, եթէ Բահաղ իրապէս աստուած է, ու եթէ մէկը կործանած է իր բազինը, թող ինք առնէ իր վրէժը, թող ինք մեռցնէ իր սեղանին կործանիչը:

Մարդիկը Համոզուեցան:

«Աստուծոյ Հոգին զօրացուց Գեղէնը»: Հնչեցուց ապստամբութեան փողը, կոչ ուղղեց իր ժողովուրդին, որ հայրենիքի ազատագրութեան համար կռուիլ ուղղուեն իր շուրջը հաւաքուին: Երեսներկու Հազար Հոգի Համախմբուեցան իր մօտ:

- Ասոնք շատ են,- ըսաւ Տէրը,- յետոյ պիտի պարծենաք, որ ձեր ուժով յաղթանակը տարիք: Ըսէ Հաւաքուած բազմութեան, ով որ իր

սրտին մէջ՝ վախ ու մտքին մէջ Հոգ ունի, թող Հեռանայ: Քսաներկու Հազար Հոգի մեկնեցան:

- Մնացած տասը Հազարն ալ շատ է,- ըսաւ Տէրը,- ջուր խմելու տար ասոնք, ով որ գետին պառկելով կը խմէ ջուրը, տունը դրկէ զանոնք, անզոյժ եւ անշրջահայեաց մարդիկ են ասոնք: Իսկ ասոնք, որ ափով կը խմեն ջուրը, քովդ պահէ զանոնք. արթուն մարդիկ են: Այս զտումէն յետոյ մնացին 300 Հոգի միայն: Գեղէնն այս գունդով, գիշեր ատեն, ռազմական խորագիտութեամբ սարսափ եւ շփոթ ձգեց թշնամի բանակին մէջ, որոնք սկսան զիրար կոտորել եւ ի վերջոյ խուճապահար փախան: Գործին մնացեալ մասը լրացուցին իր միւս ցեղակիցները, թշնամիի փախուստի ճամբուն վրայ:

Գեղէնի մէջ ալ տիրող ոգին Համեստութիւնն եւ խոնարհութիւնն էր, որ երեւեցաւ նախ իր կոչումի ընթացքին, երբ խոստովանեցաւ, որ ինք յարմարագոյն անձը չէր ազատագրական նոր շարժումին գլուխը անցնելու: Երկրորդ՝ Եփրեմի ցեղին Հետ ունեցած խնդրոյ մը առթիւ, երբ այս վերջինները իր դէմ գայրացած էին, որ զիրենք չէր կանչած պատերազմի սկիզբը: Գեղէնն չուզեց չափուիլ խնդրայարոյց այս մարդոց Հետ, այլ լուռութեան մատնեց զանոնք իր ըրածը ստորագնահատելով եւ անոնցինը բարձրացնելով:

- Իմ ըրածս ոչինչ է ձեր սխրագործութեանց բաղդատմամբ, դուք էք, որ սպաննեցիք Մաղիամի իշխանները, որոնք արդարեւ իրենց փախուստի ընթացքին Եփրեմի սահմաններէն ուզած էին խոյս տալ, բայց բռնուած եւ սպաննուած էին:

Սակայն իր խոնարհութեան եւ Աստուծոյ Հանդէպ ունեցած մեծ վստահութեան լաւագոյն փաստը երրորդ պարագայի մը մէջ երեւան կուգայ: Այս փառաւոր յաղթանակէն յետոյ իսրայէլացիներ ի նշան երախտագիտութեան՝ պատգամաւորութիւն մը ղրկեցին Գեղէնին եւ ըսին.

- Իշխէ մեր վրայ դուն եւ քու սերունդդ յորդուց որդի:

- Ո՛չ ես կ'իշխեմ ձեր վրայ եւ ոչ ալ՝ որդիներս պիտի իշխեն, այլ Տէ՛րը Պի՛Տի ԻՇԽէ՛ ձեր վրայ, - ըսաւ Գեղէնն (Դատ. Ը 23): Յոյնք՝ Սեպտ. 26ին, Լատինք՝ Սեպտ. 1ին: Մենք՝ նախահարց Հետ:

18. ՅԵՓԹԱՅԻ

Իր օրով խորայնլացիներ ինկած են լուծին տակ ամմոնացի կոչուած ժողովուրդին, որոնք նախաբնիկներն էին ներկայ Ամման քաղաքին: Անոնց լուծէն ազատագրելու գործին հրաւիրուեցաւ Յեփթայէ, զոր Աստուածաշունչը կը ներկայացնէ իբրեւ «Այր հզօր զօրութեամբ, եւ նա որդի կնոջ պոռնկի» (Դատ. ԺԱ 1), այսինքն՝ թէ եւ ուժեղ ու զմիկ մըն էր, բայց միաժամանակ ապօրէն ծնունդ ունեցած էր, որուն մէջ բնականաբար ինք ունէ յանցանք չունէր: Այս պատճառով Յեփթայէի խորթ եղբայրները վտարած էին զայն տունէն եւ զրկած հօրեանական ժառանգութենէ, եւ ոչ ոք պաշտպան կանգնած էր իրեն հանդէպ գործուած այս անիրաւութեան դէմ: Յեփթայէ լեռ ելած եւ անիշխանական մը դարձած էր, որուն շուրջ կը հաւաքէին ամէն տեսակ մարդեր, որոնցմէ գունդ մը կազմելով՝ դարձած էր նշանաւոր ասպատակ եւ քաջ կռուող:

Իսրայէլացիներ, երբ նեղ դրութեան մատուցեցան, եւ զօրապետի մը պահանջը զգացին թշնամիին դէմ մարտնչելու համար, իրենց միտքը եկաւ Յեփթայէ, որուն մարդ զրկեցին ըսելու.

– Եկուր եւ մեզի զօրավար եղիր պատերազմելու համար Ամմոնացիներու դէմ:

Յեփթայէ պատասխանեց.

– Դուք չէի՞ք զիս արհամարհողները եւ հօրս տունէն վտարողները: Հիմա, որ նեղութեան մատուցած էք, ինծի՞ կը դիմէք:

– Այո՛, ճիշդ այդ պատճառով քեզ եկանք արդէն, նեղութեան մէջ ենք, եկուր մեզի հետ եւ պատերազմէ Ամմոնացիներու դէմ եւ իշխող եղիր մեր վրայ: Ըսել ուզեցին. «մենք քու ծագումդ մոռցած ենք եւ կը գնահատենք ուղիղ կարողութիւններդ, դուն ալ մոռցիր մեր երբեմնի անտարբերութիւնը քեզի պաշտպան կանգնելու եւ լսէ ժողովուրդիդ ձայնը եւ մեզի հետ եկուր»: Յեփթայէ ըսաւ.

– Եթէ Աստուած մատնէ Ամմոնացիները իմ ձեռքս, պիտի ընդունի՞ք զիս իբրեւ ձեր իշխանը:

Մարդիկ երդումով խոստացան ընդունիլ:

Յեփթայէ անցաւ բանակին գլուխը, բայց իբրեւ կռիւններու մէջ եփած մարդ եւ լաւ վարչագէտ, նախ փորձեց խնդիրը հարթել առանց պատերազմի: Պատգամաւորութիւն զրկեց ամմոնացիներուն եւ զանոնք հաշտութեան եւ համերաշխութեան հրաւիրեց: Ամմոնացիք մերժեցին: Այն ատեն Յեփթայէ այս իմաստով արտայայտուեցաւ.

– Արիւն ձեր ի գլուխ ձեր. մենք մեզի վնաս հասցուցած չունինք, բայց դուք մեզի դէմ չարիք գործեցիք եւ ձեր նպատակն է շարունակել զայն. թող Աստուած ըլլայ մեր դատաւորը:

«Եւ Աստուծոյ Հոգին Յեփթայէի վրայ եկաւ» ու ամբողջ ոյժով ինկաւ Ամմոնացիներու վրայ, «մեծամեծ հարուածներ տուաւ անոնց» ու հայածեց իր երկրին սահմաններէն:

Սակայն այնպէս կ'երեւի, թէ որքան փորձ էր Յեփթայէ կռիւններու մէջ, նոյնքան անփորձ էր կրօնքի մէջ, բայց անկեղծ՝ Աստուծոյ հանդէպ:

Պատերազմէն առաջ, Աստուծոյ մեծագոյն շնորհ մը ըրած ըլլալու միտքով, Յեփթայէ ուխտած էր, որ եթէ պատերազմէն յաղթական վերադառնայ, Աստուծոյ պիտի զոհէր իր տունէն առաջին անգամ իր դէմ ելնողը: Որքան ալ անխոհեմ թուի նման ուխտ մը, միւս կողմէն սակայն կը յայտնաբերէ Յեփթայէի այն համոզումը, թէ յաղթութիւններ Աստուծոյ պարգեւներն են, ու ինք պատրաստ է ընելու գերագոյն զոհողութիւնը այդ շնորհին արժանանալու համար: Պատերազմէն վերադարձին, իր չար բախտէն, անոր դէմ առաջին անգամ ելնողը եղաւ իր մէկ հատիկ դուստրը, որ պարսխումբի մը գլուխ անցած՝ երզով ու թմբուկով իր հայրը դիմաւորելու կ'ելլէր: Աստուածաշունչի ամէնէն սրտածմլիկ տրամներէն մէկն է սա, որ իր արժանի եղբրականութեամբ եւ ժուժկալութեամբ ներկայացուած է, եւ զոր դժուար է կարդալ առանց մարդկային խոր յուզումի:

Յեփթայէ հարկադրուեցաւ յարգել իր խոստումը, զոհեց իր դուստրը, ու այդ կերպով որքան ալ եղբրաբախտ հայր մը եղաւ, սակայն միւս կողմէն հաստատեց ի վճռականութիւնը եւ հաւատարմութիւնը կատարելու գերագոյն զոհողութիւնը իր Աստուծոյն համար:

Միւս եկեղեցիները չեն յիշատակեր:

19. ՍԱՄՍՈՆ

Առասպելական հերոսը, որ անհավասար պայքար մղեց ԱՌԱՆ-
ՁԻՆՆ, եւ տարիներով իր ժողովուրդի նոր մէկ թշնամիին դէմ:

«Իսրայէլացիներ կրկին մեղանչեցին Աստուծոյ առջեւ, եւ Տէրը
մատնեց զանոնք փղշտացիներուն ձեռքը»: Այս նախաբանով կը սկսի
Սամսոնի վէպը, որ կարճ պատմութեան գրականութեան մէջ
գլուխ - գործոց մըն է իր պարզութեամբ, իրապաշտութեամբ եւ գրաւ-
չութեամբ: Աստուածաշունչին մէջ արդարեւ կան մեզի ծանօթ գրա-
կան գրեթէ բոլոր սեռերէն բազմաթիւ էջեր, որոնք իրաւամբ անմրցե-
լի կը մնան համամարդկային գրականութեան իրենց համապատաս-
խան սեռերուն մէջ, ըլլան անոնք բանաստեղծութիւն, իմաստասիրու-
թիւն, բայց մանաւանդ պատմողական գրականութիւն: Մենք այս
մարդին մէջ արգարութիւն պիտի չկարենանք ընել Սամսոնի վէպին,
որ կը գրաւէ Դատաւորաց Գրքի ԺԳ-ԺԵ գլուխները, քանի որ հարկա-
դրուած ենք տալ անոր մասին այնտեղ պատմուածներուն լոկ
կմախքը:

Աստուածային խոստումի զաւակ է Սամսոն, եւ մօրը որովայնէն
կ'ընծայուի Աստուծոյ: Երբ ծնաւ եւ սկսաւ աճիլ, «Աստուծոյ հոգին
ալ սկսաւ շրջիլ անոր հետ»:

Իր սխրագործութիւնները սկսան, երբ սիրահարեցաւ փղշտացի
աղջկան մը: Ծնողքը բնականաբար համամիտ չեղան այս ամուս-
նութեան, որովհետեւ «չէին գիտեր, թէ Տիրոջմէն էր ասիկա, որպէս-
զի հատուցում պահանջէ փղշտացիներէն» (Դատ. ԺԴ 4): Իրերը ինք-
նաբերաբար այնպէս բերին, որ վրիպի այս ամուսնութիւնը եւ առիթ
տրուի Սամսոնի բազմաթիւ փղշտացիներ սպաննելու եւ կրակի տալու
անոնց հունձքերը: Արդէն Սամսոն ինք չէ, որ կը ծրագրէ իր սխրա-
գործութիւնները, այլ դէպքերը այնպէս կը բերեն, որ ինք հարկին
տակ գտնուի փղշտացիներ փճացնելու: Օրինակ, երբ փղշտացիք
փորձեցին ձեռքակալիլ զինք, իշու ծնօտով մը աւելի քան հազար մարդ
սպաննեց: Նման պարագաներուն Ա. Գիրքը կը կրկնէ. «Եւ յաջողեցաւ
ի վերայ նորա Հոգի Տեսուն». այդ Հոգիէն զօրութիւն առած կը
գործէր իր նախճիրները:

Ի վերջոյ ինկաւ Դալիլա կոչուած կնոջ մը ծուղակին մէջ, որ իրմէ
կորցեց իր գերբնական ոյժին գաղտնիքը: Սամսոն, չգիմանալով անոր
թախանձանքներուն, որոնցմով «յոգնեցուց զինքը մինչեւ ցմահ, ըսաւ
ամէն բան. «Աձեռի չէ դպած իմ գլուխս, որովհետեւ ես Աստուծոյ
նուիրեալ մըն եմ իմ մօրս որովայնէն»: Ու երբ քնացած պահուն
կտրուեցան իր մազերը, «սկսաւ թօշնիլ Սամսոն եւ մեկնեցաւ անկէ իր
զօրութիւնը»: Երբ արթնցաւ, զգաց, որ «Տէրը հեռացեր էր իրմէ»:
Սամսոն, Աւետարանի բացատրութեամբ, իր «սրբութիւնը շունչերուն
տուած էր, եւ իր մարգարիտները խոզերուն առջեւ նետած էր»:
Փղշտացիները ձեռքակալեցին զայն, աչքերը փորեցին եւ բանտ
նետեցին, ուր ցորեն կ'աղար:

Բանտի մէջ «մազերը սկսան վերստին բուսնիլ»: Ու երբ փղշտա-
ցիներ զինք թատրոն բերած էին իրմով զուարճանալու համար, կու-
րացած Սամսոն ըսաւ պատանիին, որ իր ձեռքէն բռնած էր. «Մօտե-
ցուր զիս շէնքի գլխաւոր սիւներուն»: Եւ ապա «Աղաղակեց Աստու-
ծոյ եւ ըսաւ, Յիշէ զիս, Տէ՛ր, եւ զօրացուր զիս վերջին անգամ ըլլա-
լով»: Ու իր վերստացած ուժով խախտեց սիւները, եւ փուլ եկաւ
չէնքը: «Իր մահով շատ աւելի մարդ մեռցուց Սամսոն, քան իր
կենդանութեան»:

Արդարեւ հակասութեանց մարդը եղաւ Սամսոն, ծնաւ իբրեւ
«Ուխտաւոր Աստուծոյ», սակայն իր կեանքը անսուրբ շրջանակներու
մէջ անցուց:

Երբ Աստուծոյ հոգին տիրանար անոր, իսկապէս հոգեւոր մարդ
կը դառնար. սակայն միշտ մնաց մարմնի ցանկութիւններու ներքեւ:

Գերմարդկային ոյժի տէր էր, սակայն չկրցաւ փորձութեանց յաղ-
թահարել:

Ո՛չ մեր արդի չափանիշներով եւ ո՛չ ալ Աւետարանի լոյսին տակ
պիտի դատենք Սամսոնը, այլ՝ ժամանակի չափանիշներով եւ իր
«գոյութեան պատճառով»: Իր ժամանակի աստուածային պատգամ-
ներէն մէկն էր. «Սիրեսցես զբարեկամս քո, եւ ատեսցես զթշնամիս
քո» կամ «Ակն ընդ ական եւ ատամն ընդ ատաման»: Սամսոն իր
կեանքը նուիրած էր այս պատուէրներու գործադրութեան:

Բաց աստի, իր ժամանակին եւ բոլոր ժամանակներուն գերագոյն մեղքն է կուսապաշտութիւնը, որ պէտք է ի թափանցեր գէթ Աստուծոյ ժողովուրդին մէջ, ի գին ամէն զոհողութեանց: Սամսոն «անթշիփառ»ներուն եւ կուսապաշտներուն դէմ կը պայքարէր անխնայ կերպով:

Սամսոնի «գոյուլթան պատճառը» սա եղած էր. «Նա պիտի սկսի փրկել Իսրայէլը փղտացիներու ձեռքէն»: Արդարեւ «ՍԿՍԱԻ» Սամսոն ազատագրական այս սուրբ գործին ու եթէ չկրցաւ աւարտել զայն, գէթ կոտորեց թափը թշնամիին՝ աւելի թափանցելու իր երկրին ու ժողովուրդին մէջ, գէթ պայքարի ու դիմադրութեան ոգին վառ պահեց իր ժողովուրդին մէջ եւ օրինակ հանդիսացաւ Սաւուդին եւ Դաւիթին, որոնք ի վերջոյ յաջողութեամբ պսակեցին իր «սկսած» գործը: Սամսոն ոչ միայն ռահվիրան, այլ նաեւ նահատակը եղաւ ազատագրական այս պայքարին:

Միւս եկեղեցիները չեն յիշատակեր:

20. ԴԱԻԻԹ ԹԱԳԱԻՈՐ

Սամսոնով վերջ կը գտնէ շարքը մարտական դատաւորներու: Ասոնց կը յաջողէ Իսրայէլի թագաւորաց շրջանը: Կրնայինք նոր գլուխ բանալ այստեղ «Թագաւորներ» վերատառութեամբ: Սակայն մեր օրացոյցին անցած էր լոկ մէկ թագաւոր, թէեւ Ս. Գրքին մէջ կային առնուազն երկու-երեք շատ բարեպաշտ թագաւորներ, որոնք կրնային մեր տօնացոյցին ալ անցնիլ, ինչպէս անցած են միւս եկեղեցիներու տօնացոյցին: Օրինակ՝ Եզեկիա բարեպաշտ թագաւորը, որուն մասին Ս. Գիրքը բարձրագոյն գովեստներով կ'արտայայտուի՝ ըսելու աստիճան. «Տիրոջ առջեւ ուղիղ ընթացք ունեցաւ, իր նախնիքին՝ Դաւիթին պէս, եւ անկէ յետոյ իր նմանը չունեցաւ Հրէաստանի թագաւորներուն մէջ, ոչ ալ իրմէ առաջուաններուն մէջ» (Դ Թագ. ԺԸ 3-5): Ուրիշ բարեպաշտ թագաւոր մըն է Յովսիա, որուն մասին եւս միեւնոյն գովեստները կը տրուին:

Նկատի ունենալով, որ Իսրայէլի աւելի քան 40 երկճիւղ թագաւորներէն լոկ Դաւիթ անցած է օրացոյցի, ուստի նախ քան ՄԱՐԳԱՐԷՆԵՐՈՒ յաջորդ խումբին անցնիլը, կ'ուզենք Հին եւ Նոր Իսրայէլի ՆԱԽԱՀԱՅՐԵՐՈՒ յատկացուած այս գլուխը փակել Դաւիթով, որ

յարմարագոյն օղակն է երկու խումբերուն միջեւ, որովհետեւ արդարեւ թէ՛ «նահապետ» մը եւ թէ՛ «մարգարէ» մըն է ան, ինչպէս կը հաստատէ Պետրոս Առաքեալ (Գործ. Բ 29):

Դաւիթ գագաթ մըն է Աստուածաշունչին մէջ եւ գրեթէ ամէնէն բազմաշնորհ անձը Մովսէսի հետ: Վերջինին պէս՝ Հանգամանօրէն տրուած է նաեւ Դաւիթի կեանքը եւ գործը վերոյիշեալ գիրքերուն մէջ, որոնց գրեթէ կէսը յատկացուած է իրեն: Այնպէս որ, մեր ընթացքը պիտի ըլլայ փոքր անօթի մը մէջ համադրել անոր ծով կեանքը:

Դաւիթի կեանքին վարագոյրը կը բացուի իր օծումով իբրեւ թագաւորացու Իսրայէլի. «Եւ Տիրոջ Հոգին խաղաց Դաւիթի վրայ այն օրէն սկսեալ» (Ա Թագ. ԺԶ 13): Այդ պահուն իսկ ան կը ներկայացուի իբրեւ երիտասարդ մը, «որ գիտէ Սաղմոս՝ իմաստուն եւ պատերազմիկ մարդ մը, հանճարեղ եւ ճարտարաբան, պայծառ աչքերով եւ գեղեցիկ տեսքով, եւ Աստուած անոր հետ» (Ա Թագ. ԺԶ 18 Բղգ. ԺԶ 12): Այս քանի մը բառերը մեզի կուտան Դաւիթի Ֆիզիքական, իմացական եւ հոգեկան պատկերը: Այս երեք մարգերուն մէջ ալ գերազանց եղած է Դաւիթ:

Ամէնէն առաջ ան մեզի կը ներկայանայ իբրեւ ուժեղ, անվախ ու քաջակորով հովիւ մը, որ իր ընտանիքի հօտը պաշտպանելու համար արջերու եւ առիւծներու դէմ կ'ելլէ: Ոչխարներու հանդէպ ցոյց տուած այս անձնդիր հոգածութեան համար Աստուած կանչեց զինքը իր ժողովուրդի հովուութեան, ըստ աւետարանական սկզբունքին, թէ «ով որ պզտիկ գործերուն հաւատարիմ է, մեծերուն մէջ ալ հաւատարիմ պիտի ըլլայ»: Իր քաջութեան եւ անվախութեան կոթողն է ճակատիլը Գողիաթին հետ: Սաւուդ թագաւոր, երբ իր մտահոգութիւնը կը յայտնէ այս կուրիւս համար, Դաւիթ կը պատասխանէ. «Մառադ առիւծ եւ արջ սատկեցուցած է, այս անթշիփառ այլազգին ալ անոնցմէ մէկին պէս պիտի ըլլայ»: Անմահ են իր խօսքերը, զորս ուղղեց Գողիաթին, երբ սա արհամարհանքով կ'ըսէր Դաւիթին. «Եկուր, որ մարմինդ կերակուր դարձնեմ երկինքի թռչուններուն»: Դաւիթ պատասխանեց. «Դուն իմ վրաս կուգաս սուրով, գեղարդով եւ ասպարով, իսկ ես քու վրադ կուգամ Զօրութեանց Տիրոջ անունով» (Ա Թագ. Ժէ 45):

Անգերազանցելի զօրավար մըն էր Դաւիթ: Քաջուրբիւն եւ վստա-
հուութիւն կը ներշնչէր իր շուրջիներուն, որոնք կապուած էին իրեն
անձնագոհութեան եւ հաւատարմութեան բարձր զգացումներով: Երկ-
րին հզօրագոյն մարդերը իրեն քաշեց եւ իր առաջնորդութեամբ եւ
օրինակով անելի կատարելագործուեցան անոնք քաջութեան մէջ (Տե՛ս
անոնց ցանկը եւ սխրագործութիւնները (Բ Թագ. Ի Գ 8-39): Իր բազ-
մաթիւ զինուորական արշաւանքները միշտ յաջողութեամբ ի գլուխ
հանեց:

Մեծագոյն թագաւորն է Իսրայէլի: Երկիրը կառավարեց իմաս-
տութեամբ եւ արդարութեամբ «Դաւիթ ի գործ դրաւ օրէնքը եւ ար-
դարութիւնը ամբողջ իր ժողովուրդին վրայ»: Իր վարչական ու ռազ-
մական մեծագործութիւններէն մէկը եղաւ գրաւումը Երուսաղէմ քա-
ղաքին, որ դեռ բնիկներուն ձեռքը կը մնար: Վերածեց զայն մայրա-
քաղաքի, որ երբեմն կը կոչուի նաեւ Դաւիթի քաղաք, որուն շուրջ
սկսաւ կեդրոնանալ Հրեայ ժողովուրդի կրօնական ու քաղաքական
կեանքը Դաւիթէն սկսեալ: Իրեն ենթարկեց շրջակայ բոլոր ազգերը,
եւ կերտեց փոքր կայսրութիւն մը, որ կը տարածուէր Մինայի անա-
պատէն մինչեւ Եփրատ գետ, եւ որուն մէջ կը մտնէին նաեւ Սիրիան,
բացի ծովեզերեայ մասերէն, եւ այսօրուան Յորդանանի թագաւո-
րութիւնը:

Արուեստագէտ մըն է Դաւիթ բառին լայնագոյն առումով: Նախ
բանաստեղծ մըն է, որուն կը վերագրուի Սաղմոսաց Գիրքը: Եթէ ոչ
ամբողջութեամբ, գէթ անոր կորիզը արդարեւ Դաւիթի կը պատկանի:
Յօրինեց սրտաուշ ողբերգ մը Սաւուղ թագաւորի եւ իր անմոռանալի
բարեկամ Յովնաթանի մահուան վրայ (Բ Թագ. Ա 17-27): Իր Սաղ-
մոսներէն առնուազն երկուքը ընդելուզուած են կենսագրութեան մէջ
(Տե՛ս Բ Թագ. ԻԲ եւ Ի Գ գլուխները): Սաղմոսաց Գրքի ամէնէն նշա-
նաւորներէն 23-րդ Սաղմոսը՝ «Տէրը իմ հովիւս է», միայն հովիւ մը
կրնար գրել, ե՛ւ այդ սաղմոսը, ե՛ւ վերոյիշեալ ողբը միայն բաւական
են Դաւիթը պատկերելու իրաւ բանաստեղծի տիտղոսով:

Երաժիշտ, երգող, պարող եւ նուագահար է Դաւիթ: Իր սաղմոս-
ներուն եղանակներն ալ ինք կը յօրինէր: Երբ մոլեգնած Սաւուղը
ամոքելու համար «քնարահար եւ երգող» մը կը փնտռեն, ամէնքին
միտքը կուգայ Յեսսէի որդի բեթլեհէմցի Դաւիթը: Տիրոջ Տապանակը

Երուսաղէմ փոխադրելու ատեն Դաւիթ չի քաշուիր մասնակցելէ
ժողովրդային ուրախութեան արտայայտութեանց: Մէկդի դրած իր
թագը եւ արքայական պատմուճանը՝ «Դաւիթ տաւիղ կը զարնէր եւ
ամբողջ եռանդով կը պարէր Տիրոջ առջեւ»:

Դաւիթ իր Ֆիդիքական եւ իմացական ձիրքերու կողքին օտուած
մըն է առաւելաբար հոգեւոր շնորհներով, որոնց պատճառով արդա-
րեւ որակուած է «Այր ըստ սրտի Աստուծոյ»: Իր կրօնասիրութիւնը
կը յայտնուի ոչ միայն իր սաղմոսներուն մէջ, այլ նաեւ ամբողջ
կեանքի ընթացքին: Խոնարհ է Դաւիթ իր մեծութեան մէջ ու այս ոգին
այնքան գեղեցկօրէն արտայայտուած է իր աղօթքներէն մէկին մէջ,
որ կը սկսի սա բառերով. «Ո՞վ եմ ես, Տէ՛ր իմ, Տէ՛ր, եւ ո՞վ է իմ
տունս, որ այսքան բարձրացուցիր զիս» (Բ Թագ. է 18-29):

Շատ են Դաւիթի վեհանձնութեան դրուագները: Երիցս առիթ կը
ներկայանայ սպաննելու զինք անիրաւաբար հալածող Սաւուղը, սա-
կայն կը խնայէ անոր կեանքին, իբրեւ իր թագաւորը եւ «Տիրոջ օծեա-
լը»: Իր ապերախտ եւ փառամոլ զաւակը՝ Աբիսողոմ, երբ իր դէմ
կ'ապստամբի, եւ այդ պատճառով ինք կը հարկադրուի հեռանալ
Երուսաղեմէն, իր զօրքերուն կը պատուիրէ չսպաննել զայն պատե-
րազմի մէջ: Ու երբ հակառակ իր հրամանին կը սպաննուի ան, Դաւիթ
կը պոռթկայ հայրական սիրով. «Աբիսողոմ, որդեակ իմ, Աբիսողոմ,
երանի ես մեռած ըլլայի քու տեղդ»:

Աստուածաշունչի բոլոր տիպարներն ալ առաւել կամ նուազ չա-
փով կ'արտայայտեն մարդկային բնութեան զանազան երեսները, բա-
րի կամ չար, սակայն ոչ ոք կը հաւասարի այս մարդի մէջ Դաւիթի:
Կան իր մէջ ամէն ինչ, որ մարդկային են, վսեմագոյններէն ամէնէն
նուաստները:

Դաւիթին իսկական մեծութիւնը կը կայանայ վսեմները աճեցնե-
լուն եւ կիրարկելուն, իսկ նսեմները՝ նուագագոյնի վերածելուն մէջ,
առանց սակայն խուսափիլ կարենալու մեղքին իր սուրքը վճարելու
տկարութենէն:

Դաւիթի մեծագոյն մեղքը եղաւ իր շնութիւնը իր զօրավարներէն
մէկին կնոջ հետ, ու այդ մեղքը ծածկելու անճարակ փորձը երբ վրի-
պեցաւ, գործեց անելի ծանր մեղքը՝ նենգութեամբ սպաննել տալով իր

ազնուական եւ Հաւատարիմ զօրավարը՝ Ուրիա Քետացին: Այս մեղքերուն Համար յանդիմանուեցաւ Նաթան մարգարէէն: Թէեւ սրտովին զղջաց, բայց Հետեւանքներէն չկրցաւ ազատիլ: մեռաւ մեղքին պտուղը եղող մանուկը, եւ սուրը եւ խռովութիւնը անպակաս եղան Դաւիթի տունէն: Պահ մը զրկուեցաւ իր գահէն եւ նշաւակ դարձաւ անէծքին եւ անարգանքին իր թշնամիներուն: Այս բոլորին սակայն Դաւիթ երբեք չխօսեց իր կապը եւ վստահութիւնը Աստուծոյ: Իր ապաշխարանքին գերազանց արտայայտութիւնն է «Ողորմեա՛ ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում, քաւեա՛ զանօրէնութիւնս իմ» սկզբնաւորութեամբ Սաղմոսը: Իսկ իր գլխուն եկած փորձանքները կրեց Համբերութեամբ եւ խոնարհ ոգւով: Ձիւք թշնամանողներն ներեց, երբ վերստին իր գահին տիրացաւ: Ունեցաւ խաղաղ մահ, իր յաջորդը նշանակելէն եւ իր գահը ամուր Հիմքերու վրայ դնելէն յետոյ:

Դաւիթ նշանաւորագոյն նախահայրն է Քրիստոսի քիչ. անգամ Յիսուս կոչուած է «Որդի Յովսէփայ», բայց բազմիցս կոչուած է «Որդի Դաւիթ», իբրեւ ծանօթ տիտղոսներէն մէկը Մեսիային, որ պիտի գար նորոգելու Դաւիթի թագաւորութիւնը, իր Հոգեւոր եւ յաւիտեանական իմաստով, ինչպէս ըսաւ աւետարտ Հրեշտակը Մարիամին. «Ահա պիտի յղանաս եւ որդի մը պիտի ծնիս... եւ Տէր Աստուած պիտի տայ անոր իր Հօր՝ Դաւիթի անունը, եւ պիտի թագաւորէ Յակոբի տան վրայ, եւ անոր թագաւորութիւնը վախճան պիտի չունենայ (Ղուկ. Ա 32):

Դաւիթ յիշատակը կը տօնուի մեր մէջ Ս. Ծնունդը կանխող չորս «Աւագ տօներ»էն իբրեւ առաջինը, «Տեսնենդրայր» կոչեցեալ Յակորոս Առաքեալի Հետ: Բացառիկ եւ իմաստալից երեւոյթ մըն է սա, որ ըստ մարմնոյ Քրիստոսի «Նախահայրը» եւ ըստ մարմնոյ Անոր «մեղքայրը», այսինքն՝ ազգականը, միասին կը տօնախմբուին, խորհրդանշելու համար Հին եւ Նոր Ուխտերուն միաձուլումը Քրիստոսնէական տնտեսութեան մէջ:

Դաւիթ վախճանեցաւ 70 տարեկանին: Իշխած է 1055-1015 Ն. Ք.: Յոյնք եւ Լատինք եւս մեզի պէս կը յիշատակեն զայն Դեկտ. Ի վերջերք:

Գլուխ հինգերորդ

ՄԱՐԳԱՐԷՆԵՐ

Հին Կտակարանի կարեւորագոյն երեւոյթը նոյն ինք ՄԱՐԳԱՐԷՆԵՐՆ են: Աստուածաշունչով յայտնուած կրօնքին զլխաւոր տարբերութիւնը միւս կրօնքներէն իր մարգարէներն են: Ստոյգ է, միւս կրօնքներն ալ ունեցած են իրենց Հիմնադիր «մարգարէները»՝ սուտ կամ իրաւ, բայց անոնց թիւը սահմանափակ է, մէկ կամ երկուքը չեն անցած: Իսրայէլի մարգարէները շարունակական եւ իրարու յաջորդող երեւոյթ մըն է, գրեթէ լման հազար տարիներ:

Մարգարէն այն մարդն է, որ ինքզինքը կը զգայ գերբնական ոյժի մը ազդեցութեան ներքեւ, եւ անով զօրացած կ'ընէ հզօր գործեր եւ կուտայ հզօր պատգամներ: Ծշմարիտ եւ յաւիտենական Աստուծոյ կողմէ յայտնեալ կրօնքը սկսողներ, Հիմնաւորողներ եւ պահպանողները ասոնք եղած են:

Իր ընդհանուր եւ լայնագոյն առումով մարգարէ են բոլոր այն մարգերը, որոնք Աստուծոյ Հետ սերտ Հաղորդակցութիւն ունեցած են. Աստուածաշունչի բառով՝ Աստուծոյ Հետ «խօսած» են, կամ պատգամ մը ստացած են Անկէ: Այս իմաստով մարգարէ են մեր մինչեւ Հիմա ներկայացուցած դէմքերուն մեծ մասը, որոնք արդարեւ «մարգարէ» անունով ծանօթ են Իսլամական կրօնքին մէջ, որ Քրիստոսնէութեան պէս կը հաւատայ եւ կ'ընդունի այս մարդոց Աստուծոյ ներշնչուած ըլլալու իրականութիւնը:

Սակայն իր մասնայատուկ իմաստով Հին Կտակարանի մէջ մարգարէ կը կոչուին բոլոր անոնք, որ Աստուծոյ կը զրկուին անձի մը կամ ժողովուրդի մը պատգամ մը Հաղորդելու համար: Ուրեմն այս իմաստով մարգարէն ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՄՆԱԿՆ է, մէկը, որ կրնայ ըսել. «Այսպէս կ'ըսէ Տէրը»: Ծշմարիտ մարգարէի մը Հիմնական յատկանիշն է ըլլալ անկաշառ, անկախ եւ անվախ ու վերջին ծայր հաւատարիմ Աստուծոյ տուած պատգամին:

Քրիստոսնէական հաւատամքի մէջ Ս. Հոգիի մասին կ'ըսուի ի միջի այլոց. «Որ խօսեցաւ յօրէնս եւ ի ՄԱՐԳԱՐԷՍ»: Ուրեմն Աս-

տուած խօսած է մարգարէներու միջոցաւ: Անոնք Աստուծոյ խօսքին սպասաւորներն են: Աստուծոյ պատգամներ ստանալով՝ մարդոց փոխանցող միջնորդներ են: Մարգարէները միաժամանակ Աստուծոյ յայտնեալ կրօնքը իր զտութեան եւ հարազատութեան մէջ պահող ախոյեաններն են, ի գին ամէն զոհողութեան, որուն մէջ է նաեւ իրենց կեանքին զոհողութիւնը, եւ դիմելով ամէն միջոցի, ներառեալ յեղափոխութիւնը եւ ճշմարիտ կրօնքի թշնամիները ֆիզիքապէս փճացնելը:

Հին Կտակարանը գրողները մեծագոյն մասամբ ասոնք են: Հրեաները ամբողջ Աստուածաշունչը կը բաժնէին երեք մասերու՝ Օրէնք, ՄԱՐԳԱՐԷՔ եւ Մատեանք: Օրէնքը Աստուածաշունչի առաջին հինգ գիրքերն են, որոնք գերագանց մարգարէէն՝ Մովսէսէ գրուած կը նկատուէին. իսկ ՄԱՐԳԱՐԷՔ կոչուածներն են յաջորդ վեց պատմական գիրքերը՝ Յեսու, Դատաւորաց եւ Ա, Դ Թագաւորաց՝ եւ մարգարէներու անունով ծանօթ տասնըվեց գիրքերը: Իսկ Մատեանք կոչուածները Հին Կտակարանի մնացեալ գիրքերն են:

Հին Ուխտի մարգարէները կրնանք բաժնել երկու խումբերու. ա) Գործիչ մարգարէներ, որոնք մեզի գրութիւններ չեն ձգած, բ) Գրող մարգարէներ, որոնք իրենց յայտնեալ պատգամները իրենց ժամանակակից սերունդին բերանացի յայտնելէն յետոյ, գրի կապած են զանոնք եւ իբրեւ անկորնչելի ժառանգութիւն ձգած են յաջորդ սերունդներուն:

Կը սկսինք գործիչ մարգարէներով, որոնք արդարեւ կը կանխեն գրող մարգարէները:

21. ՍԱՄՈՒԷԼ

Սամուէլ վախճան մը եւ սկիզբ մըն է Հին Կտակարանի մէջ: Վերջինն է դատաւորներուն եւ սկիզբը մարգարէներուն:

Ուխտի զաւակ է Սամուէլ եւ Աստուծոյ նուիրուեցաւ մանկութեան շատ մատաղ տարիքին: Մայրը զայն ընծայելու ատեն կ'ըսէ. «Փոխ կուտամ զայն Աստուծոյ ամբողջ իր կեանքի ընթացքին»:

Արդարեւ Սամուէլ Աստուծոյ եւ իր ժողովուրդի ծառայութեան մէջ մնաց մինչեւ իր մահը, որ տեղի ունեցաւ 1095 թուին, նախ քան Քրիստոս:

Փղշտացիներ կրկին կը յարձակին իսրայէլացիներու վրայ եւ գերի կը տանին անոնց գերագոյն Սրբութիւնը՝ Ուխտի Տապանակը, որուն գերութեան լուրը իմանալով՝ օրուան ծերացած քահանայապետը եւ դատաւորը՝ Հեղի, կ'իյնայ աթոռէն եւ կը մեռնի: Սամուէլ պետը եւ դատաւորը՝ Հեղի, կ'իյնայ տակ եւ արդէն իսկ հասունցած եւ որ մեծցած էր անոր ձեռքին տակ եւ արդէն իսկ հասունցած եւ ժողովրդականութիւն շահած անձ մըն էր իբրեւ Աստուծոյ մարդը, գրեթէ ինքնաբերաբար յաջորդեց անոր, իբրեւ դատաւոր իսրայէլի: Իր առաջին գործը եղաւ Աստուծոյ ճամբայէն չեղած իսրայէլը ապաշխարանքի հրաւիրել եւ հրահանգել, որ հեռացնեն իրենց մէջէն օտար աստուածները: Սամուէլ եզրակացուց իր պատգամը սա պարզ օտար աստուածները. «Տիրոջ դարձէք ձեր բոլոր սրտով, զԱյն պաշտեցէք, ու Ան խօսքերով. «Տիրոջ դարձէք ձեր բոլոր սրտով, զԱյն պաշտեցէք, ու Ան պիտի ազատէ զձեզ Փղշտացիներէ»: Արդարեւ ժողովուրդը ապաշխարեց, պահեցողութիւն ըրաւ՝ խոստովանելով, որ մեղանչած էր խարեց, պահեցողութիւն ըրաւ՝ խոստովանելով, որ մեղանչած էր առաջի Աստուծոյ, ու կ'աւելցնէ Ս. Գիրքը. «Այստեղ է, որ Սամուէլ դատել սկսաւ իսրայէլի որդիները»: Եւ ապա աղօթքով եւ իր ժողովուրդը խրախուսելով պարտութեան մատնեց Փղշտացիները, որոնք այլեւ չհամարձակեցան շարունակել իրենց ասպատակութիւնները իսրայէլի վրայ ամբողջ Սամուէլի դատաւորութեան ընթացքին, որ տեւեց 22 տարիներ:

Սամուէլ, ծերացած ըլլալով, իր որդիները իր տեղ դատաւոր կարգեց. ասոնք սակայն ապիկար եւ անարժան դուրս եկան, եւ ժողովուրդը Սամուէլէն ԹԱԳԱՒՈՐ պահանջեց: Սամուէլ յակամայս օծեց Սաուլը, որուն զօրավիգ եւ առաջնորդ եղաւ: Սկզբնական շրջանին Սաուլը յաջող եւ ժողովրդանուէր գործունէութիւն ունեցաւ, յետոյ սակայն ինկաւ Աստուծոյ աչքէն, ու Աստուած հրամայեց Սամուէլին օծել Դաւիթը, իբրեւ ապագայ թագաւորը:

Թէեւ Մովսէս եղաւ առաջին եւ գերագանց մարգարէն, բայց իսրայէլի մարգարէներու անընդհատ շարքը կամ մարգարէական դպրոցը Սամուէլով կը սկսի: Իր մանկութենէն իսկ, սրտայոյզ պայմաններու տակ, Աստուած «կանչեց» Սամուէլը եւ ինքզինքը եւ իր կամքը յայտնեց անոր: «Սամուէլ մեծցաւ եւ Աստուած անոր հետ էր,

-Սանգարիչը դունես եւ քու հօրդ տունը,- ըսաւ Եղիան,- որ մոռցաք ձեր Աստուածը եւ սկսաք պաշտել Բահադները: Արդ, մարդ զրկէ եւ կանչէ ամբողջ Իսրայէլը Կարմեղոս լեռան վրայ, կանչէ նաեւ Բահադի եւ Աստարտէի քուրմերը, որոնք կը կերակրուին Յեզարէլի սեղանէն:

Արդարեւ այսօրուան Հայֆա քաղաքի կոնակին երկարած Կարմեղոս լեռան վրայ տեղի ունեցաւ տրամադիկ պայքարը Եհովայի եւ Բահադի միջեւ, յանձինս Եղիայի եւ Բահադի քուրմերուն, իսկ Թագաւորն ու բազմահազար ժողովուրդը կազմեցին Հանդիսատեսները այս կրօնական տրամին:

Կանգնեցաւ Եղիա իր հսկայ հասակով ամէնքի դիմաց եւ ըսաւ.

-Մինչեւ ե՞րբ երկու ոտքի վրայ պիտի կաղաք՝ անգամ մը Աստուծոյ կողմը յարելով եւ միւս անգամ Բահադի կողմ հակելով: Եթէ Եհովան է ճշմարիտ Աստուածը, Հետեւեցէք Անոր, եթէ Բահադն է՝ կապուեցէք անոր: Ես միայն մնացած եմ իբրեւ Տիրոջ մարգարէն, իսկ Բահադը եւ Աստարտէն ունին ինն հարիւր յիսուն մարգարէներ: Արդ, տուէք մեզի երկու եզներ, մէկը՝ անոնց, մէկը՝ ինձի: Պատրաստենք զանոնք. մեզմէ իւրաքանչիւրը թող դնէ իր զոհը իր սեղանին վրայ: Այն Աստուածը, որ կրակ կը դրկէ երկինքէն եւ կ'այրէ իր զոհը, այն է ճշմարիտ Աստուածը:

Բոլոր ներկաները միահամուռ համաձայնեցան Եղիայի առաջարկին:

Բահադի քուրմերը մորթեցին իրենց եզը եւ դրին իրենց շինած բազինին վրայ: Առտուրնէ մինչեւ կէսօր պոռագին, կանչեցին՝ «Բահադ լսէ մեզի» յանկերգով: Եղիա չկրցաւ պահել իր հեգնանքը եւ պոռթկաց.

-Աւելի բարձրաձայն կարդացէք, որովհետեւ Աստուած մըն է ի վերջոյ. գուցէ զբաղմունք մը ունի, կամ զբօսանքի գացած կրնայ ըլլալ, կամ ճամբորդութեան ելած է, կամ ալ քնացած կրնայ ըլլալ եւ արթնցնել պէտք է...:

Ինն հարիւր յիսուն մոլեռանդ քուրմերու դիմաց միս-մինակ կեցած՝ նման խօսք մը նետելը հասարակ մահկանացուի գործ է: Բահադի քուրմերը իրենք իրենցմէ ելած ծիսական պարեր կը դառ-

նային իրենց սեղանին շուրջ եւ կը վիրաւորէին իրենց մարմինները սուրով ու նիզակներով, իրենց աստուածին գուժը շարժելու համար:

Կէսօրը անցած եւ մօտեցած էր Իսրայէլեան երեկոյեան զոհի կանոնական ժամը: Եղիա միջամտեց.

Մէկ կողմ կեցէք այլեւս, կարգը իմս է:

Ու սարքեց Տիրոջ սեղանը տասներկու քարերով: Վրան շարեց փայտի շերտերը, դրաւ սեղանին վրայ իր պատրաստած զոհը եւ ըսաւ իր շուրջիններուն.

-Ջուր բերէք եւ Թափեցէք զոհին վրայ:

-Թափեցին չորս սափոր ջուր:

-Կրկնեցէք,- ըսաւ: Կրկնեցին:

-Երեքկնեցէք,- ըսաւ: Երեքկնեցին: Ջուրը ողողեց զոհը, փայտերը, ամբողջ սեղանը եւ լճացաւ անոր շուրջ բացուած լայն փոսին մէջ: Եղիա այսպէս աղօթեց.

«Տէր Աստուած՝ Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի, թող այսօր ամէն ոք ճանչնայ, թէ դունես Իսրայէլի Աստուածը, ու ես՝ քու ծառայ: Լսէ ինձի, Տէր, կրակով...»:

Հազիւ աւարտած էր աղօթքը, երբ «Տիրոջմէ կրակ իջաւ եւ կերաւ ողջակէզը, փայտի շերտերը, քարերը եւ հողը ու լափեց լճացած ջուրը սեղանին շուրջ» (Գ Թագ. ԺԸ 38): Երբ ժողովուրդը այս տեսաւ «ինկան իրենց երեսին վրայ եւ ըսին՝ Արդարեւ Տէրն է ճշմարիտ Աստուածը»: Ու Եղիա, օգտագործելով հոգեբանական պահը, գոռաց.

-Բռնեցէք Բահադի քուրմերը, անոնցմէ ոչ մէկը արժանի է սպրելու:

Բռնեցին զանոնք, իջեցուցին մօտակայ Հեղեղատը եւ կոտորեցին զանոնք եւ մարմինները գետը նետեցին: Ապա աղօթեց Եղիա եւ երկուքուկէս տարիներէ ի վեր սպասուած անձրեւը տեղաց առատօրէն:

Կատղեցաւ բնականաբար Յեզարէլ, երբ իմացաւ իր քուրմերուն կոտորածը, լուր դրկեց Եղիային՝ ըսելով. «Եթէ դու Եղիան ես, ես ալ Յեզարէլն եմ, թող աստուածներ պատուհասեն զիս, եթէ վաղը այս ժամուն դուն ալ իմ քուրմերուս ճակատագրին չարժանանաս»:

Եղիան կ'ապրի եւ կը գործէ նախքան Քրիստոս թ դարու առաջին կէսին: Յոյնք եւ Լատինք կը յիշատակին զայն Յուլիս 20ին:

23. ԵՂԻՍԷ

Տեսանք իր նախընթացը, թէ ինչպէս Եղիայի աշակերտեցաւ: Եղիսէ Հին Կտակարանի այն բացառիկ դէմքն է, որուն ամէնէն շատ հրաշագործութիւն վերագրուած է Մովսէսէ յետոյ: Եղիային կը վերագրուին եօթ հրաշքներ, Եղիսէին՝ տասներեք: Արդարեւ Եղիայի երկինք վերանալէ առաջ Եղիսէն ուզած էր անոր կրկին հոգին:

Իր հրաշքներուն նշանաւորագոյնն է Նէեման Ասորիի բժշկութիւնը: Դամասկոսի թագաւորին զօրավարն էր վերջինս, որ բորոտութենէ բռնուած էր: Իմանալով Եղիսէի հրաշագործ կարողութիւնը՝ ներկայացաւ անոր դրան առջեւ կառքերով, ձիերով եւ Հետեւորդներու գրեթէ բանակով մը: Մարգարէն, առանց դուրս գալու իր փոքրաւորին Հետ Հրահանգ զրկեց, որ երթայ եւ եօթն անգամ լուացուի Յորդանան գետի մէջ: Նէեման կ'անկնկալէր, որ Եղիսէն մասնաւոր Հետաքրքրութիւն ցոյց տար իր Հանդէպ, առ նուազն դուրս գար, աղօթէր, կամ ձեռքը վրան դնէր: Երբ չտեսաւ ականաւածը, բարկացաւ եւ ուզեց վերադառնալ. «Եթէ գետի մը մէջ լուացուելով պիտի բուժուիմ, մենք Յորդանանէն աւելի մեծ եւ աւելի լաւ գետեր ունինք, անոնց մէջ կրնամ լուացուիլ» ըսելով: Սակայն իր Հետեւորդները իջեցուցին անոր բարկութիւնը եւ ըսին. «Եթէ աւելի ծանր առաջարկ մը ըրած ըլլար, պիտի չհնազանդէի՞ր»: Տեղի տուաւ Նէեման, գնաց, լուացուեցաւ Յորդանանի մէջ եւ բժշկուեցաւ իր ախտէն:

Վերադարձաւ շնորհակալութիւն յայտնելու մարգարէին եւ ըսաւ. «Այժմ Հասկցայ, որ Իսրայէլի Աստուծոյ պէս աստուած չկայ աշխարհի վրայ»: Եւ խնդրեց, որ Հաճէր ընդունիլ իր նուէրները: Եղիսէ մերժեց: Նէեման պնդեց: Եղիսէ տեղի չտուաւ. «Այն ատեն շնորհեցէք, որ երկու ջրիի բնո Հող վերցնեմ ձեր երկրէն, որովհետեւ ասկէ յետոյ ԵՆՈՎԱՅԻՆ զատ ոչ մէկ ուրիշ աստուած պիտի պաշտեմ», - ըսաւ զօրավարը: Ու Եղիսէ արձակեց զայն խաղաղութեամբ:

Փորձիչը մտաւ սակայն Եղիսէի փոքրաւորին՝ Գէեզիի սիրտը. ինչո՞ւ իր տէրը չօգտագործեց այս սքանչելի առիթը Հարստանալու եւ օգնելու նաեւ իրեն: Ուստի որոշեց ինք օգտուիլ առիթէն: Հազիւ

մեկնած էր Նէեմանի կարաւանը, երբ Հասաւ անոնց ետեւէն, եւ ըսաւ. թէ վերջին պահուն հիւրեր եկած էին, ուստի իր տէրը քիչ մը դրամի եւ Հագուստեղէնի պէտք ունեցաւ: Նէեման Հաճոյքով եւ աւելիով տուաւ ուզածները: Երբ սակայն Գէեզի առածները իր տունը տեղաւորելէն յետոյ վերադարձաւ իր մեծաւորին մօտ, Եղիսէն ըսաւ անոր. «Քանի որ նուէրներ ստացար Նէեմանէն, պիտի ժառանգես նաեւ անոր բորոտութիւնը»: Խեղճ մարդը, երբ ելաւ Եղիսէի քովէն, արդէն իսկ բորոտած էր ամբողջ մարմինով (Դ թագ. Ե Գլուխ.):

Եղիսէ թէեւ աշակերտ ու յաջորդ էր Եղիայի, սակայն Հսկայ տարբերութիւն կար երկուքի կեանքին, նկարագրին եւ գործելու կերպերուն մէջ: Եղիան մենակեաց մըն էր եւ իր կեանքը անցուց մշտական պայքարի մէջ, ունեցաւ ընկրկումի եւ վհատութեան պահեր, երբ մինչեւ իսկ մահ խնդրեց Աստուծոյ: Եղիսէն ընդհակառակը՝ շարունակ ապրեցաւ ընկերութեան մէջ, եւ իր կեանքը յաղթանակներու եւ յաջողութեանց շարք մը եղաւ: Կը սիրէր երաժշտութիւնը եւ յաճախ մարգարէանալու Համար պէտք կը զգար նուագի օժանդակութեան: (Դ թագ. Գ 15):

Իր կեանքը պայքարէ աւելի բարեկարգութիւններով եւ կազմակերպչական գործերով անցուց: Արտաքին թշնամիները կը շահէր բարիքով եւ բարեկամութեամբ: Կը պատմուի, որ Սուրիացիներ պաշարած են քաղաք մը, ուր կը մնար Եղիսէ: Աստուծոյ կանուխ ելաւ քաղաքէն, մտաւ թշնամի բանակի մէջ եւ ըսաւ, որ սխալ քաղաք պաշարած են եւ խոստացաւ առաջնորդել զանոնք իրենց փնտռած քաղաքը: Մարդիկ ոչխարի պէս Հետեւեցան իրեն: Բերաւ զանոնք եւ մտցուց Սամարիա՝ իր երկրին մայրաքաղաքը: Մարդիկը յանկարծ անդրադարձան, որ թշնամիին ձեռքը ինկած են: Սամարիոյ թագաւորը ըսաւ՝ ջարդե՞նք ասոնք: «Ո՛չ, - ըսաւ Եղիսէ, - այլ կերակրեցէք, Հիւրասիրեցէք եւ պատուով ճամբայ դրէք»: «Անկէ յետոյ Սուրիացի ասպատակներ անգամ մըն ալ չերեւեցան Իսրայէլի սահմաններու մէջ»: Կ'եզրակացնէ պատմութիւնը (Դ թագ. Զ):

Իսկ ընդհակառակը, ներքին թշնամիները, իբրեւ աւելի վտանգաւորներ, անխնայ փճացնելու քաղաքականութեան կը Հետեւէին: Ուստի Եղիսէ թագաւոր օձի տուաւ Յէսու զօրավարը, որ բնաջնջեց Աքաաքի կռակաշտ գերդաստանը, եւ մէջտեղէն մաքրեց Յէզաբէլը,

հրամայելով, որ վար նետեն զայն արքունիքի պատուհանէն: Երբ ամէն մարդ զբաղուած էր կերուխումով եւ յաղթանակի տօնակատարութեամբ, շունէր կերած էին ամբարիշտ թագուհիին ջախջախուած մարմինը:

Որչափ հրաշքներու եւ յաջողութեանց շարք մը եղած էր Եղիսէի կեանքը, նոյնքան հրաշապատում եղան նաեւ իր վերջին օրերը եւ մահը: Մահուան անկողինին մէջ անգամ, երբ օրուան թագաւորը իրեն այցելած է, կը սրտապնդէ զայն եւ թշնամիին վրայ յաղթանակի ցուցմունքներ կուտայ:

Ու երբ մեռաւ եւ թաղուեցաւ, ատեն մը վերջը պատահաբար ուրիշ մէկը թաղեցին իր գերեզմանին մէջ: Անծանօթին մարմինը, երբ դպաւ Եղիսէին ոսկորներուն, յարութիւն առաւ մեռեալը (Դ Թագ. ԺԳ 14-21): Այնպէս որ, ի զուր տեղ չէր, որ մեղմօրէն քաջասիրտ այս մարգարէն Եղիայի կրկին հոգին խնդրած էր:

Եղիսէ ապրեցաւ ու գործեց Քրիստոսէ առաջ Թ. դարու վերջին կէսին: Յոյնք եւ Լատինք կը տօնեն զայն Յունիս 14ին:

Իսկ մեր Եկեղեցին՝ Հոգ. ի Ե Կիրակիի հինգշաբթին:

24 ՅՈՎԱ

Յովբ թէ նախապէս յիշուածներուն եւ յաջորդ յիշուելիքներուն իմաստով «մարգարէ» մը չէ, բայց իբրեւ այդ ճանչցուած է թէ՛ Յունաց եւ թէ՛ Լատինաց մօտ, ինչպէս նաեւ Իսլամներու կողմէ: Ուստի կը գետեղենք զայն իբրեւ միջին օղակը գործիչ եւ գրիչ մարգարէներու միջեւ:

Յովբ հերոսն է իր անունը կրող Գրքին, որու մասին բարձրագոյն գնահատանքներ կան գրուած մեծ միտքերու կողմէ: Ըսած է Լուտէր. «Գերագանց գիրքը ամբողջ Աստուածաշունչին»: Թէնիսն զայն նկատած է «մեծագոյն բանաստեղծութիւնը հին եւ նոր ժամանակներու»: Գարլայլ յայտարարած է. «Ազնուական գիրք մը համայն մարդկութեան գիրքը... կը կարծեմ թէ չկայ գիրք մը, Աստուածաշունչին մէջ անկէ դուրս, որ հաւասարի անոր գրական արժէքին»: Այս բոլորի հակառակ՝ որքան ծանօթ է Յովբի պատմութիւնը, նոյնքան անծանօթ է այս հոյակապ գիրքը:

Յովբի անուան Իսլամական շրջանակներու մէջ պահուած հնչումը՝ էՅՈՒՊ, աւելի հարազատ է եւ մօտ սկզբնական ձեւին: Մեր եւ եւրոպական լեզուներու մէջ գործածական դարձած ձեւը կորսնցուցած է իր հարազատութիւնը տառադարձութեան ընթացքին, որ կուգայ Յունական ձեւէն, եւ ոչ՝ Եբրայականէն:

Յովբի մեզի ծանօթ պատմութիւնը ներկայացուած է Համանուն գրքի առաջին երկու գլուխներու եւ վերջին գլուխի վերջաբանի մէջ՝ արձակ ոճով: Իսկ Գրքին միջանկեալ 40 գլուխները տառապող արդարին սրտի բանաստեղծական ու պատկերալից ոճով պոռթկումն է, որուն կը միանան նաեւ Յովբի երեք բարեկամները խայթիչ վերագրումներով եւ Աստուած՝ իր պատգամներով: Գիրքը ծայրէ ի ծայր խարխափում մըն է՝ երբեմն թափանցում, բայց միշտ որոնում մըն է կեանքի եւ կրօնքի հիմնական հարցերուն, որոնք այնտեղ ալ իրենց լրիւ լուծումը չեն գտներ եւ սահմանուած են կարծես յաւիտեան անլոյծ մնալու: Յոռետեսութեան ու դառնութեան լարին հետ կը զարնուի նաեւ Աստուծոյ մեծութեան եւ փառքին քնարը, ու կեանքի գաղտնիքը Աստուծոյ կամքին համակերպելու իմաստութեան մէջ կը գտնէ այս գրքին հեղինակը: Ինչպէս ըրած էր Ժողովող գրքի հեղինակը:

Յովբինը պատմութիւնն է մարդու մը, որ կ'ենթարկուի ահաւոր փորձերու, որոնց մէջէն յաղթական ու յաջող դուրս կուգայ: Գրքին վարագոյրը կը բացուի երջանիկ ընտանիքի մը վրայ: Ընտանիքին հայրը՝ Յովբ, հրեայ մը չէ, այլ Աբրահամէն առաջ ապրող արդարներէն ուեւ մէկին պէս ուեւ մարդկային ցեղի պատկանող մարդ մըն է: Մեր Աստուածաշունչի Համանուն գրքի վերջաւորութեան տրուած ծանօթագրութեան համաձայն Եղովմայեցի է, հրէից ցեղակից եւ դրացի ժողովուրդ մը, որ կ'ապրէր Մեռեալ Մովի հարաւային կողմը տարածուած լեռնաշխարհին մէջ: Յովբ ներկայացուած է իբրեւ «կատարեալ ու աստուածապաշտ մարդ մը, հեռու ամէն տեսակ մեղքէ եւ չարիքէ»: Ունի եօթը մանչ զաւակներ եւ երեք աղջիկ՝ -կատարեալ ընտանիք: Մեծահարուստ է, տէր եօթ հազար այծ-ոչխարի, երեք հազար ուղտի, հինգ հարիւր լուծ եզի, հինգ հարիւր մատակ էջի եւ բազմաթիւ ծառաներու: Հարստութիւնը այլասերած չէ այս մարդուն նկարագիրը, ինչ որ կ'ընէ սովորաբար: Մեծագործ է եւ բարեսէր:

«Այնպէս որ այս մարդը մեծագոյնն էր արեւելքի ազնուականներուն»։ Յովբի զաւակները շարունակ խրախճանքի մէջ են միասնաբար։ Իսկ Յովբ աղօթող եւ ծիսական սրբագործութեանց մէջ անթերի՝ իր զաւակներու հաւանական սահմանազանցութիւններու քաւութեան համար։ Ասիկա Գրքին նախարանն է (Ա 1-5)։

Բուն տրամը կը սկսի, երբ տեսարանը յանկարծ երկինք կը փոխադրուի։ «Աստուծոյ հրեշտակները կամ «որդիները», ըստ Եբր. բնագրի, Տիրոջ ներկայութեան կը բարձրանան օր մը։ Սատանան ալ անոնց հետ է։ Ու Աստուած խօսակցութեան կը բռնուի սատանային հետ։

- Ուրիշ՝ կուգաս,- կը հարցնէ Աստուած։

- Երկիրը շրջագայելէ,- կը պատասխանէ սատանան։

- Կը ճանչնա՞ս իմ ծառաս՝ Յովբը, անոր նմանը չկայ երկրի վրայ, անարատ, ուղիղ եւ աստուածապաշտ մարդ մը, հեռու ամէն տեսակ չարիքէ եւ մեղքէ։

- Մի՞թէ ձրի կը պաշտէ Յովբ իր Աստուածը,- վրայ կը բերէ Սատանան։ - Ամէն կողմէ անոր պաշտպան կեցեր ես, օրհներ ես անոր ձեռքին գործերը եւ բազմացուցեր իր հարստութիւնը։ Բայց ըոպէ մը երկարէ ձեռքդ եւ դպիր անոր ունեցածներուն, եւ տես, թէ ինչպէս պիտի անիծէ քեզ։

- Լաւ,- ըսաւ Աստուած,- անոր ամբողջ ունեցածը քու տրամադրութեանդ տակ կը դնեմ, բայց անոր անձին պիտի չդպիս։

Սատանան իր որսը գտած մէկու մը պէս վար կը սլանայ Աստուծոյ ներկայութենէն ու անխնայ կերպով եւ մի առ մի կը փճացնէ Յովբի ամբողջ հարստութիւնը եւ կը սպաննէ անոր զաւակները։

Այս բոլոր նախճիրներու դիմաց Յովբ ոտքի կ'ելլէ, կը պատուէ իր զգեստները՝ ի նշան հաւատարմութեան եւ սուգի, կը կտրէ գլխուն մազերը եւ գետին կ'իջնայ, Աստուծոյ կ'երկրպագէ եւ կ'ըսէ միայն.

«Մերկ ելայ մօրս որովայնէն,

Ու մերկանդամ պիտի վերադառնամ,

Տէրը տուաւ, եւ Տէրը առաւ.

Օրհնեալ ըլլայ Տիրոջ անունը»։

Ու կ'աւելցնէ Գիրքը. «Այս բոլորին մէջ Յովբ չմեղանչեց Տիրոջ դէմ եւ անզգամ բաներ չվերագրեց Աստուծոյ»։

Կրկին տեսարանը երկինք կը փոխադրուի. նոյն տեսարանը եւ նոյն սկզբնական խօսակցութիւնը Աստուծոյ եւ սատանայի միջեւ ի վերջոյ Աստուած կ'աւելցնէ.

- Թէ եւ դուն պարապ տեղը գրգռեցիր զիս որ փճացնեմ անոր հարստութիւնը, բայց տեսար, որ Յովբ պահեց իր անմեղութիւնը։

- Մորթի տեղ մորթ,- պատասխանեց սատանան։ - Մարդ ամբողջ ունեցածը կուտայ իր կեանքը պահպանելու համար։ Սակայն անգամ մը երկարէ ձեռքդ եւ դպիր անոր ոսկորներուն եւ մարմինին, տես, թէ ինչպէս պիտի անիծէ քեզ։

- Լաւ,- ըսաւ Աստուած,- ահա կը մատնեմ զայն քու ձեռքդ, բայց անոր կեանքին պիտի չդպիս։

Ու սատանան վարակեց Յովբի մարմինը թարախոտ վէրքերով, ոտքէն մինչեւ գլուխը։ Յովբ խեցիի կտոր մը առած կը քերէր թարախը՝ նստած աղբանոցի վրայ։ Ոչ ոք իր երեսը կը նայէր. կինն անգամ, որ հեռացած էր իրմէ, օրին մէկը մօտեցաւ իրեն լոկ ըսելու համար.

- Մինչեւ ե՞րբ այսպէս պիտի համբերես, փրկութեան ակնկալութեամբ, անէծք կարդա Աստուծոյ դէմ եւ մեռիր ու ազատէ։

- Անզգամ կնոջ մը պէս կը խօսիս դուն,- ըսաւ Յովբ,- եթէ Տիրոջ ձեռքէն բարիքներ ընդունեցիք, չարիքներուն ինչո՞ւ պիտի չհամբերենք։

Յովբի հեռաւոր երեք բարձրաստիճան բարեկամները, երբ լսեցին անոր գլխին եկած փորձանքները, եկան մխիթարելու զայն։ Երբ տեսան՝ չկրցան ճանչնալ զայն. բարձրացուցին իրենց ձայնը եւ սկսան լալ։ Այնքան անմխիթարական էր Յովբի վիճակը, որ սփոփանքի ոչ մէկ խօսք կրցան գտնել։ Նստան անոր քով ու անխօս մնացին «եօթն օր եօթը գիշեր»։ Ի վերջոյ Յովբ խօսեց լուրջութեամբ եւ ողբաց.

«Թող կորնչի օրն իմ ծննդեան,

Ու գիշերն այն, երբ ըսուեցաւ՝ մանչ մը ծնաւ.

Խաւար պատէ, չհաշուուի այն՝ օրերուն մէջ.

Ու լոյս չծագի անոր վրան...»։

«Այն տարին, որ Ոգիա (Երուսաղէմի) Թագաւորը մեռաւ, տեսայ Տէրը բարձր եւ վեհ աթոռի մը վրայ բազմած, եւ Անոր փառքը լեցուցած էր Տաճարը: Անոր շուրջը կային սպասարկող Սերովբէներ, իւրաքանչիւրը՝ վեցական թեւերով... Ու անոնք անդու, անդադար իրարու ձայն կուտային՝ ըսելով.

«Սուրբ, սուրբ, սուրբ է Զօրութեանց Տէրը.

Անոր փառքով լեցուն է ամբողջ երկիրը»:

Ասոնց ձայնին ուժգնութենէն բացուեցան Տաճարի դռները, եւ տունը լեցուցաւ Աստուծոյ ներկայութիւնը խորհրդանշող ծուխով, ու ես գոչեցի.

«Վայ ինձի, թշուառականիս, ես կորայ,
Որովհետեւ մարդ մըն եմ պիղծ շրթներով
Ու կ'ապրիմ պղծաշուրթի ժողովուրդի մէջ.
Եւ Զօրութեանց Տէրը տեսայ բաց աչքերով»:

Այն ատեն ղրկուեցաւ ինձի Սերովբէներէն մէկը, որ ունելիով վերցուց Տիրոջ սեղանէն կրակէ կայծ մը եւ դպցուց զայն շրթներուս՝ ըսելով.

«Ահաւասիկ սա դպաւ շրթունքներուդ
Ու վերցուցան քեզմէ անօրէնութիւններդ,
Եւ սրբուցան մեղքերդ»:

Այն ատեն լսեցի, որ Տէրը կ'ըսէր. «Ով ղրկեմ, կամ ով երթայ այս ժողովուրդին: Ու ես ըսի. «Ահաւասիկ ես պատրաստ եմ, ղրկէ զիս»: Ու Տէրը ըսաւ.

«Գնա եւ ըսէ այս ժողովուրդին.
Լսելով պիտի լսէք, բայց պիտի չհասկնաք.
Տեսնելով պիտի տեսնէք, բայց պիտի չգիտնաք,
Որովհետեւ այս ժողովուրդին սիրտը թմրած է.
Իրենց ականջները ծանրացած են, եւ աչքերը՝ կուրցած.
Այնպէս որ, չեն կրնար տեսնել իրենց աչքերով,
Ու չեն կրնար լսել իրենց ականջներով,

Ոչ ալ հասկնալ՝ իրենց սիրտերով,
Որպէսզի դառնան ու բժշկեմ զանոնք»:

Պատգամ մը, որ կը պատշաճի գրեթէ բոլոր ժամանակներուն, բայց յատկապէս մեր ժամանակներուն...: Վերելի տեսիլքէն Եսայի ժառանգած է «կայծակնամաքուր մարգարէ» տիտղոսը մեր եկեղեցական շրջանակներու մէջ:

Եսայի վարիչ եւ առաջնորդ եղած է իր օրերուն Երուսաղէմի չորս Թագաւորներուն, յատկապէս Եզեկիա բարեպաշտ Թագաւորին: Ասոր օրով Ասորեստանի Թագաւոր Սեննքերիմ գրաւած է գրեթէ ամբողջ Հրէաստանը եւ կը սպառնայ նաեւ Երուսաղէմին: Եզեկիա, տագնապի մատնուած, պատգամաւոր կը ղրկէ Եսայիին եւ խորհուրդ կը հարցնէ անոր: Կ'ըսէ Եսայի.

«Պիտի չմտնէ Ասորեստանի Թագաւորը այս քաղաքը. ոչ իսկ նեա պիտի արձակէ անոր վրայ, ոչ ալ պիտի պաշարէ զայն պատնէշներով, այլ եկած ճամբով պիտի վերադառնայ եւ այս քաղաքը պիտի չմտնէ»: Ու արդարեւ ժանտախտ մը կը բնաջնջէ Սեննքերիմի բանակը, եւ ինք հագիւ կը հասնի իր երկիրը, ուր կը սպաննուի իր երկու զաւակներուն՝ Ադրամելիքի եւ Սարասարի կողմէ, որոնք կը փախին «Աբարադի երկիրը» (Ես. Լէ 33-38):

Եսայիին այն մարգարէն է, որ ամէնէն շատ մարգարէացած է Մեսիայի, այսինքն՝ Քրիստոսի մասին, այն աստիճան, որ կոչուած է «նախաւետարանիչ» կամ Աւետարանիչ մարգարէ: Օրինակ՝ այն է «Ահա կոյս մը պիտի յղանայ եւ որդի մը պիտի ծնի եւ անոր անունը էմամանուէլ պիտի կոչեն»: Ակնարկելով Քրիստոսի գործունէութեան աշխարհագրական շրջանակին՝ ըսած է. «Զաբուղոնի եւ Նեփթաղիմի երկրին մէջ եւ ծովեզերքը բնակողները, Անդրյորդանանի եւ Հեթանոսներու Գալիլիոյ մէջ ապրողները, որոնք խաւարի մէջ կը քալէին, մեծ լոյս մը տեսան» (Ես. Թ 1): Յիսուս, երբ Նազարէթի ժողովարանին մէջ կարդաց Եսայի ԿԱ 1-3 Համարները, Հաստատեց որ անոնք իր վրայ իրականացած էին: Երբեմն գրեթէ բառ առ բառ նախատեսուած են Քրիստոսի կատարելիք դերը, տնօրէնութիւնները եւ չարչարանքները անոր Գրքին մէջ:

Եսայի ն ազնուական մարգարէ մըն է բառի բովանդակ իմաստով: Կը խօսի եւ կը պատգամէ վեհուօրումը եւ ուժեղ հեղինակութեամբ, ինչպէս կը վայելէ արդարեւ Բարձրեայի դեսպանին: Մշակուած միտք մըն է, եւ Աստուածաշունչի բարձրագոյն իմացականութիւններէն մէկը: Կը հասկնայ գրեթէ բոլոր խնդիրներէ, որքան կրօնական, նոյնքան քաղաքական: Յաճախ կոչուած է «գիւանադէտ» կամ «քաղաքագէտ» մարգարէ: Մօտէն հետաքրքրուած՝ եւ իր տեսակէտը կամ Աստուծոյ կամքը յայտնած է ժամանակակից միջագոյնի եւ ազգային հարցերու մասին: Շատ մօտ եղած է արքունական շրջանակներու, եւ հաւանական է ենթադրել, որ պատուոյ մաս կազմած է Երուսաղէմի արքունի խորհուրդին, որ կը ճշդէր երկրին քաղաքական ուղղութիւնը յարաբերաբար ժամանակակից մեծ պետութիւններու:

Եսայիի Գրքին 66 գլուխները ովկիանոս մըն են պատգամներու՝ բազմաթիւ նիւթերու մասին՝ Աստուծոյ, Արդարութեան, մեղքի, կրօնքի եւ ընկերային շատ մը ուրիշ հարցերու մասին, որոնցմէ ոմանք բարձրագոյններէն են ամբողջ Հին Կտակարանին՝ տրուած երբեմն անգերագանցելի ոճով՝ եւ համամարդկային ոգիով: Օղակն է Եսայիի գիրքը Հին Կտակարանին եւ Նորին միջեւ: Աւանդաբար կը կարծուի, որ սղոցումով նահատակուած է Մանասէ ամբարիշտ թագաւորին կողմէ: Եսայի կը տօնուի առանձինն, Վարդավառի յաջորդող Հինգշաբթիին:

Յոյնք կը յիշատակեն Մայիս 9ին: Իսկ Լատինք՝ Յուլիոս 6ին:

26. ԵՐԵՄԻԱ

Աստուածաշունչի ուրիշ մեծագոյն դէմքերէն մէկն է նաեւ Երեմիա մարգարէն: Ս. գրական դէմքերէն քիչերու մասին այնքան շատ ու այնքան վաւերական տեղեկութիւններ ունինք, յատկապէս իր ներաշխարհին եւ հոգեկան ապրումներուն, որքան իր մասին, գրուած ուղղակի իր գրչէն:

Մնած է նախ քան Քրիստոս 650ական թուականներուն, Երուսաղէմէն ոչ շատ հեռի Անաթովթ գիւղը: Թէեւ սերած է քահանայական գերդաստանէ, բայց երբէք քահանայագործութիւն չէ ըրած, ընդհակառակը ձաղկած է անոնց կենցաղը եւ բախումներ ունեցած անոնց հետ: Իր գործունէութիւնը եւ քարոզութիւնը տեղի ունեցած է Երու-

սաղէմի մէջ, մինչեւ այս քաղաքին անկումը: Երեմիայի կոչումը տեղի ունեցած է հետեւեալ պայմաններու ներքեւ՝ ըստ իր վկայութեան.

Տիրոջ խօսքը ինձի ուղղուեցաւ այսպէս՝ «Որովայնի մէջ տակաւին դուն չէիր կազմաւորուած, երբ կը ճանչնայի քեզ եւ արգանդէ չեյած սրբեցի քեզ եւ ազգերու մարգարէ նշանակեցի»: Ու ես ըսի. «Ախ, Տէր, ես խօսիլ անգամ չեմ գիտեր, մինչեւ իսկ դեռ մանուկ եմ»: «Ախ, Տէր, ես խօսիլ անգամ չեմ գիտեր, թէ մանուկ եմ ես, որովհետեւ պիտի Տէրը պատասխանեց. «Մի ըսեր, թէ մանուկ եմ ես, որովհետեւ պիտի երթաս բոլոր անոնց, որոնց պիտի ղրկեմ քեզ եւ ինչ որ պատուիրեմ քեզի, պիտի խօսիս զայն: Մի վախնար մարդոցմէ, ես քեզի հետ եմ եւ պիտի փրկեմ քեզ»:

«Եւ Տէրը երկարեց իր ձեռքը ինձի եւ դպաւ բերանիս ու ըսաւ՝ «Ահա ես քեզի ազգերու եւ թագաւորներու վրայ՝ խլելու ու բռնելու, քակելու եւ հիմնայատակ ընելու, շինելու եւ տնկելու» (Երեմ. Ա 4-10): Բայց միւս կողմէն գիտցած ըլլաս, - աւելցուց աստուածային ձայնը. - որ թագաւորներ ու իշխաններ, քահանաներ եւ ժողովուրդը պիտի պայքարին քեզի դէմ, բայց պիտի չկրնան յաղթահարել քեզի, վասնզի ես քեզի, հետ եմ եւ պիտի ազատեմ քեզ բոլոր փորձանքներէ»:

Արդարեւ Երեմիայի կեանքը տառապէս իրականացումը եղաւ աստուածային այս պատգամին: Քիչեր այնքան շատ տառապած են, որքան Երեմիա, թէ՛ հոգեպէս եւ թէ՛ ֆիզիքապէս: Քիչեր այնքան անժողովրդական ու իր սրտին հակառակ պատգամներ հարկադրուած են տալ, որքան Երեմիա:

Հակառակ երիտասարդ տարիքին կանչուած ըլլալուն, կամ այդ իսկ պատճառով, ուժգնօրէն եւ սրտովին կապուեցաւ իր մարգարէական կոչումին՝ հրաժարելով ընտանիք կազմելու պարտաւորութենէն եւ կեանքի բոլոր հաճոյքներէն:

Երբ իր ժողովուրդը անսրբագրելիօրէն ինկած էր կռապաշտութեան եւ ընկերային անարդարութեանց մէջ, նախատեսեց Երուսաղէմի եւ Տաճարի կործանումը. այս իսկ պատճառով նետեցին զայն ջրհոր մը, որուն ջուրը թէեւ ցամքած, բայց յատակը լեցուած էր

ցեխով: Օրեր վերջ պալատականներէն մէկին բարեխօսութեամբ հանուեցաւ հորէն:

Բարեխօսան գորացած էր եւ գրաւած շրջակայ երկիրները մինչեւ Հրէաստան, ու իր բանակները եկած պաշարած էին Երուսաղէմը: Երեմիա, նախատեսելով, որ դատապարտուած էր Երուսաղէմ քաղաքը, կը յանձնարարէ անձնատուր ըլլալ եւ Բաբելոնացոց բարեկամութիւնը մշակել ընդդէմ Եգիպտոսի: Օրուան թագաւորը ոչ միայն մտիկ չըրաւ, այլ նաեւ չարչարեց ու բանտարկեց զայն: Երբ քաղաքը գրաւուեցաւ 586ին, Նաբուզոդոնոսորի կողմէ, Երեմիա բանտի մէջ էր: Նաբուզոդոնոսոր, իմանալով անոր քաղաքական ուղղութիւնը, ազատ արձակեց զայն եւ առաջարկեց պատուով Բաբելոն տանիլ զինք: Երեմիա նախընտրեց մնալ իր ժողովուրդի «աղքատ» մնացորդացին հետ: Սակայն երբ անուղղայ ըմբոստներ սպաննեցին Բաբելոնի թագաւորին նշանակած կառավարիչը, եւ գիտնալով իրենց գլխին գալիքը, իրենք կը փախչէին Եգիպտոս, ծերացած Երեմիան ալ բռնի իրենց հետը տարին, ուր մեռաւ Աստուծոյ տառապած այս ծառան, ըստ ականդութեան, քարկոծուելով իր ժողովուրդէն, որուն անօրէնութիւնները շարունակ իրենց աչքին առջեւ դնելը իրեն համար Աստուծոյ կողմէ նշանակուած պարտականութիւն կը նկատէր:

Բոլոր մարգարէներու պէս, եւ անոնցմէ աստիճան մը աւելի, փոյնեան էր ընկերային արդարութեան եւ ճշմարիտ աստուածաշատութեան: Շարունակ կը պատգամէր.

«Փոխեցէք ձեր ընթացքը. իրարու հետ արդար եւ ուղիղ ապրեցէք. օտարականը, որբը եւ այրին մի հարստահարէք, արդար եւ անմեղ արիւն մի թափէք, օտար աստուածներու ետեւէ մի երթաք ի կործանումն ձեր անձին» (Երեմ. է 1-6 Բղբ. Ե 25-29):

Ապրած ըլլալով եղբրական շրջանի մը մէջ եւ պարտաւորուած ըլլալով հայրենասիրական զգացումներուն հակառակ պատգամներ տալ՝ Երեմիա դարձած էր շատ զգայուն հոգի մը: Զաղկելով հանդերձ անոնց անօրէնութիւնները, շարունակ կը բարեխօսէր իր ժողովուրդին համար առաջի Աստուծոյ: Այն աստիճանի հասաւ իր ժողովուրդին ամբարշտութիւնը, որ Աստուած այս մխիթարութենէն ալ զրկեց զայն. «Այլեւս մի աղօթեր այս ժողովուրդին համար, անոնց վրայ ողորմութիւն մի խնդրեր, մի բարեխօսեր անոնց համար, որովհետեւ այլեւս

պիտի չլսեմ քեզի: Ձե՞ս տեսներ ինչեր կը պատահին Հրէաստանի քաղաքներուն եւ Երուսաղէմի փողոցներուն մէջ»: Ամէն կողմ տարածուած էր կռապաշտութիւնը ու կը շարունակէ Աստուծոյ ճայնը. «Կը կարծե՞ս, որ այս կերպով զիս կը բարկացնեն. ո՛չ, այլ իրենք զիրենք կ'անարգեն՝ ծածկելով իրենց անձերը ամօթով» (Երեմ. է 16-20):

Տեսնելով իր ժողովուրդը անդառնալիօրէն մոլորած եւ նախատեսելով անոնց գլխուն չարիքներ՝ յաճախ ինքզինքը կուտար լացի եւ ողբի: Արդարեւ ունի իր գիրքին մէջ բազմաթիւ ողբեր եւ իրեն կը վերագրուի «ՈՂԲ ԵՐԵՄԵԱՅ» կոչուած գիրքը: Սերտ նմանութիւններ կան իր եւ Յովբի միջեւ: Իր գիրքին Ի գլուխին 14-18 համարները կը յիշեցնեն Յովբին անէծքը իր ծնած ըլլալուն համար, իսկ նախորդ համարները՝ անոր տրտուեցումները:

Այս բոլորով մէկտեղ ամբողջ իր կեանքի եւ վիշտերու ընթացքին սերտօրէն եւ շարունակաբար ինքզինքը կապուած զգաց Աստուծոյ հետ: Իր նախատեսութիւնը Երուսաղէմի կործանման եւ իր լացը անոր վրայ ու մանաւանդ իր տառապանքները եւ վիշտերը իր ժողովուրդին համար եւ հոսկ ապա, անոնցմէ քարկոծուելով, մեռնիլը եւ յարմարապէս զինքը կը կացուցանեն նախատիպը Քրիստոսի:

Երեմիա կը տօնուի առանձինն, Վերափոխման յաջորդող երկրորդ Հինգշաբթին: Յոյնք եւ Լատինք՝ Մայիս 1ին:

27. ԵԶԵԿԻԷԼ

Թէեւ ժամանակակից է Երեմիա մարգարէին, սակայն որքան շատ եւ ստոյգ էին մեր գիտցածները Երեմիայի մասին, նոյնքան քիչ եւ անորոշ են մեր տեղեկութիւնները Եզեկիէլի մասին: Աստուածաշունչի ոչ մէկ ուրիշ գիրքին մէջ յիշուած է ան, իսկ իր մեծակալ գիրքին մէջ շատ քիչ բան ըսուած է իր մասին: Իր անունն անգամ լոկ երկու անգամ յիշուած է իր գիրքին մէջ, ընդդէմ Երեմիայի անուան աւելի քան տասը անգամ յիշատակութեան:

Եզեկիէլի մասին մեր ամբողջ գիտցածը խտացած է իր գրքին սկիզբի քանի մը համարներուն մէջ՝ ըստ հետեւեալի:

«Երեսներորդի տարին, չորրորդ ամսուան հինգին, երբ ես Քոբար գետի ափին գտնուած աքսորականներու մէջ էի, Երկինքը բացուե-

ցաւ, ու ես Աստուծոյ տեսիլքը ունեցայ: Այդ տարին Յովաքին թագաւորին գերութեան հինգերորդ տարին էր: Եւ Աստուծոյ խօսքը եկաւ Եզեկիէլ քահանային, Բուգդի որդի, Քաղղէացուց երկրին մէջ, Քոբար գետի ափին, եւ Հոն Տիրոջ ձեռքը իմ վրաս եղաւ» (Եզեկ. Ա 1-3):

Վերոյիշեալ «Երեսներորդ տարին» մենք կը հասկնանք իբրեւ իր տարիքը, այսինքն երբ երեսուն տարեկան էր: Քոբար գետը կը նկատուի Եփրատի մէկ ջրանցքը, Բաբելոնի մօտ: Իսկ Յովաքին թագաւորը Երուսաղէմի վերջընթեր թագաւորն է, որ նախ քան Քրիստոսի 597 թուականին գերի տարուեցաւ Բաբելոն: Նաբուգոդոնոսը թագաւորի կողմէ ամբողջ արքունի անձնակազմով, ժողովուրդի մեծամեծներով եւ քաղցեանի դասակարգով, ընդամենը՝ աւելի քան տասը հազար հոգի, (Դ Թագ. Ի Դ 10-16): Ուրեմն ասոնց մէջն էր նաեւ Եզեկիէլ քահանան: Որով իր մարգարէական կոչումը տեղի կ'ունենայ 592 թուականին, Ն. Ք., Բաբելացուց աշխարհին մէջ, աքսորական վիճակի մէջ:

Աստուած կ'ըսէ իրեն. «Որդի մարդոյ (Եզեկիէլի համար շարունակ այս կոչումը կը գործածուի իր գիրքին մէջ, շուրջ 87 անգամ): Ես քեզ կը ղրկեմ Իսրայէլին, ապստամբ ժողովուրդի մը... Երբ ըսես անոնց՝ «Այսպէս կ'ըսէ Տէրը», պիտի հասկնան, որ մարգարէ մըն ես դուն անոնց մէջ, հոգ չէ, թէ քեզի մտիկ ընեն կամ մերժեն լսել քեզ, որովհետեւ ըմբոստ ժողովուրդ մըն է, բայց դուն, մարդու որդի, պէտք չէ վախնաս անոնցմէ, կամ անոնց խօսքերէն, թէ եւ անոնք պիտի ըմբոստանան քեզի դէմ, եւ դուն ինքզինքդ պիտի զգաս կարիճներուն մէջ, երբեք պիտի չվախնաս ինչ որ ալ ըսեն քեզի, եւ անոնց սպառնալից կերպարանքէն պիտի չզարհուրիս: Պիտի տաս իմ պատգամներս անոնց, անոնք լսեն կամ մերժեն լսել: Սակայն դուն, մարդու որդի, պէտք է լսես իմ պատգամներս եւ անոնց պէս ապստամբ չըլլաս: Բաց բերանդ ու կեր՝ ինչ որ կուտամ քեզի:

«Ու ես տեսայ ձեռք մը, որ դէպի ինձի կ'երկարէր, գիրք մը բռնած. բացաւ զայն իմ առջեւ... գրուած էր ամբողջութեամբ ներսով եւ դուրսով եւ կը պարունակէր ողբեր, եղբերք եւ վայեր: Յետոյ ըսաւ ինձի. «Մարդու որդի, կեր քեզի մատուցուածը, կեր գիրքը, ապա գնա եւ խօսէ Իսրայէլի որդիներուն»): Ուստի բացի բերանս, ու ան ջամբաց ինձի գիրքը: Եւ աւելցուց. «Մարդու որդի, կլլէ քեզի

տրուած այս գիրքը, եւ որովայնդ թող լեցուի անով»: Ու ես կերայ զայն. մեղրի պէս անուշ էր» (Բ 3-9 եւ Գ 1-3): Վերջին պատկերալից խօսքին իմաստն այն է, թէ ինք սիրով եւ քաղցրութեամբ կը համակերպէր Աստուծոյ կանչին, թէ իսկ իր պարտականութիւնը ըլլար ողբալ այս ժողովուրդին ըմբոստ նկարագիրը եւ վայեր կարգալ Հարկադուէր անոնց հասցէին:

Ու կ'եզրակացնէ աստուածային ձայնը. «Մարդու որդի, գիտող կարգեցի քեզ Իսրայէլի տան վրայ. ինձմէ պատգամներ պիտի լսես եւ պիտի զգուշացնես զանոնք, եթէ անօրէնին ըսեմ, թէ անպատճառ պիտի մեռնիս, ու դուն չզգուշացնես զայն, որ դառնայ իր չար ճանապարհէն, այն անօրէնը արդարեւ պիտի մեռնի իր անօրէնութեան համար, սակայն անոր արիւնը քեզմէ պիտի պահանջուի: Իսկ եթէ դուն զգուշացնես անօրէնը, ու ան չդառնայ իր չար ճանապարհէն, պիտի մեռնի թէ եւ իր անօրէնութեան պատճառով. բայց դուն ազատ պիտի մնաս մեղադրանքէ» (Գ 16-21):

Եւ իրարու կը յաջորդեն խորհրդաւոր եւ պատկերալից տեսիլքները, ազդարարութիւնները եւ գուշակութիւնները յատկապէս Երուսաղէմի կործանման եւ շրջակայ եօթը ազգերու դէմ: Նշանաւոր է յատկապէս Եզեկիէլի տեսիլքը չորրորդ ոսկորներու, որոնք աստուածային շունչով կը վերակենդանանան եւ յարութիւն կ'առնեն (Գլուխ Լ է):

Քառասունութ զլուխներէ բաղկացած իր գիրքին մէջ չկայ այլ լեւս ոչ մէկ ակնարկութիւն իր կեանքին վերաբերեալ: Իր վախճանի մասին ալ ոչինչ գիտենք Ս. Գիրքէն: Յայսմատուրքեան աւանդութեան մը համաձայն մեռած ու թաղուած է Բաբելոնի մէջ՝ սպաննուելով իր ազգակիցներէ:

Իր դատապարտող պատգամներու կարգին Եզեկիէլ ունի նաեւ յուսալից եւ դրական տողեր: Օրինակ՝ կը մարգարէանայ, որ թէ եւ Իսրայէլացիներ գերի պիտի տարուին օտար երկիրներ, բայց Աստուած կ'ըսէ. «Վերստին պիտի ժողովմե՞զ զձեզ այն երկիրներէն, ուր ցրուած էք, եւ վերստին պիտի տամ ձեզի Իսրայէլի երկիրը: Ու երբ ցրուած էք, եւ վերստին պիտի տամ ձեզի Իսրայէլի երկիրը, պիտի վերցնեն մէջտեղէն կուսպաշտութեան գարշելի գործերը եւ պղծութիւնները: Անոնց տարբեր սիրտ մը պիտի տամ, եւ անոնց մէջ նոր ոգի մը պիտի դնեմ: Պիտի հանեմ

անոնց մէջէն քարեղէն սիրտը եւ պիտի տամ անոնց մսեղէն սիրտ, որպէսզի իմ հրամաններու համաձայն ընթանան, օրէնքներս պահեն եւ գործադրեն: Ու անոնք իմ ժողովուրդս պիտի ըլլան եւ ես՝ անոնց Աստուածը» (ԻԱ 16-21):

Եզեկիէլն է ըսողը Աստուծոյ կողմէ. «Մեղաւորին մահը չէ, որ կ'ուզեմ, այլ՝ անոր դառնալը չար ճանապարհներէն եւ վերապրիլը» (Լ Գ 11): Ահաւոր են իր մարգարէութիւնները ժողովուրդի «Հովիւներուն դէմ» (Գլուխ Լ Դ): Գրքին վերջին գլուխները կը պարունակեն մարգարէութիւններ իր ժողովուրդի փրկութեան եւ վերակազմութեան: Որչափ ալ շեշտը կը դնէ անհատի պատասխանատուութեան վրայ, իր անկումին կամ բարձրացումին մէջ, բայց միւս կողմէ կը հաւատայ իր ժողովուրդի հաւաքական բնոյթի կարեւորութեան: Այս իրողութիւնը ի յայտ կուգայ, երբ այնքան մանրամասնօրէն կը նախատեսէ իր վերածննդ ժողովուրդի պաշտամունքին ձեւերը (Գլուխ Խ, ԽԸ):

Նոր Կտակարանին մէջ ոչ մէկ ուղղակի մէջբերում կայ Եզեկիէլէն, սակայն իր գիրքին մէջ նախատեսուած քահանայական եւ մարգարէական ոգիի միացեալ ներկայացումը կը կազմէ այն յատակը, որուն վրայ կը կառուցուի Աւետարանի վերանորոգեալ կրօնքը:

Եզեկիէլ կը տօնուի Եգրի եւ Յովհ. Հօր Զաքարիայի Հետ, Վերափոխման յաջորդող երրորդ Երեքշաբթիին:

Յոյնք՝ Յուլիս 23ին. Լատինք՝ Ապրիլ 10ին:

28. ԴԱՆԻԷԼ

Եզեկիէլի պէս Դանիէլ ալ մէջն էր այն գերիներուն, որոնք Բաբելոն տարուեցան 597 թուին Ք., իրենց թագաւորին եւ մեծամեծներուն Հետ: Դանիէլ շատ երիտասարդ էր գերի տարուած ատեն, այնպէս որ ինք ալ մաս կազմեց այն տղաքներուն, որոնք ընտրուեցան Իսրայէլացի գերիներու մէջէն դաստիարակուելու եւ ի վերջոյ պետական պաշտօններու վրայ դրուելու համար: Այս տղաքները պիտի ըլլային, ըստ արքայական հրահանգին. «Թագաւորական կամ իշխանական տուններէ, գեղեցիկ տեսքով, մարմինով անթերի, իմաստութեան հակամէտ եւ գիտութեան ատակ, ուշիմ եւ յարմար՝ արքունական պաշտօնավարութեան»:

«Ասոնք պիտի դաստիարակուէին Քաղղէացոց լեզուով եւ գարութեամբ» (Դան. Ա 3-7): Պիտի ուտէին արքայական սեղանէն. իրենց դաստիարակութիւնը երեք տարի պիտի տեւէր, որմէ վերջ պիտի մտնէին ծառայութեան: Դանիէլի Հետ էին նաեւ իր երեք ընկերները՝ Անանիա, Ազարիա եւ Միսայէլ, որոնց անունները փոխեց իրենց վերակացուն եւ տեղական անուններ դրաւ. Դանիէլին տուաւ Պաղտասար անունը, Անանիային՝ Սեդրակ, Ազարիային՝ Աբեղնազով, Միսասար անունը, Անանիային՝ Սեդրակ, Ազարիային՝ Աբեղնազով, Միսայէլին՝ Միսաք: Սակայն Դանիէլ եւ իր երեք ընկերները իրենց միտքը յէլին՝ Միսաք: Սակայն Դանիէլ եւ իր երեք ընկերները իրենց միտքը չէին չհրաժարիլ իրենց հայրենի կրօնքէն եւ օրէնքներէն, եւ դրած էին չհրաժարիլ իրենց հայրենի կրօնքէն եւ օրէնքներէն, եւ նախատեսելով, որ արքայական սեղանի վրայ պիտի մատուցուէին հրէական օրինաց հակառակ կերակուրներ, ուտի իրենց վերակացուէն խնդրեցին, որ իրենք կերակուրին լոկ ընդեղէնով եւ բանջարեղէնով եւ ջուր գործածեն գինիի տեղ: Տասը օրուան փորձէ մը վերջ վերակացուն երբ տեսաւ, որ բանջարեղէնով եւ ջուրով սնանողները աւելի առողջ երեւոյթ ունէին, քան խորտիկներով եւ գինիով կերակուողները, ընթացք տուաւ անոնց խնդրանքին:

Դանիէլի գիրքին մէջ կան բազմաթիւ Հետաքրքրական եւ սրտազրաւ միջադէպեր, զորս անկարելի է մի առ մի յառաջ բերել, որոնք սակայն կը հաստատեն Դանիէլի աստուածային իմաստութեամբ լեցուած ըլլալը, եւ նախախնամական բացառիկ պաշտպանութիւն վայելեցողը: Օրինակ՝ միջադէպը Շուշան անուն անմեղ կնոջ մը, որուն աչք լիւր էր անկեն երկու վատաբարոյ ծերունիներ, որոնք զրպարտանքի կը տնկեն երկու վատաբարոյ ծերունիներ, որոնք զրպարտանքի կը տնկեն երկու վատաբարոյ ծերունիներ, քան թէ մեղանչել Աստուծոյ առջեւ: զրպարտուիլ ու քարկոծուիլ, քան թէ մեղանչել Աստուծոյ առջեւ եւ քարկոծման Մերերը կը զրպարտեն զայն ժողովուրդին առջեւ եւ քարկոծման Պորոշում հանել կուտան: «Սակայն Աստուած իր հոգին արթնցուց Դանիէլ երիտասարդին վրայ», որ դէպքին միջամտելով՝ պահանջեց երկու ծերերը առանձին-առանձին քննութեան ենթարկել: Ժողովուրդի կու ծերերը առանձին-առանձին քննութեամբ հակասութիւններ բռնեց առջեւ իր իսկ կատարած հարցաքննութեամբ հակասութիւններ բռնեց անոնց վկայութեանց մէջ եւ փոխան անմեղին քարկոծուեցան սուտ վկայութիւն տուող մեղապարտները:

«Դանիէլ մեծ անուն հանեց այն օրէն սկսեալ» (Գլուխ ԺԳ): Սակայն Դանիէլի համբաւը եւ բարձրացումը առաւելաբար սկսաւ, երբ մեկնեց Նաբուգոդոնոսոր թագաւորի մէկ երազը, զոր չէին կրցած

մեկնաբանել անոր «գլխնականները, մոգերը, կախարհները եւ աստղագէտները» (Գլուխ Բ):

Բարձրացումը նախանձ ստեղծեց Դանիէլի Հանդէպ պետական բարձր շրջանակներու մէջ. ու չկարենալով զրպարտիչ պատճառանքներ գտնել այլ մարգերու մէջ, քանի որ Դանիէլ անկաշառ, կարող եւ իմաստուն պետական պաշտօնեայ մըն էր, դպան անոր կրօնքին: Հրահանգ հանել տուին թագաւորէն, թէ ով որ երկրի աստուածներէն զատ ուրիշ աստուածներ պաշտէր, առիւծներու գուրը պիտի նետուէր: Դանիէլ իր տան մէջ վերնատուն մը շինել տուած էր, որուն պատուհանները Երուսաղէմի կողմը բացուած էին: Ամէն օր, Երուսաղէմ դարձած, օրական երեք անգամ անխափան աղօթք կ'ընէր այնտեղ: Այս պարագան յանձնեցին թագաւորին նկատածան: Թագաւորը՝ ստուգելէ յետոյ իրականութիւնը, հարկադրուեցաւ հրամայել, որ նետեն զայն առիւծներուն գուրը: Յաջորդ առաւօտ կանուխ թագաւորը անձամբ գուրին գլուխը եկաւ սգալու Համար Դանիէլը, զոր կը սիրէր եւ որուն վրայ մեծ Համարում ունէր: Կանչեց թագաւորը վերէն թախժուկեամբ. «Դանիէլ, Աստուծոյ ծառայ, արդեօք կրցա՞ւ ազատել քեզ առիւծներու բերնէն քու Աստուծո՞ր, զոր միշտ կը պաշտէիր»: Դանիէլ պատասխանեց. «Արքայ՛, յաւերժ ապրէ, իմ Աստուծոս զրկեց իր հրեշտակը եւ գոցեց առիւծներուն բերանը, եւ ինձի վնաս չհասցուցին, որովհետեւ սիրտս ուղիղ էր Անոր առջեւ, եւ քեզի դէմ ալ ոեւէ յանցանք մը չեմ գործած, Արքայ»: Այն ատեն ուրախացաւ թագաւորը եւ հրամայեց հանել Դանիէլը գուրէն. եւ անոր վրայ ոչ մէկ վնաս նշմարուեցաւ, որովհետեւ իր հաւատքը ամբօրէն դրած էր իր Աստուծոյն վրայ: Չարախօսները նետուեցան գուրին մէջ եւ լափուեցան առիւծներէն (Գլուխ Զ):

Շեշտուած նմանութիւններ կան Յովսէփ Գեղեցիկի եւ Դանիէլի միջեւ:

Երկուքն ալ գերի տարուեցան օտար երկիրներ իրենց մատաղ երիտասարդութեան եւ տիպար երիտասարդներ դուրս եկան եւ բարձրագոյն դիրքերուն տիրացան:

Երկուքն ալ անարդարութեանց ենթակայ եղան, որոնցմէ դուրս եկան փորձուած ու աւելի յղկուած: Երկուքին ալ բարձրացումները սկսան երազներու մեկնութեամբ: Երկուքն ալ անարատ կեանք ապրե-

ցան ապականեալ Հեթանոս շրջանակներու մէջ: Երկուքն ալ մեռան իրենց հայրենիքէն հեռու օտար երկիրներու մէջ:

Դանիէլ Եսայիի տիպարէն մարգարէ մը եղաւ, այսինքն՝ որքան պետական մարդ, նոյնքան եւ աւելի Աստուծոյ մարդը: Իր գիրքին վերջին կէսը խորհրդաւոր եւ պատկերալից տեսիլքներ են, որոնք պատուելով ապագայի թանճր վարագոյրը, լոյս կը սփռեն գալիքին եւ Աստուծոյ ծրագիրներուն վրայ: Յայտնութեանական նկարագիր ունին իր տեսիլքները:

Նոր Կտակարանի մէջ առնուազն մէկ անգամ յիշուած է Դանիէլ Քրիստոսի վերջին յայտնութեանական քարոզին մէջ (Մարկ. ԺԳ 14): Իսկ իր տեսիլքներուն մէջ երեւցած «Մարդու Որդին», որուն եւ իսկ իր տեսիլքներուն մէջ երեւցած «Մարդու Որդին», որուն «տրուեցաւ իշխանութիւն եւ պատիւ ու արքայութիւն, եւ որուն պիտի ծառայեն բոլոր ազգեր եւ լեզուներ, եւ որուն իշխանութիւնը յաւիտեական է եւ անոր թագաւորութիւնը անպակասելի է», տառապէս կը նոյնանայ Նոր Կտակարանի «Մարդու Որդին»՝ Քրիստոսի հետ:

Դանիէլ կը տօնուի մեր եկեղեցիին մէջ իր երեք ընկերներով, Հոգեգալուստին յաջորդող չորրորդ շաբթուան օրը: Յոյներ ալ մեզի պէս կը տօնեն զայն Եւրոպ մանկանց հետ, Դեկտ. 17ին: Իսկ Լատինք առանձին՝ Յուլիս 21ին:

29. ՈՎՍԷ

Ովսէով կը սկսի տասներկու «Փոքր կոչեցեալ մարգարէներու» շաբթը: Ովսէ կ'ապրի եւ կը մարգարէանայ Ն. Բ. Ութերորդ դարուն:

Արդարեւ նախ քան Քրիստոս ութերորդ դարը հարուստ է մարգարէներով: Այս դարուն մէջ կ'ապրին եւ կը գործեն Եսայի, Յովնան, Միքիա, Ամովս եւ Ովսէ: Իր մասին գրեթէ ոչինչ գիտենք, ուստի գէթ Հարեանցի ծանոթանանք իր կրօնական մտածումներուն, որոնք սրուած են տասնըչորս գլուխներէ բաղկացեալ իր գիրքին մէջ:

Ամէնէն յատկանշական երեւոյթը այս մարգարէին մօտ՝ իր դժբախտ ամուսնութիւնն է: Մարգարէները, իրենց պատգամները մտքերու մէջ անջնջելի կերպով գամելու եւ զանոնք տպաւորիչ դարձնելու համար, Աստուծոյ հրամանով յաճախ կը դիմէին արտասովոր եւ տրամադրիկ միջոցներու: Օրինակ՝ մէկը բոկոտն եւ մերկ կը

պատէր փողոցներու մէջ, ըսելու համար, որ այս կերպով գերի պիտի տարուէին օտար երկիրներ: Ուրիշ մը եզան լուծ կը կրէ իր պարանոցին վրայ, ըսելու համար, որ լաւ է այսինչ թագաւորին լուծին տակ մնալը: Իսկ Ովսէ ալ պոռնիկ մը կնութեան կ'առնէ, պատգամելու համար, որ Իսրայէլ պոռնկացած է:

Աստուածաշունչին մէջ, Աստուծոյ հանդէպ ցոյց տրուած անհաւատարմութիւնը առհասարակ կը կոչուի պոռնկութիւն: Ըսել կ'ուզէր մարգարէն. թէ եւ ամուսնացած եմ այս կնոջ հետ, բայց իրականին մէջ իմ կինս չէ ան, քանի որ ինծի անհաւատարիմ է եւ ուրիշներու հետ կը կենակցի. այնպէս էք նաեւ դուք, ով Իսրայէլացիներ, թէ եւ Աստուծոյ հետ ուխտ կնքած էք, բայց օտար աստուածներ կը պաշտէք:

Այս կնոջմէ ծնած զաւակներուն ալ խորհրդաւոր անուններ կը դնէ. առաջինը կը կոչէ «Եզրայէլ», յիշեցնելու համար օրուան թագաւորական գերզատանի Հիմնադիր Յէու զօրավարին արիւնահեղութիւնը, զոր ըրած էր ԵՁՐԱԷԼԻ մէջ, բնաջնջելու համար Աքաաբ կռապաշտ թագաւորի ընտանիքը: Քանի որ օրուան թագաւորներն ալ կռապաշտութեան մէջ ինկած էին հետեւաբար անոնք ալ նոյն գատաստանով պիտի պատժուէին: «Պիտի դադրեցնեմ Իսրայէլի թագաւորութիւնը», - կ'ըսէ Աստուած մարգարէին բերանով, ինչ որ արդարեւ տեղի ունեցաւ 722 թուականին Ն. Ք.:

Երկրորդ զաւակը կոչեց «ՉՈՂՈՐՄԵԱԼ», որովհետեւ այլևս «պիտի չողորմեմ Իսրայէլի», - կ'ըսէ Աստուած:

Երրորդը կը կոչէ «Ո՛չ Ժողովուրդ իմ», յայտարարելու համար, որ Իսրայէլ դադրած է այլևս Աստուծոյ ժողովուրդը ըլլալէ:

Արդարեւ Ովսէի դիրքին մեծագոյն մասը Իսրայէլի անհաւատարմութիւններուն ձաղկումն է, իսկ վերջին գլուխը կոչ մըն է ապաշխարանքի, ապագայի երջանկութեան խոստումներով ընդելուզուած, եթէ սրտանց վերադառնային Աստուծոյ:

Բոլոր մարգարէներն ալ պատկերալից լեզու կը գործածեն, անոնցմէ շատ կան Ովսէի գիրքին մէջ օրինակներ:

«Հաղորդ կռոց». կռապաշտ ըսելու տեղ:

«Նկան չդարձուցեալ». մէկ կողմէ միայն եփուած նկանակ, հաց, այսինքն՝ իր սրտին մէկ կողմը միայն եւ ոչ թէ ամբողջապէս Աստուծոյ տրուած:

«Կերան օտարք զգօրութիւն Իսրայէլի». այսինքն՝ Իսրայէլ տկարացած եւ հիւժած է օտարներու հետ խառնակեցութեամբ:

«Ընկղմեցաւ Իսրայէլ». կորսնցուց իր ազգային ինքնութիւնը, կրօնական նկարագիրը:

«Անօթ Անպիտան». անպէտ առարկայ, ոչնչութիւն:

«Կշիռ անիրաւութեան». առեւտուրի մէջ խաբեբայ:

Յոյնք՝ Հոկտ. 17ին: Լատինք՝ Սեպտ. 1ին:

Երկոտասան Մարգարէից յիշատակը կը կատարենք Մենդեան Գ Կիրակիի յաջորդող Գ2 օրը:

30. ՅՈՎԵԼ

Իր մասին ալ գրեթէ ոչինչ գիտենք բացի անունէն եւ հայրանունէն, որոնք արդարեւ բոլոր մարգարէական դիրքերուն սկիզբը չըրուած են: Իր գրութեան ոճէն եւ ակնարկութիւններէն զատելով՝ կը կարծուի, որ մարգարէացած է Երուսաղէմի մէջ, Ե դարուն Ն. Ք., այսինքն՝ Իսրայէլեան գերութենէն յետոյ:

Իր մարգարէութեան առիթ տուած է մարախներու աննախընթաց պատուհաս մը, որուն յաջորդած է ահաւոր երաշտ մը, չորութիւն մը, զորս Յովել նկատած է իբրեւ աստուածային պատիւ եւ խորհրդանշան «Տիրոջ օրուան» եւ առիթ նկատած է այս երեւոյթները ժողովուրդը ապաշխարանքի հրաւիրելու:

Իր գրքոյկը կը բաղկանայ երեք գլուխներէ, որոնց առաջինը վերոյիշեալ պատուհասներու բանաստեղծական նկարագրութիւնն է: Երկրորդ գլուխին մէջ այս պատուհասները կը նկատէ իբրեւ ազգաբերանը եւ խորհրդանշանները «Տիրոջ օրուան», որ բանալի բառն է զրջոյկին, եւ զոր կը նկարագրէ ահաւոր գոյներով: Իսկ վերջին գլուխը Աստուծոյ գատաստանն է հզօր ազգերու, որոնք անիրաւութիւն իւր Աստուծոյ գատաստանն է հզօր ազգերու, որոնք անիրաւութիւն կ'ընեն փոքր ազգերուն: Այս վերջիններուն արգարութիւն պիտի

կոտորող եւ հարթող արշաւանքներուն մէջ: Անոնք գործիքները եւ գործադրիչներն են իր արդար դատաստանին, «Տիրոջ օրուան», որմէ փախուստ չկայ ոչ մէկ ազգի կամ արարածի համար, ըլլայ երկրի վրայ եւ ըլլայ երկինքի մէջ: Եւ մէկ եւ նոյն այդ «Տիրոջ օրը» ոմանց համար՝ անկումի ոմանց համար ալ բարձրացումի օր պիտի ըլլայ: Մինչեւ իսկ ինքը՝ մարգարէն, գործիքն է աստուածային այդ արդարութեան՝ մահ սպառնալով մեղաւորներուն եւ երջանկութիւն՝ արդարներուն:

Յոյնք՝ Յունիս 15, Լատինք՝ Մարտ 31:

32. ԱՐԴԻՈՒ

Ոչինչ գիտենք իր մասին, բացի անունէն: Հայրանունն անգամ չէ յիշուած: Իր գիրքը միակ գլուխէ մը բաղկացած՝ կարճագոյնն է ամբողջ Հին Կտակարանին: Կը բովանդակէ ուժգին պատգամ մը ընդդէմ Եղովմի: Իրարու ցեղակից այս երկու ժողովուրդները՝ Եղովմացիք եւ Իսրայէլացիք, ամբողջ իրենց պատմութեան ընթացքին իրարու թշնամի եղած են, մինչեւ որ Եղովմայեցիք խառնուած եւ ձուլուած են Իսրայէլի եւ արաբներու մէջ: Մարգարէութիւնը գրուած կը նկատուի նախ քան Քրիստոս Ե դարուն, Իսրայէլի գերութենէ յետոյ, երբ Եղովմայեցիք մեծ նեղութիւններ տուին նորադարձ Հրեաներու:

Յոյնք եւ Լատինք՝ Նոյեմբեր 19:

33. ՅՈՎՆԱՆ

Գրքին սկիզբը յիշուած անունով եւ հայրանունով մարգարէ մը կը յիշուի արդարեւ Դ Թագ. ԺԴ 25ին մէջ: Իսրայէլի Յերոբոամ Բ թագաւորը երկրին սահմանները ընդարձակեց «Համաձայն Իսրայէլի Տէր Աստուծոյ պատգամին, զոր խօսեցաւ իր ծառային՝ Ամթէի որդի Գեթթոբեբացի Յովնան մարգարէին»: Հարց կը ծագի, թէ այս մարգարէն է գիրքը գրողը. թէ ուրիշ մըն է, որ այս մարգարէին պատմութիւնը մեզի կը ներկայացնէ: Ոչ մէկ նշան կայ, որ գրողը Յովնան մարգարէն եղած ըլլայ. այլապէս՝ ինք ըլլալով ժամանակակից Ամովսի Ութերորդ դարու առաջին կէտը Ն. Ք. անոր հետ առաջին գրող մարգարէներէն մէկը պիտի լինէր: Առ հասարակ այնպէս կը նկատուի, որ այս գիրքը գրուած է Իսրայէլի գերութենէն յետոյ, Ե դարուն Ն. Ք.:

Տարբեր է այս գիրքը մարգարէական միւս գիրքերէն անով, որ փոխանակ պատգամներ պարունակելու՝ կը պատմէ արկածները մարգարէի մը, որուն կը յանձնուի ամէնէն անհաճոյ պարտականութիւնը. այսինքն՝ ապաշխարանք քարոզել Իսրայէլի ամէնէն ատելի ժողովուրդի մայրաքաղաքին՝ Նինուէի մէջ:

Հետեւաբար զարմանալի է, որ Յովնան նախ կը փորձէ փախչել այս պարտականութենէն, բայց ի վերջոյ կը համակերպի աստուածային հրամանին, այն յոյսով, որ ամենայն հաւանականութեամբ Նինուէ պիտի չապաշխարէր, եւ հետեւաբար պիտի կործանէր: Բայց Նինուէ պիտի չապաշխարէր, եւ հետեւաբար պիտի կործանէր կ'անսան իր առաջին զարմացողը ինք կ'ըլլայ, երբ Նինուէացիներ կ'անսան իր քարոզութեան, որ հինգ բառերէ կը բաղկանար. «Երեք օրէն Նինուէ պիտի կործանի»: Կը զղջան, կ'ապաշխարեն եւ դարձի կուգան: Ու Աստուած կը խնայէ քաղաքին:

Գիրքին նպատակն է շեշտել, թէ Աստուած այնքան Տէր եւ հոգածու է հեթանոս ազգերուն՝ որքան Իսրայէլին: Կը պատմէ մեղքը, ուր որ ալ ըլլայ, Իսրայէլի կամ հեթանոսներու մէջ: Կը խնայէ ապաշխարողին, ուր որ ալ պատահի, Իսրայէլի մէջ կամ հեթանոսներու մօտ:

Այս առումով այս առակի ձևով գրուած գիրքը եւ առակի նպատակ հետապնդող գիրքը ամէնէն մօտիկն է Նոր Կտակարանի ուսուցման, որ կը հաստատէ, թէ Աստուած «իր արեգակը կը ծագեցնէ չարերու եւ բարիներու վրայ, անձրեւ կը բերէ արդարներու եւ մեղաւորներու վրայ» (Մատթ. Ե 45):

Մենք, բացի յիշելէ Յովնանը, «Երկոտասան մարգարէից» հետ կը յիշատակենք զայն եւ ապաշխարանքի իր քարոզութիւնը Առաջաւորաց Պահքի Ուրբաթ օրը: Յոյնք եւ Լատինք՝ Սեպտ. 21ին:

34. ՄԻՔԻԷ՝

Ժամանակակից է Ամովս, Ովսէ եւ Եսայի մարգարէներուն, որոնց հետ միասին կը կազմեն այն քառեակը, որ ստեղծեց ոսկեդարը Հին Կտակարանի գրող մարգարէներու, ութերորդ դարուն նախ քան Քրիստոս: Հետաքրքրական է նշել, որ այս չորսը կը ներկայացնեն գրեթէ բոլոր խաւերը ժամանակակից ընկերութեան: Ամովս լեռնական

Հովհաննէս մըն է Հարաւէն կը ներկայացնէ խաշնարած գիւղացիութիւնը: Անկէ Հոգազորք մըն է Հիւսիսի բերրի դաշտերէն: Եսայի արիստոկրատ մըն է՝ աճած արքունիքի մէջ, եւ մշակուած միտք մը՝ երկրի մայրաքաղաքին մէջ: Իսկ Միքիէ երկրի արեւմտեան սահմանամերձ գիւղէն արհեստաւոր մըն է. կը ներկայացնէ աշխատաւոր դասակարգը:

Թէ ինչո՞ւն է և ի՞նչ պայմաններու ներքեւ տեղի ունեցաւ իր կողմէն բացայայտ չէ, բայց իր գիրքին հետեւեալ ակնարկութիւնը կը շարունակուի իբրև սկիզբը եւ դրդապատճառը իր կոչումին.

«Բայց ես լեցուեցայ Տիրոջ Հոգիին զօրութեամբ պատմելու Համար Յակոբի տան՝ իր ամբարշտութիւնը եւ Իսրայէլին՝ իր մեղքերը» (Գ, 8):

Ապա կը յաջորդէ իր պատգամներուն խտացումը.

«Լեցէ՛ք ասիկա, Յակոբի տան առաջնորդներ եւ Իսրայէլի տան իշխաններ, որ կ'անարգէք արդարութիւնը եւ կը ծռէք զայն իր ուղիղ ընթացքէն, կը շինէք Միտնը արիւնով եւ Երուսաղէմը՝ անիրաւութեամբ: Անոր առաջնորդները կաշառքով կը դատեն, անոր քահանաները վարձքով կը կատարեն իրենց պաշտօնը, անոր մարգարէները դրամով կուտան իրենց գուշակութիւնը: Այս բոլորով Հանդերձ տակաւին Տիրոջ կ'ապաստանէին ու կ'ըսէին. Ձէ՞ որ Տէրը մեզի հետ է, ուստի չարիք պիտի չգայ մեր վրայ: Հետեւաբար ձեր պատճառով Միտն Հերկուած Հող պիտի ըլլայ, Երուսաղէմը՝ աւերակոյտ մը, եւ տաճարի բլուրը՝ մայրիկի անտառ» (Գ 9-12):

Այն մեղքերը, որոնք յատկապէս յիշուած ու դատապարտուած են Միքիայի կողմէ հետեւեալներն են.

Կուսապաշտութիւնը. «Պիտի քանդեմ անոր բոլոր կուռքերը, զոր Հաւաքեց Սամարիան իր պոռնկութեան իբրև կապէնք-վարձք»:

Չար ծրագիրներ. «Վայ անոնց, որոնք գիշերները չարիք կը ծրագրեն, եւ ցերեկին կը գործադրեն զանոնք»:

Ազատութիւն. «Յանկացան արտերու եւ բռնի գրաւեցին, իրենց աչքը խածած տունին տիրացան, կը կողոպտեն մարդու տունը եւ կը տիրանան անոր ժառանգութեան»:

Կախարդութիւն. «Պիտի վերցնեմ մէջտեղէն բոլոր կախարդներդ, եւ այլեւ Հարցուկներ պիտի չգտնուին քու մէջդ»:

Խարդախութիւն. «Կրնա՞մ անտեսել խարդախուած ձեր չարիքը, կամ կրնա՞մ Հաշուի չառնել ձեր սուտ կշիռները եւ թեթեւ ծանրոցներու պարկերը»:

Ընդհանուր Այլասերում. «Երկիւղած մարդը կորաւ երկրէն, եւ ուղիղ մարդ չմնաց, ամէն մարդ իր ընկերոջ՝ չարիք կը մտածէ: Մի վստահիր դրացիիդ, մի՛ Հաւատար մտիկ բարեկամիդ. անկողինա-կիցէդ զգո՛յշ եղի՛ր, սրտիդ գաղտնիքը մի՛ յայտնե՛ր անոր: Որդիներ իրենց հօր դէմ կ'ելլեն, աղջիկներ իրենց մօր դէմ կ'ապաստամբին, Հարսներ՝ իրենց կեսուրներուն դէմ»:

Կարծես մեր ժամանակները կը նկարագրէ մարգարէն երկու Հա-զար եօթ Հարիւր տարիներ առաջ:

Սակայն մարգարէն, միայն մեղքեր դատապարտելով, չի գոհա-նար. ապագայի յոյսի դռներն ալ կը բանայ.

«Ազգեր պիտի ըսեն. եկէք Տիրոջ լերը ելլենք, թող ցոյց տայ Ան մեզի իր ճամբաները, որպէսզի քալենք իր շաւիղէն... Պիտի գայ ժամանակ, երբ ազգեր պիտի կոտորեն իրենց սուրբը խոփ գայ ժամանակ, երբ ազգեր պիտի կոտորեն իրենց սուրբը խոփ շինելու Համար եւ իրենց գեղարդները՝ մանգաղ շինելու Հա-մար. ազգ ազգի վրայ սուր պիտի չբարձրացնէ, այլեւ պատե-րազմ ընելու դաս պիտի չառնեն, ամէն մարդ Հանգիստ պիտի ապրի իր որթատունկի եւ թղթի շուքին ներքեւ ու ոչ ոք պիտի գարհուրեցնէ զայն...» (Դ 2-4):

Եւ տակաւին ամբողջ Դ գլուխը լեցուն է յուսադրիչ եւ երջանիկ պատգամներով:

Միքիէ այն մարգարէն է, որ նախագուշակած է ոչ միայն Մեսիա-յի գալուստը, այլ նաեւ անոր ծննդեան տեղը. «Եւ դուռն Բեթլեհէմ, տուն Եփրաթայ, թէեւ կրտսեր ես Յուդայի քաղաքներուն մէջ, բայց քեզմէ պիտի ելլէ Իսրայէլի իշխան մը, որուն ծագումը կ'երթայ մինչեւ յաւիտենականութեան Հին օրերը» (Ե 2 Բղդ. Մատթ. Բ 5-6):

Կրնանք ըսել, թէ Միքիայի գիրքը խտացումը եւ միջինն է իր ժամանակակից երեք մարգարէական գիրքերուն. ան իր բարձրագոյն

լուծել, սակայն կը Հայթայթէ լաւագոյն միջոցը չարիքէն վերապրելու: Ամուր կենալ, չերկմտիլ, կառչիլ Հաւատքին, ըլլալ Հաւատարիմ մինչեւ վերջը, հոգ չէ, թէ մարդ բարիքի կամ չարիքի մէջէն կ'անցնի, իրական նշաններն են «արդար» մարդուն:

«Արդարը իր Հաւատքով պիտի փրկուի», (Բ 4) գրքին կեդրոնական այս Հաւաստումը կարեւոր դեր կատարած է Բրիտանոնէական մտածումին մէջ. յիշուած է այն իբրեւ կեդրոնական գաղափարներէն մէկը Պօղոս Առաքեալի (Հռոմ. Ա 17, Գաղ. Գ 11, Եբր. ԺԱ 38): Բողոքական շարժումին իբրեւ լծակ ծառայած է այս խօսքը:

Այս փոքրիկ գրքոյկը եզրակացութեան կը բերուի Հոյակապ աղօթքով մը, աւելի շիտակ գոհաբանական սաղմոսով մը, ուր մարգարէն կը յայտնէ իր գոհութիւնը եւ ուրախութիւնը, Հաւատքը եւ վստահութիւնը Աստուծոյ վրայ (Գլուխ Գ):

Յոյնք՝ Դեկտ. 2, Լատինք՝ Յնվր. 15:

37. ՍՈՓՈՆԻԱ

Արքայական ցեղէ կը սերի Սոփոնիա, ըլլալով թոռան թոռը Եզեկիա բարեպաշտ թագաւորին: Ապրած է Հրէաստանի Յովսիա բարեկարգիչ թագաւորի օրով (638-608 Ն. Ք.), Երուսաղէմի մէջ: Մարգարէացած է Ն. Ք. 625ական թուականներուն, եւ Հաւանաբար մասնակցած է Յովսիա թագաւորի բարեկարգական ձեռնարկներուն, Ոզդա մարգարէութիւնի եւ Երեմիայի հետ Ն. Ք. 621 թուականին:

Սոփոնիայի գիրքն ալ կը բաղկանայ երեք գլուխներէ, որոնցմով կը յայտարարէ «Տիրոջ Օր»ուան մօտենալը: Զրհեղելի մաքրագործումը յիշեցնող սպառնալիքով կը սկսի իր պատգամներուն շարքը:

«Ի սպառ պիտի փճացնեմ ամէն ինչ, - կ'ըսէ Տէրը, - պիտի կորսնցնեմ մարդը եւ անասունը, երկնքի թռչունները եւ ծովի ձուկերը. ու այդ բոլորին հետ պիտի վերցնեմ աշխարհէ գայթակղութիւնները, զանոնք գործողներով միասին»:

Ու մուսլ գոյներով կը պատկերացնէ «Տիրոջ Օրը» իբրեւ՝ «Օր բարկութեան, օր նեղութեան եւ վտանգի, օր թշուառութեան եւ ասպականութեան, օր խաւարի եւ մէգի, օր ամպի եւ մառախուղի, օր փողի եւ մարտական աղաղակի...», որովհետեւ Տիրոջ դէմ մեղք գործեցին,

եւ Անոր սնտիքներուն վրայ դրին. (այսինքն՝ ճշմարիտ Աստուծոյ միայն վերապահեալ անուետ կոչեցին կուռքերը), որոնք ոչ մէկ օգնութիւն կրցան տալ իրենց...: Տիրոջ բարկութեան օրը՝ ո՛չ անոնց արծաթը եւ ո՛չ ալ ոսկին պիտի փրկէ զանոնք, որովհետեւ տագնաարծաթը եւ ո՛չ ալ ոսկին պիտի գայ երկրի բոլոր բնակիչներուն վրայ» (Ա գլուխ):

Սակայն այս մուսլ պատկերին մէջ յանկարծ լոյս կը ծագի եւ գիրքը վերջաւորութեան կը բերուի աւելի յուսալից մթնոլորտի մը մէջ, երբ մարգարէն կը նախատեսէ «մնացորդացի» փրկութիւնը:

«Պիտի ազատեմ քեզ քու ամբարտաւանութենէդ եւ այլեւ մեծաբանութիւն պիտի չընես իմ սուրբ լեռանս վրայ. քեզ պիտի վերածեմ Հեգ. խոնարհ եւ երկիւղած ժողովուրդի մը: Իսրայէլի մնացորդացը այլեւ անիրաւութիւն պիտի չընէ, սնտի բաներ պիտի չխօսի, եւ ոչ ալ անոր բերնին մէջ նենգաւոր լեզու պիտի ըլլայ, պիտի ապրին խաղաղ եւ ոչ ոք պիտի զարհուրեցնէ զանոնք»:

«Խրախուսուէ Իսրայէլ, ուրախ եղիր եւ զուարճացիր ամբողջ սրտովդ, դուստր Երուսաղէմի, Տէրը փրկած է քեզ քու թշնամիներէդ: Տէրը այլեւ քու մէջդ է, իբրեւ քու թագաւորդ, ով Իսրայէլ. այլեւ երեք չարիք պիտի չտեսնես դուն» (Գ 14-15):

Յոյնք եւ Լատինք՝ Դեկտ. 3:

38. ԱՆԳԷ

Կը կարծուի, որ ծնած է Իսրայէլի եօթնամասնամեայ (586-516)՝ գերութեան ընթացքին Բաբելոնի մէջ, եւ Երուսաղէմ վերադարձած Ն. Ք. 530-ական թուականներուն, գերադարձներու առաջին կարաւանին հետ, գլխաւորութեամբ Զորաբաբելի, որ երկրին կառավարիչ նշանակուած էր Պարսից թագաւորէն, որուն գերիշխանութեան ներքեւ կը գտնուէր Հրէաստան: Իր մարգարէական գործունէութիւնը կապուած է Տաճարի վերաշինութեան սրբազան գործին հետ:

Գերադարձները թէեւ տաճարի շինութեան սկսած էին, բայց գործը ընդհատուած էր յատկապէս Սամարացիներու միջամտութեամբը: Ընդհատումէ յետոյ վերադարձողները այնքան զբաղած էին իրենց Ընդհատումէ յետոյ վերադարձողները այնքան զբաղած էին իրենց սեպհական տուններու կառուցման գործով, որ գրեթէ մոռցած էին

Աստուծոյ Տան շինութիւնը: Անգէ հրապարակ կ'իջնէ եւ կժու կերպով կը դատապարտէ նոր Երուսաղէմացիներու այս անհոգութիւնը: Երկրին մէջ տիրող սովը եւ երաշտը կը վերագրէ Աստուծոյ բարկութեան, իրենց այս անտարբերութեան համար:

Իր մարգարէական գործունէութիւնը տեւած է Հագիւ չորս ամիսներ, պարսից Դարեհ թագաւորի երկրորդ տարին, 520 Ն. Ք.: Իր գրութիւնը Հին Կտակարանի երկրորդ կարճագոյն գիրքն է, բաղկացած երկու գլուխներէ, որոնք ինքնին պատգամները ըլլալէ աւելի մարգարէին պատգամներուն տեղեկագիրը կամ համադրութիւնն է, ուղղուած Զորաբարելի եւ օրուան քահանայապետ Յեսուի: Թէեւ կ'ըսէ մարգարէն, Նոր տաճարը աւելի անշուք պիտի ըլլայ բաղաձայն մամբ հինին, բայց «այս փառքը աւելի մեծ պիտի ըլլայ, քան առաջինինը, որովհետեւ այս տան մէջ ձեզի խաղաղութիւն պիտի տամ»: Հաւանաբար ակնարկելով Մեսիայի գալստեան: Արդարեւ այն տաճարը, որուն ընծայուեցաւ Յիսուս, այն տաճարը, զոր երկիցս մաքրագործեց, եւ որուն մէջ բազմիցս քարոզեց՝ Զորաբարելի շինել տուած տաճարն էր, կարեւոր նորոգութիւն կրած Հերովդէսի կողմէ:

Յոյնք՝ Դեկտ. 16, Լատինք՝ Յլս. 4:

39. ԶԱՔԱՐԻԱ

Զաքարիա ժամանակակից է Անգէի, ինչպէս կը հաստատեն երկուքին յիշած թուականները եւ Եզրի գիրքը:

«Անգէս եւ Ադդովեան Զաքարիա կը մարգարէանային (այսինքն կը խրախուսէին յանուն Աստուծոյ) Հրէաստանի եւ Երուսաղէմի Հրէից վրայ: Այն ատեն Սաղաթիէլի որդի Զորաբարել եւ Յովսեփի որդի Յեսու սկսան շինել Աստուծոյ տունը Երուսաղէմի մէջ, եւ Աստուծոյ մարգարէները անոնց հետ էին եւ զօրակիզ էին անոնց» (Եզր. Ե 1-2)

Անգէի պէս ինք ալ տեսաւ կրօնական անտարբերութիւնը իր ժողովուրդին, եւ զանոնք շարժման մէջ դնող խրախուսիչ յորդորներ տուաւ, որոնք մեծապէս նպաստեցին Տաճարի վերաշինութեան:

Երկուքէն աւելի երէցը Անգէն է, իսկ Զաքարիա՝ աւելի երիտասարդ (Զաք. Բ 4): Հաւանաբար Զաքարիան ալ ծնած է Բաբելոն եւ

վերադարձող կարաւաններէն մէկին հետ Երուսաղէմ եկած էր: Իր մարգարէութիւնը տեւած է երկու տարի 519-517 Ն. Ք.:

Զաքարիայի գիրքը բաղկացած է 14 գլուխներէ, եւ մեծագոյնն է փոքր մարգարէներու գրքերուն: Նախերգանք յորդորականէ մը վերջ (Ա 1-6) առաջին վեց գլուխներուն մէջ կը ներկայացուին ութ խորհրդաւոր տեսիլքներ, որոնց բացատրութիւններն ալ կը տրուին:

Յաջորդ 7-8 գլուխները պատասխան են Բեթելէն եկած պատգամաւորութեան մը, որոնք պահեցողութեան մասին հարցում ըրած էին մարգարէին, որ ըստ հետեւեալի կը պատասխանէ անոնց յանուն Աստուծոյ.

«Երբ պահք կը պահէիք, ինծի՞ համար կ'ընէիք.

չէ՞ որ ձեզի համար կ'ընէիք: Արդ այսպէս կ'ըսէ Ամենակալ Տէրը. արդար դատաստան ըրէք. ողորմութիւն եւ գթութիւն տուէք հանդէպ ձեր նմաններուն՝ այրին, որբը, պանդուկացոյց տուէք հանդէպ ձեր նմաններուն՝ այրին, որբը, պանդուկացոյց եւ աղքատը մի հարստահարէք: Ո՞ր մի պահէք իրարու հանդէպ ձեր սիրտերուն մէջ» (Է 9-10):

Սակայն Զաքարիայի տեսողութեան շրջանակը շատ աւելի լայն է: Ան թափանցեց նաեւ գալիք դարերու միգամածին եւ անոր մէջէն տեսաւ Մեսիայի գալուստը, եւ աւելի պայծառ ապագայի մը հեռատես կարը: Ըստ այսմ՝ 9-14 գլուխները կը պարունակեն զանազան պատգամներ, զորս քիչ մը դժուար է հասկնալ, բայց որոնց բոլորին նպատակն է հաստատել թէ Աստուծոյ թագաւորութիւնը ի վերջոյ պիտի յաղթանակէ: Այս բաժնին մէջ կան բազմաթիւ նախագուշակութիւններ Քրիստոսի զանազան տնտեսութեանց մասին. օրինակ՝ իր յաղթական մուտքին Երուսաղէմ:

«Ուրախ եղի՛ր դուստր Սիոնի, ցնծայ դուստր Երուսաղէմի, ահա քու թագաւորդ կուգայ քեզի, արդար եւ փրկիչ, հեղ ու խոնարհ, հեծած էջի եւ նոր աւանակի վրայ... Պիտի խորտակէ աղեղը պատերազմին եւ խաղաղութիւն պիտի խօսի բոլոր ազգերու, ու անոր իշխանութիւնը ծովէ ծով պիտի տարածուի եւ դետերէն մինչեւ աշխարհի ծայրերը» (Թ 9-10):

կը նախատեսէ Յիսուսի խաչելութիւնը եւ գեղարդով խոցուիլը: (ԺԲ 10) եւ երեսուն արծաթի ծախուիլը (ԺԱ 12) եւ իր աշակերտներէն էքուիլը (ԺԳ 7):

Մարգարէն կուտայ նաեւ գաղտնիքը՝ Հոգեւոր ձեռնարկներու յաջողութեան:

«Ոչ գորութեամբ եւ ոչ ուժգնութեամբ, այլ իմ Հոգիովս, կ'ըսէ Տէր Ամենակալ» (Դ 6):

Ըստ Աւետարանի տուեալներու՝ Զաքարիա սպաննուած է Տաճարի մէջ (Մատթ. Ի Գ 35):

Յոյնք՝ Սեպտ. 5, Լատինք՝ Սեպտ. 6:

40. ՄԱՂԱՔԻԱ

Վերջինը տասներկու մարգարէներու: Ոչ մէկ ծանօթութիւն ունինք իր մասին, ոչ իր անունով ծանօթ գիրքէն եւ ոչ ալ՝ ուրիշ աղբիւրներէ: Մինչեւ իսկ այս անունով մարգարէի մը գոյութիւնը կասկածելի կը թուի, քանի որ Եօթանասնից եւ Հետեւաբար մեր թարգմանութեան մէջ կը պակսի նաեւ անունը մարգարէին՝ իր գրքին սկիզբը, ինչպէս սովորաբար գրուած է միւս մարգարէական գիրքերուն սկիզբը: Այս գիրքը կը սկսի այսպէս. «Պատգամ Տիրոջ խօսքին՝ Իսրայէլի վրայ՝ ԻՐ ՀՐԵՇՏԱԿԻՆ ձեռքով»: Գլխադրեալ կրկնակ բառերու Համապատասխան բառը Եբրայեցերէն բնագրին մէջ «Մալաքի» է, որ արդարեւ կը նշանակէ «պատգամաւոր»: Քանի որ Հեղինակի մասին տեղեկութիւն կը պակսի, գէթ ծանօթանանք գրքի պարունակութեան, ուր գրեթէ մեր ժամանակներու յատուկ սխալ մտայնութիւններ եւ մեղքեր կը դատապարտուին:

Իր ներկայացուցած պատգամները, նման մեր երկրագունտին, ունին իրենց մութ կողմը եւ լուսաւոր երեսը: Մռայլ կողմերն են.

ա. Աստուած սիրած է Իսրայէլի ժողովուրդը, բայց ան վրիպած է այդ սէրը փոխադարձելուն մէջ:

բ. Աստուած Հայր եղած է. բայց Անոր որդի ըլլալու կանչուածները արատաւորած են իրենց Հօր անունը եւ պատիւը:

գ. Աստուծոյ ընծայ մատուցեր են իրենց աւելորդները եւ անպէտները, փոխանակ լաւագոյնները մատուցանելու: Չեն վճարած իրենց տասանորդները:

դ. Քահանաներ յատկապէս կ'անպատուեն Աստուծոյ անունը եւ գայթակղութեան պատճառ կ'ըլլան իրենց յոռի օրինակով եւ անպատկառ պաշտամունքով: Աստուած կ'ըսէ անոնց.

«Եթէ այս ընթացքը շարունակէք, ձեր օրհնութիւնները անէծքի պիտի վերածեն... Պիտի վտարեմ ձեզ իմ ներկայութենէս»:

Քահանայական դասակարգին Հետ ուխտ ըրած էի ի Հնումն, որ անոնք ՊԱՏՈՒԵՆ իմ անունս, եւ այդպէս ալ ըրին, պատուեցին զիս եւ իմ անունս եւ երկիւղածութեան մէջ ապրեցան: Անոնք շարունակ կ'ուսուցանէին ճշմարիտ օրէնքը, եւ իրենց բերնէն անօրհնութեան խօսք մը չելաւ: Խաղաղութեամբ եւ ուղղութեամբ քալեցին ինծի Հետ, եւ շատեր դարձուցին անօրհնութենէ: Քահանայի շրթունքները պահապանը պիտի ըլլան ճշմարիտ գիտութեան, եւ Աստուծոյ օրէնքը պիտի փնտռուի անոր բերանէն, որովհետեւ պատգամաւորն է Ամենակալ Տիրոջ: Իսկ դուք (կ'ըսէ մարգարէն խօսքը ուղղելով իր ժամանակակից քահանայութեան) շեղեցաք ճշմարտութեան ճանապարհէն եւ գայթակղեցուցիք շատերը օրէնքէ: Եղծեցիք, արեցիք այն ուխտը, թակղեցուցիք շատերը օրէնքէ: Եղծեցիք, արեցիք այն ուխտը, որ կնքած էի քահանայութեան Հետ: Ուստի, ես ալ իմ կարգիս արհամարհելի եւ նկուն դարձուցի ձեզ յաչս ժողովուրդի. քանի որ դուք իմ ցոյց տուած ճամբայէս չի քալեցիք, եւ աչառուոր դուք իմ ցոյց տուած ճամբայէս չի քալեցիք, եւ աչառուոր թիւն ըրիք ձեր պարտականութեան կատարումին մէջ» (Բ 1-9):

ե. Խաբեայութիւններ ըրած էին:

«Չէ՞ որ ամէնքս մէկ Հայր ունինք (ամէնքս արեւակից ենք, նոյն ցեղին կը պատկանինք): Չէ՞ որ մէկ Աստուած ստեղծեց ամէնքս. ինչո՞ւ ուրեմն կը խաբէք ձեր եղբայրները... եւ դարձելի բաներ կ'ընէք... ու կը պղծէք Տիրոջ սրբութիւնը օտար աստուածներու յարելով... պիտի սատկեցնէ Տէրը այս բաները ընողները»:

զ. Անհաւատարիմ եղած էին իրենց կիներուն:

«Անհաւատարիմ եղած ես քու երիտասարդութեանդ կնոջ, թէ եւ ան քու ամուսինդ էր եւ քու կինդ, որուն Հետ Հանդիսաւոր ուխտով

կապուած էիր: Ձէ՞ որ նոյն Աստուածը ստեղծած է նաև զայն, անոր թէ՛ մարմինը եւ թէ՛ ոգին: Եւ ի՞նչ է Աստուծոյ ուղածը ամուսնութեան օրէնքով: Եթէ ոչ աստուածավար զաւակներ: Հետեւաբար զգոյշ եղէք, թող ոչ ոք անհաւատարիմ ըլլայ իր երիտասարդութեան կնոջ, որովհետեւ կ'ըսէ Տէրը. Կ'ԱՏԵՄ ԱՄՈՒՄՆԱԼ ՈՒԾՈՒԹԻՒՆԸ եւ կնոջ հանդէպ եղած զրկանքը եւ անգթութիւնը» (Բ 10-16):

Է. Անբարոյութիւն եւ հարստահարութիւններ շատցած էին:

«Պիտի գատեմ ու դատապարտեմ կախարդները, շնացող կիները, ստախօսները ու յատկապէս անոնք, որ կը հարստահարեն աշխատաւորը, այրին, որբը եւ օտարականը եւ անոնք, որ անպատկառ են իմ առջեւ» (Գ 5):

Ը. Տիրոջ դէմ ծանր եւ անպատկառ խօսած են ըստ հետեւեալի.

«Ոմանք ըսին՝ անօգուտ է Տիրոջ ծառայելը, ի՞նչ կը շահինք Ամենակալ Աստուծոյ՝ պահելով իր պատուիրանները եւ Անոր առջեւ երկիւղած մնալով: Կը տեսնենք, որ ամբարիշտը երջանիկ է, չարագործներն են, որ կը յաջողին կեանքին մէջ, անոնք Աստուծոյ դէմ դարձան եւ տակաւին կ'ապրին առանց փորձանքի» (Գ 13-15):

Մարգարէին պատգամներուն լուսաւոր կողմերն են.

ա) Հոսումը Աստուծոյ օրհնութեան իրեն վստահողներուն վրայ (Գ 10-12):

բ) Աստուծոյ երկիւղածները իր սեպհական ժողովուրդը պիտի ըլլան, եւ անոնց հետ պիտի վարուի այնպէս, ինչպէս Հայր մը կը վարուի իր զաւակներուն հետ (Գ 16-18):

գ) Արշալոյսը Նոր Օրուան մը, երբ բոլոր ամբարտաւանները եւ անօրէնութիւն գործողներ եղէգի պէս պիտի այրին, ու անոնց արմատը պիտի չորնայ, իսկ երկիւղածներու համար պիտի ծագի արդարութեան արեգակը, եւ անոնց «թեւերը պիտի բժշկուին»՝ առ Աստուած թռչելու համար եւ «յաղթանակ պիտի տանին ամբարիշտներուն վրայ» (Դ 2-3):

դ) Առաջումը Աստուծոյ պատգամաւորին, որ Մեսիայի գալըստեան համար գետին պիտի պատրաստէ:

«Ահա կը զրկեմ ձեզի Եդիա Թեգրացին, նախ քան Տիրոջ մեծ եւ երեւելի օրը, որպէսզի պատրաստէ մարդոց սիրտերը, եւ Հաշտեցնէ զանոնք իրարու հետ, որպէսզի երբ գամ, Հհարուածեմ երկիրը անէծքով»:

Այս խօսքերով կ'աւարտի մարգարէական գիրքերու շարքը: Եւ կը վերջանայ Հին Կտակարանի մարգարէական շրջանը: Երբ կը փակուի անոր վերջին էջը այս գուշակութեամբ, ու երբ կը բացուի առաջի էջը Նոր Կտակարանին, այս նախատեսութիւնը արդէն իսկ իրականացած կը տեսնենք Յովհաննէս Մկրտչի երեւումով, որ եկած էր Եդիայի կերպարանքով եւ կը գործէր անոր ոգիով եւ կը պատրաստէր ճամբան Անոր, որ «յանկարծ պիտի երեւէր իր Տաճարին մէջ»:

Յոյնք՝ Յնվր. 2 Լատինք՝ չունին:

ԶԱՆԱԶԱՆ ՀԻՆ ՈՒՏՏԻ ՍՈՒՐԱԵՐ

Այս գլուխին տակ կը ներկայացնենք Հին Կտակարանի այն գէմբերը, որոնք մինչեւ հիմայ յիշուած խումբերէն ունէ մէկին մաս չեն կազմեր: Որոնք սակայն տեղ գրուած են Հայ Եկեղեցիի տօնացոյցին մէջ:

41. 42. 43. ԵՐԵՔ ՄԱՆԿՈՒՆՔ
ՍԵՂՐԱՔ, ՄԻՍԱՔ ԵՒ ԱԲԵԹՆԱԳՈՎ

Ասոնք անբաժան են Դանիէլ մարգարէէն թէ՛ տօնակատարութեամբ եւ թէ՛ պատմութեամբ:

Տեսանք, թէ այս «Երեք Մանուկներ» կոչուածները՝ Անանիա, Ազարիա եւ Միսայէլ, ընտրուած էին Դանիէլի եւ այլոց հետ, Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորին հրամանով, բարձր ուսմունք առնելու բարձր պետական պաշտօններու պատրաստուելու համար: Արդարեւ իրենց դաստիարակութեան աւարտումէն յետոյ իշխան կարգուցան «Բաբելացւոց աշխարհի գործերուն վրայ»: Այդ բարձր դիրքերուն վրայ չմոռցան երեք Աստուածը եւ շարունակեցին Հաւատարիմ մնալ Անոր օրէնքներուն, ինչ որ արդարեւ մէջտեղ ելաւ Հանդիսաւոր առիթով մը:

Նաբուգոդոնոսոր թագաւոր ոսկի արձան մը կանգնել տուած էր եւ անոր նաւակատիքը, այսինքն՝ բացումը կատարելու համար հրակրած էր պետութեան բոլոր մեծամեծները, որոնց կարգին նաեւ այս երեք երիտասարդ գործակալները: Հանդէսը պիտի կայանար երկըրպագելու մէջ այս արձանին, իբրեւ գերագոյն մարմնացումին Բաբելոնական դիքերուն:

Երեք ընկերները կը մերժեն երկրպագել այս կուռքին՝ ըսելով. «Մենք երկիրնքի մէջ Աստուած մը ունինք, զոր կը պաշտենք արդէն, եւ հետեւաբար սա բացայայտ ըլլայ քեզի, արքայ, որ մենք քու

դիքերդ չենք կրնար պաշտել, ոչ ալ՝ երկրպագել քու կանգնած ոսկի արձանիդ»:

Թագաւորը բնականաբար կատողեցաւ եւ հրամայեց նետել զանոնք «բորբոքեալ կրակի հնոցի մէջ»: Պատահեցաւ այն հրաշքը, որ երեք երիտասարդները կը հաւատային, թէ կրնար պատահիլ, եթէ Աստուած կամենար:

Հնոցին մէջ ոչ միայն չայրեցան, այլ Աստուծոյ օրհնութեան երգեր երգեցին: Նաբուգոդոնոսոր շատ զարմացաւ երբ անոնց օրհնութեան ձայնը լսեց, բայց աւելի զարհուրեցաւ, երբ նշմարեց անոնց հետ չորրորդ էակ մը, «որուն տեսքը նման էր Աստուծոյ Որդիին»: Ուստի դուրս կանչեց «Բարձրեալ Աստուծոյ ծառաները... եւ տեսան, որ կրակը չէր վնասած մարմինին, չէր խանձոտած անոնց մազերը, կրակի հոտն անգամ չկար անոնց վրայ» (Դան. Գ Գլուխ):

«Ու Նաբուգոդոնոսոր թագաւորը երկրպագութիւն ըրաւ Տիրոջ առջեւ եւ ըսաւ Օրհնեալ ըլլայ Սեղրակի, Միսաքի եւ Աբեդ-նագովի Աստուածը, որ զրկեց իր հրեշտակը եւ փրկեց իր ծառաները, որովհետեւ Անոր յուսացին եւ չհնազանդեցան թագաւորական հրամանին, եւ իրենց մարմինները կրակի մատնեցին, որպէսզի չպաշտեն ոչ մէկ ուրիշ աստուած, բացի իրենց Աստուծմէն: Եւ արդ, ես հրաման կը հանեմ բոլոր ազգերուն եւ լեզուներուն, թէ ով որ հայհոյական խօսքեր ընէ Սեղրակի, Միսաքի եւ Աբեդնագովի Աստուծոյն դէմ, կորուստի պիտի մատնուին, որովհետեւ չկայ ուրիշ աստուած, որ կարենայ այն կերպով փրկել»:

Ու աւելի բարձրացուց եւ փառաւորեց այս հաւատաւոր եւ քաջարի երիտասարդները: Այս դէպքէն յետոյ երեք երիտասարդները, իրենց ամէնէն սրբազան դերը կատարած ըլլալով կը քաշուին թատերաբեմէն եւ այլեւ չեն յիշուիր:

Յոյնք կը յիշատակեն զանոնք Դանիէլի հետ Դեկտ. 17ին: Լատինք ալ՝ նոյն թուականին առանց Դանիէլի:

Եզր քահանայ մը եւ դպիր մըն է Ահարոնի ցեղէն:

«Պարսից Արտաշէս թագաւորի իշխանութեան օրով Բաբելոնէն եկաւ Եզրաս անունով մէկը... Սա արագադիր դպիր մըն էր Մովսէսի օրէնքին, զոր Տէր Աստուած տուած էր Իսրայէլի: Ու թագաւորը տուաւ անոր ինչ որ ուզեց, որովհետեւ Աստուծոյ ձեռքը անոր հետ էր: Եզրասի հետ Բաբելոնէն Երուսաղէմ եկան շատ մը Իսրայէլացիներ, քահանաներ, ղեւտացիներ, երգեցիկ պաշտօնեաներ, դռնապաններ եւ տաճարի սպասաւորներ (շուրջ երկու հազար հոգի) Արտաշէս թագաւորի եօթներորդ տարին...: Եզրաս միտքը դրած էր փնտռել Տիրոջ օրէնքները եւ կատարել զանոնք, եւ սովորեցնել Աստուծոյ հրամանները եւ դատաստանները» (Եզր. է 1-10):

Վերոյիշեալ Արտաշէս թագաւորը իշխած կը նկատուի Ն. Ք. 404-359, որով անոր եօթներորդ տարին եւ Եզրասի գործունէութեան սկիզբը կ'ըլլայ Ն. Ք. 397 թուականը:

Եզր վերագարծաւ յատուկ արքայական հրամանագրով, որուն մէջ շատ բարձր կ'արտայայտուի Եզրի մասին, եւ կը հրահանգուի ամենուրեք, որ պահանջուած օգնութիւնը չզլանան անոր (Եզր. է 11-26):

Եզրի գլխաւոր բարեկարգութիւնը եղաւ ջնջել ու չեղեալ նկատել բոլոր օտար ամուսնութիւնները եւ խստիւ արգիլել, որ ոչ մէկ Իսրայէլացի ամուսնանայ օտարականի հետ. (Եզր. Թ գլուխ): Ապա համադրեց ամբողջ Մովսէսի օրէնքները. կարգաց բոլոր ժողովուրդի տաճարի շրջափակին մէջ արեւածագէն մինչեւ կէսօր (Նէ. Ը 2-8):

Եզրի վախճանի մասին ոչինչ ըսուած է: Հայց. Եկեղեցին կը յիշատակէ զայն Եզեկիէլ մարգարէի հետ Վերափոխման Գ Կիրակիի յաջորդ Գշ. օրը: Յունաց մօտ չհանդիպեցանք, Լատինք՝ Յուլիս 13ին Յովել մարգարէի հետ:

Եզրով դուրս կուգանք Աստուածաշունչի սովորական կանոնական գիրքերու շրջանակէն, բայց սպառած չենք ըլլար Հին Կտակարանի սուրբերու շարքը: Հայց. Եկեղեցին ունի նաեւ քանի մը տօնելի անուններ, որոնք մեզի կուգան Ս. Գրքի ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆՈՆ կոչուած գիրքերէն: Այսպէս կը կոչուին այն գիրքերը, որոնք կը պակսին երբայական բնագրին մէջ եւ կը գտնուին Յունարէն եօթանասնից թարգմանութեան մէջ, որ կը կազմէր գործածական Ս. Գիրքը Քրիստոնէական առաջին եկեղեցիին եւ հետեւաբար որմէ կատարուեցան հնագոյն եկեղեցիներու Ս. Գրոց թարգմանութիւնները, որոնց կարգին նաեւ մերինը: Ասոնք երկրորդականոն կ'ըսուին պարզապէս Ս. Գրոց կանոնին, այսինքն՝ գիրքերու ընդունուած ցանկին մէջ, ետքէն անկանոնին, այսինքն՝ գիրքերու ընդունուած ցանկին մէջ, ետքէն անցած ըլլալուն համար: Այլապէս մեծ տարբերութիւն չունին նախականոն գիրքերէն, քանի որ ոճով եւ ոգիով առ հասարակ նոյն են նախանոն գիրքերուն հետ եւ հետեւաբար կը կարգացուին եկեղեցիի մէջ, ինչ որ լաւագոյն փաստն է իրենց պաշտօնապէս ընդունուած ըլլալուն եկեղեցիի կողմէ: Արդ կ'աւարտենք Հին Կտակարանի տօնելի սուրբերու ցանկը երկրորդականոն գիրքերէ վերցուած անուններով:

Ասոնք բոլորը միասնաբար կը տօնուին սա խմբական անունի տակ.

«Սրոց Մակարայեցոցն Եղիազարու քահանային եւ Շամունայ եւ եօթն որդոց նորին»:

Ասոնց յիշատակութիւնը վերիվերոյ նոյն է նաեւ Յունաց ու Լատինաց մօտ: Յունական ձեւն է «եօթն Մակարայեցի Մանկանցն եւ մօրն իւրեանց Սողոմէի եւ ուսուցչին իւրեանց Եղիազարու»: Իսկ Լատինականը՝ «Մակարեան եղբարցն եւ մօրն իւրեանց եւ Եղիազարու Սուրբ ձերուստոյն»: Մօրը անունը յիշուած չէ Մակարայեցոց Գրքին մէջ, ըստ վերեւի յիշատակութեանց Սողոմէ է, իսկ ըստ մեզի՝ Շամունէ, հաւանաբար ասորական աղբիւրէ եկած:

Այս կերպ յիշատակութենէն այնպէս կը հետեւի, որ «Մակարայեցիներ» կոչուածները Եղիազարն ու Շամունէն են իր որդիներով մինչդեռ ասոնք «Մակարայեցի» չեն, այլ Մակարայեցոց շրջանը կանխող նահատակներ են: Հետեւաբար մենք կ'ենթադրենք, որ

«ՄԱԿԱԲԱՅԵՑԻՈՑ»ը պէտք է ընդունիլ իբրև առանձինն յիշատակելի անուանախոսք մը ու «ԵՒ» շաղկապով գատել միւսներէն:

Արդարև ՄԱԿԱԲԱՅԵՑԻՆԵՐԸ ռահվիրանները եւ նահատակները եղան կրօնական ապստամբութեան մը, որ վերածուեցաւ ի վերջոյ ազգային շարժումի մը, օծելով Իսրայէլի ժողովուրդը իր վերջին պետականութեամբը, որ տեւեց շուրջ հարիւր տարիներ Ն. Ք. 160-60 ական թուականներուն:

Քրիստոսէ առաջ երկրորդ դարուն Հրէաստան կը գտնուի Սելեւկեան յոյն իշխանապետութեան ձեռքը, որուն կեդրոնն է Անտիոք, Սուրիոյ մէջ: Ասոնց թագաւորներէն Անտիոքոս Եպիփան, որ թագաւորած է 175-163 Ն. Ք., հրահանգ հանեց, որ իր թագաւորութեան ներքեւ գտնուած բոլոր ժողովուրդները ընդունին յունական մշակոյթը եւ պաշտեն յունական աստուածները: Ասիկա զօրաւոր հակազդեցութիւն յառաջ բերաւ Հրէից մէջ:

Թատերաբեմի վրայ երեւցաւ Մատաթիա անուն պատկառելի եւ քաջ քահանայ մը, որ տեսնելով, թէ Հրեայ մը զոհ կը մատուցանէ յոյն աստուածներուն, զարկաւ սպաննեց զայն, ինչպէս նաեւ պետութեան ներկայացուցիչները, որոնք եկած էին թագաւորին գործադրելու եւ կործանեց հեթանոսական բազիլը, ապա գոչեց. «Անոնք, որ նախանձախնդիր են Աստուծոյ Օրէնքին եւ Ուխտին պահպանութեան թող ինձի հետեւին»: Իր հինգ կորովի որդիները, եղբայրները եւ նախանձախնդիրներու մեծ բազմութիւն մը հետեւեցան իրեն այսպէս բարձրացուցին կրօնական ապստամբութեան դրօշը եւ քաշուեցան լեռները, եւ սկսան քանդել բազիլները ամենուրեք:

Մատաթիա, նախ քան իր մահը իրեն յաջորդ կարգեց իր անդրանիկ զաւակը՝ ՅՈՎՀԱՆՆԷՍԸ իսկ զօրավար՝ երրորդ որդին՝ ՅՈՒԴԱՆ, որուն քաջութեանը եւ հարուածային յաղթանակներուն համար ետքէն տրուեցաւ ՄԱԿԱԲԷՈՍ յունական մակդիրը, որ կը նշանակէ «Մրճահար, հարուածահար»: Այս մակդիրը տարածուեցաւ ամբողջ ընտանիքի վրայ, որ կոչուեացաւ «ՄԱԿԱԲԵԱՆՆԵՐ», այսպէս իրենց ընտանեկան մականունն էր «ՀԱՍՄՕՆԵԱՆ», որով եւս կոչուեցան պատմութեան մէջ:

Յուդա Մակաբէ յաջող կռիւներէ յետոյ զբաւեց Երուսաղէմը, մաքրեց տաճարը եւ կանոնական զոհերը վերսկսան: Սակայն ի վերջոյ Յուդա ինկաւ պատերազմներէն մէկին մէջ, իբրև զլիսաւոր նահատակը այս կրօնազգային շարժումին: Անկէ առաջ ուրիշ կռուի մը ընթացքին նահատակուած էր իր չորրորդ եղբայրը՝ ԵՂԻԱԶԱՐ: Իրեն յաջորդեց կրտսերագոյն եղբայրը՝ ՅՈՎՀԱՆԱՆ: Այս միջոցին սպաննուեցաւ նաեւ երէց եղբայրը՝ Յովհաննէս: Յովնաթան շատ յաջող շրջան մը բոլորեց եւ Ն. Ք. 152ին քահանայապետ օծուեցաւ: Սակայն ինք ալ զոհ գնաց դաւաճանութեան մը եւ սպաննուեցաւ Պտղոմայիս կամ Աքքիա քաղաքի մէջ:

Իրեն յաջորդեց իր եղբայրը ՇՄԱԻՈՆ, իբրև քահանայապետ եւ յաջողեցաւ ի սպառ ազատել երկիրը հեթանոսական լուծէն, Ն. Ք. 140-ական թուականներուն: Սակայն ի վերջոյ ինք եւ իր երկու զաւակներն ալ զոհ գացին դաւաճանութեան եւ սպաննուեցան Երիբովի մէջ:

Այսպէս Մատաթիայի հինգ զաւակները, Յովհաննէս, Շմաւոն, Յուդա, Եղիազար եւ Յովնաթան ինչպէս նաեւ Շմաւոնի երկու զաւակները Մատաթիա եւ Յուդա կրտսերները, մէկը միւսին ետեւէ նահատակուեցան իրենց կրօնքի ազատութեան համար, եւ արժանի եղած դասուելու մարտիրոսներու շարքին: Այս հինգ եղբայրներու սխրագործութիւնները պատմուած են Ա. ՄԱԿԱԲԱՅԵՑԻՈՑ Գրքին մէջ:

46. ԵՂԻԱԶԱՐ ՔԱՀԱՆԱՅ

Անտիոքի Սելեւկեան թագաւորներու կողմէ հրէից վրայ դրուած հալածանքի ժամանակ մէջտեղ կ'ելլէ Եղիազար անունով պատկառելի ծերունի մը, որուն կը ստիպեն, որ խոզենի ուտէ, ինչ որ արգելուած էր Հրէական օրէնքով: Մերունին կը մերժէ եւ պատրաստակամութիւն կը յայտնէ ձաղկուիլ ու մեռնիլ իր կրօնքին համար, քան թէ խղճահար կեանք մը ապրիլ: Այն ատեն ուրացումի գործադիր պաշտօնեաները, մեղքնալով իր տարիքին, կը թելադրեն, որ Եղիազար ինք իր ուզած միսը պատրաստէ եւ ուտէ ամէնքի առջեւ՝ այնպէս մը ձեւացնելով՝ որ իբրև թէ կուռքերու զոհեալ միս կ'ուտէ. այն ատեն ազատ պիտի իբրև թէ կուռքերու զոհեալ միս կ'ուտէ. այն ատեն ազատ պիտի կացուցուէր մահէ: Սակայն Եղիազար քահանայ սա գեղեցիկ պատաս-

խանը տուաւ անոնց, արժանի իր պատկառելի տարիքին եւ անկեղծ աստուածապաշտութեան:

«Ղրկեցէք զիս շուտով իմ գերեզմանս: Եթէ ինքզինքս ենթարկեմ այս կեղծիքին, շատ մը երիտասարդներ պիտի խորհին, որ եղազար ուրացող մը եղաւ իր իննսուն տարեկանին: Եթէ կեղծեմ կեանքի կարճ շրջան մը ապահովելու համար, ես պիտի գայթակղեցնեմ այդ երիտասարդները եւ կեղտ ու անպատուութիւն պիտի բերեմ իմ անունիս: Այս կեղծիքով պիտի կրնամ ներկայիս խուսափիլ մարդոց պատիժէն, բայց, ողջ մնամ կամ մեռնիմ, պիտի չկրնամ երբեք խուսափիլ Ամենակալին ձեռքէն: Ուստի եթէ այժմ քաջաբար մեռնիմ, պիտի հաստատեմ, որ արժանի եղած եմ այս երկար տարիքիս եւ երիտասարդներուն աղուոր օրինակ մը պիտի ձգեմ, սորվեցնելու համար անոնց, թէ ինչպէս պէտք է մեռնիլ ուրախութեամբ եւ քաջութեամբ մեր սուրբ օրէնքներուն համար» (Բ Մակ. Զ 18-28):

Երբ իր խօսքերը աւարտեց, քաշկուտեցին զայն անմիջապէս եւ սկսան ձողկել: Երբ գրեթէ մեռելի պէս եղած էր ձողանքներու տակ, Եղիազարը բացաւ բերանը եւ հռուսանքով ըսաւ.

«Աստուած միայն կրնայ գիտնալ իր սուրբ ամենագիտութեամբ, թէ ինչ ահաւոր տագնապի ենթարկուած եմ Ֆիզիքապէս՝ այս ձողանքէն, թէ եւ կրնայի խուսափիլ այս չարաչար մահէն. այսուհանդերձ Աստուած գիտէ նաեւ, թէ հոգևովս ուրախ եմ այս տանջանքին համար, որովհետեւ Տիրոջ առջեւ երկիւղած ըլլալուս համար կ'ընդունիմ այս չարչարանքները» (Բ Մակ. Զ 30):

Այսպէս մեռաւ այս պատկառելի ծերունին եւ իր մահով հերոսական օրինակ մը ձգեց գալիք սերունդներուն, յատկապէս նախնի քրիստոնեաններուն, որոնք խորապէս ներշնչուած են իր եւ յաջորդող նահատակներու օրինակէն:

47. ԾԱՄՈՒՆԷ ԵՒ ԻՐ ԵՕԹԸ ՈՐԴԻՆԵՐԸ

Նոյն Հալածանքի շրջանին կը պատկանի նահատակութիւնը քաջասիրտ մօր մը եւ նոյնքան քաջակորով իր զաւակներուն:

Եօթը եղբայրները իրենց մօրը հետ կը ձերբակալուին եւ կը հանուին թագաւորի ներկայութեան ու կ'ենթարկուին ձաղանքի ստիպելու համար, որ խոզի միս ուտեն: Առաջինը կը սկսի այսպէս խօսիլ.

«Ի՞նչ կ'ուզէք հասկնալ զմեզ Հարցափորձելով, մենք պատրաստ ենք մեռնելու, քան թէ հակառակ գործել մեր Հայրենի օրէնքներուն»:

Այն ատեն թագաւորը հրամայեց կտրել անոր լեզուն, գլխուն մորթը երեսին վրայ դարձուցին, ապա ձեռքերը եւ ոտքերը կտրեցին, մօրը եւ եղբայրներուն աչքին առջեւ, եւ ապա եռացած կաթնայի մէջ նետել տալով՝ նահատակեցին զայն:

Երկրորդն ալ ձաղանքի ենթարկելէ յետոյ՝ Հարցուց թագաւորը, թէ պիտի ուտէ՞ր խոզի միսը նախ քան անդամներն ալ ջարդ ու փշուր ընելը: Երիտասարդը պատասխանեց.

– Երբեք. դուք մեզ կ'ազատես այս կեանքէն: Եւ որովհետեւ մենք կը մեռնինք իր օրէնքին համար, Տիեզերքի թագաւորը պիտի յարուցանէ մեզ յաւիտենական ու նոր կեանքով մը:

Երրորդին երբ Հարցուցին, թէ պիտի ուտէ՞ խոզենին, ան երկարեց իր լեզուն եւ ձեռքերը, որ կտրեն ու ըսաւ քաջաբար.

– Երկնից թագաւորը տուած է ասոնք ինձի, իր օրէնքները սակայն շատ աւելի մեծ արժէք ունին ինձի համար, քան ասոնք, եւ իրմէ է, որ կը հաւատամ, թէ, պիտի վերստանամ զանոնք:

Երբ ասիկա լսեցին թագաւորը եւ իր շուրջիները, զարմացան երիտասարդի ցուցաբերած արիական ոգիին եւ անոր արհամարհանքին վրայ չարչարանքի նկատմամբ:

Չորրորդը մահամերձ վիճակի մէջ ըսաւ թագաւորին.

– Աւելի լաւ է մեռնիլ մարդոց ձեռքով եւ յուսալ Աստուծոյ խօսքին իրականացման՝ մեզի յարութիւն տալու, քան թէ քեզի պէս ողջ մնալ, որովհետեւ քեզի համար յարութիւն չկայ:

Ապա Հինգերորդը քաշկռտուեցաւ չարչարանքի եւ ըսաւ թագա-
ւորին.

-Թէեւ դուն ալ մահկանացու ես, բայց իշխանութիւն տրուած է քեզի մարդոց վրայ, վարուելու անոնց հետ ուղածիդ պէս: Բայց չկարծես, թէ Աստուած լքած է մեր ժողովուրդը: Ապասէ եւ պիտի տեսնես, թէ ինչպէս Աստուծոյ մեծ զօրութիւնը քեզ եւ քու սերունդդ ալ պիտի չարչարէ:

Վեցերորդը նախ քան վերջին շունչը տալը ըսաւ.

-Մի խաբուիր, ով թագաւոր, թէեւ մեր մեղքերուն համար է, որ այս պատահարները մեր գլխուն կուգան, սակայն մի կարծեր, թէ դուն ալ պիտի ազատիս Աստուծոյ դէմ պայքարելու ամբարշտութեանդ հետեւանքներէն:

Սակայն ամէնէն աւելի բարի յիշատակութեան արժանի եղաւ ասոնց սքանչելի մայրը: Տեսաւ իր աչքին առջեւ իր եօթը որդիներուն մի առ մի նահատակուիլը: Բայց քաջաբար կրեց ասիկա, որովհետեւ իր յոյսը Աստուծոյ վրայ դրած էր: Կը քաջալերէր իւրաքանչիւրը իր մայրենի լեզուով: Լեցուած էր ազնուական վճռականութեամբ, եւ իր կանացի մտածումները հրահրուած էին առնական ոգիով, ըսած էր իր զաւակներուն.

-Դուք յայտնուեցաք արգանդիս մէջ, ու ես չեմ գիտեր, թէ ինչպէս. ես չէ, որ կեանք ու շունչ տուի ձեզի, ոչ ալ կազմաւորեցի ձեր մարմնական ձեւը: Ամենայն ինչի Արարիչն է, որ կը ձեւակերպէ մարդը իր ծննդեան ատեն եւ կը ծրագրէ ծագումը ամէն բանին: Ուստի Ան իր ողորմութեամբը ետ պիտի տայ ձեզի ձեր կեանքը եւ շունչը, քանի որ Հիմա դուք Անոր օրէնքը ձեր անձերէն վեր կը դասէք:

Կարգը եկած էր կրտսեր տղուն: Թագաւորը փորձեց խոստումներով սիրաշահիլ զայն, ապահովցնելով թէ այն վայրկեանին, որ ինք կը հրաժարի իր նախնեաց սովորութիւններէն, պիտի հարստացնէ զայն եւ բարձր պաշտօններու պիտի հասցնէ արքունի պալատին մէջ: Քանի որ տղան կարեւորութիւն չէր տար թագաւորի խոստումներուն, կանչել տուաւ թագաւորը պատանիին մայրը եւ հրամայեց, որ համո-

զէր զայն մտիկ ընելու իր խրատին փրկելու համար անոր կեանքը: Մայրը մտեցաւ եւ ըսաւ անոր.

-Տղա՛ս, գթա ինձի, ես քեզ ինն ամիսներ կրեցի արգանդիս մէջ, կաթ տուի քեզի երեք տարիներ. մեծցուցի եւ այսօրուան հասակիդ բերի: Նայէ երկինք եւ երկիր, եւ տես անոնց մէջ եղածները, եւ գիտցիր, թէ Աստուած ստեղծեց զանոնք ոչինչէն, մարդն ալ Անկէ ստեղծուած է: Մի վախնար այս մտադործէն, ընդունէ մահը եւ արժանի եղիր եղբայրներուդ քաջութեան, որպէսզի Աստուծոյ ողորմութեամբ վերստին ստանամ քեզ ալ անոնց հետ:

Հազիւ մայրը աւարտեց, սկսաւ խօսիլ չափահաս պատանին.

-Ինչի՞ կը սպասէք. թագաւորին հրամանին պիտի չենթարկուիմ, ես կը Հնազանդիմ այն օրէնքին, որ տրուեցաւ մեր Հայրերուն Մովսէսի ձեռքով: Եւ դուն, ո՛վ թագաւոր, դո՛ւն, որ ամէն տեսակ չարչարանքներ Հնարեցիր մեր ազգին համար, դուն ալ պիտի չազատիս Աստուծոյ ձեռքէն: Մինք այսօր կը չարչարուինք մեր մեղքերուն պատճառով, ու եթէ մեզ ուղղելու եւ կարգի բերելու համար Աստուած բարկացած է կարճ ժամանակի մը համար, սակայն նորէն պիտի հաշտուի իր ծառաներուն հետ: Բայց դուն, ամբարիշտ մարդ, պարապ յոյսերով մի տարուիր. դուն, որ կը չարչարես Աստուծոյ ծառաները, դուն ալ զերծ պիտի չմնաս դատաստանէն Ամենակալ եւ Ամենատես Աստուծոյ: Իմ եղբայրներս մեռան Աստուծոյ ուխտին հաւատարիմ մնացած ըլլալուն համար, կարճ չարչարանքէ մը յետոյ անոնք առաջնորդուեցան յաւիտեանական կեանքի, բայց դուն պիտի վճարես արդար պատիժը քու ամբարշտութեանդ Աստուծոյ դատավճիռով: Ես, եղբայրներուս պէս, կուտամ մարմինս եւ կեանքս մեր Հայրերու օրէնքներուն համար: Կ'աղերսեմ Աստուծոյ, որ քաւութիւն տայ իր ժողովուրդին: Քեզ ալ, մեծամեծ պատուհասներէ յետոյ, թող առաջնորդէ Աստուած՝ խոստովանելու, որ Ան է միակ Աստուածը: Իմ եւ եղբայրներուս մահով թող Աստուծոյ բարկութիւնը անցնի մեր ժողովուրդին վրայէն:

«Թագաւորը այս խօսքերը լսելով, կատաղութենէն ինքզինքէն ելած, շատ աւելի չարաչար մահով սպաննեց այս մատաղ երիտասար-

դը, որ անարատութեամբ եւ սրբութեամբ եւ Տիրոջ յուսալով մեկ-նեցաւ աշխարհէ: Զաւակներէն յետոյ, երանելի մայրն ալ սպաննուեցաւ» (Բ Մակ. է գլուխ):

Այս եօթ եղբայրներու անունները թէ եւ չեն յիշուած Մակաբայեց-ւոց գրքին մէջ, բայց 1860ին ի Վենետիկ հրատարակուած Աստուածաշնչի լուսանցքին վրայ իւրաքանչիւրին անունը գրուած է կարգով, որոնք են՝ Ակար, Մակար, Խորէն, Խորաէն, Ամինադար, Գալիլէ եւ Գաղիզէ, որոնք սակայն բոլորովին տարբեր են Յունական եւ Լատինական օրացոյցներու մէջ:

Մակաբեան շրջանի այս բոլոր նահատակներու յիշատակը կը կատարենք միասնաբար Վարդավառի երրորդ շաբթուան Երկուշաբթիին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ

Այստեղ կ'աւարտի մեր գրութեան առաջին մասը՝ նուիրուած մեր եկեղեցիի տօնացոյցին անցած Հին Կտակարանի սուրբերուն: Իբրեւ եզրակացութիւն եւ կնքում այս բաժնին, մենք կ'ուզենք յառաջ բերել Եբրայեցւոց թուղթի ԺԱ գլուխը, ուր արդարեւ մի առ մի կը տողանցեն մեր նախընթաց էջերուն մէջ յիշուած անուններէն կարեւոր մէկ մասը, իբրեւ հաւատքի հերոսներ: ԺԱ գլուխին հետ միասին կ'առնենք նաեւ նախընթաց Ժ գլուխին վերջին 2 համարները եւ յաջորդող ԺԲ գլուխի առաջին երկու համարները:

* * *

«Արդարը հաւատքով պիտի փրկուի. եթէ մէկը երկմիտ է, հաճելի չէ ինձի, - կ'ըսէ Տէրը: Սակայն մենք երկմտութեամբ դէպի կորուստ չէ, որ կը դիմենք, այլ հաւատքով մեր հոգիներու փրկութիւնը կ'ապահովենք» (Եբր. Ժ 38-39):

«Իսկ ի՞նչ է հաւատքը, եթէ ոչ յուսացեալ իրերու հաստատութիւնը, եւ չերեցած իրողութեանց գոյութեան հաստատ համոզումը: Իրենց հաւատքին համար է, որ հիները վկայուեցան, թէ արդար են:

Հաւատքով կ'ընդունինք, որ տիեզերքը կազմաւորուեցաւ Աստուծոյ խօսքով, եւ աներեւոյթները տեսանելի դարձան:

Հաւատքով ԱԲԷԼ Կայէնէն անդի լաւ ընծայ բերաւ Աստուծոյ, որով հաստատուեցաւ իր արդար ըլլալը, որովհետեւ իր ընծան ընդունուեցաւ Աստուծոյ կողմէն, ու ինք թէեւ մեռաւ նոյն հաւատքի մէջ, սակայն տակաւին կը խօսի:

Հաւատքով ԵՆՈՎՔ փոխադրուեցաւ ուրիշ կեանքի մը, առանց մահ ճաշակելու, եւ ոչ մէկ տեղ կարելի եղաւ գտնել զայն, որովհետեւ Աստուած իր քով առած էր զայն: Սակայն նախքան իր վերափոխուիլը, Աստուծոյ հաճոյ եղած ըլլալը հաստատուած է, իսկ առանց հաւատքի անհնար է Աստուծոյ հաճոյ ըլլալը, այլ ան, որ Աստուծոյ կը մօտենայ, անհրաժեշտաբար պէտք է հաւատայ, թէ Ան գոյութիւն ունի, եւ ով որ կը փնտռէ զԱյն, գոհացում կուտայ անոր:

Հաւատքով ՆՈՅ հրաման ստացաւ Աստուծմէ անյայտ ապագայի մը համար եւ զարհուրած սկսաւ շինել տապաւնը իր ընտանիքի փրկութեան համար ու այդ կերպով սուտ հաճեց ու դատապարտեց աշխարհը եւ հաւատքի արդարութեան ժառանգորդ եղաւ:

Հաւատքով ԱԲՐԱՀԱՄ հնազանդեցաւ, երբ կանչուեցաւ ելլել ու երթալ այն երկիրը, որ իբրեւ ժառանգութիւն պիտի ստանար, առանց գիտնալու, թէ ուր կ'երթար: Հաւատքով իբրեւ պանդուխտ եւ օտարական ապրեցաւ անտեսաց երկրին մէջ. վրաններու տակ բնակեցաւ Իսահակի եւ Յակոբի հետ, որոնք ժառանգակից պիտի ըլլային Աստուծմէ եղած խոստումին, որովհետեւ կ'ակընկալէր հաստատուելուն այն քաղաքին, որուն ճարտարապետը եւ կերտիչը Աստուած է:

Հաւատքով նոյնինքն ՍԱՌԱ, որ ամուլ էր, զօրութիւն ստացաւ որդեծնութեան եւ յառաջացեալ տարիքին ծննդաբերութիւն ունեցաւ, քանզի խորհեցաւ, թէ Ան, որ խոստում ըրած էր, հաւատարիմ պիտի ըլլար իր խոստումին: Ու մէկ հոգիէն, ու այն ալ գրեթէ մեռած, ծնած սերունդներ երկինքի աստղերու բազմութեամբ եւ ծովեզերքի անթիւ ասազահատիկներու աման:

Ասոնք ամենքն ալ հաւատքով մեռան, առանց խոստացուած իրերուն տիրացած ըլլալու. սակայն տեսան զանոնք հեռուէն եւ ուրախացան, խոստովանեցան նաեւ, թէ իրենք օտար եւ պանդուխտ էին երկրի վրայ: Անոնք, որ այսպէս կ'արտայայտուին, կը յայտնեն,

թէ կը փնտռեն իրենց յատուկ երկիր մը, ուր օտար եւ պանդուխտ պիտի չգգան: Եթէ արդարեւ կապուած ըլլային այն երկրին, ուրկէ ելան, ժամանակ ունէին վերադառնալու այնտեղ: Ընդհակառակը կը տեսնենք, որ անլի ազնուական բանի մը կը ցանկան, այսինքն՝ երկնատրիմ. ուստի Աստուած ամօթ չի համարիր անոնց Աստուած կոչուիլը, որովհետեւ ունի քաղաք մը, որ անոնց համար պատրաստուած է:

Հաւատքով ընծայեց Աբրահամ Իսահակը, երբ փորձի ենթարկուեցաւ եւ իր ընծայածը իր միամօր որդին էր, որով խոստումը առած էր, եւ որուն մասին ըսուած էր. «Իսահակով պիտի շարունակուի քու սերունդը»: Այնպէս կը մտածէր, որ Աստուած կրնար մեռելներէն ալ յարուցանել զայն, ինչպէս արդարեւ եղաւ առակաւոր իմաստով մը:

Հաւատքով ԻՍԱՀԱԿ օրհնեց Յակոբը եւ Եսաւը՝ ապագան ի մտի ունենալով:

Հաւատքով ՅԱԿՈՒՐ անխքան իր մահը օրհնեց Յովսէփի որդիներէն իրաքանչիւրը եւ խոնարհութիւն ըրաւ իր գաւազանի ծայրին:

Հաւատքով ՅՈՎՍԷՓ մեռնելու ատեն յիշեց Իսրայէլի որդիներուն ելքը Եգիպտոսէն, եւ պատուէր տուաւ իր ոսկորներու փոխարութեան մասին:

Հաւատքով ՄՈՎՍԷՍ երբ ծնաւ, իր ծնողքը պահեցին զայն երեք ամիս, քանզի տեսան, որ մանուկը կայտառ էր, եւ չվախցան թագաւորի հրամանէն: Մովսէս երբ աճեցաւ, հաւատքով մերժեց փարաւոնի աղջկան որդի կոչուիլը. անլի լաւ համարեց չարչարուիլ Աստուծոյ ժողովորդին հետ, քան թէ վայելել ժամանակի մը համար մեղքի հաճոյքները: Անլի կարեւոր նկատեց Աստուծոյ Օծեալին չարչարանքները, քան Եգիպտոսի հարստութիւնը, որովհետեւ իր աչքերը սեւեռած էր գալիք վարձքի հատուցման վրայ: Հաւատքով ձգեց Եգիպտոսը եւ չվախցաւ թագաւորի ցատումէն, որովհետեւ Աներեւոյթը տեսածի պէս համբերեց ու հանդուրժեց: Հաւատքով կատարեց Չատիկը եւ սրկեց արիւնը, որպէսզի անդրանկներու սատակիչը չմօտենար իրենց:

Հաւատքով անցան Կարմիր ծովը, որպէս թէ ցամաքի վրայով, իսկ երբ Եգիպտացիք ալ փորձեցին նույնը ընել, ընկղմեցան:

Հաւատքով Երիքովի պարիսպները ինկան, երբ անոնք եօթն օր դարձան անոր շուրջը:

Հաւատքով Ռախաբ պոռնիկը, որ հիւրընկալած էր Իսրայէլացի լրտեսները խաղաղութեամբ, անհաւատներու հետ չկորսուեցաւ:

Անլի ի՞նչ կրնամ ըսել. ժամանակը բաւական պիտի չըլլայ պատմելու ԳԵՂԷՈՆԻ, ԲԱՐԱԿԻ, ՍԱՄՍՈՆԻ, ՅԵԹՓՍԵԼԻ, ԴԱԻԻԹԻ, ՍԱՄՈՒԷԼԻ եւ ՄԱՐԳԱՐԷՆԵՐՈՒ մասին,

որոնք հաւատքով թագաւորութիւններ կործանեցին, արդարութիւն ի գործ դրին, Աստուծոյ խոստումին իրականացումը տեսան, առիծներու բերանը խցեցին ԴԱՆԻԷԼ կրակի կատաղութիւնը մարեցին ԵՐԵԳ ՄԱՆՈՒԿՆԵՐ՝ սուրի բերանէն ազատուեցան, իրենց տկարութիւնը զօրութեան վերածուեցաւ, պատերազմի մէջ հզօր եղան, օտարներու բանակները խորտակեցին ՄԱԿԱԲԵԱՆՆԵՐ: Կիներ ետ ստացան իրենց մեռած զաւակները, որոնք յարութիւն առին երկու այրի կիներ ԵՂԻԱՅԻ եւ ԵՂԻՍԷԻ ձեռամբ: Ոմանք անխորտակեցին չարչարանքներու ենթարկուիլ, քան ազատ արձակուիլը, որպէսզի լաւագոյն յարութեան տիրանան ԵՂԻԱՋԱՐ: Ոմանք ծաղրանքի եւ ձաղանքի ենթարկուեցան, նոյնիսկ՝ կապանքի եւ բանտարկութեան: Քարկոծուեցան Երեմիա՝ սղոցուեցան. Եսայի՞ հարցափորձի ենթարկուեցան, սուրով մեռան. Օսմունէ եւ եօթը որդիները՝ ոմանք հոս ու հոն թափառեցան ոչխարի եւ այծի մորթեր հագած, կարօտութեան, նեղութեան եւ չարչարանքի մատնուած, որոնց արժանի չէր աշխարհը: Ասոնք թափառական կեանք մը վարեցին անապատներու, լեռներու, քարայրներու եւ երկրի փապարներու մէջ:

Ասոնք բոլորը, թէեւ իրենց հաւատքին համար լաւ վկայութիւն ստացած են, բայց տակաւին չստացան խոստացումը. Աստուած զմեզ ի մտի ունենալով, այնպէս տնօրինած է, որ առանց մեզի հասած չըլլան կատարելութեան» (ԺԱ Գլուխ):

«Ուստի, մենք որ վկաներու այսքան մեծ բազմութիւն մը ունինք մեր շուրջը, ամէն տեսակ հպարտութիւն եւ կրքոտ մեղքերը մէկդի

մետենք, եւ ընթացանք համբերութեամբ այն պայքարին մէջ, որ կը գտնուինք, մեր աչքերը յառած ՀԱԻԱՏՔԻ ԶՕՐԱԳԼՈՒԽԻՆ, եւ զայն կատարելագործող Յիսուսին, որ փոխանակ այն ուրախութեան, որ իրն էր, յանձն առաւ խաչը, արհամարհեց ամօթը եւ նստաւ Աստուծոյ աջ կողմը» (ԺԲ 1-2):

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍՈՒՐԲԵՐ

ԵԿԵՂԵՑԻԻ ՀԻՄՔԵՐ ԵՒ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ

ՄՈՒՏՔ

Նոր Կտակարանի սուրբերը ուղիղ գիծով շարունակութիւնը կը կազմեն Հին Ուխտի արդարներուն, թէ՛ Ֆիզիքական եւ թէ՛ Հոգեւոր մարզերուն մէջ: Այսինքն երկու խումբերն ալ զաւակներն են մէկ եւ նոյն ժողովուրդին: Երկուքն ալ տէր են նոյն ոգիի ու երկուքն ալ կը ծառայեն նոյն Աստուծոյ եւ գրեթէ նոյն գաղափարներուն: Այն աստիճան սերտ եւ անխզելի են այս երկուքին կապերը, որ նորին առաջին սուրբերը կը կազմեն վերջին օղակները հինէն եկող ոսկի շղթային: Աւետարանական բոլոր սուրբերը, մէկ-երկու Հռովմայեցի Հարիւրապետներու բացառութեամբ, ծնած են Հին Ուխտի մէջ եւ դեռ Հաւատարիմ են անոր օրէնքներուն եւ աւանդութեանց կարեւոր չափով: Հիմնական ու գլխաւոր տարբերութիւնն այն է, որ նորերուն առաջին խումբը կը նախապատրաստէ գետինը եւ կը հարթէ ճամբան Մեսիային ու կը տեսնէ արշալոյսը Նոր Դարաշրջանին, զոր հիները լոկ նախատեսած էին: Նորերու յաջորդ խումբը Ֆիզիքական աչքով «կը տեսնէ եւ ձեռքով կը շօշափէ» եւ կը գործակցին Տիրոջ Օծեալին, զոր հիները լոկ հոգևով տեսած էին: Վերջապէս նորերու երրորդ եւ վերջին խումբը կը կազմեն ականատես վկաներու աշակերտները եւ յաջորդները, որոնք մեծ մասը չտեսան իրենց Փրկիչը մարմնաւոր աչքերով, բայց Հաւատացին, եւ որոնք իրարու կը կապեն հրէութենէ եկող եկեղեցին եւ հեթանոսներէ կազմուած եկեղեցին, քանի որ այս խումբը իր մէջ կը պարունակէ երկու շրջանակներէ ալ եկած տարրեր: Ուստի Նոր Կտակարանի սուրբերն ալ պիտի ներկայացնենք՝ բնական քանի մը խումբերու բաժնելով զանոնք:

ՆԱԽԱԿԱՐԱՊԵՏՔ ԲՐԻՍՏՈՍԻ

Այսպէս կը կոչենք այն արդար Հոգիները, որոնք ուղղակի կամ անուղղակի, այս կամ այն Հանգամանքով գետին պատրաստած ու կապուած են Քրիստոսի Հետ եւ օժանդակ ու վկայ Հանդիսացած են Անոր Ֆիզիքապէս աշխարհ գալուն առթիւ:

1-2. ՅՈՎԱԿԻՄ ԵՒ ԱՆՆԱ

Նոր Կտակարանի սուրբերու շարքը կը բացուի այր եւ կին այս երկու արդար Հոգիներով, որոնք իրենց Հաւատքով եւ ոգիով գրեթէ ոչինչով կը տարբերին Աբրահամ ու Սառայէն կամ Սամուէլ մարգարէի ծնողք՝ Եղկանայէն ու Աննայէն: Երեք պարագաներուն ալ այրերը արդար, ուղիղ եւ աստուածավախ մարդեր են: Երեք պարագաներուն ալ կիները՝ բարեպաշտ, բայց ամուլ են: Երեք պարագաներուն ալ, չորրորդ մըն ալ քիչ յետոյ պիտի տեսնենք, Աստուծմէ խոտացուած զաւակներ կ'ունենան:

Յովակիմ եւ Աննա Նոր Կտակարանի սուրբերուն կարգին անցած են լոկ Քրիստոսի նախածնողքը, այսինքն՝ մեծ հայրը եւ մեծ մայրը եղած ըլլալուն համար, մօր կողմէ: Այլապէս՝ անոնք չեն յիշուած Նոր Կտակարանի մէջ:

Իրենց մասին տեղեկութիւն կը քաղենք «Նախաւետարան» կամ «Գիրք Յակոբայ» կոչուած գրութենէ մը, որ թէեւ չէ անցած Ա. Գրոց կանոնի մէջ, բայց ախորժով կարգացուած է նախնի Քրիստոնեաներու կողմէ: Գիրքը կը բովանդակէ առաւելաբար Յիսուսի մանկութեան ընկալուած ռճով կը Հաստատեն, որ վառ երեւակայութեան ծնունդ են առաւելաբար: Սակայն այլ կէտերու մէջ ներելի է մտածել, թէ այդ գիրքը իր մէջ կը պարունակէ տարրեր եւ արձագանգները նաեւ վաւերական աւանդութեանց: Այս գիրքը որպէս թէ գրած ըլլայ Յակոբոս Տեառնեղբայրը, սակայն գիտնականներ կը կարծեն, որ դրուած է Հրեայ քրիստոնեայի մը կողմէ 150ական թուականներուն:

Ըստ այս գրքին՝ Յովակիմ, Դավթի ցեղէն, բարեպաշտ եւ մեծահարուստ մարդ մըն է. իսկ Աննա, քահանայական տունէ, համեստ եւ երկիւղած կին մըն է:

Օր մը Յովակիմ, երբ Աստուծոյ Տաճարին մէջ ընծայ կը մատուցանէր ուրիշներու հետ, պաշտօնի վրայ եղող քահանան ըսաւ, որ ինք պարտաւոր էր ամէնէն վերջը ներկայանալ, քանի որ զաւակ չունէր: Ասկէ շատ վերաւորուեցաւ Յովակիմ, ձգեց տաճարը եւ ուղղակի լեռ ելաւ իր հովիւներուն հետ. «Եւ միտքը դրաւ տուն չվերադառնալ, ոչ ալ ուտել կամ խմել, մինչև որ Աստուած այցելեր իրեն: Աղօթքը իրեն կերակուր ըրաւ եւ արցունքը՝ «ըմպելի»: Երբ Աննա իմացաւ իր ամուսնոյն տունէն հեռանալը, ինք ալ սուգի զգեստ հագաւ եւ ինքզինքը աղօթքի եւ ապաշխարանքի տուաւ:

Օր մը Աննա պարտէզ իջած էր աղօթելու համար, աչքերը վեր առաւ եւ տեսաւ թռչունները, որոնք բոյն շինած իրենց ձագուկները կը կերակրէին. այս տեսարանէն Աննային սիրտը սաստիկ փոփոխեցաւ եւ ըսաւ Աստուծոյ լալով. «Վայ ինծի, թռչուններէն անգամ վար մնացի. անոնք ձագուկներ ունին ու ես զրկուած եմ զաւակի մը շնորհէն»: Ու այսպէս երկար աղօթեց լալահառաչ: Այն ատեն Տիրոջ հրեշտակը երեւցաւ անոր եւ ըսաւ, թէ լսուած էին իր աղօթքները, եւ ահա Աստուած իրեն մանուկ մը պիտի շնորհէր, որուն անունը ամբողջ աշխարհ պիտի տարածուէր: Աննա ուխտեց, որ եթէ զաւակ մը ունենայ, մանչ կամ աղջիկ, Աստուծոյ պիտի ընծայէր:

Նոյն տեսիլքը երեւցած եւ նոյն աւետիսը տրուած էր նաեւ Յովակիմին, որ լեցուած ուրախութեամբ՝ իր արջառներէն եւ ոչխարներէն լաւագոյնները ընտրեց Աստուծոյ Տաճարին եւ քահանաներուն նուիրելու, եւ բազմաթիւ մատաղներ մորթեց աղքատներուն համար ու վերադարձաւ տուն: Աննա յղացաւ ու ծնաւ հրեշտակային մանուկ մը, զոր կոչեցին Մարիամ, որ կը նշանակէ լուսաւորեալ, քանի որ նորածինը լոյսի պէս աղջնակ մըն էր, «որով օրհնուեցան բոլոր ազգերը»: Աստուծոյ տաճարին ընծայեցին զայն կաթնէ կտրուելէն յետոյ:

Ըստ աւանդութեան Յովակիմ չէ տեսած թռչունիկը՝ Յիսուս մանուկը, իսկ Աննա տեսած, երջանկացած ու կարճ ժամանակ մը յետոյ վախճանած է խաղաղութեամբ:

Յովակիմ եւ Աննայի յիշատակը կը կատարէ Հայց. Եկեղեցին, Իւլյաբեր կանանց հետ, Վերափոխումի իննօրեակին անմիջապէս յաջորդոց Երեքշաբթի օրը: Իրենց տունն ալ մինչև ես օրս կը ցուցուի Երուսաղէմի մէջ, որ եկեղեցիի վերածուած է, թէև ըսողներ կան, որ անոնք ապրած են Բեթղեհէմ կամ Նազարէթ:

Հայ եկեղեցին ի պատիւ Յովակիմի եւ Աննայի, գեղեցիկ շարահաններ յօրինած է, որոնց մէջ կը հաստատուի, թէ այն օրհնութիւնը, որ Աստուծոյ կողմէ տրուեցաւ «աստուածազոյգ արուաց եւ իգաց», լիովին իրականացաւ Յովակիմ եւ Աննայի վրայ:

Կը յիշուի, որ Հին Ուխտի արքայական ու քահանայական «գաւազանները միացան Յովակիմ եւ Աննայի վրայ, որոնց միակ պտուղը եղաւ Ս. Կոյսը: Ու կ'եզրակացնէ Շարականը.

«Ի յամուկ երկրէ (Յովակիմէ եւ Աննայէ) այսօր բուսաւ մեզ բարեբեր բոյսն բարի, շուշան հովտաց, ծաղիկն դաշտաց. Միամայրն Մարիամ, արմատ Տնկոյն անմահութեան: Աղաչանօք սոցա խնայեա ի մեզ»:

Յոյնք կը յիշատակեն այս երկուքը Սեպտ. 9ին: Լատինք՝ Յովակիմը առանձինն Մրտ. 20ին, Աննա զատ Յլս. 26ին:

3. ՅՈՎԱԿԻՄ «ԱՍՏՈՒԱԾԱՀԱՅՐ»

Յիսուսի Հայրագիրը եւ ամուսինը Աստուածամայր Մարիամին, որուն նմանողաբար կոչուած է «Աստուածահայր»: Յովսէփ ալ Դավթի ցեղէն էր: Աւետարանը զայն կը կոչէ «Արդար» մարդ: Երբ կը յիշուի Աւետարանին մէջ, արդէն իսկ նշանուած է Մարիամին հետ, եւ կը բնակի Նազարէթ եւ իր ապրուստը կը շահի հիւանդութեամբ:

Տակաւին պաշտօնապէս չէին ամուսնացած, երբ Յովսէփ վերահասու եղաւ, թէ իր նշանածն յղի է արդէն: Յովսէփ շուտով իր եւ շփոթութեան մատնուեցաւ եւ որովհետեւ ազնիւ մարդ մըն էր, առանց պատճառը հրապարակելու «որոշեց լուելեայն արձակել» իր նշանածը: Մինչդեռ այսպէս կը խորհէր, Աստուծոյ հրեշտակը տեսիլքի մը մէջ երեւցաւ անոր եւ ըսաւ. «Յովսէփ, որդի Դավթի, մի վախնար տունդ երեւցաւ անոր եւ ըսաւ. «Յովսէփ, որդի Դավթի, մի վախնար տունդ առնելէ Մարիամը իբր քու կինդ, որովհետեւ անոր մէջ ծնածը Ս. Հո-

գիէն է. պիտի ծնի որդի մը, անոր անունը Յիսուս պիտի դնես (որ կը նշանակէ ՓՐԿԻՉ), որովհետեւ ան պիտի փրկէ իր ժողովուրդը մեղքերէ»: Ու ասիկա կը կատարուի Համաձայն Աստուծոյ խօսքին (որ տրուեցաւ Եսայի մարգարէին). «Ահա կոյսը պիտի յղանայ եւ պիտի ծնի որդի մը, որուն անունը պիտի դնեն Էմմանուէլ» (որ կը թարգմանուի Աստուծո մեզի հետ): Յովսէփ, երբ արթնցաւ քունէն, Տիրոջ հրեշտակին ըսածին պէս ըրաւ իր մօտ առաւ իր կինը եւ աւելի սերտ սիրով ու յարգանքով կապուեցաւ անոր եւ ամէն մարզի մէջ տէր ու պաշտպան կանգնեցաւ անոր, որ արժանացած էր Աստուծոյ կողմէ բարձրագոյն պատիւին, այսինքն՝ «Բարձրեալի Որդի»ին մայր ըլլալու գերագոյն պաշտօնին:

Երբ ծնաւ Յիսուս, Յովսէփ ի գործ դրաւ անոր վրայ օրէնքի բոլոր պահանջները ութօրեայ թլփատել տուաւ եւ քառասներեայ Աստուծոյ տաճարին ընծայեց եւ ետ ստացաւ զայն՝ Տաճարին ընծայելով զոյգ մը աղաւնի:

Երբ Յիսուսի կեանքին դէմ մահուան վտանգ յարուցուեցաւ, Աստուծոյ հրեշտակին հրամանով փոքրիկը եւ մայրը փախցուց Եգիպտոս, ուր մնաց քանի մը տարիներ, եւ կրկին հրեշտակի հրամանով վերադարձաւ ու բնակեցաւ Նազարէթ:

Յիսուս, երբ տասներկու տարեկան եղաւ, ըստ օրէնքի պահանջքին առաջին անգամ Երուսաղէմ տարաւ զայն: Վերադարձի ճամբուն վրայ ինք եւ մայրը անդրադարձան, որ Յիսուս իրենց հետ չէր, վերադարձան Երուսաղէմ եւ Յիսուսը գտան տաճարի մէջ, շրջապատուած օրէնքի վարդապետներով, որոնց խելացի պատասխաններ կուտար: Յովսէփ տեսաւ Յիսուսի մեծութեան արշալոյսը: Այս միջոցէն յետոյ չի յիշուիր այլեւ Աւետարաններուն մէջ, որմէ կը հետեւցուի, որ Յովսէփ վախճանած էր Յիսուսի հանրային գործունէութեան սկսելէ առաջ:

Յովսէփ մեծ անուն ունի Կաթողիկ եկեղեցիի մէջ եւ հռչակուած է անոր պաշտպան սուրբը: Որչափ բարձր բռնուած է Յովսէփի անունը Կաթողիկ եկեղեցիի մէջ, նոյնքան աննշան պահուած է ան արեւելեան եկեղեցիներու՝ յատկապէս մեր մէջ: Մեր եկեղեցիի մէջ, օրինակ՝ չենք յիշեր տաճար մը, որ ընծայուած ըլլայ իր անունին, ոչ ալ շարական մը յօրինուած է ի պատիւ իրեն: Իր տօնական յիշատակութիւնն ան-

գամ կորսուած է ուրիշ տօնելիքներու խումբի մը մէջ, որոնք ըստ երեսոյթին ոչ մէկ կապ ունին իր հետ, նաչի վեցերորդ Կիրակիին յաջորդող Երկուշաբթին:

Ասկայն քիչեր այնքան մեծ հաւատքի հերոս եղած են, որքան՝ Յովսէփ: Այս մասին համոզուած կարելի է կազմել՝ վերլուծելով, որ այս մարդը դեռ կը շարունակէ այրը մնալ իր կնոջ, որուն որովայնի պտուղը գիտէ, թէ իրմէ չէ, բայց միաժամանակ կը հաւատայ հրեշտակային յայտնութեան, թէ աստուծային է: Կարելի՞ է երեւակայել աւելի մեծ հերոսութիւն, քան ապրիլը կուսական կեանք մը հրեշտակագեղ կնոջ մը հետ, պարզապէս պահպանել հանդիսանալով մշտնջենական կուսութեան անոր, որ արժանի եղած էր աստուծային բարձրագոյն շնորհին, մայր ըլլալու Անոր մարմնացած Որդիին: Կարելի՞ է երեւակայել աւելի մեծ պատիւ ու պարտականութիւն, քան Հայր լինել եւ հօր մը բոլոր պարտականութիւնները կատարել հանդէպ մէկու մը, որ «Որդի Բարձրելոյ պիտի կոչուէր»: Որքան ալ Յիսուս բազմիցս կոչուած ըլլայ «Որդի Աստուծոյ» կամ «Որդի Դաւթի» կամ «Որդի Մարգոյ», կոչուած է նաեւ եւ պիտի մնայ որպէս «Որդի Յովսէփայ»:

Ասիկա Յովսէփին անկապտալի եւ յաւիտենական փառքն է: Հետեւապէս Յովսէփին անկապտալի եւ յաւիտենական փառքն է: Հետեւապէս արդար է Կաթողիկ եկեղեցիին բարձրագոյն յարգանքը, որ ընծարար արդար է Կաթողիկ եկեղեցիին յիշատակին: Եւ արժանի է, որ ան ներկայացուի աստուծային իր մանուկը բարձր ու Հայրաբար բռնած իր աշխատատրի կարջնեղ բազուկներէն մէկին վրայ, եւ միւս ձեռքին մէջ բռնած շուշանածաղիկ մը, խորհրդանշանը իր անարատութեան եւ հոգեկան մաքրութեան:

Ոչինչով կ'արդարանայ սակայն մեր եկեղեցիի անտարբերութիւնը այս խոնարհ աշխատատրին հանդէպ, որ որքան իշխանական ծագում ունի, նոյնքան եւ աւելի ազնուական հոգիի մը տէր է եւ արժանացած՝ «Աստուծահայր» անգերագանցելի կոչումին:

Ս. Յովսէփ Յայսմաւուրքի մէջ ներկայացուած է իբրեւ մարդ մը «ամբողջովին քաղցրութեամբ լեցուն, հեզ, ողորմած, մարդասէր, վշտակից այլոց եւ օտուած ամենաբարի բնութեամբ»:

Յոյնք կը յիշատակեն զայն Դեկտ. 25ը կանխող Նախահարց Կիրակիին, Լատինք՝ Մարտ 19ին:

Կոյսի, ինչպէս նաեւ Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան մայր Տաճարը Գումգափուի մէջ:

Մարիամ ամէն մասամբ արժանի է այն պատիւներուն, որոնք իրեն կ'ընծայուին վերոյիշեալ կերպով, ու մանաւանդ այն գերագոյն պատիւին, ըստ որուն մեր բոլոր եկեղեցիներու Ա. Պատարագի սեղանները պսակուած են Ա. Կոյսի մայրական նկարով՝ աստուածային իր Մանուկը գրկին մէջ:

5-6. ԶԱՔԱՐԻԱ ԵՒ ԵՂԻՍԱՔԵԹ

Մնողը՝ Յովհաննէս Մկրտիչի: Թէեւ Եղիսաքեթի անունը չերեւիր մեր տօնացոյցին մէջ, սակայն մենք իրաւունք զգացինք անոր անունն ալ աւելցնելու Նոր Կտակարանական սուրբերու շարքին՝ հիմնուելով աւետարանական եւ պատմական տուեալներու վրայ:

Աւետարանին մէջ ասոնց երկուքն ալ հաւասարապէս ներկայացուած են իբրեւ արդար եւ օրինապահ անձեր: «ԵՐԿՈՒՔՆ ալ ԱՐԴԱՐ էին Աստուծոյ առջեւ եւ կը պահէին Տիրոջ պատուիրանները եւ օրէնքները անարատութեամբ» (Ղուկ. Ա 6): Իսկ պատմական ու այժմէական իրականութիւնը այն է, որ միւս Հին եկեղեցիներու մէջ Եղիսաքեթ տօնելի սուրբերու շարքին մէջ մտած է արդէն: Այնպէս որ մեզի համար անհասկնալի մնաց, թէ ինչո՞ւ բացակայ է ան մեր տօնացոյցին մէջ: Եթէ Չաքարիան տօնացոյցի անցած է, Յովհաննէս Մկրտչի հայրը եղած ըլլալուն համար, ապա նոյն իրաւունքին արժանի է նաեւ Եղիսաքեթը, իբրեւ մայրը Մեծ Կարապետին:

Երկուքն ալ քահանայական ցեղէ էին եւ զուրկ մնացած՝ զակի մը մխիթարութենէն, որովհետեւ կ'ըսէ Աւետարանը. «Եղիսաքեթ ամուսնացաւ»: Ամուսնութիւնը հրէից մէջ մեծագոյն զրկանքներէն մէկն էր: Եղիսաքեթ իբրեւ «ազգական» կը ներկայանայ Ա. Կոյս Մարիամին: Այդ ազգականական կապին ինչ ըլլալը չէ յստակուած Աւետարանին մէջ: Ուր որ Աւետարանը կը լռէ, աւանդութիւնը կը լրացնէ: Ըստ աւանդութեան՝ երկու քրոջ զաւակներ. որով Յիսուս եւ Յովհաննէս ալ երկու քրոջ թոռներ կ'ըլլան, ըստ այս աւանդութեան:

Կրնանք ըսել, որ Նոր Ուխտի աստուածային մեծ տրամային վարագոյրը կը բացուի Չաքարիայի երեւումով Աւետարանի սրբազան

Թատերաբեմին վրայ, ուր զբաղած է՝ խունկ մատուցանելով Աստուծոյ Տաճարին մէջ: Նուիրական այս պարտականութեան կատարումի ընթացքին Չաքարիա կ'արժանանայ տեսիլքի մը. «Տիրոջ հրեշտակը երեւցաւ իրեն՝ կանգնած խնկոց սեղանի աջ կողմը: Չաքարիա խոսովքի եւ սարսափի մատնուեցաւ այս տեսարանէն». սակայն Տիրոջ հրեշտակը անոր վախը փարատելու համար ըսաւ.

«Մ'ի վախնար, Չաքարի'ա, աղօթքդ լսելի եղաւ Աստուծոյ առջեւ Կինդ՝ Եղիսաքեթ զաւակ մը պիտի բերէ քեզի, անոր անունը Յովհաննէս պիտի դնես...»: Չաքարիային անհաւատալի թուեցաւ նման աւետիս մը, ուստի ըսաւ.

– Ինչպէս կրնամ վստահ ըլլալ այս մասին, քանի որ ես եւ կինս ծերացած ենք արդէն:

Հրեշտակը գոհ չմնաց տարակոյսով լի այս պատասխանէն եւ ծանրութեամբ ու յանդիմանական շեշտով ըսաւ.

– Ես Գաբրիէլն եմ, որ մշտապէս Աստուծոյ ներկայութեան կը մնամ հրամանները գործադրելու համար: Աստուծոյ զրկուեցայ քեզի տալու այս աւետիսը, բայց քանի որ նշան մը կ'ուզես համոզուելու համար, այս վայրկեանէն համար պիտի ըլլաս եւ պիտի չկրնաս խօսիլ մինչեւ ըսածս կատարուի:

Երբ Չաքարիա դուրս ելաւ տաճարէն, իր լեզուն կապուած էր արդարեւ եւ նշանացի կերպով կ'աշխատէր բացատրել իր ուշացման պատճառը: Ամէն ոք հասկցաւ, որ գերբնական պատահարի մը հանդիպած է:

Երբ Տաճարի շրջանակին մէջ իր պարտականութեան օրերը լրացան, վերադարձաւ իր տունը, որ Երուսաղէմէն դուրս էր: Աւանդութիւնը անոր բնակութիւնը կը դնէ ներկայ Այն Քէրիմ կոչուած գիւղը, ոչ շատ հեռու Երուսաղէմէն, ուր մինչեւ օրս կը ցուցուի իրենց տունը, եկեղեցիի վերածուած: Հայերս այս գիւղը կը կոչենք «Յովհաննու Մնունդ», ուր ունեցած ենք նաեւ եկեղեցիներ, որոնք սակայն ժամանակի ընթացքին Լատինաց ձեռքը անցած են:

Յղացաւ Եղիսաքեթ եւ Աստուծոյ գոհութիւն կը մատուցանէր, որ «նայած էր իրեն, եւ ամուսնեան նախատինքը վերցուցած էր իրմէ»:

Երբ Ա. Կոյսը աւետուածէն յետոյ իրեն այցելեց, «Նդիսաբէթ լեցուեցաւ
Ս. Հոգիով եւ բարձր ձայնով աղաղակեց՝ խօսքը ուղղելով Մարիամին.

«Օրհնեալ ես դուն կիներու մէջ,

Եւ օրհնեալ է որովայնիդ պտուղը.

Ուրկէ՞ ուր այս շնորհը ինձի,

Որ տիրոջ մայրը ինձի այցելէ,

Երբ լսեցի ողջոյնիդ ձայնը,

Խաղաց մանուկս հրճուագին որովայնիս մէջ.

Երանի անոր, որ կը հաւատայ,

Թէ Տիրոջ ըսածները պիտի իրականանան»։ (Ղուկ. Ա 42-46)

Երկու խոնարհ Հոգիներ, լեցուած գերբնական ուրախութեամբ, իրարու հետ կը խօսին բանաստեղծական լեզուով։ Աստուծոյ Հոգին, մարգարէական ու ներշնչումի Հոգին, որ գրեթէ լուծ էր երեք-չորս դարերէ ի վեր, յանկարծ կրկին կ'իջնէ մարդոց վրայ՝ սկսելով այս համեստ երկու կիներէն, որոնք իսկապէս կը խօսին մարգարէներու լեզուով։

Նոյնը կը պատահի նաեւ պապանձած Զաքարիային, որու մանկան աչքերը մեր աշխարհի լոյսին բացուելէ յետոյ՝ կը բացուին նաեւ իր լեզուին կապանքները եւ ինքն ալ լեցուած Ս. Հոգիով, մարգարէացաւ եւ ըսաւ.

«Օրհնեալ ես, Տէր Աստուած Իսրայէլի,

Որ այցելութեան ելար մեզի,

Փրկութիւն բերիր ժողովուրդիդ...»

Ու խօսքը իր նորածին որդիին ուղղելով՝ ըսաւ.

«Եւ դուն, ով մանկիկ,

Բարձրեալի մարգարէ պիտի կոչուիս.

Տիրոջ առջեւէն պիտի քալես

Անոր ճամբաները հարթելու համար,

Պիտի ուղղես նաեւ մեր ոտքերը

Դէպի խաղաղութեան ճամբաները» (Ղուկ. Ա 67-69)։

Այս կէտին երկուքին ալ առաքելութիւնը լրացած ըլլալով՝ կը քաշուին հրապարակէն՝ իրենց տեղը տալով իրենց մեծանուն զաւկին։ Ու կը փակեն աչքերը Արդարութեան Արեգակի ծագման արշալոյսը նշմարած ըլլալու խաղաղութեամբ։

Զաքարիա մեր մէջ կը տօնուի Եղեկիէլի եւ Եզրի հետ, Վերափոխման յաջորդող երրորդ շաբթուան Երեքշաբթի օրը։

Յոյնք Զաքարիան առանձինն կը յիշատակեն Սեպտ. 5ին, իսկ Լատինք՝ երկուքը միասին Նոյ. 5ին։

7. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ

Յիսուսէ վերջ մեծագոյն դէմքը Աւետարաններու մէջ եւ գլխաւոր գործիչը Նոր Կտակարանի սկիզբները։ «Աստուծոյ թագաւորութեան», այսինքն՝ Քրիստոնէական եկեղեցիի դարաշրջանը պաշտօնապէս բացողը եղաւ Յովհաննէս։

Խոստումի զաւակ էր, ինչպէս տեսանք, եւ իր ծնունդը կատարուեցաւ հրաշալի պայմաններու ներքեւ։ Իր ապագայ դերը հանգամանօրէն ճշդուած էր հրեշտակին կողմէ, որ աւետեց անոր ծնունդը իր հօր։

«Նա մեծ պիտի ըլլայ Տիրոջ առջեւ

Գինի եւ օղի պիտի չխմէ.

Ս. Հոգիով պիտի լեցուի մօրը որովայնէն.

Իսրայէլի որդիներէն շատերը իրենց Աստուծոյն պիտի դարձնէ.

Եղիայի Հոգիով պիտի քալէ Տիրոջ ներկայութեան.

Որդիներուն սիրտերը պիտի հաշտեցնէ հայրերուն հետ.

Ըմբոսները արդարներու իմաստութեամբ պիտի լեցնէ.

Տիրոջ համար կազմ ու յարմար ժողովուրդ մը պիտի պատրաստէ» (Ղուկ. Ա 15-17)։

Յովհաննէսի պատանութիւնը եւ երիտասարդութիւնը անցան բնակութեան վայրերէ հեռու մենութեան մէջ, Աստուծոյ ներկայութեան եւ շնորհաց հովանիին ներքեւ։

Հրապարակ իջաւ քարոզելու երեսուն տարեկանին, Հռովմի «Տիբերիոս կայսեր տասնեւհինգերորդ տարին»: Քարոզութեան վայրն էր Յորդանանի հովիտը: Աւետարաններու մէջ Յովհաննէս նոյնացած է Եսայի մարգարէի կողմէ նախատեսուած «Անապատի մէջ բարձրացող ձայն»ին հետ, որ կ'ըսէ.

«Տիրոջ համար ճամբայ պատրաստեցէք,
Անոր համար շիտակ ուղիներ հարթեցէք» (Ղուկ. Գ 4-5):

Յովհաննէսի քարոզութիւնը իր հոգիին եւ կեանքին՝ զգեստին եւ կերակուրին պէս պարզ ու ժուժկալ է: Կարելի է երկու բառերու մէջ խտացնել՝ Ապաշխարանք եւ Արդարութիւն:

«Ապաշխարեցէք, որովհետեւ մօտեցած է երկինքի արքայութիւնը... Ապաշխարանքի արժանի պտուղներ տուէք... Կացինը ծառին արմատին քով դրուած է. բարի պտուղ չտուող ծառը պիտի կտրուի եւ կրակը նետուի» (Ղուկ. Գ 7-9):

Ու կ'աւելցնէր.

«Ով որ երկու հանդերձ ունի, մէկը չունեցողին թող տայ. նոյնը ընել կերակուրի պարագային: Պետական պաշտօնեաներ իրենց թոշակով թող գոհանան. ժողովուրդէն աւելին չպահանջեն, անիրաւութիւն չընեն, չզրպարտեն ոչ ոք» (Ղուկ. Գ 10-14):

Տեսնելով Յովհաննէսի ուժեղ եւ անվախ քարոզութիւնը եւ մեծ հեղինակութիւնը, ոմանք կը հարցնէին, արդեօք ա՞յս է Մեսիան: Յովհաննէս կ'ըսէր՝ ոչ. «Ես ձեզ կը մկրտեմ ջրով ի նշան ապաշխարանքի, բայց ինձմէ յետոյ կուգայ հզօրագոյնը, որուն կօշիկներուն կապն անգամ քակելու արժանի չեմ ես. Ան ձեզի պիտի մկրտէ Ս. Հոգիով եւ կրակով»:

Յովհաննէսի գործունէութեան գագաթը կազմեց զՅիսուս մկրտելը, եւ զայն իբրեւ խոստացուած Մեսիա յայտարարելը: Երբ տեսաւ, որ Հիսուսն ալ սովորական բազմութեան մէջ խառնուած մկրտութեան կը մօտենայ, իր մարգարէական ոգիովը ճանչցաւ զայն եւ ուզեց արգելք հանդիսանալ: «Ես քեզմէ պէտք է մկրտուիմ, եւ դուն ինձի՞ կուգաս» ըսելով: Յիսուսի պնդումին վրայ տեղի տուաւ եւ մկրտեց զայն ու յայտարարեց. «Ահա Աստուծոյ Գառնուկը, որուն վրայ բեռցուած

է աշխարհի մեղքերը». եւ որ մարդոց փոխարէն զոհուելով՝ քաւութիւն պիտի տայ անոնց մեղքերուն. ու շարունակեց.

«Սա է, որու մասին կ'ըսէի, թէ ինձմէ յետոյ պիտի գայ... Ես եկայ զայն յայտարարելու Իսրայէլի ժողովուրդին... Տեսայ ես Հոգին, որ կ'իջնէր երկինքէն Անոր վրայ աղաւնիի կերպարանքով: Ես զայն չէի գիտեր, սակայն Ան, որ զիս ղրկեց. ըսաւ. Որուն վրայ որ կը տեսնես Հոգիին իջնելը, Ան է, որ Ս. Հոգիով պիտի մկրտէ: Ու ես տեսայ եւ կը վկայեմ, թէ Սա է Աստուծոյ Որդին» (Յովհ. Ա 29-34):

Յիսուսի մկրտութեամբ, եւ զայն իբրեւ խոստացեալ Մեսիա յայտարարելէ յետոյ, Յովհաննէսի առաքելութիւնը վերջացած էր: Արդարեւ այս դէպքէն քիչ յետոյ Հերովդէս Թագաւոր նախ բանտարկեց զայն, զինքը յանդիմանած ըլլալուն համար, իր եղբօր կինը յափշտակելուն առիթով: Ու քիչ վերջն ալ գլխատել տուաւ ծանօթ ու եղբրական պայմաններու տակ:

Քրիստոս մեծ համարում ունի Յովհաննէսի մասին. առիթով մը զայն որակեց. «Մարգարէէն ալ աւելի մեծ մէկը». եւ նոյնացուց զայն Մաղաքիա մարգարէի գրքին վերջին համարներու մէջ նախատեսուած Աստուծոյ պատգամաւորին հետ ու աւելցուց. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. կիներէ ծնածներուն մէջ Յովհաննէս Մկրտիչէն աւելի մեծ մէկը չէ ելած, բայց երկինքի արքայութեան մէջ փոքրիկը անկէ մեծ է... Օրէնքը եւ մարգարէները. Յովհաննէսով վերջ գտան. ու եթէ ուզէր ընդունիլ՝ ան նոյնինքն Եղիան է, որ գալիք էր» (Մատթ. ԺԱ 11-14):

Յովհաննէս ունեցած է նաեւ աշակերտներ, ինչպէս առ հասարակ կ'ունենային իր ժամանակակից բոլոր մեծ ուսուցիչները:

Յովհաննէս յիշուած է նաեւ իր ժամանակակից Յովսէփոս հրեայ պատմիչի կողմէ, որ արդարեւ կը հաստատէ, թէ սպաննուած է Հերովդէսի կողմէ:

Մեր եկեղեցիին մէջ Աստուածածինէն յետոյ մեծագոյն սուրբը կը նկատուի Յովհաննէս: Սերտօրէն կապուած է ան մեր եկեղեցիին եւ պատմութեան հետ: Հայաստանի ամբողջական դարձի օրերուն, երբ Ս.

Գրիգոր Լուսաւորիչ ձեռնադրուած կը վերադառնայ Կեսարիայէն, իր հետ կը բերէ նաեւ Յովհաննէս Մկրտչի մասունքներէն մաս մը, զոր կը դնէ Հայ հողի վրայ ստեղծուած առաջին ծանօթ աղօթաւայրին մէջ, Մուշ քաղաքի մօտիկ, ուր ապա կը կառուցուի նշանաւոր Ս. Կարապետի վանքը, որ կ'ըլլայ մեր եկեղեցիի ամէնէն հռչակաւոր ուխտավայրը: Նշանաւոր էր նաեւ Կեսարիոյ Ս. Կարապետի վանքը, ուր եւս սուրբին մասունքը կը գտնուէր:

Հայ եկեղեցին չորս անգամ տօնախմբութիւն սահմանած է անոր համար: Առաջինը իր Մենդեան յիշատակութիւնն է, Ութօրէքին յաջորդ օրը: Երկրորդը իր գլխատումն է, Զատիկի յաջորդող Շաբաթ օրը: Երրորդը Տօն կաթողիկէի Հինգշաբթին, Աթնանգինէ Եպս. ին հետ, որուն նշխարները եւս բերած էր Ս. Գր. Լուսաւորիչ Սեբաստիայէն: Իսկ վերջինը Վերափոխման երրորդ շաբթուան Հինգշաբթի օրը, Յովբի հետ միասին: Իրեն ի պատիւ շատ մը շարականներ ու տաղեր յօրինուած են մեր մէջ, սրտառուչ են յատկապէս Զորօհնէքի տաղերը, որոնց մէջ գլխաւոր տեղը կը գրաւէ Յովհաննէս Մկրտչի:

Յոյներ վեց անգամ տօն սահմանած են ի պատիւ մեծ Կարապետին, իսկ Լատինք՝ երեք: ա) Բու՛ն եւ մեծագոյնը՝ Յնվր. 8: բ) Յղութիւն Յովհաննու Եղիսարեթէն՝ Սեպտ. 23: գ) Մնու՛նդը՝ Յնս. 24: Նոյնպէս Լատինք: դ) Գլխատումը՝ Օգոս. 29: Նոյնպէս Լատինք: ե) Առաջին Գիւտ Նշխարաց իր գլխոյն՝ Փետր. 24: Նոյնպէս՝ Լատինք: զ) Երկրորդ Գիւտ Նշխարաց Գլխոյն՝ Մյու. 25:

8. ԲԵԹԼԵՀԷՄԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Առաջին անմեղները, որոնք իրենց արիւնը թափեցին Քրիստոսի համար: Իրենց տարբերութիւնը միւս մարտիրոսներէն այն եղաւ, որ նախ անգիտակից էր իրենց արեան հեղումը. երկրորդ՝ իրենք մեռան Աստուծոյ Որդին ֆիզիքապէս ապրեցնելու համար, երբ միւս մարտիրոսները պիտի մեռնէին Քրիստոսէ շնորհուած կեանքը յաւերժացնելու համար:

Հրէաստանի Հերովդէս թագաւորը, երբ իմացաւ մոգերէն, թէ «Հրէից Արքայ» մը ծնած է, բնականաբար խռովեցաւ ինք, եւ ամբողջ Երուսաղէմը իրեն հետ:

Կասկածոտ եւ արիւնարբու բռնակալը այս լուրը առնելուն՝ արդէն որոշած էր ընկիւղը, ուստի ըսաւ մոգերուն. «Գացէ՛ք եւ ստոյգը իմացէ՛ք նորածին մանկան մասին, եւ ապա ինծի ալ լուր տուէ՛ք, որպէսզի ես ալ գամ ու երկրպագեմ անոր»:

Մոգեր, Աստուծոյ հրամանով չվերադարձան Հերովդէսին, որ հրաման հանեց Բեթլեհէմի եւ շրջակայքի երկու տարեկանէն վար բոլոր փոքրիկները սուրէ անցընել՝ խորհելով որ անոնց մէջ պիտի մեռնէր նաեւ «Հրէից թագաւորը»: Քանի՞ մատաղ կեանքեր հնձուեցան այս կոտորածէն՝ Աստուծոյ միայն գիտելի պիտի մնայ: Մեր հաւատքով գիտցածը այն է, որ այս փոքրիկները կազմեցին առաջին փաղանքը այն ընտրեալներու, որոնք, ըստ Յայտուութեան Գրքի Հաւաստմին, իրենց ճակտին վրայ ունին Աստուծոյ Գառնուկին անունը եւ իրենց քնարները կը զարնեն ու երգեր կ'երգեն Աստուծոյ աթոռին առջեւ...: Ասոնք շարունակ Աստուծոյ Գառնուկին հետ են. ասոնք ընտրուեցան մարդոց որդիներէն իբրեւ ԵՐԱՆԱՅՐԻՔ, ու անոնք մեղք չգործեցին, որովհետեւ անբիծ էին» (Յայտ. ԺԴ 1-5):

Մեր եկեղեցին յօրինած է շարականներու փնջիկ մը ի գովեստ այս անմեղներուն, ուր ըսուած է իրենց մասին.

«Բանաւոր գառինք ի տանէն Եփրաթայ,
Որք մատուցան Ս. Պատարագ ի Հերովդէսէ,
Որպէս գԱբէլ ի Կայննէ»:

«Մաղկեցաւ Բեթլեհէմ, հեղմամբ արեան սուրբ տղայոցն,
Բերկրեցաւ եւ Ռաքէլ անուշահոտ պատարագօք»:

Իսկ «Մանկունք» շարականը պսակումն է բոլորին:

«Երանելի սուրբ մանկունքն, որպէս քաջ նահատակը,
Ետուն գանձինս իւրեանց ի մահ,
Փոխանակ Որդոյն Աստուծոյ:
Եւ դիակունք սուրբ մանկանց, որպէս զծաղիկ նոռնեաց,
Հարեալ ի կարկտէ, եւ անկեալ ի Ս. Բեթլէհէմ:
Եւ հոգիք սուրբ մանկանց, որպէս գերամս աղանեաց,
Թռուցեալք ի յերկինս եւ դասեալք ընդ զըւարթունս»:

Կը կատարենք ասոնց յիշատակը Տօն Կաթողիկէի յաջորդող
Երկուշաբթի օրը, ուրիշ խումբ մը մարտիրոսներու հետ:

Յոյն օրացոյցը ասոնց թիւը «չորեքտասան բիւր» կը նկատէ եւ
կը յիշատակէ Դեկտ. 29ին: Լատինք՝ Դեկտ. 28ին:

Գլուխ Երկրորդ

ԱՌԱՔԵԱԼ ՆԵՐ

Առաքեալները կը կազմեն երկրորդ եւ կարեւորագոյն խումբը
Նոր Կտակարանի սուրբերուն մէջ: Իրականութեան մէջ՝ զուտ քրիս-
տոնեայ սուրբերու շարքը կը սկսի Առաքեալներով: Նախապէս յի-
շուածները չեն մկրտուած բացի հաւանաբար Ս. Կոյսէն, Քրիստոնէա-
կան մկրտութեամբ: Առաքեալներ առաջին մկրտեալները եղան թէ՛
չրով եւ թէ՛ Ս. Հոգիով:

«Ասոնք ընտրուեցան ուղղակի Քրիստոսի կողմէ: Տասներկու է
անոնց թիւը. իրենցմէ մին՝ Յուդան, այս խումբէն դուրս ինկաւ մատ-
նութեամբ իր վարդապետին, եւ անձնասպանութեամբ: Անոր տեղ, յետ
Համբարձման Քրիստոսի, ուրիշ մը ընտրուեցաւ վիճակով: Ասոնք
Քրիստոսի անմիջական առաջնորդութեամբ պատրաստուեցան ու
դաստիարակուեցան իրենց ապագայ մեծ առաքելութեան համար:
Ականջալուր եղան Անոր քարոզութեանց եւ ականատես՝ Անոր հրաշք-
ներուն եւ հզօր գործերուն: Կարեւորագոյնը՝ վկաները եղան Քրիստո-
սի յարութեան:

Առաքեալ կը նշանակէ մէկու մը կողմէ դրկուած, դրկողին հեղի-
նակութեամբը եւ պատգամովը: Իր կենդանութեան իսկ զրկեց Յիսուս
այս տասներկուքը «զոյգ-զոյգ»: Աւետարանը քարոզելու համար
զուտ հրէական շրջանակներու մէջ: Անոնց տուաւ յատկապէս «իշխա-
նութիւն պիղծ դեւերու վրայ», ինչպէս նաեւ հիւանդութիւններ
բժշկելու կարողութիւն (Մատթ. Ժ 1): Իսկ իր վերջին պատուէրը եղաւ
անոնց. «Ինչպէս Հայրը զրկեց զիս, ես ալ կը զրկեմ ձեզ: Գացէք
ուրեմն, ինծի աշակերտ ըրէք բոլոր հեթանոսները. մկրտեցէք զանոնք
անունովը Հօր, Որդւոյ եւ Ս. Հոգիի, սորվեցուցէք անոնց պահել այն
ամէնը, զորս ես իբրեւ պատուէր տուի ձեզի. ու ես ձեզի հետ եմ
մինչեւ աշխարհի վախճանը» (Մատթ. ԻԸ 18-19):

Գործնականապէս Առաքեալները եղան հիմքերը եւ հիմնադիր-
ները եկեղեցիին, այսինքն՝ անոր առաջին անդամները, առաջնորդ-
ները, վարիչները եւ կազմակերպիչները:

Թէ արդարեւ սրտովին կապուած էր իր վարդապետին, ի յայտ եկաւ այն պարագային, երբ Յիսուսի աշակերտներէն ոմանք «խիստ» եւ անմարտելի գտած էին Անոր կարգ մը հոգեւոր խօսքերը եւ հեռացած վարդապետէն: Յիսուս հարցուց տասներկուքին. «Դո՞ւք ալ կ'ուզէք հեռանալ»: Ղարձեալ Պետրոսն է, որ առաջ կը նետուի եւ կ'ըսէ. «Տէ՛ր, որո՞ւ պիտի երթանք, յաւիտենական կեանքի խօսքեր ունիս դուն» (Յովհ. Զ 67-69):

Պետրոս իր կեանքին նուաստագոյն օրը ապրեցաւ Յիսուսի ձերբակալման գիշերը, երբ երեք անգամ ուրացաւ զայն: Խորապէս զղջաց ու դառնօրէն լացաւ: Յիսուս ներեց անոր եւ վերահաստատեց զայն իր առաքելութեան մէջ: Թերեւս ոչ մէկ ազգակ այնքան նպաստեց իր մէջ խորտակելու իր յանձնապատանութեան յոռի գիծը՝ որքան իր ուրացումը եւ ներուիլը: Քարի պէս կարծր այս մարդը, այս ելեւէջներով, եւ Քրիստոսի շնորհաց հարուածներուն ներքեւ կոկուցեցաւ, դառնալու համար ամէնէն անձնասէր եւ գործունեայ Առաքեալը:

Հոգեգալուտէն անմիջապէս յետոյ ինքն է, որ յանուն իր ընկերներուն կը բացատրէ իմաստը հրաշալի երեւոյթին. կուտայ քրիստոնէական առաջին քարոզը, եւ Քրիստոսի յարութեան առաջին վկայութիւնը, շահելով այսպէս երեք հազար նորադարձներու երեխայիքը եւ օտտելով Քրիստոնէական նորածին եկեղեցին աւելի մեծ մարմինով եւ նոր ծանրութեամբ: Կը քարոզէ Հրէաստանի մէջ գրեթէ ամենուրէք. Երուսաղէմ տաճարի մէջ եւ իր ազգի գերագոյն ժողովի առջեւ, մինչեւ Սամարիա, Եաֆա, Պաղեստինեան Կեսարիա եւ այլուր: Կը գործէ հրաշքներ, որոնց մէջն է Ս. Հոգիի դէմ ստող նորադարձ քրիստոնեայ ամուլի մը մահացումը, եւ ուրիշ բարեգործ մահացեալ կնոջ մը յարութիւն տալը:

Պետրոսի մեծագոյն գործերէն մէկը եղաւ, աստուածային թելադրանքով եւ յատուկ տեսիլքով, հեթանոսները եկեղեցիի ծոցին մէջ ընդունելը, հակառակ նորակազմ եկեղեցի ջախջախիչ մեծամասնութեան գաղափարին, որ ամբողջութեամբ կը բաղկանար Հրեաներէ: Ի վերջոյ ձերբակալուեցաւ եւ բանտարկուեցաւ Հերովդէս Թագաւորի կողմէ, որ որոշած էր յաջորդ օրը հրապարակով գլխատել զայն, բայց աստուածային միջամտութեամբ նոյն գիշեր իսկ ազատեցաւ բանտէն:

Վերջին անգամ կը տեսնենք զինքը Երուսաղէմի առաքելական ժողովին, որմէ յետոյ այլեւ չյիշուիր Գործք Առաքելոցի մէջ:

Պօղոս Առաքեալի թուղթերէն մէկին մէջ յանուանէ կը յիշուի Պետրոս, որ կը գտնուի Անտիոք քաղաքի մէջ, եւ Պօղոսի խիստ դիտողութեան կ'արժանանայ, որովհետեւ հրէամիտ քրիստոնեաներու կողմէ կը հակի, ի հեճուկս հեթանոսներէ եկած քրիստոնեաներու (Պաղ. Բ 11-15):

Թէ Պետրոս մարտիրոսական մահով վախճան պիտի ունենար, այլաբանօրէն նախատեսուած էր Քրիստոսի կողմէ (Յովհ. ԻԱ 18), սակայն Գործք Առաքելոցի մէջ իր մահը պատմուած չէ: Աւանդութիւնը կ'ըսէ, որ Պետրոս Անտիոքէն անցած է Հռոմ եւ այնտեղ կնքած է իր կեանքը՝ գլխիվայր խաչուելով: Իր աւանդական գերեզմանին վրայ շինուած է աշխարհի մեծագոյն եկեղեցին՝ Հռոմի Ս. Պետրոսը:

Պետրոսի անունով ունինք երկու սքանչելի թուղթեր Նոր Կտակարանի մէջ՝ ուղղուած ընդհանրապէս Փոքր Ասիոյ Քրիստոնեայ համայնքներուն:

Հայց. եկեղեցին Պետրոսի յիշատակը կը տօնէ Պօղոս Առաքեալի հետ միասնաբար, «Գլխաւոր Առաքեալներ» անուան տակ, Ս. Մնունդը կանխող Աւագ Տօներու շարքին: Յոյնք՝ Պօղոսի հետ՝ Յունիս 29: Լատինք՝ իր Աթոռակալութիւնը ի Հռոմ՝ Յովր. 18. Այցելութիւնը Անտիոք՝ Փետր. 22, Եղթայք Պետրոսի՝ Օգոս. 1:

10. ԱՆԴՐԷԱՍ ԱՌԱՔԵԱԼ

Եղբայր Պետրոսի եւ արհեստակից անոր: Յիսուսի առաջին ծանօթ հետեւողը եղած ըլլալուն համար կոչուած է «Նախակոչ» Առաքեալ: Ինք եւ հաւանաբար Յովհաննէս Աւետարանիչ նախապէս աշակերտ էին Յովհաննէս Մկրտչի, որմէ լսելով Յիսուսի մասին տրուած վկայութիւնը՝ «Ահա Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեզ աշխարհի», հետեւեցան Անոր (Յովհ. Ա 35-40):

Ետքէն աւելի պաշտօնապէս կանչուեցաւ առաքելութեան իր եղբոր Պետրոսի հետ (Մատթ. Գ 18-20):

Քիչ բան ըսուած է իր մասին Աւետարաններու մէջ, ոչինչ՝ Գործք Առաքելոցի մէջ: Իր անունը յիշուած է Հացերու հրաշքին կապակցու-

թեամբ, ուր ինքն է որ յայտնէ, թէ պատանիի մը քով Հինգ գարեղէն
Հաց եւ երկու ձուկ կը գտնուի, զորս Յիսուս օրհնելով եւ բազմացոյց
բաշխեց աւելի քան Հինգ հազար բազմութեան (Յովհ. Զ 2-8, տե՛ս
նաեւ Յովհ. ԺԲ 22):

Ըստ ականդութեան՝ եղած է քարոզիչ Ալիւթացիներուն, առանց
մնայուն հետք կամ եկեղեցի մը ձգելու անոնցմէ: Բարոզած կը
նկատուի նաեւ Հիւսիսային Յունաստանի մէջ եւ նահատակուած
Բաթրաս քաղաքը, բազմապատկութեան նշանին նման խաչի մը վրայ,
որ այդ իսկ պատճառով կը կոչուի Ս. Անդրէասի իմաչ: Ակովտիոյ եկե-
ղեցին եւ Յունաց Տիեզերական Պատրիարքութիւնը զայն կը նկատեն
իրենց պաշտպան սուրբը: Հայ Եկեղեցին կը յիշատակէ զայն Փիլիպ-
պոս Առաքեալի հետ, Յիսնակի պաշտոն Բարեկենդանի նախորդ Եր-
օրը: Յոյնք եւ Լատինք՝ նոյ. 30:

11. ՅԱԿՈՒՐՈՍ ԶԵԲԵՂԵԱՆ ԱՌԱՔԵԱԼ

Զատորոշուելու համար իր բազմաթիւ անուանակիցներէն կը կո-
չուի նաեւ «Մեծն Յակոբոս»: Բայց Հայոցս մէջ ծանօթ է որպէս
«Գլխադիր Առաքեալ»: Երէց եղբայրը Յովհաննէս Աւետարանիչի եւ
որդի՝ Գալիլիացի ձկնորսապետ Զեբեդէոսի: Առաքելներէն այս երկու
եղբայրներուն մայրն ալ ծանօթ է Աւետարանի էջերէն եւ կը կոչուի
Սողոմէ, որ Քրիստոսի հետեւող կիներէն մէկն էր, որ համարձակու-
թիւն ունեցաւ իր զաւակներուն հետ խնդրելու Անկէ, որ բարձրագոյն
տեղերը գրաւեն իր որդիները Անոր արքայութեանը մէջ (Մատթ. Ի
20-23):

Յակոբոս, Պետրոսի եւ իր եղբոր՝ Յովհաննէսի հետ կը կազմէին
այն սեղմ շրջանակը, որոնց աւելի կը վստահէր Յիսուս, եւ որոնք
աւելի կապուած էին իրենց վարդապետին: Յայրոսի աղջկան յարու-
թեան, այլակերպութեան եւ Գեթսեմանիի Տագնապին ներկայ են այս
երեքը միայն: Երբ Սամարացիները մերժեցին Հիւրընկալել Յիսուսը եւ
իր աշակերտները, զայրացան Զեբեդեան եղբայրները եւ Յիսուսէն
հրաման ուզեցին, որ Եղիայի պէս կրակ թափեն այս մարդոց գլխուն
(Ղուկ. Թ 54): Յիսուս յանդիմանեց անոնց յախուսն եւ վրէժխնդիր
ոգին: Այս եւ այլ նման դէպքերէն, ուր այս երկու եղբայրները չա-
փազանցեալ եռանդ կը ցուցաբերէին, կոչուեցան «Բաներեգէս»,

այսինքն՝ «Որդիքն Որոտման», եւ այդպէս ալ ծանօթ են մեր մէջ
(Մարկ. Գ 17):

Յակոբոս միակ առաքեալն է, որուն մահը պատմուած է Գործք
Առաքելացի մէջ: Առաքելական խումբին մէջ իբրեւ աչքի զարնող եւ
եռանդուն անձնաւորութիւն մը, Հերովդէս ձերբակալել տուաւ զայն
եւ գլխատեց (Գործք. ԺԲ 1-2), շուրջ 99 թուին, Երուսաղէմի մէջ, այս-
եւ գլխատեց (Գործք. ԺԲ 1-2), շուրջ 99 թուին, Երուսաղէմի մէջ, այս-
պես՝ Հանդիսանալով առաջին նահատակը առաքելական խումբին:
Ըստ ականդութեան՝ իր մարմինը Եաֆայի ծովը նետուած՝ եւ ալիք-
ները զայն Հանած են Սպանիոյ եզերք, ուր կը վայելէ մեծ ժողովրդա-
կանութիւն: Սակայն իր անունը աւելի սերտօրէն կապուած է Հայոցս
կանութիւն: Սակայն իր անունը աւելի սերտօրէն կապուած է Հայոցս
հետ: Ըստ ականդութեան՝ Յակոբոսի գլուխը բերուած է Յակոբոս
Տեառնեղբայր Առաքեալին, որ Երուսաղէմի մայր եկեղեցիին առաջին
եպիսկոպոսն էր, որ թաղած է այս պատուական գլուխը իր տան պար-
տէզին մէջ: Այս տան տեղն է, որ կառուցուած է Երուսաղէմի մեր
Սրբոց Յակոբեանց մայր տաճարը, որուն հիւսիսային պատի մէջ
բացուած փոքր մատրան մը մէջ կը ցուցուի իր գլուխին գերեզմանը,
այսինքն՝ ԳԼԽԱԴԻՐ, իբրեւ մակդիր գործածուած է ժողովրդային
խաւերու մէջ այս Առաքեալին համար: Կը տօնուի իր եղբորը հետ Ս.
Մնունդը կանխող «Աւագ Տօներուն» իբրեւ վերջինը:

Յոյնք՝ Ապրիլ 30: Լատինք՝ Յուլիս 25:

12. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼ

Ամէնէն պայծառ ու խոհուն դէմքը առաքելական դասուն: Սիրոյ
աշակերտը, Աստուածաբան Աւետարանիչը, Յայտնութեանց Տեսա-
նողը:

Յովհաննէս, հակառակ թերեւս մտքերու մէջ կազմուած Հանդար-
տաբարոյ անձի մը պատկերին, Աւետարաններու մէջ նախ կը ներկա-
յանայ իբրեւ անհանդուրժող, վրէժխնդիր, կորովի եւ փառասէր երի-
տասարդ մը, սակայն միշտ նուիրումով լեցուն Քրիստոսի Հանդէպ:
տարիներու աշակերտութիւն մը Քրիստոսի դպրոցին մէջ բաւա-
կան եղաւ, որ ան փոխակերպուի Աւետարանի ամէնէն շքեղ դէմքերէն
մէկին: Իր մէջ ներդաշնակուած են նկարագրի մը հակադիր կարծուած
գիծերը՝ եռանդը եւ Հանդարտութիւնը, քաջութիւնը եւ բարութիւնը,
մեծութիւնը եւ խոնարհութիւնը, սէրը եւ խստութիւնը:

Առաքելոց մէջ կրտսերագոյնը ըլլալը կը թուի, սակայն ապրեցաւ երկարագոյնը: Իր բարեմոյն բնաւորութեան, նուիրումին եւ այլ ազնիւ յատկութեանց համար արժանացած է Յիսուսի մասնաւոր սիրոյն, այն աստիճան, որ տիրացած է «Սիրելի Աշակերտ» տիտղոսին: Այս սիրոյն արժանի կացուց ինքզինք Յովհաննէս, որ քան Յիսուսի ի պաշտպանութիւն իր ինչ-ինչ միամիտ ելոյթներով, բայց մանաւանդ Յիսուսի ձերբակալման գիշերը, երբ միւս աշակերտները ձգեցին ու փախան, ինք հաւատարմօրէն հետեւեցաւ իր սիրելի վարդապետին չարչարանաց ամբողջ գիշերը՝ խաչի ճամբան՝ մինչեւ Գողգոթա, ուր արժանացաւ արդարեւ գերագոյն շնորհին. Յիսուս իր մայրը յանձնեց Յովհաննէսին, եւ զայն ալ իր մօրը որդին յայտարարեց: Ու Յովհաննէս ունեցաւ իր բարեպաշտ մօրը կողքին երկրորդ եւ նոյնքան հարազատ ու անգերագանցելի մայր մը, յանձին Աստուածամօր:

Միաշաբթի առաւօտ, երբ իմացաւ Յիսուսի գերեզմանին պարապ գտնուիլը, Պետրոսին հետ վազեց գերեզման, տեսաւ ամէն բան եւ «հաւատաց» Քրիստոսի յարութեան առանց Յարուցեալը տեսած ըլլալու:

Առաջին եկեղեցիի «Սիւններէն» մէկն է Յովհաննէս, Յակոբոս Տեառնեղբայր Առաքելային եւ Պետրոսի հետ, որմէ անբաժան է յաճախ իր անունը Գործք Առաքելոցի սկիզբները: Օրինակ՝ ի ծնէ կաղ մարդու մը բժշկութիւնը կը վերագրուի երկուքին հաւասարապէս, որ մեծ խնդիր հանեց հրէից մէջ եւ պատճառ եղաւ երկուքին ձերբակալուելուն եւ բանտ դրուելուն: Յաջորդ օր հանուեցան իրենց Ազգ. Գերագոյն Ժողովին առջեւ, ուր համարձակ պատասխաններ տուին, ու մեծամեծները, «տեսնելով Պետրոսի եւ Յովհաննէսի համարձակութիւնը եւ վերահասու ըլլալով, որ տգէտ եւ առանց դպրութեան մարդիկ են, զարմանքի մատնուած էին»: Օրինական պատճառ մը չգտնելով զանոնք պատժելու՝ պարզապէս արգիլեցին «ամենեւին չխօսիլ եւ չուսուցանել Յիսուսի անունով: Իսկ Պետրոս եւ Յովհաննէս պատասխան տուին՝ ըսելով՝ Դուք դատեցէք, ո՛րն է շիտակը. ձեզի՛ լսել, թէ՛ Աստուծոյ: Սակայն մենք չենք կրնար չքարոզել մեր տեսած եւ լսած բաներու մասին: –Անոնք սպառնացին եւ արձակեցին զանոնք» Հաշուի առնելով ժողովուրդը, որ փառք կուտար Աստուծոյ պատահած հրաշքին համար (Գործ. Դ 1-22):

Երուսաղէմի ժողովէն յետոյ Առաքելայինը գրեթէ մի առ մի ցրուեցան զանազան երկիրներ: Աւանդաբար կը պատմուի, թէ Յովհաննէս ալ գացած է Եփեսոս, ուր մնացած է երկար տարիներ եւ ընդարձակած՝ Պողոս Առաքելային այնտեղ սկսած գործը, մինչեւ որ քարոզուած է Եփեսականի կղզներէն Պատմոս, ուր տեսած է այն խորհրդաւոր տեսիլքները, որոնք մեզի ներկայացուած են «ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ» գրքին մէջ:

Յովհաննէսի մեծագոյն փառքն է իր Աւետարանը, որ գրուած է նախորդ երեքէն տարբեր ոճով ու տարբեր ոգիով, որուն նպատակն է մեզի ներկայացնել Քրիստոսը, իբրեւ Որդի Աստուծոյ: Այս գիրքը ամէնէն խորունկը ու ամենէն հոգեւորն է Նոր Կտակարանի 27 գիրքերուն: Այս Աւետարանին մէջ Քրիստոս աւելի խոր եւ աւելի լրիւ յայտնութիւն մը կուտայ ինքզինքին եւ Աստուծոյ մասին: Յովհաննէսի Աւետարանը լրացուցիչն է առաջին երեքին: Գրեթէ գրքին կէսը յատկացուած է Յիսուսի կեանքի վերջին օրերու խօսքերուն եւ գործերուն: Հրաշալի է մանաւանդ գրքին յառաջաբանը, ուր կը ներկայացուի Քրիստոս իբրեւ Աստուծոյ «Բան»ը, այսինքն՝ անձնաւորեալ ցուի Քրիստոս իբրեւ Աստուծոյ «Բան»ը, եւ Աստուած է»: Իմաստութիւնը, որ «ի սկզբանէ է. Առ Աստուած է. եւ Աստուած է»: Նկատելի պարագայ մըն է, որ այս Աւետարանին մէջ յանուանէ չեն յիշատակուած ոչ ինք, ոչ իր եղբայրը եւ ոչ ալ՝ իր մայրը: Սա նախ ուղղակի կարեւոր փաստերէն մէկն է այս Աւետարանին Յովհաննէսի կողմէ գրուած ըլլալուն, եւ երկրորդ՝ իր համեստութեան ու խոնարհութեան:

Յովհաննէսի անունով Նոր Կտակարանին մէջ կան նաեւ երեք թուղթեր: Առաջինը Հինգ գլուխներէ բաղկացած Հոյակապ գրութիւն մըն է, որուն նպատակն է հաւատացեալները զգուշացնել մեղքի եւ սուտ քարոզիչներու դէմ՝ զօրացնելով իրենց հաւատքը ի Քրիստոս եւ հաւաստիք ներշնչելով անոնց յափտենական կեանքի մասին: Բանալի բառերն են «սէր» (աւելի քան քսան անգամ գործածուած), «գիտութիւն» կամ անոր համագոր բառեր (երեսուն անգամ) եւ «հաղորդութիւն»: Երկրորդ եւ երրորդ թուղթերը մէկական գլուխով Նոր Կտակարանի կարճագոյն գրութիւններն են, ուղղուած անհատներու առաջինը՝ «առ ընտրեալ Կիւրիա (Տիրուհի) եւ իր որդեակները»: Նոր Կտակարանի միակ թուղթը, որ կնոջ մը ուղղուած է. այստեղ ալ բա-

նալի բառերը «սէր» եւ «ճշմարտութիւն» են: Երկրորդ գրուածքն է «Գայիոս սիրելիին»: Թ'է Աւետարանը եւ թ'է թուղթերը գրուած են Առաքեալի կեանքի վերջին տարիներուն: Իր մահը պատահած կը նկատուի 100 թուականին, շուրջ 95 տարեկան: Թ'է եւ շատ չարչարանքներ տեսած, բայց մահը տեղի ունեցած է խաղաղ պայմաններու տակ Եփեսոսի մէջ: Կը պատմուի, որ ծերութեան տարիքին, երբ երկար չէր կրնար խօսիլ, եկեղեցի կուգար լոկ ըսելու համար. «Մանկունք սիրեցէք զիրար»: Իր գերեզմանին վրայ փառաւոր եկեղեցի մը կառուցած էր, որուն ակերակներ միայն կանգուն կը մնան այսօր:

Յոյնք՝ Սեպտ. 26 եւ Մյս. 8, Լատինք՝ Դեկտ. 27 եւ Մյս. 6:

13. ՄԱՏԹԷՆՍ ԱՌԱՋԵԱԼ

Կափառնաւորի մէջ մաքսաւոր մը, այսինքն՝ պետական հարկահաւաք պաշտօնեայ մըն էր Մատթէոս: Մաքսաւորները հրէից աչքին ատելի մարդիկ էին երկու պատճառներով: Նախ՝ օտար պետութեան մը հրեայ պաշտօնեաներն էին, որոնք ժողովրդային խաւերուն հետ ուղղակի շփում ունէին՝ տուրք գանձելով ի հաշիւ ատելի իշխող ժողովուրդին: Երկրորդ՝ իրենց սահմանուածէն ակելի կը գանձէին իրենք ալ հարստանալու համար: Ասոնք նոյնացած էին «մեղաւորներու» հետ, եւ առհասարակ միասին կը յիշուին: Հակառակ այս իրողութեան, մաքսաւորներ նպաստաւոր լոյսի ներքեւ ներկայացուած են Աւետարաններու մէջ: Օրինակ՝ Յովհաննէս Մկրտչի մկրտուելու եկող ապաշխարողներու մէջ կան նաեւ մաքսաւորներ, որոնք կը հարցնէին մարգարէին, թէ ինչ պարտ էին ընել: Յովհաննէս կը պատասխանէ. «Զեցի հրամայուած (տուրքէն) ակելին մի առնէք» (Ղուկ. Դ 12-13): Ծանօթ է առակը Փարիսեցիին ու Մաքսաւորին, որոնք աղօթքի համար տաճար կ'երթան, ու մաքսաւորը, ընդունելով իր մեղաւոր ըլլալը, Աստուծոյ քաւութիւն կը հայցէ իր վրայ. եւ Յիսուս կը հաստատէ, որ «Սա ակելի արդարացած իջաւ իր տունը, քան փարիսեցիին», որ բարեպաշտութեան տիպարն էր եբրայական չափանիշներով: Ծանօթ է նաեւ Զաքէոս մաքսաւորին դարձը, իր ինչքերուն կէսը աղքատներուն տալով եւ իրմէ անիրաւեալին քառապատիկ հաստուցում ընելու պատրաստակամութեամբ:

Ասոնցմէ մէկն էր նաեւ Լեւի Ալփեանը, որ Մատթէոսի նախկին կամ հրէական անունն է: Նստած էր Կափառնաւորի իր մաքսատան մէջ, երբ Յիսուս անցաւ այնտեղէն: Սրտագէտն Աստուծոյ Որդին տեսաւ անոր մէջ առաքելական ատաղձ եւ պարզապէս ըսաւ «Ետեւս եկուր»: Մատթէոս ամենայն հաւանականութեամբ լսած էր Յիսուսի քարոզութիւնը Կափառնաւորի ժողովարանին մէջ ու ականատես կամ ականջալուր եղած էր անոր հրաշքներուն, եւ հետեւաբար լաւ տրամադրուած էր հանդէպ Յիսուսի, այնպէս որ, երբ Անկէ կոչ ստացաւ սիրով եւ պատրաստակամութեամբ «ձգեց ամէն բան» եւ Յիսուսի հետեւեցաւ:

Մատթէոս սակայն, նախ քան իր գործէն եւ ընկերային շրջանակէն հրաժարիլը, մեծ ընդունելութիւն մը սարքեց իր տան մէջ, որուն հրաւիրեց իր բոլոր պաշտօնակիցները եւ Յիսուսը իր աշակերտներով: Ասիկա զօրաւոր տրտունջի տեղի տուաւ դպիրներու եւ փարիսեցիներու կողմէ, թէ Յիսուս «մեղաւորներու եւ մաքսաւորներու հետ սեղան կը նստի», որոնց Յիսուս տուաւ իր նշանաւոր պատասխաններէն մէկը. «Առողջները բժիշկի պէտք չունին, այլ՝ հիւանդները, գացէք եւ սորվեցէք, թէ ինչ կը նշանակէ ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ զոհ» (մարգարէական խօսքը: Բաց աստի ակնցուց Յիսուս. «Ես չեկայ արդարները կանչելու, այլ՝ մեղաւորները» (Մատթ. Թ 9-13):

Այսչափ է մեր գիտցածը Մատթէոսի մասին Աւետարաններէն. մնացեալը կը փորձէ լրացնել աւանդութիւնը, որ զայն քարոզութեան կը դրկէ մինչեւ Հապէշիստան, կամ Պարսկաստան ու Պարթեւաստան, ուր եւ նահատակուած կը նկատուի:

Մատթէոսի անկապտելի փառքը իր Աւետարանն է, առաջին գիրքը Նոր Կտակարանի եւ յարմարագոյն օղակը Հին Կտակարանը նորին կապող: Արդարեւ այս գրքին առաջին էջը կը բացուի յիշատակութեամբ Հին Կտակարանի «հիմնադիր հայրերու» եւ արքայական զարմերուն, իբրեւ օրինական նախահայրերը Յիսուս Քրիստոսի «Որդւոյ Դաւթի, Որդւոյ Աբրահամի»: Երկրորդ՝ նուազագոյն վաթճամբ անգամ ակնարկութիւն կայ իր գիրքին մէջ Հին Կտակարանի մարգարէութեանց եւ քառասուն անգամ մէջբերումներ կատարուած են անոնցմէ, իբրեւ կատարումը անոնց մարգարէութեան: Հետեւաբար

բանալի բառ մըն է այս գրքին մէջ «կատարուեցաւ ըսուածը» այսինչ մարգարէին կողմէ: Եւ «երկնքի թագաւորութիւն» բացատրութիւնը, որ երեսուն-քառասուն անգամ կը յիշուի այս գրքին մէջ: Նպատակն է՝ Հաստատել, թէ Յիսուս Նազովրեցին ակնկալուած Մեսիանն էր: Նշանաւոր է Մատթէոսի Աւետարանին «Լեբան Քարոզ»ը: (Ե-է գլուխներ), որ Նոր Ուխտի Օրինագիրքը կամ Սահմանադրութիւնը կարելի է նկատել, եւ որ միաժամանակ Համամարդկային կրօնաբարոյական գրականութեան գագաթը կը կազմէ:

Մատթէոս մեր մէջ կը տօնուի իր երեք միւս աւետարանիչ ընկերներուն Հետ, Խաչի վեցերորդ Կիրակիի նախընթաց Շաբաթ օրը: Յոյնք՝ Նոյ. 16: Լատինք՝ Փետր. 24:

14. ԲԱՐԹՈՂՈՄՄԵՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Թէեւ մեր տօնացոյցին անցած է Բարթողիմէոս կամ Բարթուղիմէոս ձեւերով, բայց իր շիտակ անունն է ԲԱՐԹՈՂՈՄՄԵՈՍ, որ կը նշանակէ Թողմէի որդի: Հայոցս «Առաջին Լուսաւորիչներ» յորջորջուած երկու առաքեալներէն մէկը: Յովհաննու Աւետարանին մէջ իր առաքելութեան կոչումը կը կատարուի ՆԱԹԱՆԱՅԷԼ անուան տակ:

Փիլիպոս Առաքեալ Յիսուսի կողմէ «գտնուելէ» յետոյ իր կարգին «կը գտնէ Նաթանայէլը» եւ կ'ըսէ անոր.

- Ան, որու մասին գրած է Մովսէս Օրէնքի գրքին մէջ, եւ մարգարէները իրենց գիրքերու մէջ, մենք գտած ենք արդէն: Նոյն ինքն Յիսուսն է, Յովսէփի որդին, Նազարէթէն:

Նաթանայէլ, որ Նազարէթին մօտիկ Կանա գիւղն էր, լաւ կը ճանչնար այդ քաղաքը եւ Հետեւաբար ըսաւ անկեղծօրէն.

- Իսկ Նազարէթէն կրնա՞յ միթէ բարի բան մը ելլել:

- Փիլիպոս չփորձեց տարհամոզել, այլ ըսաւ պարզապէս.

- Եկուր եւ ինքդ տես:

Երբ Յիսուս տեսաւ Նաթանայէլը, որ իրեն կուգար. ըսաւ.

- Ահա արդարեւ Իսրայէլացի մը, որուն մէջ նենգութիւն չկայ:

- Ուրկէ՞ կը ճանչնաս զիս, - ըսաւ Նաթանայէլ նոյն Համարձակութեամբ:

- Նախ քան Փիլիպոս քեզ կանչելը, ես քեզ տեսայ Թգենիին տակ,- վրայ բերաւ Յիսուս: Թէ ինչ կը նշանակէր այդ ակնարկութիւնը, մեզի Համար մուժ կը մնայ այսօր, բայց յստակօրէն Հասկցուեցաւ Նաթանայէլի կողմէ, որ անմիջապէս փոխեց իր կարծիքը առնուազն Նազարէթցի Յիսուսի մասին եւ բացագանչեց.

- Ռաբբի, դուն Աստուծոյ Որդին ես, դուն Իսրայէլի թագաւորն ես: «Թագաւոր Իսրայէլի» պարզապէս կը նշանակէ «Մեսիա» ակնկալուած Փրկիչը: Այս դաւանութեամբ Նաթանայէլ կը ժառանգէ «Նախադաւան Առաքեալ» փառաւոր կոչումը: Աստուածային նախախնամութեամբ եւ նախատեսութեամբ արժանի եւ իրաւ էր, որ «նախադաւան» ազգին Առաքեալը ըլլար նաեւ առաջինը զՅիսուս «Որդի Աստուծոյ» դաւանողներուն մէջ:

Նաթանայէլի անունը կ'երեւի նաեւ առաքեալներու այն եօթնեակին մէջ, որոնք Յիսուսի յարութենէն յետոյ Գալիլիա վերադարձած էին, զԱյն վերստին տեսնելու յոյսով, սակայն սպասելէ ձանձրացած՝ օրին մէկը ձկնորսութեան կ'ելլեն Հաւաքաբար, երբ արդարեւ խորհրդաւոր պայմաններու ներքեւ արժանի կ'ըլլան յարուցեալ Փրկչի տեսութեան:

Բարթողիմէոս, ըստ աւանդութեան՝ Իրանի բարձրաւանդակի գանազան երկիրները քարոզելէ յետոյ, կը մտնէ Հայաստանի սահմանները, եւ կը շարունակէ իրմէ առաջ Հոն եկած Թադէոս Առաքեալի ներձը: Ինք ալ կը թափանցէ արքունիք եւ թագաւորի քոյրը դարձի գործը: Ինք ալ կը թափանցէ արքունիք եւ ձերբակալուի Հայոց Սանատրուկ կը բերէ, որուն պատճառով կը ձերբակալուի Հայաստանի Հարաւարեւելեան մարտիկ չարչարաններու կենթարկուի, մինչեւ իսկ մորթագործ ըլլալով՝ կը նահատակուի Հայաստանի Հարաւարեւելեան մասին մէջ: Իր գերեզմանին վրայ, ի Հաղբակի, փառաւոր տաճար մը կառուցուած էր, եւ վանք մը Հաստատուած, որ այսօր աւերակոյտ մըն է միայն:

Կը տօնենք զայն Հայաստանի միւս «Լուսաւորիչ» Թադէոս Առաքեալի Հետ, Յիսնակի առաջին Կիրակիի յաջորդող Շաբաթ օրը: Յոյնք՝ Յունիս 11 եւ Օգոս. 25:

Լատինք՝ Օգոս. 25:

15. ՓԻԼԻՊՊՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Առաջին կանչուած առաքելներէն մէկը: Երբ Յիսուս մկրտութեանն եւ փորձութենէն յետոյ Գալիլիա վերադառնալու վրայ էր «կը գտնէ Փիլիպպոսը եւ կ'ըսէ անոր. «Ետեւէս եկուր»: Փիլիպպոս ալ Բեթսայիդացի էր, Պետրոսի քաղաքացի (Յովհ. Ա 43-44): Հաւանաբար ինք ալ Յովհաննէս Մկրտչի աշակերտներէն էր նախապէս եւ ապա հետեւեցաւ Յիսուսի:

Քանիցս յիշուած է Փիլիպպոս Յովհաննու Աւետարանին մէջ ինչ-ինչ միջադէպերու կապակցութեամբ, առհասարակ Անդրէասի հետ միասնաբար:

Օրինակ՝ հացերու հրաշքի առթիւ Յիսուս նախ Փիլիպպոսի կը հարցնէ, թէ ուրիշ պէտք էր հաց ճարել այս հսկայ բազմութեան համար: «Այս հարցումը ըրաւ Յիսուս, փորձելու համար զայն, բայց ինք որոշած էր իր ընկիւքը», կ'ըսէ Աւետարանիչը փակագծի մէջ: Փիլիպպոս կը պատասխանէ. «Երկու հարիւր դահեկանի, աւելի քան քսան սթրիլին, հաց անգամ պիտի չբաւէ այս բազմութեան» (Յովհ. 2 5-7): Ապա յիշուած է կարգ մը հեթանոսներու զՅիսուս տեսնելու փափաքին առնչութեամբ, որոնք կը մօտենան նախ Փիլիպպոսին, հաւանաբար քաջախերուելով անոր զուտ յունական անունէն, որ կը նշանակէ «ձիասէր», կամ անոր յունարէն գիտնալէն: Փիլիպպոս եւ Անդրէաս (նշանակալից է, որ այս անունն ալ յունական է) կը ներկայացնեն զանոնք Յիսուսին: Վերջին ընթրիքի ընթացքին, երբ Յիսուս վերջին խօսքերը կ'ընէր աշակերտներուն, յաճախ կ'ընդմիջուէր աշակերտներուն կողմէ հարցումներով: Ասոնց կարգին է նաեւ Փիլիպպոս: Յիսուս երբ կ'ըսէ. «Եթէ զիս ճանչցաք, ապա Հայրս ալ ճանչցած եղաք. ուստի այլեւս կը ճանչնաք զայն, քանի որ տեսաք զայն»: Փիլիպպոս կ'ընդմիջէ. «Տէ՛ր, ցոյց տուր մեզի Հայրը, եւ աւելին չենք ուզեր»: Յիսուս կը պատասխանէ. «Այսչափ ժամանակ ձեզի հետ եմ, եւ չի ճանչցար դեռ զիս, Փիլիպպո՛ս. ով որ զիս տեսաւ՝ Հայրը տեսած եղաւ եւ դուն ինչպէ՞ս կրնաս ըսել՝ ցոյց տուր մեզի Հայրը...» (Յովհ. ԺԲ 7-10):

Աւանդութիւնը կ'ըսէ, որ քարոզած է Փոքր Ասիոյ մէջ եւ նահատակուած խաչելութեամբ Հիերոպոլիս քաղաքի մէջ:

Կը տօնախմբուի իր անբաժան ընկերոջ՝ Անդրէասի հետ, Խաչի իններորդ Կիրակիին յաջորդող Շաբաթ օրը:

Յոյնք՝ Նոյ. 14: Լատինք՝ Մյս. 1:

16. ԹՈՎՄԱՍ ԱՌԱՔԵԱԼ

Առաքելութեան կանչուած ըլլալու պարագաները անյայտ են իրեն եւ ասկէ յետոյ գալիք մնացեալ հինգ առաքելներուն, բացի վերջինէն:

Ծանօթ է իր թերահաւատութեամբ: Երբ միւս ընկեր առաքելները ըսին, որ յարուցեալ Տէրը տեսած են, Թովմաս պնդեց, որ մինչեւ ինք ալ իր աչքերով չտեսնէ զայն եւ իր ձեռքը չմխէ անոր խոցուած կողին, չի հաւատար: Ու արդարեւ, յաջորդ շաբաթ, երբ կրկին հաւաքուած էին առաքելները վերնատան մէջ, երեւցաւ Յիսուս ամենքին, եւ ապա խօսքը ուղղելով Թովմասին՝ ըսաւ. «Բեր մատներդ եւ դիր այստեղ, եւ տես ձեռքերս: Բեր ձեռքդ եւ մխէ կողիս մէջ, ու մի ըլլար անհաւատ, այլ՝ հաւատացեալ»: Այն ատեն Թովմաս ծունկի եկաւ ու գոչեց. «Տէ՛ր իմ եւ Աստուած իմ»: Յիսուս եզրակացուց. «Դուն տեսար եւ հաւատացիր. երանի՛ անոնց, որոնք չտեսած պիտի հաւատան» (Յովհ. Ի 24-29): Սակայն հակառակ իր այս երեւութական թերահաւատութեան, որ աւելի իրապաշտութիւն մըն է, քան անհաւատութիւն, առաքելի եւ քաջ առաքել մըն է Թովմաս:

Երբ Յիսուսի բարեկամ Ղազարոս մեռաւ, Ան կը գտնուէր Անդր-յորդանան, երբ իմացաւ մահուան լուրը, Յիսուս որոշեց երթալ եւ յարուցանել զայն: Սակայն առաքելներ վարանումի մատնուեցան, որովհետեւ քանի մը օրեր առաջ Հրեաներ քիչ էր մնացած, որ քարկոծէին Յիսուսը Երուսաղէմի մէջ:

Այն ատեն Թովմաս առաջ անցաւ եւ ըսաւ. «Եկէք մենք ալ միասին երթանք վարդապետին հետ, ու եթէ պէտք ըլլայ՝ մեռնիլ մեռնիք Անոր հետ» (Յովհ. ԺԱ 16):

Թովմաս ծանօթ է յատկապէս Յովհաննու Աւետարանին մէջ, իբրեւ «երկուորեակ»: Եւ աւանդութիւնը իր երկուորեակ եղբայրը կը նկատէ Թադէոսը, կամ ուրիշ աշակերտ մը:

Վերջին ընթրիքին Յիսուսի խօսքը ընդմիջողներէն մէկն ալ ինքն է՝ Հարցումով մը: Երբ Յիսուս կ'ըսէ. «Ուր երթալս գիտէք. ճամբան ալ գիտէք», ասիկա չի համոզեր Թովմասը, որ կը Հարցնէ.

-Տէ՛ր, չենք գիտեր, թէ ուր կ'երթաս, ինչպէ՞ս ճամբան պիտի կրնանք գիտնալ:

Յիսուս այս Հարցումին իբրեւ պատասխան՝ իր ամէնէն նշանաւոր խօսքերէն մէկը ըսաւ.

-Ես եմ ճանապարհը, ճշմարտութիւնը եւ կեանքը... (Յովհ. ԺԴ 4-6):

Աւանդութիւնը Թովմասը կը զրկէ այն ատենուան ծանօթ աշխարհի հեռուորագոյն երկիրները՝ Պարթեւաստան եւ մինչեւ Հնդկաստան, ուր արդարեւ առաքելական դարերէ ի վեր փոքր Քրիստոնէական եկեղեցի մը գոյութիւն ունեցած է, եւ որոնք կը հաւատան, թէ իրենց նախահայրերը դարձի եկած են Թովմաս առաքեալի քարոզութեամբ, որուն համար ալ իրենք զիրենք կը կոչեն «Ս. Թոմասի քրիստոնեաները»: Առաքեալի գերեզմանն ալ մինչեւ օրս կը ցուցուի այնտեղ՝ Մատրաս քաղաքի մօտ: Նահատակուած է՝ նետահար սպանմամբ: Կը տօնենք Թովմասը Յակոբոս Ալփեան եւ Եմաւոն Նախանձալոյց Առաքեալներու հետ, Վերափոխման Գ. Կիր. ի նախորդ Եր. օրը: Յոյնք՝ Հով. 6, Լատինք՝ Դեկտ. 21 եւ Յլ. 3:

17. ԹԱԴԷՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Հայոց առաջին լուսաւորիչը եւ ամէնէն շատ առուն ունեցող Առաքեալը:

Ղուկասու Աւետարանի (Ձ 16) եւ Գործք Առաքելոցի (Ա 13) մէջ ծանօթ է որպէս Յուդայ Յակոբեան: Յովհաննէսի մէջ եւս կը յիշուի որպէս «Յուդա, ոչ՝ Իսկարիովտացի (ԺԴ 22), որ Վերջին Կտակի խօսակցութեան ընթացքին ընդմիջողներէն է հետեւեալ Հարցումով. «Տէ՛ր, ի՞նչ կը նշանակէ ըսելդ, որ զքեզ մեզի պիտի յայտնես, եւ ոչ՝ աշխարհի»: Յիսուս անուղղակի կերպով կը պատասխանէ, որ ինք պիտի յայտնուի զինք սիրողներու մէջ. ընդհակառակը պիտի չերեւի երբէք սէր չունեցողներու մէջ: Իսկ Մատթէոս Աւետարանիչ զայն կը կոչէ «Ղերէոս, որ անուանուեցաւ Թադէոս» (Մատթ. Ժ 3): Մարկոսն

է, որ պարզապէս կը կոչէ զայն Թադէոս (Մարկ. Գ 18): Կաթողիկ եկեղեցին զայն կը նոյնացնէ Յուդայ Տեառնեղբար հետ, որուն անունով կարճ թուղթ մըն ալ կայ ընդհանրական թուղթերու իբրեւ վերջինը: Բայց արեւելեան եկեղեցիներ չեն ընդունիր այս նոյնացումը:

Ըստ մեր ազգային ավանդութեան, Թադէոս Առաքեալ նախ կուգայ Եդեսիա, ուր ըստ Քրիստոսի խոստումին, կը բժշկէ եւ Քրիստոնեայ կը դարձնէ Աբգար թագաւորը: Եդեսիան արդարեւ քրիստոնէական հնագոյն կեդրոններէն մէկը կ'ըլլայ:

Թադէոս իր քարոզութիւնը առաջ կը տանի դէպի հիւսիս, կը մտնէ Հայոց Սանատրուկ թագաւորի սահմանները, եւ դարձի կը բերէ շատ Հայեր, որոնք երախայրիքը եւ հիմքը կը կազմեն Հայոց Առաքելական եկեղեցիի: Կը թափանցէ նաեւ Արքունիք. դարձի կը բերէ թաւաւորին դուստրը՝ Սանդուխտը, որ կը նահատակուի իր հօր ձեռքով: Ի վերջոյ, Թադէոս Առաքեալն ալ շատ մը հրաշքներ գործելէ եւ հազարաւոր հոգիներ դարձի բերելէն յետոյ, նահատակուեցաւ սուրով Արտազ գաւառի մէջ՝ ներկայ Պարսկական Ատրպատական գաւառի արեւմտեան կողմը, ուր կը ցուցուի իր գերեզմանը մինչեւ այսօր, որուն վրայ փառաւոր եկեղեցի մը կառուցուած է: Կը տօնենք զայն երկիցս նախ՝ Ս. Բարթողոմէոսի եւ ապա՝ Ս. Սանդուխտի հետ: Յոյնք՝ Օգոս. 21: Լատինք՝ Հովկտ. 28:

18. 19. 20. ՅԱԿՈԲՈՍ, ԾՄԱԻՈՆ ԵՒ ՄԱՏԱԹԻԱ ԱՌԱՔԵԱԼՆԵՐ

Այս երեք Առաքեալներուն լոկ անունները կը յիշուին Աւետարաններու մէջ եւ իրենց մասին ոչ մէկ միջադէպ պատմուած է:

Յակոբոս ծանօթ է Ալփեան մականունով, որով կը տարբերի Ջերսեան Յակոբոսէն, որմէ զանազանուելու համար Ալփեան կը կոչուի նաեւ «Կրտսեր Յակոբոս» անունով: Լատին եկեղեցին զայն կը նոյնացնէ Յակոբոս Տեառնեղբայր Առաքեալի հետ, ինչ որ չեն ընդունիր Արեւելեան եկեղեցիներ, որոնց կարգին նաեւ մենք: Յակոբոս ավետարանը տարած կը նկատուի Պաղեստինի Հարաւային ծովեզրերը եւ Եգիպտոս, ուր եւս նահատակուած կը կարծուի:

Շմաւոն, կամ յունական ձեւով Սիմոն, ծանօթ է Աւետարանի մէջ «կաճաճացի» մակդիրով, որ կը նշանակէ «նախանձայոյզ»: Այս անունով աղանդ մը կամ կուսակցութիւն մը կար Հրէից մէջ, որոնք, միջոցներու մէջ առանց խտրութիւն դնելու, կ'աշխատէին օտար լուծը նետել իրենց վրայէն եւ մէջտեղէն վերցնել ուրացողները կամ օտարամուլ հրեաները: Նահատակուած կը նկատուի Պարսկաստանի մէջ: Կը տօնուի երկուքը միասին Թովմաս Առաքեալի հետ:

Մատաթիա ընտրուեցաւ առաքեալներու կողմէ մատնիչ Յուդայի տեղ, անոր մահէն յետոյ, իբրեւ մէկը, որ Քրիստոսի հետեւած է Անոր մկրտութենէն մինչեւ իր համբարձումը: Եթովպիոյ մէջ քարոզած կը նկատուի: Իր յիշատակը կը կատարենք Նաչի Հինգերորդ շաբթուան Երեքշաբթիին: Յոյնք կը յիշատակեն Յակոբոս Ալփիանը Հոկտ. 9 ին. Լատինք՝ կը նոյնացնեն զայն Յակոբոս Տեառնեղբոր հետ: Յոյնք Շմաւոնը՝ Մյս. 10 ին, Լատինք՝ Հոկտ. 28 ին: Յոյնք Մատաթիան՝ Օգոս. 9 ին, Լատինք՝ Փետր. 24 ին:

21. ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Վերոյիշեալ առաքեալներու թուումով կ'աւարտի ցանկը Յիսուսի կողմէ ընտրուած «Երկոտասան Առաքեալներու»: Սակայն ասոցմէ դուրս կը յիշուին Նոր Կտակարանին մէջ նաեւ ուրիշ գործիչներ, որոնց համար եւս կը գործածուի «առաքեալ» մակդիրը: Անոնց մեծագոյնն է Պողոս Առաքեալ, որ ծանօթ է իբրեւ «Երեքտասաներորդ Առաքեալ»: Այն աստիճան շատ գործածուած է այս մակդիրը Պողոսի համար, որ եթէ յիշենք «Առաքեալ» բառը առանձինն, այսինքն՝ առանց յատուկ անունի, կը հասկնանք զայն իբրեւ ակնարկութիւն իրեն. ուրեմն Պողոս գերազանց Առաքեալն է, եւ բոլոր դարերու մեծագոյն քրիստոնէական քարոզիչը եւ գործիչը:

Մնած է Հրէաստանէ դուրս, Կիլիկիոյ Տարսոն քաղաքը (Գործ. ԻԲ 3), Փրկչական թուականին առաջին տարիներուն: Իր բարձրագոյն կրթութիւնը առած է Տարսոնի յունական համալսարանին մէջ, իսկ կրօնական լրացուցիչ դաստիարակութիւնը՝ Երուսաղէմի մէջ «առոստ Գամաղիէի», ինչպէս ինք կը հաստատէ (Գործ. ԻԲ 3):

Գամաղիէի կ'երեւի Գործք Առաքելոցի մէջ, իբրեւ լուրջ եւ ազատամիտ ուսուցիչ մը, որ իր ողջամիտ եւ իրատես գաղափարներով պատ-

ճառ կը դառնայ առաքեալներու ազատումին, երբ անոնք հրէական Բարձրագոյն Ատեանի առջեւ հանուած էին դատուելու Համար (Գործ. Ե 34-42):

Թէեւ Յիսուսի գրեթէ տարեկից կամ Անկէ քանի մը տարիներ փոքր, բայց ոչ մէկ նշան կայ, որ Պողոս տեսած ըլլայ Յիսուսը՝ Անոր ողջութեան ընթացքին: Իր հրէական անունն էր Սաւուղ, յունացած ձեւով՝ Սողոս: Պողոս Հռովմէական անունը ստացաւ Կիպրոսի Հռովմայեցի կառավարիչ Սեբգիոս՝ Պողոսը դարձի բերելէ յետոյ (Գործ. ԺԳ 7-9):

Պողոս արհեստով վրանակար էր, ըստ հրէական սովորութեան, որ ծնողաց վրայ պարտք կը դնէր անպատճառ օգտակար արհեստ մը սորվեցնել իրենց զաւակներուն: Այս արհեստը Առաքեալին շատ օգտակար եղաւ իր ապրուստը ճարելու տեսակէտէ, իր առաքելական գործունէութեան ընթացքին, առանց ուրիշներու վրայ ծանրանալու (Գործ. ԺԸ 3, Ի 34, Բ Թես. Գ 8):

Պողոս Համադրութիւնն էր իր ժամանակի երեք գլխաւոր մշակոյթներու: Մնունդով եւ կրօնքով հրէայ է, ուսմունքով եւ լեզուով՝ իոյն, քաղաքացիութեամբ հռովմայեցի: Իր ժամանակին մեծագոյն պատիւ մը եւ առանձնաշնորհ մըն էր օտարներուն համար, Հռովմայեցի քաղաքացի ըլլալը, որ ամէն Հպատակի շնորհուած առաւելութիւն մը չէր. կը ստանային զայն ի նպաստ Հռովմի մեծ ծառայութիւն մը մատուցանելով. կամ դրամով. կամ կայսեր մասնաւոր շնորհին արժանանալով: Պողոսի Հայրը կամ նախնիքը Հռովմայեցի քաղաքացի եղած կ'երեւին. ինք իբրեւ այդ ծնած էր (ԻԲ 25-28):

Իր այս գրեթէ Համամարդկային կազմաւորութեամբ Ս. Պողոս արդարեւ կատարելագոյն անձն էր քրիստոնէութիւնը հաւասար ձեռներէցութեամբ քարոզելու հրէական, յունական եւ Հռովմէական երեք շրջանակներու մէջ ալ (Գործ. Թ 15): Պողոս իսկական «ընտիր անօթ» մըն էր քրիստոնէութիւնը տանելու յատկապէս հեթանոսներուն, եւ այդ իսկ պատճառով կոչուած է նաեւ «Առաքեալ Հեթանոսաց» (Գործ. ԻԲ 21, ԻԶ 3, Բ Տիմ. Ա 11):

Քրիստոնէութեան հետ շփում սկսաւ ունենալ Երուսաղէմի մէջ այնպիսի ատեն մը, երբ առաքելական քարոզութիւնը իր ամէնէն

եռուն շրջանին հասած էր. եւ իբրեւ արդիւնք այս իրողութեան, ստեղծուած էր ոչ միայն պաշտօնական հակառակութիւն ընդդէմ նոր շարժումին, այլ նաեւ ժողովրդային դեր եւ դէմ մեծ հետաքրքրութիւն: Սօղոս, իբրեւ կորովի պաշտպանը «Հայրենի Օրինաց», եւ իբրեւ փարիսեցիին, տակաւ առ տակաւ ամէնէն աչքի զարնողը եղաւ հակառակորդներուն: Ամենայն հաւանականութեամբ իր առաջին բախումը եւ բանավէճը ունեցաւ Ստեփանոսի հետ:

Կարգ մը հրեաներ, որոնք արտասահմանէն Երուսաղէմ եկած էին, օրինակ «Կիւրենացիներ՝ Լիբիայէն, Աղեքսանդրացիներ՝ Եգիպտոսէն, եւ ԿիլիկեՅիւնեՅի եւ Փոքր Ասիացիներ սկսան վիճիլ Ստեփանոսի հետ, եւ չէին կրնար դիմադրել այն իմաստութեան եւ հոգիին, որով կը խօսէր» (Գործ. 2 9-10): Այս Կիլիկեցիներուն մէջ էր հաւանաբար Սոդոս, որովհետեւ բացայայտօրէն յիշուած է, որ «Սոդոս կամակից էր Ստեփանոսի սպանման» (Գործ. է 59): Ունկնդրած պէտք է ըլլայ նաեւ Ստեփանոսի հոյակապ եւ երկար ճառը, որ ան տուաւ իրենց Ազգ. Գերագոյն ժողովին մէջ, եւ որ յորդեցուց Ստեփանոսի դէմ հակառակութեան բաժակը եւ պատճառ եղաւ իր քարկոծման:

Ստեփանոսի մահէն յետոյ խիստ հալածանք մը շղթայադերձուեցաւ քրիստոնէից դէմ Սոդոսի առաջնորդութեամբ. «Սոդոս վնասներ կը հասցնէր եկեղեցիին. կը մտնէր տունէ տուն, դուրս կը քաշէր (քրիստոնէայ եղած) այրերը եւ կիները ու բանտ նետել կուտար զանոնք» (Գործ. Ը 3): Քրիստոնէաներուն ձայնը ըստ բաւկանին խեղդելէ յետոյ Երուսաղէմի մէջ, ներկայացաւ քահանայապետին եւ անկէ ընծայական թուղթ խնդրեց, որպէսզի արտասահմանի մէջ ալ աշխատի առաջըր առնելու նոր շարժումի ծաւալման՝ սկսելով Դամասկոսէն: Այդ ճակատագրական ճամբորդութեան ընթացքին է, որ Սոդոս կը ստանայ շնորհաց հարուածը Քրիստոսի կողմէ տեսիլքով մը, որ կը յանգի իր դարձին եւ մկրտութեան Դամասկոսի մէջ, հաւանաբար 36 թուականին: Անկէ յետոյ իր կեանքին մնացեալ տարիները կ'ըլլան ամբողջական նուիրում մը իր հալածած կրօնքի տարածման:

Կը կազմակերպէ երեք-չորս առաքելական արշաւանքներ, որոնցմէ առաջինի ընթացքին, Կիպրոսի մէջ, կ'արձանագրէ իր մեծ յաջողութիւններէն մէկը, նախ՝ կուրուցութեան դատապարտելով Եղիմաս մո-

ղը, որ շատերը կը մոլորեցնէր, եւ ապա՝ հաւատքի բերելով Կիպրոսի հռովմայեցի փոխ կառավարիչը՝ Սերգիոս Պօղոսը, որմէ յետոյ կը սկսի Սոդոս կոչուիլ նաեւ ՊՕՂՈՍ: Հաւատքի տարածման համար իր կատարած ճամբորդութիւնները կը տանին գինքը Փոքր Ասիոյ հարաւային եւ արեւմտեան բոլոր ընդարձակ նահանգները, եւ ամբողջ Յունաստանի մէկ ծայրէն միւրը: Կը հիմնէ բազմաթիւ տեղական եկեղեցիներ այս հողամասերուն վրայ:

Այս քարոզչական առաքելութիւններէն երրորդէն յետոյ, Երուսաղէմ վերադարձին, Տաճարի շրջանակին մէջ հակառակորդ ամբոխը գինք կը շրջապատէ եւ տեղւոյն վրայ քարկոծելով՝ վերջ պիտի տար իր կեանքին, եթէ մօտիկ զօրանոցէն հռովմայեցի գինուորներ չհասնէին եւ չփրկէին զայն: Տարուեցաւ հռովմէական կառավարիչներու կեդրոն՝ Պաղեստինեան Կեսարիա քաղաքը, ուր ազատ բանտարկութեամբ մնաց երկու տարիներ, եւ հռովմայեցի դատաւորը, պատժի արժանի ոչ մէկ յանցանք գտնելով, ուզեց արձակել զայն, բայց հրեաներ պահանջեցին, որ Երուսաղէմ երթայ եւ այնտեղ կրօն. իշխանութեան պահանջեցին, որ Երուսաղէմ երթայ եւ այնտեղ կրօն. իշխանութեան առջեւ դատուի: Սակայն գիտնալով իր գլխուն գալիքը՝ Պօղոս ըսաւ «Կայսեր կը բողոքեմ»: Ուստի զրկուեցաւ Հռովմ՝ այնտեղ դատուելու համար: Գործք Առաքելոցը Պօղոսի Հռովմ հասնելովը իր վերջաւորութեան կը բերուի սա խօսքերով. «Լման երկու տարիներ մնաց այնտեղ իր վարձքով, կ'ընդունէր բոլոր անոնք, որ կուգային իրեն. կը քարոզէր Աստուծոյ արքայութիւնը եւ կ'ուսուցանէր Տէր Յիսուս Քրիստոսի մասին՝ անխափան եւ ազատ համարձակ» (Գործ. ԻԸ 30-32):

Ինչ որ կը նշանակէ, թէ ազատ բանտարկութեամբ երկու տարի մնաց Հռովմ: Դատը տեսնուեցաւ թէ ոչ, յայտնի չէ: Աւանդութիւնը կ'ըսէ, որ արդարեւ առաջին այս դատին ազատ արձակուեցաւ Պօղոս եւ շարունակեց Աւետարանի քարոզութիւնը մինչեւ Սպանիա եւ այլուր. կրկին վերադարձաւ Հռովմ եւ 67 թուականին Ներոնեան հալածանքներու ատեն ձերբակալուեցաւ եւ սուրով նահատակուեցաւ:

Պօղոս Առաքելի անունը եւ քարոզութիւնը անմահացնողները, բացի ընդարձակ առաքելական քարոզութենէն, առաւելաբար իր թուղթերն են, այսինքն՝ տասնըչորս նամակներ, զորս ուղղած է իր հիմնած եկեղեցիներուն եւ կարգ մը անձերուն: Այս նամակները որքան մեծ Առաքելի ներքին ապրումներուն եւ նկարագրի գիծերուն

Հետաքրքրական աղբիւրներ են, նոյնքան ալ քրիստոնէական աստուածաբանութեան եւ բարոյական ուսուցումի անսպառ շտեմարան են:

Պօղոս ամբողջական նուիրումի եւ անդուլ գործունէութեան անմրցելի տիպար մը եղաւ: Ամբողջ իր կարողութիւնը եւ զօրութիւնը ի սպաս դրաւ Աստուծոյ արքայութիւնը քարոզելու: Եղաւ արգարեւ եւ իրաւամբ «Մառայ Յիսուսի Քրիստոսի», ինչպէս կը սիրէ կոչել ինքզինքը իր նամակներուն սկիզբը: Յատակօրէն ըմբռնած ըլլալով քրիստոնէական կրօնքի մաքուր եւ վսեմ ոգին անոր տիեզերական եւ ոգեղէն բնոյթը եւ Քրիստոսի բերած փրկութեան բարիքները անձամբ եւ ամէնէն աւելի ինք ճաշակած ըլլալով՝ զայն նկատեց բերուած բոլոր մարդոց համար անխտիր՝ հրէի եւ Հեթանոսի, արուի եւ իգի, ծառայի եւ տիրոջ, ուստի այն համոզումը գոյացուց, թէ այլեւս վերջ գտած է դերը հրէական ծիսական կրօնքին, եւ անոր տեղը գրաւած է Քրիստոսի բերած ոգեղէն կրօնքը, որուն կարելի է հաղորդ դառնալ լոկ հաւատքով: Այս բառը՝ ՀԱԻԱՏՔԸ, հիմնական տեղը կը գրաւէ անոր ուսուցման մէջ:

Հրէական ծիսապաշտութեան դէմ պայքարած ըլլալուն համար ենթարկուեցաւ շարունակական հալածանքի եւ չարչարանքներու, զորս կը թուէ իր թուղթերուն մէջ: Շուրջ հինգ տարի բանտարկուեցաւ Երուսաղէմ, Կեսարիա եւ Հռովմ. հինգ անգամ գանակոծութեան ենթարկուեցաւ (իւրաքանչիւր գանակոծութիւն կը բաղկանար 39 գաւազանի հարուածէ), երեք անգամ ճաղկուեցաւ մէկ անգամ քարկոծուած՝ ու երեք անգամ նաւակոծութեան հանդիպած է. շարունակ կատարած է տաժանելի եւ յոգնեցուցիչ ճամբորդութիւններ: Ու կ'եզրակացնէ Առաքեալը այս չարչարանքներու թուումն մասանցը. «Վիշտեր՝ գետերէն, վիշտեր՝ աւազակներէն, վիշտեր՝ ցեղակիցներէս, վիշտեր՝ հեթանոսներէ, վիշտեր՝ քաղաքներու մէջ, վիշտեր՝ ամայի վայրերու մէջ, վիշտեր՝ ծովու վրայ, վիշտեր՝ սուտ եղբայրներէ. յաճախ յոգնաբեկ եղած եմ, շատ անգամ անքուն, անօթի, ծարաւ եւ մերկ մնացած եմ: Զգե՛նք այն նեղութիւնները, զորս կրած եմ խուժանէն, որ շարունակ վրաս կը դիզուէր. ունեցայ մշտական մտահոգութիւններ իմ հիմնած եկեղեցիներու մասին, երբ անոնք հիւանդ են, ես ալ կը հիւան-

դանամ, երբ անոնք շիտակ ճանապարհէն շէղին, ես կը տառապիմ ու կը զայրանամ...» (Բ Կոր. ԺԱ 24-29):

Պօղոսի կեանքը ոչ միայն մշտական մարտիրոսութիւն մը, այլ նաեւ ու առաւելաբար իրական դիւցազնութիւն մըն է, գերազանց, քան Հէրակլէսինը, երբ մանաւանդ նկատի ունենանք, որ այս առաւելական դիւցազնը առիւծներու, վիշապներու կամ հսկաներու դէմ կը պայքարի: Պօղոս կը մաքառի մարդկային տգիտութեան, չարութեան, նախանձի եւ նախապաշարումի դէմ. ու մանաւանդ անտեսանելի ու սատանայական «իշխանութիւններու եւ պետութիւններու դէմ, խաւարի աշխարհակալներու դէմ, չարութեան գերմարդկային ոյժերու դէմ» (Եփես. Զ 12): Պօղոսի թուղթերը քրիստոնէական գրականութեան առաջին գործերն են՝ գրուած ըլլալով մինչեւ իսկ աւետարաններէն առաջ:

Պօղոս Առաքեալը կը յիշատակենք Պետրոսի Հետ, Աւագ Տօներու ընթացքին, Ս. Մնունդէն շուրջ տասը օրեր առաջ:

Յոյնք եւ Լատինք՝ Պետրոսի Հետ, Յնս. 29: Դարձը՝ Յնք. 25: Առանձինն՝ Յնս. 30:

Ա Շ Ա Կ Ե Ր Տ Ն Ե Ր

Աւետարանական սուրբերու այս երրորդ խումբին մէջ պիտի առնենք այն դէմքերը, որոնք նախապէս յիշուած երկու խումբերու մէջ չեն մտներ: Ասոնց հետ պիտի միացնենք նաեւ Գործք Առաքելոցի այն սուրբերը, որոնք Պօղոս Առաքեալի ԳՈՐԾԱԿԻՑ ԿԱՄ ԱՇԱԿԵՐՏ ՁԵՆ: Այս վերջինները պիտի կազմեն չորրորդ եւ յետին խումբը Նոր Կտակարանի սուրբերուն:

«Աշակերտ» բառը Նոր Կտակարանի մէջ ընդհանրապէս կը գործածուի Յիսուսի բոլոր հետեւողներուն համար: Երկոտասան Առաքեալները նոյնքան յաճախ կը կոչուին նաեւ «աշակերտներ»: Առաքեալներու քարոզութեամբ քրիստոնէութիւնը ընդունողներն ալ կոչուեցան «աշակերտներ»: Մենք այս բառը պիտի գործածենք առհասարակ անոնց համար, որոնք ուղղակի կամ անուղղակի շփուած ունեցած են Քրիստոսի հետ եւ աւետարանական քարոզութիւն կատարած կամ Քրիստոսի ծառայութիւն մը մատուցած են:

22. ԵՕԹԱՆԱՍՈՒՆԵՐԿՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Բացի տասներկու Առաքեալներէն, Յիսուս ընտրեց նաեւ 72 կամ եօթանասուն աշակերտներ: Ասոնք ալ զոյգ-զոյգ զրկեց Հրէաստանի զանազան կողմերը՝ Աւետարանը քարոզելու եւ բժշկութիւններ կատարելու համար (Ղուկ. Ժ 1-20): Աւետարանի մէջ այս խումբին պատկանողներէն ոչ մէկին անունը տրուած է. մենք ալ փորձը պիտի չընենք՝ հաւանական ենթադրութիւններուն վրայ հիմնուելով անուններ յիշելու: Ասոնք այսպէս հաւաքաբար տօնացոյցի անցած են, հաւանաբար Յիսուսի կողմէ կատարուած հետեւեալ հաւաստումին վրայ: Ասոնք, երբ քարոզութենէ վերադարձան, մեծ ուրախութեամբ ըսին իրենց Վարդապետին. «Տէ՛ր, դեւեր ալ կը հնազանդին մեզի քու անունովդ»: Յիսուս պատասխանեց, որ անոր համար չէ, որ պէտք էր ուրախանալին. «Այլ, ուրախացէ՛ք, որ ձեր անունները գրուած են երկինքի մէջ (Ղուկ. Ժ 20): Իրական սրբութեան հաւաստիքը արդարեւ այդ

իսկ է. այսինքն՝ վստահ ըլլալը, որ արժանացած է ինքն ալ մաս կազմելու այն յաւերժական ընկերութեան, որ «Երկինքին մէջ է»:

Եօթանասուններկուքին եւ Տասներկուքին քարոզչական գործունէութեանց մէջ տարբերութիւն գրեթէ չկայ: Երկուքին ալ գրեթէ նոյն իշխանութիւնը կը տրուի Քրիստոսի կողմէ: Օրինակ՝ Յիսուս Տասներկուքին կուտայ «Զօրութիւն եւ իշխանութիւն՝ յաղթահարելու բոլոր դեւերը եւ բժշկելու հիւանդութիւնները» (Ղուկ. Թ 1):

Իսկ Եօթանասուններկուքին կ'ըսէ. «Որ քաղաքը, որ մտնէք... բժշկեցէ՛ք անոնց հիւանդութիւնները» (Ղուկ. Ժ 9): Ու երբ ասոնք կը վերադառնան իրենց քարոզութենէն, ինչպէս տեսանք վերեւ, ըսին՝ «Դեւեր ալ կը հնազանդին մեզի»:

Երկու խումբերուն քարոզութեան նիւթն ալ նոյն է՝ «քարոզել Աստուծոյ Արքայութիւնը»: Թէ քարոզութեան ինչպէս պիտի երթալին, կամ մարդոց ինչպէս պիտի մօտենային, երկու խումբերուն ալ գրեթէ նոյն պատուէրները կուտայ Յիսուս: Նոյն երեւոյթը կը նշմարուի մեր շարականներուն մէջ: Թէեւ երկու խումբերուն համար զատուի մեր շարականներուն մէջ: Թէեւ երկու խումբերուն համար զատուի մեր շարականները յօրինուած են, բայց անոնք գրեթէ նոյն ոգին ունին: Օրինակ՝ Եօթանասուններկուքներն ալ կը կոչուին «Առաքեալներ» ու այս վերջիններու շարականներու մէջ կան բազմաթիւ ակնարկութիւններ, որոնք բացայայտօրէն կը վերաբերին Տասներկուքին: Այնպէս որ, ըստ երեւոյթին այս երկուքը մէկը միւսը լրացնող քարոզչական խումբեր են, քան թէ երկու տարբեր կարգեր. երկուքն ալ կազմուած են, այսինքն՝ «առաքուած» են մէկ եւ նոյն նպատակի համար: Հաւանական միակ տարբերութիւնը այն ըլլալ կը թուի, որ Տասներկուքը աւելի մնայուն, աւելի որոշ խումբ մը եղած է, որ որքան ատեն որ քարոզչութեամբ չեն զբաղած, միշտ Քրիստոսի հետ կը շրջապային. իսկ եօթանասնից խումբը հաւանաբար աւելի առաձգական եղած է, այսինքն՝ կրնային աւելնալ կամ պակսիլ. այսօրուան կարտինալներու կարգին պէս, որ թէեւ պէտք է ըլլայ թիւով եօթանասուն, բայց քիչ անգամ այդ թիւի վրայ կը մնայ:

Այս երկու խումբերուն՝ Տասներկուքին եւ Եօթանասուններկուքին, խորհրդանշանական նախատիպերը նկատուած են այս տասներկու աղբիւրները եւ Եօթանասուն կամ Եօթանասուներկու արմաւենիները,

որոնց Հանդիպեցան Իսրայէլացիները, անապատի իրենց թափառումներու ընթացքին (Ել. ԺԵ 27) եւ ուր բանակեցան:

Եօթանասուներկուքը, Բեթլեհէմի Մանուկներէն յետոյ երկրորդ խումբ է սրբոց, որոնց անունները Աստուծոյ միայն յայտնի է, եւ որոնց նման շատ մը ուրիշ խումբերու ալ պիտի Հանդիպինք յառաջիկային:

Եօթանասնից յիշատակը կը տօնախմբենք Խաչի չորրորդ Կիրակին նախընթաց Շք. օրը: Յոյնք՝ Յնր. 4: Լատինք՝ չունին:

23. ՅՈՎՍԷՓ ԱՐԻՄԱԹԱՑԻ

Աւետարաններու մէջ այս պատուական անձնաւորութեան մասին ըստածները Համադրելով՝ կ'ունենանք հետեւեալ պատկերը: «Հարուստ մարդ մը. պարկեշտ, բարեգործ եւ արդար անձնաւորութիւն մը. Յիսուսի ծածուկ աշակերտ, որ Աստուծոյ արքայութեան ակնկալութիւնը ունէր» (Մատթ. ԻԵ 57-58, Մարկ. ԺԵ 42-43, Ղուկ. 50-52, Յովհ. ԺԺ 38): Ա. Գրքի մեր թարգմանութեան մէջ կոչուած է նաեւ «ՆԱԽԱՐԱՐ», որ ուրիշ թարգմանութիւններ վերածեր են իբրեւ «ԽՈՐՀՐԴԱԿԱՆ», «ԺՈՂՈՎԱԿԱՆ», այսինքն՝ անդամ Հրէից Գերագոյն Ժողովին, Սենատրիոնին: Ըստ այս ժուժկալ տուեալներու՝ Յովսէփ կը ներկայանայ որպէս ազնուական մը թէ՛ նիւթական կացութեամբ, թէ՛ ընկերային դիրքով եւ թէ՛ հոգիով: Յովսէփ առաջինն է այն սակաւաթիւ «մեծատուն»ներէն, որոնք ծածուկ կամ յայտնի կերպով աշակերտած են Յիսուսի եւ իրենց դիրքը եւ դրամը ի սպաս դրած են Քրիստոնէական դատի տարածման եւ յաջողութեան:

Յովսէփ, երբ իմացաւ, որ Յիսուս արդէն իսկ մահացած է խաչին վրայ, եւ գիտնալով թէ ըստ իրենց օրէնքին այդ օր խաչին վրայ պիտի չմնար, Համարձակութիւնը ունեցաւ մօտենալու Պիղատոսին եւ խնդրելու Յիսուսի մարմինը՝ անձամբ թաղելու Համար զայն. Պիղատոս շնորհեց Յիսուսի մարմինը: Յովսէփ իր այս արարքով գործնականապէս Հաստատեց, որ արդարեւ «բարեգործ եւ արդար» մարդ մըն էր, որովհետեւ անտէր մեռելի մը տէր կանգնել ու անոր թաղում տալը մեծագոյն բարեգործութիւններէն կը նկատուէր Հրէից մէջ:

Իսկ Համարձակութիւնը եւ քաջութիւնը արդար մարդու յատկանիշ է: Անարդար մարդը թէեւ կրնայ յանդուգն կամ աներես ըլլալ, բայց ոչ քաջ ու Համարձակ, այս բառերուն ազնուական եւ իրական իմաստով: Յովսէփի այս արարքը աւելի կը մեծնայ եւ աւելի արժէք կը ստանայ, երբ անդարդառանձնք, որ ամէնքէն լքուած մեռելի մը պետութենէն եւ իր ազգի բարձրագոյն իշխանութենէն դատապարտուած «յանցաւորի» մը մարմինին տէր կ'ուզէ ըլլալ, անոր պատուաւոր թաղում մը տալու Համար: Յովսէփ լաւ գիտէր, որ իր այս արարքով առնուազն իր պաշտօնակիցներուն զայրոյթը եւ թշնամանքը իր վրայ պիտի հրաւիրէր: Երկրորդ նկատելի պարագան այն է, որ Յիսուսի անփառունակ վախճանէն յետոյ ալ տակաւին իր յարգանքը եւ Համարձակութիւնը չէ դադարեցուցած անոր Հանդէպ, եւ կ'ուզէ իր բարեկամական վերջին պարտականութիւնը կատարել երիտասարդ Վարդապետի նկատմամբ, որուն Համար անկեղծ սէր եւ Համարում ունեցած էր: Սա արդէն փաստ մըն է իսկական մեծութեան եւ նկարագրի ազնուութեան, որով օծուած էր Յովսէփ:

Յիսուսի պատուաւոր թաղում մը տալով, Յովսէփ գործնականապէս կը Հաստատէ Աւետարաններուն ըսածը. «Սա միաբանած է՛ր իր պաշտօնակիցներուն խորհուրդներուն եւ գործերուն հետ»: Որքան ալ Աւետարանիչներէն մէկը իր աշակերտած ըլլալը «ի ծածուկ» կը նկատէ, բայց Յովսէփ, Պիղատոսին ներկայանալով եւ իր Վարդապետին մարմինը ուղելով, կը Հաստատէ, որ հարկը պահանջած պարագային, չէր քաշուէր հրապարակ իջնելէն:

Ըստ երեւոյթին Յովսէփի աւետարանիչ մը կամ քարոզիչ մը չէր Աստուծոյ Արքայութեան, բայց ոգեւին ակնկալող մըն էր այդ թագաւորութեան երկրի վրայ տիրապետելուն եւ անոր անձամբ մաս կազմելուն: Ինք այդ արքայութիւնը գտած ըլլալ կարծած էր Գալիլեացի Վարդապետին վճիտ եւ հեղինակաւոր քարոզութեանց մէջ, որուն Հաւատարիմ կ'ուզէր մնալ մինչեւ իսկ Քարոզիչի մահէն յետոյ:

Հարստութիւնը եւ ընկերային բարձր դիրքը յաճախ այլասերիչ ոյժ մը ունին իրենց մէջ, առ Հասարակ ենթական մեծամիտ, ամբարտաւան, նիւթապաշտ եւ Եսակեղրոն խլեակի մը կը վերածեն: Պէտք է ունենալ այդ ոյժէն աւելի մեծ զօրութիւն մը դիրքը եւ դրամը մարդ-

կային ազնուական նպատակներու ծառայեցնելու համար, քան անոնց ծառան դառնալու:

Մխիթարական է տեսնել Յովսէփի պէս ազնուական հոգիներ, որոնք չեն արուած նիւթի եւ փառքի այլասերիչ ազդեցութեամբ: Հետաքրքրական եւ նոյնքան սրտապնդիչ է անդրադառնալ, որ նախապէս յիշուած իր երկու անուանակիցներն ալ՝ Յովսէփ Գեղեցիկը եւ «Աստուածահայր» Յովսէփը, հակառակ աշխարհիկ կամ հոգեւոր բարձրագոյն պատիւներու արժանացած ըլլալուն՝ մնացած են անաղարտ:

Յովսէփ Արիմաթացի արժանացաւ անփոխարինելի պատիւին Յիսուսի աստուածային մարմինը անձամբ վար առնելու խաչէն եւ թաղելու իր ընտանիքին համար պատրաստած նոր գերեզմանին մէջ: Այս երջանիկ եւ սրբազան պարտականութիւնը կատարելէն յետոյ այլեւ չի յիշուիր նոր Կտակարանի մէջ: Ուշ միջնադարեան աւանդութիւն մը զինք կը տանի մինչեւ Անգլիա՝ այնտեղ շինելու Անգլիոյ առաջին եկեղեցին: Նոյն աւանդութիւնը կ'ըսէ, որ Յովսէփ իր հետը տարած է նաեւ այն սկիհը, զոր ուս գործածեց վերջին ընթրիքին՝ Հաղորդութեան Ս. Խորհուրդը հաստատելու ատեն: Այս Ս. Սկիհը ապա կորսուեցաւ, բայց մնաց աւանդութիւնը, թէ պիտի գտնուի ամէնէն առաքինի ասպետին կողմէ: Ուստի այս պատիւին արժանանալու համար միջնադարեան ասպետներ աշխատած են զիրար գերազանցել առաքինութեանց մէջ:

Յովսէփի գերեզմանը մինչեւ օրս կը ցուցուի Երուսաղէմի Փրկչական գերեզմանի մօտիկը՝ մատրան մը մէջ, որ Հայոց կը պատկանի: Մենք կը յիշատակենք զայն Խաչի Զ Կիրակիի Բշ. օրը, Յոյնք՝ Յուլիս 31, Լատինք՝ Մարտ 17:

Նկատելի պարագայ մըն է, որ Նիկոմիդոս ալ թէեւ օգնական եղաւ Արիմաթացիին Յիսուսի թաղման մէջ, սակայն իր անունը չենք գտնար եկեղեցիի տօնացոյցին մէջ:

24, 25, 26 ՂԱԶԱՐՈՍ, ՄԱՐԹԱ ԵՒ ՄԱՐԻԱՄ

Եղբայր եւ քոյրեր են ասոնք, որոնց նկատմամբ Յիսուս ունեցած է մանաւոր սէր եւ բարեկամութիւն: Ամէն անգամ, որ Յիսուս Երուսաղէմ գար, առ հասարակ կ'իջեանէր ասոնց տունը, որ կը գտնուէր Երուսաղէմի մօտիկ Բեթանիա գիւղը, Զիթենաց սարի հարաւարեւելեան լանջքին:

Յովհաննէսի Աւետարանի մէջ ականատեսի մը մանրամասնութեամբ կը պատմուի Ղազարոսի հիւանդանալը, մահը, քոյրերուն անձկութիւնը եւ վիշտը, եւ ի վերջոյ յարութիւնը Յիսուսի ձեռամբ (Յովհ. ԺԱ 1-44): Իր յարութենէն յետոյ Ղազարոսի մասին ոչ մէկ տուեալ ունինք, բացի այն հաւաստումէն, թէ Հրեաներ, երբ կ'որոշեն տուեալ մեռցնել, կը վճռեն սպաննել նաեւ Ղազարոսը, քանի որ անոր յարութիւնը մեծապէս կը նպաստէր Յիսուսի համբաւին եւ ժողովրդականութեան տարածման: Իրենց որոշումը գործադրեցին կամ ոչ՝ նաեւ Ղազարոսին վրայ, ոչ մէկ ակնարկութիւն կայ Աւետարաններու մէջ:

Եղբօրմէ մը եւ երկու քոյրերէ բաղկացած այս տունը կառավարողը յայտնապէս երէց քույրը՝ Մարթան է, գործուհեայ, աշխատասէր եւ ժրագլուխ կին մը, որուն մասին Աւետարանը հետեւեալ դրուագն ունի. «Օրին մէկը Յիսուս գիւղ մը մտաւ Մարթա անունով կին մը ընդունեց զայն իր տան մէջ: Մարթա ունէր քոյր մը՝ անունը Մարիամ, որ եկաւ ու նստաւ Յիսուսի ոտքերուն քով եւ մտիկ կ'ընէր Անոր խօսքերուն: Մարթա զբաղուած էր շատ մը գործերով. եկաւ կեցաւ Յիսուսի առջեւ ու ըսաւ «Տէր, Հոգի անգամ չէ, որ քոյրս առանձին ձգեց զիս, ուստի ըսէ իրեն, որ օգնէ ինծի»: Յիսուս պատասխանեց. «Մարթա, դուն անձկութեան մատնուած ես եւ շատ մը գործերով զբաղուած ես. սակայն կարեւորը մէկ բան մըն է միայն՝ Աստուծոյ խօսքը լսել. Մարիամ ընտրած է լաւագոյն բաժինը, որ պիտի չաւնուի իրմէ» (Ղուկ. Ժ 38-42):

Աւետարանական այս հաստուածէն հետեւցնելով՝ Մարթա նկատուած է գործօն քրիստոնեայի տիպարը. իսկ Մարիամ՝ Աստուծոյ խօսքը ունկնդրելու նուիրուած բարեպաշտ եւ աղօթասէր հաւատացեալի տիպարը:

Այս երեքին մէջ ամէնէն բախտաւորը Մարիամ եղաւ, ոչ միայն «Լաւագոյն բաժինը» ընտրելուն, այլ նաեւ լաւագոյն ծառայութիւնը մատուցած ըլլալուն համար Քրիստոսին: Իր եղբոր յարուստեան յետոյ Մարիամ երջանկութիւնը ունեցաւ Յիսուսը օծելու թանկարժէք իւղով մը: Թէեւ իր օծման շարժառիթը երախտագիտական զգացումն էր, բայց Յիսուս անոր տուաւ աւելի բարձր նշանակութիւն մը, երբ ոմանք քննադատեցին այս ազնուական արարքը իբրեւ «վատնում»: Յիսուս ըսաւ «Ինչո՞ւ կը նեղէք զայն, լաւ գործ մը ըրաւ ինձի համար... յառաջագոյն օծեց մարմինս ի նշան պատանքի: Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի, աշխարհի որ անկիւնն ալ քարոզուի Աւետարանը, անոր ըրածն ալ պիտի խօսուի ի յիշատակ իրեն»: (Մարկ. Ժ 7-8-9):

Միսլ է Ղազարոսի քոյրը՝ այս Մարիամը նոյնացնել Մազդազենացի Մարիամին կամ այն անանուն մեղաւորուհիին հետ, որ նոյնպէս օծեց Յիսուսը, ինչպէս երբեմն փորձած են ընել կաթոլիկ շրջանակներու մէջ: Երբքը տարբեր անձեր են:

Աւանդութիւն մը՝ Ղազարոսը եւ իր քոյրերը ղրկուած կը նկատէ Կիպրոս եւ այնտեղ վախճանած: Իսկ ուրիշ աւանդութիւն մը կ'ըսէ, թէ անոնք գացած են Մարսիլիա եւ այնտեղ վախճանած: Իսկ այն գերեզմանը, ուրկէ Յիսուս դուրս կանչեց չորս օրուան մեռեալ Ղազարոսը, մինչեւ օրս ցոյց կը տրուի ստորերկրեայ տեղ մը՝ իր գիւղին մէջ, ի Բեթանիա, որ այսօր Իսլամական խեղճուկ աւան մըն է, մէկ երկու փառաւոր եկեղեցիներով, հինէն եւ նորէն.

Մենք կը տօնենք զանոնք վերոյիշեալ Արեմաթացիին հետ: Յոյնք՝ երեքը անջատաբար կը տօնեն. Ղազարը՝ Ծաղկազարդի նախընթաց օրը, մեզի պէս, Մարթան՝ Յնր. 4 ին. Մարիամը՝ Յնր. 16 ին: Լատինք՝ երեքը միասին Դեկտ. 17 ին:

27. ՂՈՒԿԻԱՆՈՍ ՀԱՐԻՒՐԱՊԵՏ

Թէեւ տօնացոյցին եւ մեր օրացոյցներուն մէջ գրուած է Ղուկիանոս կամ մինչեւ իսկ կարգ մը պարագաներուն խունկիանոս, բայց շիտակ ձեւն է Ղուկիանոս: Այս անունը թէեւ չի յիշուի աւետարաններուն մէջ, բայց անձը ներկայ է անոր էջերուն մէջ, որովհետեւ աւանդութիւնը այս անունով կը ճանչնայ այն հարիւրապետը, որ հսկեց Յիսուսի խաչելութեան գործողութեան:

Ղուկիանոս աղանջալուր եղած էր Յիսուսի բոլոր այն խօսքերուն, զորս արտասանած էր Ան ինչի ճամբուն վրայ եւ խաչափայտին վրայէն: Ու եկած էր այն եզրակացութեան, որ Յիսուս նազովրեցին ոչ միայն ոճրագործ մը չէր, այլ նաեւ անսովոր մարդ մըն էր: Յիսուսի մահուան յաջորդող հրաշալի երեւոյթները՝ արեւի խաւարումը, երկրաշարժը եւն, խորապէս տպաւորեցին այս անաչառ եւ անկողմնակալ մարդը, որ ի վերջոյ ինքնաբերաբար յայտարարեց՝ «Արդարեւ այս մարդը արդար էր» (Ղուկ. Ի 9-47). կամ «Այս մարդը Աստուծոյ Որդի էր» (Մատթ. Ի 34):

Հին աւանդութիւն մը կը հաստատէ, որ այս հարիւրապետը եւ իր ընկերները ի վերջոյ քրիստոնէայ եղած եւ մկրտուած են եւ գացած են իրենց հայրենիքը՝ Կապադովկիա, այսօրուան Կեսարիոյ նահանգը եւ քրիստոնէական քարոզութեան նուիրուած են, եւ այդ պատճառով ալ նահատակուած են:

Եթեանասուներկուքէն յետոյ մինչեւ այստեղ յիշուած բոլոր սուրբերը միասնաբար կը տօնենք ինչի վեցերորդ Կիրակիին յաջորդող երկուշաբթի օրը:

28. 29. 30. 31. ԻՒՂԱԲԵՐ ԿԻՆԵՐ ՄԱՐԻԱՄ ՄԱԳԴԱՂԵՆԱՑԻ, ՄԱՐԻԱՄ ԿՂԵՈՎՊԱՅ ՍՈՂՈՄԷ, ՅՈՎՀԱՆՆԱ ԵՒ ՈՒՐԻԾՆԵՐ

Յիսուսի քարոզութեան ընթացքին՝ իրեն կը հետեւին ոչ միայն Առաքեալներ եւ աշակերտներ, այլ նաեւ կարգ մը կիներ: Ասոնց շրջապատը գործն էր Յիսուսի եւ իր հետեւորդներուն օգնել նիւթական գլխաւոր գործն էր Յիսուսի եւ իր հետեւորդներուն օգնել նիւթական ծառայութեամբ: Աւետարանի բացատրութեամբ՝ «Ասոնք Յիսուսի կը ծառայէին իրենց ինչքերով»: Առ հասարակ ունեւոր եւ երախտաւորեալ պատուական կիներ են, որոնցմէ ոմանք «բժշկուած էին չար դեւերէ եւ հիւանդութիւններէ»: Ասոնց մեծ մասը հետեւեցան Յիսուսի վերջին ու երկայն ճամբորդութեան, Գալիլիայէն դէպի Երուսաղէմ, ուր աղանատես եղան Աւագ շաբթուան դէպքերուն, յատկապէս Անոր ինչելութեան եւ թաղման. ի վերջոյ ասոնք եղան Անոր հրաշալի յարութեան առաջին աւետարները: Խաչաբեր կիներ» կոչուած են ասոնք եկեղեցիի կողմէ, որովհետեւ Միաշաբթի առաւօտ

գերեզման փութացին իրենց պատրաստաց անուշահոտ իւղերով օծելու համար Քրիստոսի մարմինը:

Ասոնց մէջ ամէնէն նշանաւորն է ՄԱԳԳԱՂԵՆԱՑԻ ՄԱՐԻԱՄԸ Գալիլոյ Մովակի եզերքին Մազդայա քաղաքէն: Նախապէս դիւահար եւ ջղազար կին մըն էր, որմէ Յիսուս «Եօթը դուեր հանած էր»: Խուճիկն ամէնէն անձնուէրը եւ առաջնորդը կարելի է նկատել զայն: Այս կնոջ անձնութիւնը վարձատրուեցաւ, որովհետեւ առաջին տեսնողը եղաւ յարուցեալ Փրկիչը եւ յարութեան աւետիսը առաջին բերողը Առաքեալներուն:

Երկրորդը ՄԻԻՍ ՄԱՐԻԱՄՆ է, որ ծանօթ է նաեւ իբրեւ ՄԱՐԻԱՄ ՅԱԿՈՒԱՅ եւ ՅՈՎՍԵԱՅ ՄԱՅՐ, եւ որպէս ՄԱՐԻԱՄ ԿՂԵՈՎՊԱՅ: Յակոբը եւ Յովսեփը, որոնց մայր կը ներկայանայ այս Մարիամը, նոյնինքն «Տեառնեղբայր» կոչուած երիտասարդներն են: Իսկ Կղէովպասը Մարիամին ամուսինն է: Ուրեմն այստեղ բացայայտ կ'երեւի, որ «Տեառնեղբայր» կոչուածները, զորս բողոքականներ կը կարծեն, որ Յիսուսի հարազատ եղբայրներն են՝ Մարիամէն եւ Յովսեփէն ծնած, տարբեր մայր ու տարբեր հայր ունին: Իսկ Յակոբին եւ իր եղբայրներուն «Տեառնեղբայր» կոչումէն պէտք է հետեւցնել, թէ շատ մօտիկ ազգական էին Յիսուսի: Ազգականական այդ կապը չէ ճշդուած աւետարաններուն մէջ: Ամէնէն տրամաբանական աւանդութիւնը այն է, որ Յովսեփ ու Կղէովպաս իրարու եղբայրներ եղած են, որով «Տեառնեղբայրները» Յիսուսի «Հօրեղբորդիներ» կ'ըլան: Արդարեւ, արեւելքի մէջ երկու եղբօր զաւակները իրարու եղբայր կը ճանչցուին, քանի որ կը պատկանին նոյն ընտանիքին, յաճախ կ'ապրին մէկ եւ նոյն երդիքին տակ, եւ նոյն ընտանիկան մականունը կը կրեն:

Իւղաբերներէն անունով ծանօթ երրորդ կինն է ՍՈՂՈՄԷ, Յակոբոս եւ Յովհաննէս Առաքեալներու մայրը եւ կինը ձկնորսապետ Զեբեդէոսի: Յովհաննէսի Աւետարանին մէջ Սողոմէ կոչուած է «Քոյր մօր Նորա», այսինքն Յիսուսի մօր Մարիամին քոյրը: Այս բացատրութիւնը բնականաբար Ֆիլիքական իմաստով պիտի չառնուի, այլ՝ բարոյական: Որովհետեւ Յիսուս իր մայրը յանձնած էր Յովհաննէսի խնամքին, որով Սողոմէ եւ Ա. Կոյսը Խաչելութենէն յետոյ իրենց կեանքի ամբողջ մնացեալ մասը միասին ապրած էին, ուստի իրապէս

իրարու քոյրեր եղան ու այդպէս ալ ճանչցուեցան ամէնքի կողմէ: Աւանդութիւնը Ա. Կոյսին եւ Սողոմէի մէջ ազգականական կապ մըն ալ կ'ուզէ տեսնել:

Իւղաբեր կիններու կարգին Ղուկասի Աւետարանին մէջ միայն յիշուած է նաեւ ՅՈՎՀԱՆՆԱ եւ ուրիշներ»: Յովհաննա, Հերովդէսի հարիւրապետներէն՝ Քուզայի կինն էր: Այս հարիւրապետը կը նոյնացուի այն «Թագաւորացն»ի հետ, որուն մահուան դուռը հասած որդին բռնկած էր Յիսուս, որուն վրայ հաւատաց ինքը եւ ամբողջ իր գիտութեան, իր ինչքերէն սիրով բաժին կը հանէր Յիսուսի եւ իր խումբին եւ որ միւս կանանց հետ Երուսաղէմ եկած էր:

Ասոնց բոլորին ալ վախճանին կամ այլ գործունէութեան մասին ոչինչ ըսուած է Նոր Կտակարանին մէջ: Իրենց մասին եղած աւանդութիւններն ալ այնքան ստոյգ եւ վստահելի չեն երեւիր:

Այս ազնիւ կիները, որոնք ամէնէն աւելի խոցուած զգացին իրենք գիրենք իրենց Վարդապետին խաչելութեամբ ու մահովը, միաժամանակ եղան երջանկագոյն հոգիները, քանի որ բախտն ունեցան առաջին անգամ տեսնելու իրենց աստուածային Տէրը՝ մեռելներէն վերստին կեանքի եկած:

Ասոնք խմբովին ներկայ են վերնատան մէջ, Հոգեգալստեան նախօրեակին, եւ մաս կը կազմեն այն 120 հոգիէ բաղկացեալ խումբին, որ կորիզը կազմեց Քրիստոնէական եկեղեցիի եւ որոնք հաւաքաբար ստացան Ա. Հոգին Պնտեկոստէի օրը:

Ասոնց յիշատակը կը կատարենք «ԻԻՂԱՐԵՐ ԿԻՆԵՐ» հաւաքական անուան տակ, Յովակիմայ եւ Աննայի հետ, Վերափոխման տասներորդ օրը: Յոյնք՝ Իւղաբեր Կիները կը յիշատակեն Մյու. 23ին, Մազդաղենացին առանձինն՝ Յլու. 22ին: Լատինք՝ անջատ-անջատ, Մարիամ Կղէովպան՝ Ապրիլ 9ին, Մազդաղենացին՝ Յլու. 22ին, Սողոմէն՝ Հոկտ. 22ին:

32. ՅԱԿՈՐՈՍ ՏԵԱՌՆԵՂԲԱՅՐ

Յակոբոս այն օղակն է, որ կը միացնէ Աւետարանի սուրբերը Գործք Առաքելոցի մէջ յիշուած սուրբերուն հետ: Իւրաքեր կիներով զուրս կուգանք Աւետարանի էջերէն եւ Յակոբոսով կը մտնենք Գործք Առաքելոցէն ներս: Յակոբոս թէեւ յիշուած է Աւետարաններու մէջ, բայց ոչ որպէս քրիստոնեայ գործիչ մը, այլ նախ իբրեւ մէկը Քրիստոսի «եղբայրներէն»: Երկրորդ յիշուած է զատորոշելու համար իր Մայրը համանուն միւս Մարիամներէն: Այնքան նշանաւոր եւ հանրածանօթ էր Յակոբոս նախնական եկեղեցիի մէջ, որ իր մայրը կոչուած է «Մարիամ Յակոբու փոքրկան եւ Յովսեայ մայր» (Մարկ. ԺԵ. 49): «Փոքր Յակոբ» կոչուած էր ան կամ կազմով ու տարիքով փոքր եղած ըլլալուն, եւ կամ, ինչ որ աւելի հաւանական է, յարաբերաբար Յակոբոս Զեբեդեանի, որ ծանօթ էր «Մեծն Յակոբոս» յորջորջումով:

Պէտք չէ շփոթել զայն նաեւ Յակոբոս Աբիհանին հետ, որ Տասներկուքէն էր: Յակոբոսին մայրը կոչուած է նաեւ որպէս «Մարիամ Կղէովպայ», այսինքն՝ Կղէովպասին կին Մարիամ, որով Յակոբոսի հօր անունն ալ ծանօթ է Աւետարաններէն:

Բացայայտ է Աւետարաններէն նաեւ, թէ «եղբայրները դեռ չէին հաւատացած» Յիսուսի (Յովհ. է 5): Բայց Պօղոս Առաքեալ կը հաստատէ, որ Յիսուս յետ յարութեան յատկապէս երեւցած է նաեւ Յակոբոսին (Ա Կոր. ԺԵ 7): Այս երեւումը ամենայն հաւանականութեամբ պատճառ եղած է Յակոբոսի դարձին, որ իր կարգին դարձի բերած պիտի ըլլայ նաեւ միւս Տեառնեղբայրները, այնպէս որ, երբ կը մտնենք Գործք Առաքելոցէն ներս, կը տեսնենք, որ ասոնք ալ խմբովին ներկայ են վերնատան մէջ Առաքեալներու հետ եւ մաս կը կազմեն այն հարիւր քսան Հոգիներու, որոնք Ա. Հոգին ստացան Հոգեգալստեան օրը (Գործ. Ա 14):

Յակոբոս կը յիշուի իբրեւ նախնական եկեղեցիի գլխաւոր գործիչներէն մէկը՝ Երուսաղէմի առաքելական ժողովի ընթացքին, որուն որոշումը ինք կը բանաձեւէ (Գործ. ԺԵ 13): Քրիստոնէական եկեղեցին իր սկզբնական քայլերուն մէջ առաջացած է երկու թեւերով, զորս մեր այսօրուան բառերով կարելի է կոչել «ՊԱՆՊԱՆՈՂԱԿԱՆ եւ

ՅԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ, կամ Հրէական ու Հեթանոսական հատուածներ»: Վերջին այս բառը՝ Հեթանոսական, պէտք է հասկնալ իր ազգաբնական իմաստով եւ ոչ՝ բարոյական առումով: Առաջին խումբին պետք Յակոբոսն է, երկրորդինը՝ Պօղոս: Պետրոս կ'աշխատի հաւասարակշռութիւնը պահել երկու թեւերուն միջեւ, յաճախ աւելի հակելով Հրէական կողմը: Յակոբոսի կողմնակիցները, իրենց տեսակէտները յաճախ ծայրայեղութեան տանելով կը պահանջէին, որ Հեթանոսութենէ դարձող քրիստոնեաներ ալ պէտք է լրիւ պահեն Հրէական թիւօրէնքները, օրինակ՝ թլփատուին, ու ենթարկուին այլ բազմաթիւ ծիսական սովորութեանց, ինչ որ Պօղոս անհրաժեշտ չէր նկատեր: Յակոբոս այս պահանջները նուազագոյնի վերածեց Երուսաղէմի ժողովին մէջ, ինչ որ ամէնքի կողմէ ընդունելութեան արժանացաւ եւ իբրեւ հրահանգ ժողովի կողմէ դրուեցաւ Հեթանոսութենէ դարձող Քրիստոնեաներուն, Անտիօք:

Աւանդութիւնը Յակոբոսը կը ճանչնայ իբրեւ առաջին եպիսկոպոսը Երուսաղէմի մայր եկեղեցիին: Ամէն պարագային «Սիւններէն» մէկն էր առաջին քրիստոնէական եկեղեցիին, Պետրոսի եւ Յովհաննէսի հետ, ինչպէս կը հաստատէ Պօղոս Առաքեալ (Գաղ. Բ 9):

Յակոբոս յիշուած է նաեւ Յովսէփոս Հրեայ պատմիչի կողմէ իբրեւ «արդար» մարդ մը, այդ ածականը իր վրայ մնացած է իբրեւ մակդիր: Յայսմաւուրքը կը հաստատէ որ. «Աստուած օրհնեց եւ որբացուց զայն իր մօր որովայնէն. զինի եւ օղի չխմեց Սամուէի որբացուց զայն իր մօր որովայնէն, ուստի բան կերաւ ոչ ալ մագերը նման. ոչ ալ շնչաւոր՝ մսեղէն, ուստի բան կերաւ ոչ ալ մագերը կտրուեցան Սամուսի պէս... Եւ անոր ծունկերը ուղտի ծունկերուն պէս կարծրացած էին յաճախակի ծնրադրութենէն»:

Իր նահատակութիւնը մանրամասնօրէն կը պատմուի Հին վկայաբանութեանց մէջ: Տրուած ըլլալով, որ Յակոբոս, Քրիստոնեայ ըլլալով հանդերձ, մեծ յարգանք կը վայելէ նաեւ Հրէից մէջ իր պատուիրահանապահութեան եւ օրինապահութեան համար, ուստի օրին մէկը բռնադատեցին զինքը, որ ելնէ տաճարի աշտարակը եւ այնտեղէն յայտարարութիւն մը ընէ ընդդէմ Յիսուսի, որպէսզի Անոր պատճառով ըրարութիւն մը ընէ ընդդէմ Յիսուսի, որպէսզի Անոր պատճառով ըրարութեան երկուութիւնը վերնայ իրենց ժողովուրդին մէջէն: Յակոբոս սակայն յայտարարեց. «Յիսուս Մեսիան է եւ Աստուծոյ Որդին, որ այժմ նստած է Աստուծոյ աջ կողմը եւ պիտի գայ դատելու աշ-

խարհը արդարութեամբ»: Շատեր հաւատքի եկան այս յայտարարութեան վրայ, իսկ ուրիշներ վեր ելան ու Յակոբոսը աշտարակէն վար նետեցին ու սկսան քարկոծել զայն, ի վերջոյ անոնցմէ մէկը թափիչի խոշոր փայտով մը փշրեց արդարին գլուխը, որ հոգին աւանդեց առ Աստուած 62 թուականին:

Այս Յակոբոսին յիշատակն ալ, Զեբեդեան Յակոբոսին պէս, սերտորէն կապուած է մեր եկեղեցիին հետ: Նահատակութենէն յետոյ իր մարմինը բերուած ու թաղուած է իր տան պարտէզին մէջը, ուր թաղուած էր նաեւ Յակոբոս առաքեալի գլուխը: Այս տան տեղւոյն վրայ շինուած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան մայր տաճարը, որ այս իսկ պատճառով կը կոչուի «Սրբոց Յակոբեանց Տաճար», այսինքն՝ «Սուրբ Յակոբեանքու Եկեղեցին»:

Նոր Կտակարանի մէջ Յակոբոսի անունով թուղթ մը ունինք ուղղուած առ հասարակ հրեայ քրիստոնեաներուն: Կը ջատագովէ գործնական կրօնքը, որ կը յայտնուի ԲԱՏԻ ԳՈՐԾԵՐՈՒՆ մէջ: Թուղթին կեդրոնական գաղափարը կը յայտնուի սա խօսքին մէջ. «Եթէ մէկը կը կարծէ, որ ինք կրօնասէր է, բայց եթէ իր լեզուն չի սանձեր, ինքզինքը կը խաբէ, այդ մարդուն կրօնքը ընդունայն է: Այն կրօնքը, որ սուրբ եւ անարատ է Աստուծոյ եւ մեր հօր առջեւ, հետեւեալն է. այցելող ըլլալ որբերուն եւ այրիներուն իրենց նեղութեան մէջ, եւ անարատ պահել անձը աշխարհէն» (Ա 26-27): Բարի գործերը կը հակադրէ հաւատքի սոսկական խոստովանութեան. «Ինչպէս որ մարմինը առանց հոգիի մեռեալ է, այնպէս ալ հաւատքը առանց գործքի մեռեալ է» (Բ 26):

Տեսնենդրայր Յակոբոսի յիշատակը կը կատարենք իբրեւ «Աւագ Տօներ» ու առաջինը Դաւիթ մարգարէին հետ:

Յոյնք՝ Հոկտ. 23: Լատինք՝ Մայիս 1:

33. ՇՄԱԽՈՆ՝ ԱԶԳԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Մենք այս անձը պիտի նոյնացնենք «Տեսնենդրայրներէն» Սիմոնին հետ (Մարկ. 2 3), որուն մասին անունէն զատ ուրիշ ոչինչ գիտենք Նոր Կտակարանէն: Աւանդութիւնը զայն կը նկատէ Երուսաղէմի երկրորդ եպիսկոպոսը, յաջորդած՝ Յակոբոսին, եւ շուրջ յիսուն

տարիներ մնացած է այդ պաշտօնին վրայ: Իբրեւ քրիստոնէից պետ շրջաններու կողմէ կը մատնուի Պաղեստինի Հռովմայեցի կառավարչին ձեռքը, որ զինքը չարչարանքներու կ'ենթարկէ, որոնց զարմանալի համբերութեամբ կը տոկայ, ի վերջոյ Յիսուսի նման խաչի մահուամբ կը նահատակուի խոր ծերութեան մէջ, աւելի քան հարիւրամեայ: Կը տօնուի Յիսնակի երրորդ Կիրակիին յաջորդող Երեքշաբթիին՝ այլ Աւետարանական եւ առաքելական դարու սրբոց հետ:

Յոյնք՝ Ապրիլ 27: Լատինք՝ Փետր. 17:

34. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅ

Ստեփանոս նախնական եկեղեցիի ամէնէն շնորհալի դէմքերէն մէկն է. կրկնապէս անմահացած ոչ միայն իբրեւ անոր մեծ գործիչներէն մէկը, այն նաեւ հանդիսանալով առաջին քրիստոնեան, որ իր արիւնը թափած է Բրիտանոսի սիրոյն համար:

Առաջին անգամ իր անունին կը հանդիպինք, երբ քրիստոնէական եկեղեցին կը կատարէ իր առաջին ընտրութիւնը:

Սկզբնական շրջանին նախնական եկեղեցին փորձեց ապրիլ հաւաքական կեանք մը: Ունէին հասարակաց գանձանակ եւ հասարակաց սեղան: Հաւատացեալները, իրենց ինչքերը կամ ազարակները ծախելով, դրամը Առաքեալներու տրամադրութեան տակ կը դնէին: Իսկ հասարակաց սեղանին կը մասնակցէին ամէնքը առանց ունէ խորութեան: Երբ խումբը մեծցաւ՝ սեղան սարքելու հարցը դժուարացաւ եւ բարդութիւններ ստեղծուեցան: Առաքեալները, որոնք հասարակաց սեղանի հոգն ալ իրենց վրայ առած էին, անդրադարձան, որ այդ արգելք կ'ըլլար իրենց քարոզչական աւելի կարեւոր գործին. ուստի «Տասներկուքը կանչեցին աշակերտներու բազմութիւնը եւ ուստի «Շիտակ չէ, որ մենք թողունք Աստուծոյ խօսքը եւ սեղանին ըսին. «Շիտակ չէ, որ մենք թողունք Աստուծոյ խօսքը եւ սեղանին սպասաւորենք: Ընտրեցէք, եղբայրներ, ձեր մէջէն եօթը վստահելի մարդեր, զորս այս գործին վրայ կարգենք, իսկ մենք պաշտամունքի եւ քարոզութեան գործերով զբաղինք» (Գործ. 2 1-7):

Հաւատացեալները ընտրեցին արդարեւ եօթը հոգիներ, որոնց առաջինն է Ստեփանոս: Առաքեալներ ասոնց վրայ «աղօթք ըրին եւ ձեռք դրին»: Եւ որովհետեւ ասոնց պաշտօնն էր հասարակաց սեղան

նին սպասարկել, կոչուեցան «Սպասաւորներ», յունարէնով «Տիա-կոս»ներ: Ժամանակի ընթացքին, երբ այս նւթական սեղանը փոխարինուեցաւ հոգեւոր սեղանով, այս վերջին սեղանին սպասաւորներն ալ պահեցին նոյն տիտղոսը եւ եղան այսօրուան եկեղեցիի Սարկաւազները:

Ստեփանոս առաջին վայրկեանէն իսկ որակուած է «Ա Հոգիով եւ Հաւատքով լեցուած» կամ «Շնորհքով եւ զօրութեամբ լեցուած մարդ մը», սկսաւ մինչեւ իսկ հրաշքներ գործել: Հասարակաց սեղանի սպասարկութենէն դուրս ժամանակ կը յատկացնէր նաեւ քարոզչական գործին, որուն մեծ յարմարութիւն կը զգար իր մէջ ու յատկապէս կը քարոզէր արտասահմանէն եկած հրեաներուն: Ասոնց յառաջապահները «չկարենալով դիմադրել այն իմաստութեան եւ հոգիին, որով կը խօսէր», դիմեցին զրպարտական միջոցներու, ամբաստանելով զայն որպէս թէ «Հայհոյական խօսքեր ըսած ըլլար Մովսէսի եւ Աստուծոյ դէմ»: զրգուեցին ժողովուրդը, եւ անոնց մեծամեծները բռնեցին զայն եւ իրենց բարձրագոյն ատեանին առջեւ հանեցին դատելու համար: Ու Գործք Առաքելոցի Հեղինակը կ'աւելցնէ. «Ատեանին մէջ նստողները, երբ իրենց ակնարկները կեդրոնացուցին անոր վրայ, տեսան, որ անոր դէմքը հրեշտակի երեսին պէս էր» (Գործ. 2 15):

Բարձրագոյն Ատեանի մէջ Ստեփանոսի խօսած ճառը պահուած է Գործք Առաքելոցի մէջ՝ է գլուխ, որ համադրութիւն է Հին Կտակարանին, ուր Ստեփանոս քայլ առ քայլ կը հաստատէ, որ խստապարանոց ժողովուրդ մը եղած են իրենց հայրերը եւ իրենք, որոնք «սպաննեցին անոնց, որոնք նախապէս պատմեցին Արդարի՛ Մեսիայի, Քրիստոսի գալստեան մասին, որուն դուք ալ Հիմա մատնիչները եւ սպանիչը եղաք: Օրէնք ստացաք հրեշտակներու ձեռքով եւ չպահեցիք զայն»:

Երբ լսեցին ժողովականները այս յանդիմանական խօսքերը, զայրոյթով լեցուեցան եւ իրենց «ակռանները կը կճրտէին», իսկ Ստեփանոս, երբ աչքերը վեր առաւ, «Տեսաւ Աստուծոյ փառքը եւ Յիսուսը, որ Աստուծոյ աջ կողմը կեցած էր», ու յայտարարեց. «Ահա կը տեսնեմ երկինքը բացուած եւ Մարդու Որդին Աստուծոյ աջ կողմը կեցած»: Այս յայտարարութենէն սաստիկ գայթակղած ձեւանալով՝ ներկաներ, դերասանական ձեւով իրենց ականջները գոցեցին, յարձակե-

ցան Ստեփանոսի վրայ, դուրս հանեցին զայն քաղաքէն ու սկսան քարկոծել: Իսկ Ստեփանոս, որ ամէն մարդի կատարեալ հետեւող մը եղած էր Քրիստոսի, նմանեցաւ Անոր նաեւ մահուամբ, երբ թողութիւն խնդրեց իր քարկոծողներուն համար, ըսելով. «Տէ՛ր, ասիկա մեզք մի խնդրեց իր քարկոծողներուն համար, ընդունէ իմ հոգիս» ըսելով համարեր ասոնց». եւ ապա՝ «Տէր Յիսուս, ընդունէ իմ հոգիս» ըսելով «ննջեց»: Սողոս՝ ապագայ Պօղոսը, անոր սպաննիչներէն մէկն էր:

Ըլլայ Ստեփանոսի քարոզը, ըլլայ անոր մահը խոր տպաւորութիւն գործած պիտի ըլլայ Սողոսի վրայ, որ չկրցաւ ազատուիլ անոնց յաճախանքէն, մինչեւ որ ինք ալ դարձի եկաւ եւ շարունակեց Ստեփանոսի սկսած գործը, որ էր անջատել Քրիստոնէութիւնը Հրէական կրօնքի կաշկանդումներէն եւ տալ անոր ազատական ու համամարդկային ուղղութիւն մը, որ Պօղոսի մեծագոյն իրագործումը եղաւ արդարեւ:

Կը տօնենք Ստեփանոսի յիշատակը Աւագ Տօներու կարգին, Դեկտ. 25ին կամ անոր յաջորդ օրը, երբ Դեկտ. 25ը Կիրակի կամ պահոց օր ըլլայ: Յոյնք՝ Դեկտ. 27 եւ Օգոս. 2: Լատինք՝ Դեկտ. 26, Մյու. 7 եւ Օգոս. 3:

35. ՓԻԼԻՊՊՈՍ «ՍԱՐԿԱԻԱԳ»

Փիլիպպոս երկրորդն է այն եօթնեակին, որ ընտրուեցաւ հասարակաց սեղանին սպասաւորելու: Ստեփանոսի մահէն յետոյ «մեծ հալաթում» մը շղթայագործուեցաւ Երուսաղէմի մէջ, ընդդէմ քրիստոնէից, «եւ ամէնքն ալ ցրուեցան Հրէաստանի եւ Սամարիոյ գիւղերը բացի Առաքեալներէն»: Այս «ցրուեալներուն» մէջ էր նաեւ Ստեփանոսի ընկերը եւ պաշտօնակիցը՝ Փիլիպպոս, որ Սամարիա գնաց եւ սկսաւ ընկերը եւ պաշտօնակիցը՝ Փիլիպպոս, որ Սամարիա գնաց եւ սկսաւ թեան միացուցած էր նաեւ հրաշագործութեան շնորհը, այնպէս որ շատեր Հաւատացին, դարձի եկան ու մկրտուեցան, եւ այսպէս ազաւատեցան կախարդանքէն Սիմոն անուն մոգի մը, որ իր ազդեցութեան տակ առած էր Սամարիոյ բնակչութիւնը: Մինչեւ իսկ ի վերջոյ Սիմոն մոգ եւս Հաւատաց ու մկրտուեցաւ:

Երբ Երուսաղէմի մէջ Առաքեալները լսեցին, որ Սամարացիք դարձի եկած են, անոնց զրկեցին Պետրոսը եւ Յովհաննէսը, որոնք

աղօթեցին եւ «ձեռք դրին անոնց վրայ», ու մկրտեալները ստացան նաեւ Ս. Հոգի:

Միմոն մոգ, տեսնելով, որ Առաքեալներու ձեռք դնելովը մարդիկ Ս. Հոգի կը ստանան, դրամ առաջարկեց անոնց, խնդրելով, որ այդ իշխանութիւնը իրեն ալ տան: Սաստիկ զայրացաւ Պետրոս եւ ըսաւ. «Կորսուէ ասկէ, որովհետեւ Աստուծոյ պարգեւները դրամով չեն գնուիր» (Գործ. Ը 20):

Աստուծոյ հրեշտակին թելադրութեամբ Փիլիպպոս իջաւ դէպի հարաւ, Գազայի կողմերը, ուր հանդիպեցաւ Եթովպիոյ թագուհիին «Հօր ներքինիին», որ Երուսաղէմ ուխտի եկած՝ կը վերադառնար իր երկիրը:

Փիլիպպոս մօտեցաւ ներքինիի կառքին եւ տեսաւ, որ ան Ս. Գիրք կը կարդար եւ հարցուց.

– Կը հասկնա՞ս արդեօք կարդացածդ:

– Ինչպէս կրնամ հասկնալ, – ըսաւ ներքինին, – եթէ մէկը չբացատրէ ինծի: – Ու խնդրեց, որ իր կառքը ելլէ եւ նստի իր մօտ: Կարդացածը Եսայի մարգարէի հետեւեալ հատուածն էր.

«Ոչխարի պէս սպաննուելու առաջնորդուեցաւ.

Ինչպէս գառնուկը անմուռնչ կը մնայ իր խուզիչին առջեւ,

Այնպէս ալ ինք բերանը չի բանար:

Իր խոնարհութեան համար ոչ ոք արդարութիւն ըրաւ անոր,

Ով պիտի պատմէ անոր գալիքը.

Քանզի անոր կեանքը կը վերնայ երկրէ» (Ես. ԾԳ 7-8):

– Կ'աղաչեմ, – ըսաւ ներքինին, որո՞ւն, – համար կ'ըսէ մարգարէն այս խօսքերը. իրե՞ն համար, թէ՞ ուրիշի համար:

Ու Փիլիպպոս, այս համարէն ճամբայ ելնելով, սկսաւ ակետարանել անոր Յիսուս Քրիստոսի մասին: Երբ այսպէս խօսելով կ'երթային, հանդիպեցան ջուրի մը, եւ ներքինին ըսաւ.

– Ահաւասիկ ջուր, ի՞նչ բան կ'արգիլէ զիս մկրտուելէ:

– Եթէ կը հաւատաս, բոլոր սրտովդ կրնաս մկրտուիլ, – ըսաւ Փիլիպպոս:

– Կը հաւատամ, թէ Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդին է, – ըսաւ ներքինին: Ու հրամայեց կեցնել կառքը, իջան երկուքն ալ կառքէն, ու Փիլիպպոս մկրտեց զայն: Ներքինին շարունակեց իր ճամբան «ուրախութեամբ»:

Իսկ Փիլիպպոս իր քարոզչական գործը առաջ տարաւ նոյն շրջանի ծովեզերեայ քաղաքները մինչեւ Պաղեստինեան Կեսարիա, ուր հաստատուեցաւ վերջնականապէս: Երբ Պողոս Առաքեալ վերջին անգամ Երուսաղէմ կը վերադառնար իր առաքելական շրջագայութենէն, իջեւանեցաւ անոր տունը, եւ այդ առթիւ կը յիշուի, թէ Փիլիպպոս ունէր «չորս կոյս աղջիկներ, որոնք մարգարէական շնորհով օժտուած էին» (Գործ. ԻԱ 8):

Փիլիպպոս Սարկաւազի կամ «Աւետարանիչի» վախճանի մասին գրեթէ ոչինչ գիտենք:

Կը տօնենք զայն Խաչի Հինգերորդ Կիրակիին յաջորդող Երեքշաբթի օրը, այլ Նոր Կտակարանի սրբոց հետ:

Յոյնք՝ Հոկտ. 11: Լատինք՝ Յնս. 6:

36. ԿՈՌՆԵԼԻՈՍ ՀԱՐԻՒՐԱՊԵՏ

Առաջին հեթանոսը, որ քրիստոնեայ եղաւ: Թէեւ ասկէ առաջ տեսանք Ղուկիանոս հարիւրապետը, որ հաւատաց Խաչելութեան ընթացքին, բայց անոր մկրտուած ըլլալը եւ այլ պարագաները չեն ներկայացուած Նոր Կտակարանին մէջ իր մասին մեր գիտցածը ականդութենէն է: Տեսանք նաեւ Եթովպիոյ թագուհիին ներքինին, որ թէեւ «Եթովպացի» ըսուած է, բայց այդ պատճառ մը չէ, որ չենթադրուի, որ ազգով հրեայ մըն էր, քանի որ Երուսաղէմ եկած էր «Երկրպագանելու համար» (Գործ. Ը 27): Արտասահմանի Հրեաները կը կոչուէին անունով այն երկրին, ուր հաստատուած էին «Լիբէացի, Կիպրացի, Կիլիկեցի» եւն.:

Կոռնելիոս հաստատուած էր Պաղեստինը կառավարող Հռովմայեցի կուսակալներու կեզրոն Կեսարիա քաղաքը, մօտիկը այսօրուան Հայֆա քաղաքին: «Խտալացի» կոչուած գունդէն հարիւրապետ մըն էր: Հաւանաբար այն բարեպաշտ հեթանոսներէն էր, որոնք, տեսնելով հրէական կրօնքի մէջ գտնուած ճշմարտութեան լոյսը, հրաժարած էին

իրենց բնիկ կրօնքէն եւ աստուածներէն ու կը պաշտէին ճշմարիտ Աստուածը: Կոռնելիոսի մասին ըսուած է. «Բարեպաշտ եւ երկիւղած մարդ մըն էր ամբողջ տունովը, ողորմութիւն կը բաշխէր ամենքին ու Աստուծոյ աղօթք կ'ընէր ամէն ատեն» (Գործ. Ժ 1-2):

Օր մը Աստուծոյ հրեշտակը կ'երեւի իրեն ու կ'ըսէ. «Աղօթքդ եւ բարեգործութիւններդ Աստուծոյ առջեւ բարձրացան եւ ընդունելի եղան. արդ Յոպպէ մարդ զրկէ եւ կանչել տուր Պետրոս անունով մարդ մը, որ կը բնակի Սիմոն անունով խաղախորդի մը տունը, ծովին մօտիկը»: Արդարեւ մարդ կը զրկէ Կոռնելիոս եւ կանչել կուտայ Պետրոս Առաքեալը, որ իր կարգին նոյն օրը տեսիլք ունեցած էր, որուն իմաստը Կոռնելիոսէն կանչուելէն յետոյ միայն հասկեցաւ, այսինքն՝ չքաշուիլ երբեք Աւետարանը քարոզելէ նաեւ հեթանոսներուն, եւ անոնցմէ ալ նորադարձներ ունենալէ: Գործքի բացատրութեամբ՝ «ոչ ոք խառնակ կամ անսուրբ համարել» ծիսական իմաստով:

Երբ Պետրոս հասաւ, Կոռնելիոս արդէն իր տունը հրաւիրած էր «իր ազգատոհմը եւ կարեւոր բարեկամները» եւ կը սպասէր իրեն: Այնքան պարզ, հիմնական ու հետաքրքրական է Պետրոսի այս առթիւ խօսած քարոզը, որ կ'արժէ նոյնութեամբ առաջ բերել:

«Ճշմարտութեամբ վերահասու եղած եմ, որ Աստուած խտրութիւն չգնէր մարդոց մէջ. այլ հոգ չէ, թէ մարդ մը, որ ազգի մէջ ալ ըլլայ, եթէ երկիւղած է եւ արդարութիւն կը գործէ, ընդունելի է Անկէ: Աստուած իր խօսքը զրկեց Իսրայէլի որդիներուն խաղաղութեան աւետիսը տալու համար Յիսուսի Քրիստոսի միջոցաւ, որ Տէրն է ամէն բանի: Դուք արդէն լսած պիտի ըլլաք այն բաներու մասին, որոնք պատահեցան Իսրայէլի մէջ, սկսելով Գալիլիայէն Յովհաննէսի մկրտութեան քարոզութենէն յետոյ, այսինքն՝ նազարէթի Յիսուսի մասին, զոր Աստուած օծեց իր Սուրբ Հոգիովը եւ զօրութեամբը, որ շրջեցաւ՝ բարիք գործելով եւ բժշկելով բոլոր անոնք, որ բռնուած էին սատանայէն, որովհետեւ Աստուած Անոր հետ էր: Ու մենք վկայ ենք այն ամէնուն, որ ըրաւ Հրէաստանի եւ Երուսաղէմի մէջ. ի վերջոյ սպաննեցին զԱյն խաչելով: Սակայն Աստուած յարութիւն տուաւ Անոր երրորդ օրը, եւ արտօնեց, որ երեւի Ան ոչ թէ ամէնքին, այլ մեզի վկաներու, զորս Աստուած յառաջագոյն ընտրած էր, որ կերանք ու խմեցինք իրեն հետ յարութենէն յետոյ: Ու պատուիրեց մեզի քարոզել

ամէնքին եւ վկայել, թէ Նա է Աստուծմէ սահմանուած դատաւորը ողջերուն եւ մեռելներուն: Բոլոր մարգարէներ անոր մասին իրենց վկայութիւնը տուած են, թէ մեզքի թողութիւն պիտի ունենան բոլոր անոնք, որ կը հաւատան Անոր (Գործ. Ժ 34-43):

Երբ Պետրոս կը խօսէր, «Սուրբ Հոգին իջաւ բոլոր լսողներուն վրայ»: Յատկապէս զարմանքի եկան Հրեայ քրիստոնեաները, որոնք Պետրոսի ընկերացած էին, երբ տեսան որ հեթանոսներուն վրայ ալ Սուրբ Հոգիի շնորհը իջաւ:

Այն ատեն Պետրոս, նշանակալից ակնարկ մը նետելով իրեն հետեւող Հրեայ քրիստոնեաներուն վրայ, ըսաւ «Կրնա՞նք արգելք ըլլալ, որ ասոնք չմկրտուին նաեւ ջուրով, երբ անոնք ալ մեզի պէս Ա. Հոգին ընդունեցան»: Ու հրամայեց, որ մկրտեն զանոնք: Տամբ երգիքին ներքեւ հաւաքուած եւ հեթանոսներէ բաղկացած այս փոքր խումբը եղաւ այն փոքրիկ ձիւնազնդակը, որ մինչեւ այսօր կը գլորի ու կը մեծնայ մեր երկրագունդի ամբողջ տարածքին վրայ:

Կոռնելիոսի մասին աւանդութիւնը կ'ըսէ, որ Սկեփսիոն անունով քաղաք մը գացած ու քարոզած է, այնտեղ թէեւ չարչարանքներու ենթարկուած, բայց խաղաղ վախճան մը ունեցած է:

Կը տօնենք զայն Յիսնակի Գ Կիրակիին յաջորդող Գշ. ին այլ սուրբերու խումբի մը հետ: Յոյնք՝ Սեպ. 13: Լատինք՝ Փետր. 21:

ԳՈՐԾԱԿԻՑՔ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՔ ՊՕՂՈՍԻ

Նոր Կտակարանի սուրբերու այս վերջին բաժնին մէջ կը համադրուին Գործք Առաքելոցի եւ Առաքելական թուղթերու մէջ յիշուած այն քրիստոնեայ գործիչները, որոնք տօնացոյցի անցած են եւ որոնք գրեթէ ամբողջութեամբ կապուած են Պօղոս Առաքեալի հետ, իբրեւ անոր գործակիցները կամ աշակերտները:

37. Ա Ն Ա Ն Ի Ա

Մկրտիչը՝ Պօղոս Առաքեալին Դամասկոսի մէջ:

Սողոս Դամասկոսի ճամբուն վրայ ունեցած փայլականային տեսիլքէն յետոյ, գրեթէ կուրացած մտած էր քաղաք: Երեք օր ոչ կերաւ, ոչ ալ խմեց, այլ աղօթքով ու խոկումով անցուց: Երրորդ օրն է, որ Աստուած կը թեւադրէ Անանիային, որ երթայ եւ պէտք եղածը խօսի անոր: Երբ եւ ինչ պարագաներու տակ քրիստոնեայ եղած է Անանիա, ոչ ինչ ըսուած է. բնիկ Դամասկոսցի էր թէ Հրէաստանէն գացած, այդ ալ յայտնի չէ. իրականութիւնը այն է, որ Փրկչի Համբարձուածէն քանի մը տարիներ յետոյ բաւական թիւով քրիստոնեաներ գտնուած են այնտեղ, որ Հալածիչ Սողոս պէտք կը զգայ Երուսաղէմէն յետոյ իր Հալածողական գործունէութիւնը տարածել նաեւ Դամասկոսի մէջ:

Անանիա, գիտնալով Հանդերձ, որ Սողոս Հալածիչ մըն էր, Աստուածային հրահանգին հնազանդելով, գնաց այն տունը, ուր կը մնար Սողոս: Ձեռքերը դրաւ անոր վրայ եւ ըսաւ «Սաւուղ եղբայր, Տէրը զրկեց զիս, այն Յիսուսը, որ երեսեցաւ քեզի հոս գալուդ ճամբուն վրայ, որպէսզի տեսողութիւնդ վերստանաս եւ Սուրբ Հոգիով լեցուիս»: Երբ Անանիա ձեռքերը դրաւ Սողոսի գլուխին, «անոր աչքերէն կեղեւի պէս բաներ մը թափեցան, եւ իր տեսողութիւնը վերագտաւ ու մկրտուեցաւ (Գործ. Թ 15-19):

Այսչափ է մեր գիտցածը Անանիայի մասին Նոր Կտակարանէն: Յայսմատուրքը սակայն կ'աւելցնէ, որ իբրեւ քրիստոնեայ ձեռքակալուած եւ դատաւորի առջեւ Հանուած է, որ ըսաւ իրեն. «Կը տեսնեմ,

որ պատկառելի եւ իմաստուն մարդ մը կ'երեւիս, ուստի չարչարանքով պարապ տեղ կորուստիդ պատճառ մի ըլլար, այլ զոհէ մեր աստուածներուն»: Անանիա կը պատասխանէ. «Ձեմ զոհեր եւ երկրպագութիւն չեմ ըներ ձեր խուլ, Համբ եւ անզգայ աստուածներուն, այլ կը պաշտեմ Յիսուս Քրիստոսը, իմ ճշմարիտ Աստուածս, որ մեզի գիտութեան լոյս եղաւ, զոր տեսանք մեր աչքերով եւ շօշափեցինք մեր ձեռքերով, եւ որ զմեզ ազատեց կռապաշտութեան մոլորութենէն»: Կ'ենթարկուի սաստիկ չարչարանքներու ի վերջոյ քարկոծու մով կը կնքէ իր կեանքը:

Մենք՝ իսաչի Ե Կիրակիի յաջորդ Գշ.ին: Յոյնք՝ Հոկտ. 1ին. Լատինք՝ Յնր. 25ին:

38. ԲԱՌՆԱԲԱՍ

Քրիստոնէական նախնական եկեղեցիի գլխաւոր գործիչներէն է Բառնաբաս, եւ եղաւ Պօղոսը իր առաքելական ճամբուն մէջ առաջնորդողը: Մնած է Կիպրոս, բայց քրիստոնէական թատերաբեմին վրայ կ'երեւի Երուսաղէմի մէջ, ուր ունի եղբայր մը կամ քոյր մը եւ կ'որոշորդի մը յանձին Մարկոս Աւետարանիչի: Ինք «Ղեւտացի» էր, եղբորորդի մը յանձին Մարկոս Աւետարանիչի: Ինք «Ղեւտացի» էր, այսինքն՝ քահանայական ցեղէ: Ունէր ազարակ մը, զոր ծախեց եւ դրամը բերաւ յանձնեց Առաքելներուն, օգտագործելու Համար եկեղեցիի Հասարակաց պէտքերուն:

Իր անունը նախապէս Յովսէփ էր, զոր Առաքելները փոխեցին Բառնաբասի, որ կը նշանակէ «Որդի մխիթարութեան»: Այս փոփոխութիւնը կատարուեցաւ՝ Հաւանաբար նկատի ունենալով իր բնատրութիւնը, որ եղած է անկեղծ, տաքուկ, զուարթամիտ ու հագորդական, ինչպէս կ'երեւի իր առաջին գործունէութեան ընթացքին, որ արձանագրուած է Գործք Առաքելոցին մէջ:

Առաքելները երբ իմացան, որ Անտիոքի մէջ Հեթանոսներ ալ դարձի եկած են, իբրեւ ներկայացուցիչ զրկեցին Բառնաբասը, որ ստոյգ տեղեկութիւն բերէ իրենց այս մասին: «Երբ եկաւ Անտիոք, տեսաւ Աստուծոյ շնորհը, որ արուած էր նաեւ Հեթանոսներուն, ուրախացաւ Բառնաբաս եւ ԿԸ ՄիսիթԱՐԷՐ ամէնքն ալ, որ սրտի յօծարութեամբ Հաւատարիմ մնան Տիրոջ, որովհետեւ զուարթամիտ մարդ մըն էր եւ լեցուն՝ Սուրբ Հոգիով եւ Հաւատքով» (Գործ. ԺԱ 22):

յունաց օրացոյցին մէջ, բայց մենք բացայայտօրէն վստահ ենք, որ այս գոյգ անունները մէկ անձի սեպհական են. Շիղա իր երբայական անունն է, իսկ Սիղուանտոր՝ անոր յունական ձևը:

Շիղա առաջին անգամ կ'երեւի Գործք Առաքելոցի մէջ, երբ Երուսաղէմի ժողովի կողմէ իբրև ներկայացուցիչ կ'ընտրուի ուրիշ ընկերոջ մը հետ, ժողովի որոշումները Պողոսի եւ Բառնաբասի հետ Անտիոք տանելու համար: Արդարև Անտիոքի մէջ Շիղա եւ իր ընկերը «շատ մը խօսքերով մխիթարեցին եղբայրները եւ սրտապնդեցին զանոնք»: Ատեն մը մնացին Անտիոք, միւս ընկերը վերադարձաւ Երուսաղէմ, «Իսկ Շիղայի հաճոյ թուեցաւ այնտեղ մնալ»:

Պողոս երբ տեսաւ, որ Բառնաբաս չկրցաւ ընկերանալ իր մտադրած երկրորդ ճամբորդութեան, այն ատեն իր ընտրութիւնը կայացուց Շիղայի վրայ եւ միասին ճամբայ ելան Անտիոքէն՝ դէպի Հիւսիս. մտան Կիլիկիա, եւ սկսան քրիստոնէական բլիջներ ստեղծել ամենուրեք իրենց ճամբու ընթացքին: Այցելեցին Պողոս Առաքեալի նախապէս հիմնած եկեղեցիները Գոնիայի շուրջ: Յառաջացան մինչեւ Անգարայի կողմերը եւ ապա արեւմուտք դառնալով՝ անցան այսօրուան Էսկիշէհիբ եւ Պիլեծիկի վրայով հասան Տրովադա, ուրկէ նաւ առնելով՝ անցան Երոպական ցամաքամաս, Մակեդոնիա՝ սկսելով այսօրուան Գափալլայէն, որ այն ատեն կը կոչուէր Նոր քաղաք (Նէապոլիս):

Մակեդոնիոյ Ֆիլիպպէ քաղաքին մէջ բանտարկուեցան Շիղա եւ Պողոս, բայց ազատուելով բանտէն՝ շարունակեցին իրենց շրջագայութիւնը ամբողջ Յունաստան, Հիւսիսէն Հարաւ, Սելանիկ Աթէնք եւ Կորնթոս, ուրկէ դարձեալ Փոքր Ասիա անցան, Եփեսոս եւ անկէ նաւ առնելով՝ ուղղակի վերադարձան Երուսաղէմ:

Այս ճամբորդութեան ընթացքին Սելանիկի մէջ վերջին անգամ կը յիշուի Շիղա (Գործ. Ժէ 4), որմէ յետոյ այլեւս իր հետքը կը կորսուի: Կը յիշատակուի սակայն Պողոս Առաքեալի Բ Կորնթացուց թուղթին մէջ (Ա 19), թէ Կորնթոսի մէջ Աւետարանը քարոզուած է Պողոսի, Շիղայի եւ Տիմոթէոսի կողմէ: Թեսաղոնիկեցիներու գրուած Պողոսի երկու թուղթերուն սկիզբը գրուած է նաեւ Շիղայի անունը, որպէս թէ երկուքին կողմէ գրուած ըլլային: Մինչև իսկ Պետրոսի առաջին թուղթի հետեւեալ հատուածէն հետեւեցնելով՝ այդ ալ կ'ընայ գրուած

նկատուիլ Շիղայի կողմէ, թելադրուելով անշուշտ Առաքեալին կողմէ. «Սեղուանոս հաւատարիմ եղբոր ձեռքով կարծեմ թէ փոքր ի շատէ գրեցի ձեզի՝ մխիթարելու համար զձեզ...» (Ա Պետ. Ե 12):

Նկատելի պարագայ մըն է, որ Գործք Առաքելոցի մէջ ան կը յիշուի միշտ իբրև Շիղա, իսկ Առաքելական թուղթերուն մէջ՝ իբրև Սիղուանտոս: Իր վախճանի մասին գրեթէ ոչինչ գիտենք: Կը կարծուի, որ Ֆիլիպպէի առաջին եպիսկոպոսը եղած՝ եւ այնտեղ վախճանուած ըլլայ: Մենք կը տօնենք Խաչի Ե Կիրի յաջորդ Գջ օրը ուրիշ «Առաքելոց» հետ: Յոյնք՝ Յլս. 30: Լատինք՝ Յլս. 13:

Լատին եկեղեցին կը յիշատակէ զայն Սիլաս անունան տակ:

40. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐԿՈՍ ԱԻԵՏԱՐԱՆԻՉ

Մեր տօնացոյցին մէջ այս ՅՈՎՀԱՆՆԷՍ եւ ՄԱՐԿՈՍ անուններն ալ նկատուած են երկու տարբեր անձեր եւ ըստ այնմ անցած են օրացոյցի: Կրկնակ անունով ծանօթ այս անձը առաջին անգամ կ'երեւի Գործք Առաքելոցի մէջ, երբ Պետրոս Առաքեալ, բանտէն ազատուելով, ասոնց տունը կուգայ. «Եւ Պետրոս... եկաւ տունը Մարիատուցի, ասոնց տունը կուգայ. «Եւ Պետրոս... եկաւ տունը Մարիատուցի» (Գործ. ԺԲ 12): մին՝ մօրը Յովհաննէսին, որ կոչուեցաւ Մարկոս» (Գործ. ԺԲ 12): Ասկէ նախ կը հետեւի, որ ՅՈՎՀԱՆՆԷՍ եւ ՄԱՐԿՈՍ նոյն անձին երկու տարբեր անուններն են, մին՝ երբայական, միւսը՝ յունահռոմէական: Այս կրկնանունութիւնը կը նշմարուի Քրիստոնէական եկեղեցիի առաջին գործիչներուն մեծ մասին վրայ: Վերոյիշեալ հատուածէն կը հետեւի նաեւ, թէ իր մայրն ալ ծանօթ անձնաւորութիւն մըն էր ծէն կը հետեւի նաեւ, թէ իր մայրն ալ ծանօթ անձնաւորութիւն մըն էր նորածին եկեղեցիի մէջ, եւ թէ, ինչ որ ակելի կարելոր է, իրենց տունը նախնի քրիստոնէից գլխաւոր հաւաքավայրերէն մէկն էր, որովհետեւ վերոյիշեալ մէջբերումին կը յաջորդէ սա խօսքը. «Ուր շատեր հաւաքուած էին եւ կ'աղօթէին»:

Ուրեմն Մարկոս Երուսաղէմացի է, եւ եղբորորդի Բառնաբաս Առաքեալի, ինչպէս կը հաստատուի Պողոս Առաքեալի Կողասացուց թուղթէն, ուր ողջոյն կը ղրկէ նաեւ «Մարկոս, եղբորորդի Բառնաբասի» (Դ 10): Երբ Բառնաբաս ու Պողոս Երուսաղէմ եկան, Անտիոքի բասի» (Դ 10): Երբ Բառնաբաս ու Պողոս Երուսաղէմ եկան, Անտիոքի հաւատացեալներուն նիւթական նուէրը բերելով Երուսաղէմի աղքատ եկեղեցիին, վերադարձին իրենց հետ առին նաեւ «Յովհաննէսը, որ Մարկոս կոչուած էր» (Գործ. ԺԲ 25): Ու իրենց առաջին ճամբորդ

Պօղոսը, եւ Հիմա կապեալս Յիսուս Քրիստոսի Համար, պիտի աղաչեմ քեզ որդւոյս՝ ՈՆԵՍԻՄՈՍԻ Համար, զոր ծնայ կապանքներու մէջ (դարձի բերի զայն իմ այս բանտարկուած վիճակիս մէջ): Այո, Ոնեսիմոսի Համար, որ երբեմն անպիտան էր քեզի Համար, բայց Հիմա պիտանի է թէ քեզի եւ թէ ինծի, եւ զոր կը ղրկեմ քեզի, խնդրելով որ ընդունիս զայն իբրեւ իմ մէկ մասնիկս, զոր թէեւ կ'ուզէի մօտս պահել, որպէսզի քու տեղդ ինծի օգտակար ըլլար Աւետարանի Համար այս կապեալ վիճակիս մէջ, բայց առանց քու կամքիդ չուզեցի ոչինչ ընել, որպէսզի քու բարիքդ ստիպողական չըլլայ, այլ՝ յօժարակամ:

Եւ թերեւս այս պատճառով մեկնեցաւ քեզմէ ժամանակի մը Համար, որպէսզի յաւիտենապէս ունենաս զայն, ոչ որպէս ստրուկ, այլ ստրուկէն աւելի վեր մէկը, այսինքն՝ իբրեւ սիրելի եղբայր, եթէ ինծի Համար եղբայր մըն է ան այլեւս, որչափ առաւել պիտի ըլլայ նաեւ քեզի թէ մարմնապէս եւ թէ Տիրոջ մով: Եթէ զիս Հաղորդակից կը նկատես, ընդունէ զայն այնպէս, ինչպէս պիտի ընդունէիր զիս: Եթէ քեզի դէմ յանցանք մը գործած է, կամ պարտական մնացած է, այդ ինծի Հաշուէ: Ես՝ Պօղոս, ստորագրութիւնս կը դնեմ, թէ ես պիտի Հատուցանեմ չըսելու Համար, որ դուն քու անձդ ինծի պարտական ես: Այո՛, եղբայր, ուրախացուր զիս եւ փարատէ անձկութիւնը ի Քրիստոս իմ որդիիս: Վստահ ըլլալով քու Հնազանդութեանդ՝ գրեցի քեզի: Որովհետեւ գիտեմ, թէ խնդրածէս աւելին պիտի ընես:

Միաժամանակ ինծի Համար սենեակ մը պատրաստէ, որովհետեւ այնպէս կը յուսամ, որ ձեր աղօթքներուն շնորհիւ Աստուած զիս ձեզի պիտի պարգեւէ: (Կը յուսամ շուտով բանտէն ազատիլ եւ ձեզի գալ):

Ողջոյն կուտայ ձեզի Եպափրաս, բանտակիցս ի Քրիստոս Յիսուս, նոյնը կ'ընեն Մարկոս, Արիստարքոս, Դեմաս եւ Լուկաս գործակիցներս: Մեր Տէր Յիսուսի շնորհքը ձեր ոգիին Հետ ըլլայ»:

Այս նամակին Հետ գրեց Պօղոս նաեւ մեր այսօրուան ունեցած «ԿՈՂՈՍԱՅԻՈՑ ԹՈՒՂԹԸ» եւ երկուքը միասին յանձնեց իր գործակիցներէն Տիտ-Քիկոսի, եւ Ոնեսիմոսն ալ անոր ընկերացնելով ղրկեց

Կողոսա, որ կը գտնուէր Փոքր Ասիոյ Եգէականի շրջանը, այսօրուան Տէնիզլիէն ոչ շատ Հեռու: Կը գրէ Պօղոս այդ թուղթին վերջաւորութեան մէջ. «Մեզի վերաբերեալ լուրերը պիտի ստանաք Տիւքիկոս սիրելի եղբորմէն եւ Հաւատարիմ օգնականէն ու գործակիցէն Տիրոջ գործին մէջ, զոր (Տիւքիկոսը) ղրկեցի ձեզի, որպէսզի տեղեակ ըլլաք մեր մասին եւ մխիթարուիք սրտով: Անոր կ'ընկերանայ նաեւ Ոնեսիմոս սիրելի եւ Հաւատարիմ եղբայրը, որ ձեզմէ մէկն է (Կողոսացի է): Այստեղ եղածները անոնք ձեզի պիտի պատմեն (Կող. Դ 7-9):

Աւանդութիւնը Ոնեսիմոսը քարոզութեան կը ղրկէ զանազան վայրեր, իր տիրոջ մահէն յետոյ: Երբ Հռովմայեցի դատաւորին առջեւ կ'ելլէ դատուելու Համար, վերջինիս Հարցումին թէ՛ ո՞վ ես դուն, կը պատասխանէ. «Ես երբեմն մարդու ծառայ էի, դրամով գնուած. այժմ Աստուծոյ ծառան եմ, Քրիստոսի արիւնով գնուած՝ եւ ազատորեալ դարձած»: Սաստիկ Հարչարանքներով կը նահատակուի: Յոյնք՝ Նոյ. 22: Լատինք՝ Փետր. 16:

ԱՅԼ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ՊՕՂՈՍԻ

Մեր տօնացոյցը Ոնեսիմոսի անունէն յետոյ կ'աւելցնէ. «ԵՒ ԱՅԼՈՑ ԱՇԱԿԵՐՏԱՏՆ ՊՕՂՈՍԻ»: Արդարեւ բազմաթիւ են Պօղոսի յանուանէ յիշատակուած աշակերտները, որոնց կը Հանդիպինք Գործք Առաքելոցի՝ բայց մանաւանդ իր թուղթերուն մէջ: Մենք Հաշուած են անոնցմէ բացի վերոյիշեալներէ աւելի քան քառասուն անուն: Գոնէ Համառօտիւ յիշատակենք անոնցմէ գլխաւոր նկատուածները, որոնց մասին քիչ շատ ծանօթութիւններ ունինք Գործք Առաքելոցէն կամ Պօղոսի թուղթերէն:

1. Վերեւ տեսանք արդէն անոնցմէ մէկը՝ Տիտ-Քիկոսը, որ առՀասարակ Պօղոսի թղթատարն է զանազան եկեղեցիներուն:

Բացի վերոյիշեալ թուղթէն յիշուած է, որ տարած է նաեւ «Եփեսացոց թուղթը» (Եփես. Զ 21-22), եւ Տիմոթէոսինը (Բ Տիմ. Զ 12): Հաւանաբար Եփեսացի է, որ ընկերացաւ Պօղոսի այս քաղաքէն դէպի Մակեդոնիա՝ Կորնթոս, Երուսաղէմ ճամբորդութեան (Գործք. Ի 4):

2.3 ԱԿԻՒՂԱՍ ԵՒ ՊՐԻՍԿԻՂԱ, այր եւ կին պատուական ամուլ մը, Պոնտացի, բայց կ'ապրէին Հռովմ, ուրկէ վտարուեցան սակայն երբ

15-16. ՏՐԻՓՈՍԱ եւ ՏՐԻՓՈՆԱ «վաստակաւորներ ի Տէր» (Հռոմ. ԺԶ 12): Թէեւ ասկէ զատ ոչինչ գիտենք իրենց մասին, բայց կը կարծուի, որ երկուորեակ անձնուէր քոյրեր եղած են, որոնց անունները կը նշանակեն եղբր «Սիրուն եւ Քնքոյշ»:

17-18. ԱՆ ԴՐՈՆԻԿՈՍ եւ ՅՈՒՆԻԱ, այր ու կին կամ եղբայր ու քոյր կը նկատուին: Պողոս Առաքեալ զանոնք կը կոչէ «իմ ազգականներս ու գերեկիցներս, որոնք ծանօթ են առաքելական շրջանակներու մէջ եւ որոնք ինձմէ առաջ քրիստոնեայ եղան (Հռոմ. ԺԶ 7):

19. ՓԻՔԷ, զոր կը կոչէ Առաքեալը «քոյր մեր, որ սպասաւորն է Կենքրայի եկեղեցիին», եւ կը յանձնարարէ Հռովմայեցի քրիստոնեաներուն, որ զայն «ընդունին յանուն Տիրոջ եւ արժանի սրբոց եւ օժանդակ եղէք անոր, ինչ գործի որ կանչէ ձեզ, քանզի ան ալ շատերուն օգնական եղած է, մինչեւ իսկ ինծի» (Հռոմ. ԺԶ 1-2): Հաւանաբար «Առ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ» թուղթը այս կնոջ ձեռքով դրկուեցաւ իր հասցէին, Կորնթոսէն: Վերոյիշեալ Կենքրա քաղաքը Կորնթոսի նաւահանգիստն էր:

20. ԴԻՈՆԵՍԻՈՍ ԱՐԻՍՊԱԳԱՑԻ, Աթենացի մտաւորական մը, որ գլխաւոր հաւատացողը եղաւ՝ Պողոսի Աթէնքի մէջ կատարած ոչ այնքան յաջող առաքելութեան մը ընթացքին (Գործ. ԺԷ 34): Ապա եղած է, ըստ աւանդութեան, Աթէնքի առաջին եպիսկոպոսը: Դիոնեսիոսը կը տօնենք Խաչի է Կիրակիի նախընթաց Շաբաթ օրը, «երկոտասան վարդապետաց» հետ, այն սխալ ենթադրութեան վրայ, թէ «Դիոնեսիոս»ի անունով ծանօթ միստիկական աստուածաբանական գրուածքները, որոնք կարեւոր տեղ մը կը գրաւեն Հին եկեղեցական մատենագրութեան մէջ, Արիսպագացիին գործերն են: Այսօր բացայայտօրէն հաստատուած են, որ անոնք Ե դարուն գրուած գործեր են: Եթէ այս սխալ կարծիքը կազմուած չըլլար, Արիսպագացին պիտի յիշատակուէր Պողոսի աշակերտներու շարքին մէջ միայն, ինչպէս եղած է արդարեւ Խաչի Ե Կիրակիի Եջ.ին, երբ կը տօնուի Պողոսի գլխաւոր աշակերտներէն Տիմոթէոսի եւ Տիտոսի հետ:

Եւ տակաւին բազմաթիւ ուրիշ աշակերտներ, որոնց անունները միայն յիշատակուած են Պողոսի թուղթերուն կամ Գործք.ի մէջ: Օր. Զենոն, Արտեմաս «օրինական դպիր», Կրեսկէս, Կարպոս, որուն քով ձգած էր Պողոս, Տրովադա, իր «փիլոն»ը, այսինքն՝ ծանր ձմրան վե-

րարկուն, զոր բերել կը յանձնարարէ Տիմոթէոսին: Սոսթենէս՝ Ժողովրդապետ հրէից Կորնթոսի մէջ, Տրովիմոս, զոր ձգած է «Հիւանդագին ի Մելիտոս. Եբուզոս եւ Պուլէս: Յիսուս, որ անուանուեցաւ Յուստոս. Նիմփա, Արքիպպոս, եւ տակաւին քսան անուններ լոկ Հռովմայեցոց թուղթի ԺԶ գլուխին 5-16 համարներուն մէջ, որոնց ողջոյն կը ղրկէ Պողոս, իբրեւ իրեն ծանօթ դէմքերու: Ասոնց մէջ է, որոնք յիշուած են միւս ըլլալով Աղեքսանդր, որոնք յիշուած են նաեւ Մարկ. ԺԵ 21ի մէջ: Ակնարկուած է նաեւ ասոնց մօրը, զոր Պոնա կը նկատէ նաեւ իր մայրը (Հռոմ. ԺԶ 13): Սոսիպադրոս, «ազգական» Պողոսի: ՏէՐՏԻՈՍ, որ գրած է Առ Հռովմայեցիս թուղթը, իբրեւ քարտուղար:

Ասոնցմէ շատ շատերը յանուանէ յիշատակուած են Յոյն եւ Լատին օրացոյցներու մէջ, ինչպէս նաեւ մեր յայսմաւուրքներուն մէջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍՈՒՐԲԵՐ

Մուտք եւ ներածություն.....	7
Ա. ՆԱԽԱՀԱՐՔ	
1 Աղամ.....	36
2 Աբէլ.....	40
3 Սէթ.....	42
4 Ենովս.....	43
5 Ենովք.....	43
6 Նոյ.....	47
7 Մելքիսեդեկ.....	51
Բ. ՆԱՀԱՊԵՏՔ	
8 Աբրահամ.....	54
9 Իսահակ.....	58
10 Յակոբ.....	60
11 Յովսէփ.....	63
Գ. ԱՆԱՊԱՏԻ ԱՌԱՋԵՆՈՐԴԵՆԵՐ	
12 Մովսէս.....	67
13 Ահարոն.....	72
14 Եղիազար.....	73
15 Յեսու.....	74
Դ. ԴԱՏԱԻՈՐԵՆԵՐ	
16 Բարակ.....	76
17 Գեղէոն.....	77
18 Յեփթայէ.....	80
19 Սամսոն.....	82

20 Դաւիթ Թագաւոր.....	84
Ե. ԳՈՐԾԻՁ ՄԱՐԳԱՐԷՆԵՐ	
21 Սամուէլ.....	90
22 Եղիա.....	93
23 Եղիսէ.....	98
24 Յովբ.....	100
Զ. ԳԻՐՔ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԳԱՐԷՆԵՐ	
25 Եսայի.....	105
26 Երեմիա.....	108
27 Եզեկիէլ.....	111
28 Դանիէլ.....	114
29 Ովսէ.....	117
30 Յովել.....	119
31 Ամովս.....	120
32 Աբդիու.....	122
33 Յովնան.....	122
34 Միքիէ կամ Միքիա.....	123
35 Նաւում.....	126
36 Համբակում.....	127
37 Սոփոնիա.....	128
38 Անգէ.....	129
39 Զաքարիա.....	130
40 Մաղաքիա.....	132
Է. ԶԱՆԱԶԱՆ ՀԻՆ ՈՒՆՏԻ ՍՈՒՐԲԵՐ	
41-43 Երեք Մանկունք.....	136
44 Եզրաս.....	138
45 Մակաբեաններ.....	139
46 Եղիազար Քաւանայ.....	141
47 Շամունէ եւ իր Եօթը Որդիները.....	143
Եզրակացութիւն.....	146

ՆՈՐ ԿՏԱՐԱՐԱՆԻ ՍՈՒՐԱԵՐ

Մուտք.....	152
Ա. ՆԱԽԱԿԱՐԱՊԵՏՔ ՔՐԻՍՏՈՍԻ	
1-2 Յովակիմ եւ Աննա.....	153
3 Հայր Յովսէփ.....	155
4 Ս. Կոյս Մարիամ.....	158
5-6 Զաքարիա,- Եղիսաբեթ.....	160
7 Յովհաննէս Մկրտիչ.....	163
8 Մանկունք Բեթլեհէմի.....	166
Բ. ԱՌԱՔԵԱԼՆԵՐ	
9 Պետրոս.....	170
10 Անդրէաս.....	173
11 Յակոբոս.....	174
12 Յովհաննէս.....	175
13 Մատթէոս.....	178
14 Բարթողոմէոս.....	180
15 Փիլիպպոս.....	182
16 Թովմաս.....	183
17 Թադէոս.....	184
18 Յակոբոս Ալփեան.....	185
19 Շմաւոն-Սիմոն Կանանացի.....	185
20 Մատաթիա.....	185
21 Պողոս Առաքեալ.....	186
Գ. ԱՇԱԿԵՐՏՆԵՐ	
22 Եօթանասուներկու աշակ.....	192
23 Յովսէփ Արիմաթացի.....	194
24 Ղազարոս.....	197
25-26 Մարթա եւ Մարիամ.....	197

27 Ղուկիանոս Հարիւրապետ.....	198
28 Իւղաբեր Կիներ.....	199
29 Յակոբոս Տեառնեղբայր.....	202
30 Շմաւոն՝ Ազգական Քրիստոսի.....	204
31 Ստեփանոս Նախավկայ.....	205
32 Փիլիպպոս Սարկաւազ.....	207
33 Կռնելիոս Հարիւրապետ.....	209
Դ. ԳՈՐԾԱԿԻՑՔ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՔ ՊՕՂՈՍԻ	
34 Անանիա.....	212
35 Բառնաբաս.....	213
36 Շիղա կամ Սիղուանոս.....	215
37 Մարկոս Աւետարանիչ.....	217
38 Ղուկաս Աւետարանիչ.....	218
39 Տիմոթէոս.....	220
40 Տիտոս.....	221
41 Ոնեսիմոս.....	222
42 Այլ աշակերտք Պօղոսի.....	225
Բովանդակութիւն.....	230

« Գանձասար » մատենաշար

Մակեոնը՝

Ծապիկը՝

Տիտղոսաթերթը՝

Սրբագրիչ

Ծարուածքը՝

Արա Ստեփանեանի

Արմէն Քիրքէեանի

Արեգ Ասատրեանի

Սիրանոյշ Բուլաթեան

«ԳԱՆԶԱՍԱՐ»

աստուածաբանական կենտրոնի
համակարգչային ծառայութեան

Տպագրութեան պատասխանատու

Միսաք Քանուզեան

Տպագրիչ

Կազմարարներ

Ծալող վարպետ

Կաղապարագործ

Յարութիւն Սմարեան

Մալաք Արամեան

Սվետլանա Մարտիրոսեան

Սամուէլ Կանուզեան

Ռուբէն Սմարեան

«Գանձասար» աստուածաբանական կենտրոնի տպագրատուն